Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական արտաքին էլեկտրոնային հաղորդագրությունների ֆորմատների նկարագրության ամփոփ կատալոգ

– 2024 –

Բովանդակություն

Contents

Ներածություն.....5

Գլուխ 1. Հաղորդագրության տեսակները.....7

Գլուխ 2. Հաղորդագրություններում օգտագործվող դաշտերը, դրանց կազմման տարբերակները և լրացման կանոնները.....14

2.1 Հաղորդագրություններում էլեկտրոնային ստորագրության կիրառման համար սահմանված կանոնները.....19

2.2 Հաղորդագրություններում կիրառման համար սահմանված մերժման պատճառի կոդերը.....19

Գլուխ 3. Դաշտերի նկարագրություն.....34

Գլուխ 4. Հաղորդագրության կառուցվածքը.....43

Գլուխ 5. ՀՀ կենտրոնական բանկում կիրառվող արտաքին հաղորդագրությունների տեսակների ֆորմատների նկարագրություն.....46

5.1 Համակարգային հաղորդագրություններ.....46

ՀՏ 000 Անդորրագիր ֆայլի ընդունման մասին.....46

5.2 Դրամական միջոցների փոխանցման հաղորդագրություններ.....47

ՀՏ 100 Վճարման հանձնարարական.....47

ՀՏ 108 Հաճախորդի կողմից դրամական միջոցների փոխանցման հանձնարարական.....50

ՀՏ 125 Հաճախորդի վճարման հանձնարարական.....97

ՀՏ 132 Հավաքական վճարումների հանձնարարական.....125

ՀՏ 200 Ֆինանսական կազմակերպության համար նախատեսված հաշիվների միջև փոխանցման հանձնարարական.....129

ՀՏ 202 Միջբանկային վճարման հանձնարարական.....133

ՀՏ 208 Դրամական միջոցների ներգրավման հայտ.....138

ՀՏ 231 Վերջնահաշվարկ և սառեցում.....142

5.3 Արտարժութային գործառնությունների իրականացման հաղորդագրություններ.....147

ՀՏ 307 Արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման հայտ.....147

ՀՏ 308 Արտարժույթի առք ու վաճառքի հայտ.....153

ՀՏ 309 Արժութային սվոփ գործարքի հայտ.....159

ՀՏ 317 Արտարժույթի կանխիկացում/ապականխիկացում գործարքի հայտի պատասխան.....163

ՀՏ 318 Արտարժույթի առք/վաճառք գործարքի հայտի պատասխան 166

ՀՏ 319 Արտարժույթի տրամադրման/ներգրավման սվոփ գործարքի հայտի պատասխան 169

5.4 Արժեթղթերով գործառնությունների իրականացման հաղորդագրություններ 173

ՀՏ 502 ՀՀ պետական արժեթղթի առք ու վաճառքի հայտ 174

ՀՏ 503 ՀՀ պետական արժեթղթի տեղաբաշխման աճուրդի հայտ 177

ՀՏ 504 ՀՀ պետական արժեթղթի հետգնման գործարքի հայտ 180

ՀՏ 505 Ռեպո, միջօրյա ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի հայտ 182

ՀՏ 506 ՀՀ պետական արժեթղթի հետգնման աճուրդի հայտ 184

ՀՏ 507 Երկկողմանի ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի հայտ 186

ՀՏ 511 ՀՀ պետական արժեթղթի տեղաբաշխման աճուրդի հայտի պատասխան 189

ՀՏ 512 Ֆինանսական գործարքի կնքման հայտի պատասխան 192

ՀՏ 513 ՀՀ պետական արժեթղթի հետգնման աճուրդի հայտի պատասխան 196

ՀՏ 514 Ռեպո, հակադարձ ռեպո կամ միջօրյա ռեպո գործարքի կատարման արդյունքի պատասխան 199

ՀՏ 515 Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրություն 202

ՀՏ 516 Վերջնահաշվարկի կատարման անդորրագիր 215

ՀՏ 520 ՀՀ պետական արժեթղթի գնման հանձնարարական 224

ՀՏ 521 ՀՀ պետական արժեթղթի վաճառքի հանձնարարական 227

ՀՏ 522 ՀՀ պետական արժեթղթի ազատ առաքման հանձնարարական 230

ՀՏ 523 ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների համար արժեթղթերի փոխանցման հանձնարարական 233

ՀՏ 524 Ռեպո զամբյուղից արժեթղթերի դուրսբերման հանձնարարական 238

ՀՏ 534 Ծանուցող հաղորդագրություն 240

ՀՏ 535 ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայի ծանուցման հաղորդագրություն 243

ՀՏ 540 ՀՀ պետական արժեթղթի գրավադրման հանձնարարական 246

ՀՏ 541 ՀՀ պետական արժեթղթի գրավի ընդունման հանձնարարական 249

ՀՏ 542 ՀՀ պետական արժեթղթի գրավադրման միակողմանի հանձնարարական 253

ՀՏ 543 ՀՀ պետական արժեթղթի գրավից հանման Գրավառուի հանձնարարական 256

ՀՏ 544 ՀՀ պետական արժեթղթի գրավից հանման Գրավատուի հանձնարարական 260

ՀՏ 545 ՀՀ պետական արժեթղթի գրավից հանման միակողմանի հանձնարարական 264

ՀՏ 546 ՀՀ պետական գրավադրված արժեթղթից հրաժարման հանձնարարական . 267

ՀՏ 547 ՀՀ պետական արժեթղթի գրավի փոխարինման Գրավատուի հանձնարարական 270

ՀՏ 548 ՀՀ պետական արժեթղթի գրավի փոխարինման Գրավառուի հանձնարարական 273

ՀՏ 572 Քաղվածք դեպո հաշվից 276

ՀՏ 575 Տեղաբաշխման և հետգնման աճուրդների պարամետրերի ամփոփ տեղեկանք 280

5.5 Խառը հաղորդագրություններ 290

ՀՏ 900 Հաշվի դեբետագրման (միջոցների ելքագրման) մասին տեղեկացում 290

ՀՏ 910 Հաշվի կրեդիտագրման (միջոցների մուտքագրման) մասին տեղեկացում ... 293

ՀՏ 920 Հարցումային հաղորդագրություն 307

ՀՏ 930 Սառեցման փոփոխության հանձնարարական 310

ՀՏ 931 Սառեցման հաստատում 312

ՀՏ 932 Տեղեկացում սառեցման վերաբերյալ 315

ՀՏ 950 Քաղվածք հաշվից 318

ՀՏ 951 Հաշվի վիճակ 323

ՀՏ 952 Գործառնության մերժման մասին 326

ՀՏ 969 Միջբանկային վճարումների ռեեստր 333

ՀՏ 972 Բյուջետային վճարումների ռեեստր 337

ՀՏ 973 Միջբանկային վճարումների ռեեստր 337

5.6 Ընդհանուր խմբի հաղորդագրություններ 373

ՀՏ n92 Հետկանչման հաղորդագրություն 373

ՀՏ n95 Հարցում ճշտման մասին 375

ՀՏ n96 Պատասխան 378

ՀՏ n98 Անհատական հաղորդագրություն 380

ՀՏ n99 Ազատ ֆորմատով հաղորդագրություն 382

Ներածություն

ՀՀ կենտրոնական բանկի ներքո գործող մի շարք ավտոմատացված համակարգերի շահագործումը ապահովելու համար 1996 թվականից սկսած, միջազգային առաքման SWIFT համակարգի ստանդարտների հիման վրա, Կենտրոնական բանկում մշակվել և ներդրվել են (արտաքին օգտագործման համար նախատեսված) էլեկտրոնային հաղորդագրությունների անհրաժեշտ տեսակների ֆորմատները:

Ստորև ներկայացված փաստաթղթի մեջ ներառված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված էլեկտրոնային հաղորդագրությունների ֆորմատների տեսակների ամփոփ պաշտոնական կատալոգը, որը հնարավորություն է ընձեռում Կենտրոնական բանկին, «CBANet» միջբանկային հեռահաղորդակցման համակարգչային ցանցի միջոցով, իրականացնել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ֆինանսական ոլորտի լիցենզավորված այլ կազմակերպությունների հետ բազմաբնույթ արտաքին գործարքներ:

Անհրաժեշտ է նշել, որ էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համար, ըստ նրանց տեսակների, որպես «տրանսպորտային» միջոց, ներկայումս գործում են համապատասխանաբար հետևյալ էլեկտրոնային համակարգերը՝

- «BankMail» առաքման համակարգ
- «Lotus Notes» տեղեկատվության փոխանակման համակարգ
- «Dealing and Monitoring» տեղեկատվական համակարգ

Հարկ է նշել նաև, որ ներկայացված կատալոգը ենթակա է փոփոխման և լրամշակման յուրաքանչյուր նոր տեսակի արտաքին էլեկտրոնային հաղորդագրության ֆորմատի հաստատման և ներդրման դեպքում, ինչպես նաև գոյություն ունեցող ֆորմատներում կատարված յուրաքանչյուր փոփոխության հաստատման պարագայում:

Ըստ այդմ, պաշտոնական կատալոգի **ներկա տարբերակում** կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

- ► Կատալոգում ավելացվել են ա/ ԿԲ նախագահի 13.03.2017 թ. թիվ 1/236Լ որոշմամբ հաստատված փոփոխությունները բ/ ԿԲ նախագահի 12.12.2018 թ. թիվ 1/860Լ որոշմամբ հաստատված փոփոխությունները
- ► ավելացվել են նոր ՀՏ 515, ՀՏ 516 և ՀՏ 575 էլեկտրոնային հաղորդագրությունների տեսակների նկարագրությունները, ըստ ԿԲ Նախագահի 04.05.2017 թ. թիվ 1/240Լ որոշման
- ► սահմանվել են նոր ՀՏ 125, ՀՏ 200 էլեկտրոնային հաղորդագրությունների նկարագրությունները:
- ► ՀՏ 100 հաղորդագրության նկարագրությունը ենթարկվել է որոշակի խմբագրման, մասնավորապես **:70A:** դաշտից հանվել է նախկինում ներկայացված սխալների կոդերի ցանկը: Ըստ այդմ, **:70A:** դաշտի նկարագրությունը ճշգրտվել է նաև կատալոգի 3-րդ գլխում, էջ 37
- ► ՀՏ 108, ՀՏ 972 և ՀՏ 973 հաղորդագրությունների նկարագրության մեջ կատարվել է հստակեցում ինչպես նաև :72B: դաշտում կիրառվող կոդերի ցանկում ա/ RNT ցուցիչը հանվել է կիրառումից, իսկ բ/ REN ցուցիչի համար սահմանվել է

վերջինիս լրացման ձևաչափը՝ որը կիրառվում է սխալ փոխանցված գումարը հետ փոխանցելու դեպքում

- ՀՏ 108 հաղորդագրության (ֆորմատի) կառուցվածքից հանվել են (SWIFT համակարգի օգնությամբ) դեպի արտասահման վճարում (դրամական միջոցների փոխանցում) կատարելու համար նախատեսված :56Q:, :57Q:, :59Q: և :71A: դաշտերի նկարագրությունները
- ՀՏ 202 հաղորդագրության խմբագրված նկարագրության մեջ լրամշակվել են **:72:** դաշտում կիրառման ենթակա գործառույթների կոդերը, ինչպես նաև ավելացվել է գործածման համար նախատեսված նոր «**//REN//**» կոդը:
- ՀՏ 231, ՀՏ 931 և ՀՏ 932 հաղորդագրությունների **:23:** դաշտում ավելացվել է կիրառման ենթակա նոր «**STAK**» կոդը ՀՀ դրամական փոխանցումների միասնական ավտոմատացված համակարգի գործարկման համար, ինչպես նաև «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնի համար՝ ներառյալ նաև ՀՏ 930-ի **:23:** դաշտում, սահմանվում են լրացուցիչ պարզաբանման նոր կոդեր:
- ՀՏ 231 հաղորդագրության **:69B:** դաշտը հայտարարվում է որպես **օժանդակ**՝ ոչ պարտադիր լրացման, դաշտ
- ՀՏ 952, հաղորդագրության նկարագրության մեջ խմբագրվել և ճշգրտվել են :72: դաշտում լրացման ենթակա կոդերի ցանկը: Ընդ որում, մերժման որոշ դեպքեր հեռացվել են ցանկից, ինչպես նաև ավելացվել են մերժման պատճառները բնութագրող (սխալների) նոր կոդեր: Ըստ այդմ, սխալները բնութագրող կոդերի ցանկը լրամշակվել է նաև կատալոգի 2-րդ գլխում, էջ 18
- կատալոգից հանվել են անվավեր ճանաչված ՀՏ 121, ՀՏ 131, ՀՏ 133, ՀՏ 203, ՀՏ 204 և ՀՏ 970 հաղորդագրության տեսակների նկարագրությունները, որովհետև ՀՏ 121 հաղորդագրությունը ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից այլևս չի կիրառվում, ՀՏ 131 և ՀՏ 133 հաղորդագրությունների փոխարեն ենթակա է կիրառման ՀՏ 973 հաղորդագրությունը, ՀՏ 203-ի փոխարեն այսուհետ կիրառվելու է ՀՏ 202 հաղորդագրությունը, իսկ ՀՏ 970-ի փոխարեն կիրառվելու է ՀՏ 969 հաղորդագրության տեսակը: Իր հերթին, ՀՏ 204 հաղորդագրության տեսակը հանվում է շրջանառությունից ՀՀ կենտրոնական բանկում իրականացված համապատասխան տեխնոլոգիական փոփոխությունների հետևանքով և ըստ այդմ, վերանում է տվյալ հաղորդագրության (ֆորմատի) կիրառման անհրաժեշտությունը
- «Գործառնության համար» **:20:** դաշտի արժեքի բացառիկության ստուգումը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով (ըստ նոր պահանջների) **դառնում է պարտադիր**:

Գլուխ 1. Հաղորդագրության տեսակները

Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման (ԷՀԱ)՝ «BankMail», համակարգի հիմնական տարրերից է «Հաղորդագրության տեսակ»՝ ՀՏ, հասկացությունը: Այն ցանկացած տիպի ֆինանսական կամ ոչ ֆինանսական տեղեկատվության առաքման ստանդարտ ձև է:

Էլեկտրոնային ճանապարհով առաքվող հաղորդագրություններն ըստ տեսակների ունեն հստակ տարբերակում:

Հաղորդագրության տեսակը ներկայացվում է եռանիշ թվային կոդով, որի առաջին նիշը որոշում է հաղորդագրության դասը (Category), երկրորդը ցույց է տալիս հաղորդագրության խումբը, երրորդը՝ բուն հաղորդագրության համարը: Օրինակ՝ «Վճարման հանձնարարական» հաղորդագրությունը ներկայացվում է ՀՏ!100 հաղորդագրության տեսակի միջոցով, «Հարցումային հաղորդագրություն»՝ ՀՏ!920, «Քաղվածք հաշվից»՝ ՀՏ!950 և այլն:

ՀՀ կենտրոնական բանկի ներքո գործող ավտոմատացված համակարգերում կիրառվում է հաղորդագրությունների տեսակների 6 դաս՝

0 – Համակարգային հաղորդագրություններ
1 – Հաճախորդների փոխանցումներ
2 – Բանկային փոխանցումներ
3-Արտարժույթի գործարքներ
5 – Արժեթղթերի գործարքներ
9 – Խառը հաղորդագրություններ (քաղվածք, հարցում և այլն)
n – Ընդհանուր խմբի հաղորդագրություններ

Յուրաքանչյուր դասի շրջանակներում գոյություն ունեն խմբեր, որոնք կոդավորվում են 0 → 9 թվերով և ըստ այդմ, հաղորդագրությունները դասակարգվում են տվյալ դասի սահմաններում: ՀՏ-երի տարբեր դասերում 0 → 8 թվերով կոդավորված խմբերը փոփոխում են իրենց իմաստը և ֆորմատները, իսկ 9-րդ խմբի հաղորդագրությունները պահպանում են նույն իմաստն ու ֆորմատները բոլոր դասերում:

Հաղորդագրության տեսակների դասերը և դրանցում կիրառվող խմբերը ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Դաս	Խումբ	Հաղորդագրության տեսակ
0	**Համակարգային հաղորդագրություններ**	
	0	Անդորրագրեր
	1	Տեղեկանքներ
	2	Հաշվետվություններ
	5	Փոխանցման հանձնարարականներ
1	**Հաճախորդների փոխանցումներ**	

	0	Կրեդիտային փոխանցում
	2	Հաշվարկներ բյուջեի հետ
	3	Հավաքական վճարներ
2	**Բանկային փոխանցումներ**	
	0	Միջբանկային փոխանցում
	3	Վերջնահաշվարկ և սառեցում
3	**Արտարժութային գործարքներ**	
	0	Հայտեր
	1	Հայտի պատասխան
5	**Արժեթղթերի գործարքներ**	
	0	Հայտեր
	1	Հայտի պատասխան
	2	Փոխանցման հանձնարարականներ
	3	Ծանուցում
	4	Գրավադրում և գրավից հանում
	5	Գրավի իրավունքի փոխարինում
	6	Արգելադրում և արգելահանում
	7	Քաղվածք
9	**Խառը հաղորդագրություններ**	
	2	Հաշվետվության հարցում
	3	Դրամական միջոցների սառեցում
	5	Հաշվետու հաղորդագրություն
	6	Ռեեստրներ
	7	Ռեեստր արտարժույթով
n	**Ընդհանուր խմբի հաղորդագրություններ**	
	9	Ճշտումներ, հարցեր, պատասխաններ, ազատ ֆորմատ

Նշված դասերի (Category) խմբերի սահմաններում ՀՀ կենտրոնական բանկում օգտագործվում են հետևյալ արտաքին էլեկտրոնային հաղորդագրությունների տեսակները (ՀՏ)՝

Աղյուսակ 2

№	Դաս	Խումբ	Համար	Հաղորդագրության տեսակի անվանում	Դաշտեր
Համակարգային հաղորդագրություններ					
1	**0**	**0**	**0**	Անդորրագիր ֆայլի ընդունման մասին	
Հաճախորդների փոխանցումներ					
2	**1**	**0**	**0**	Վճարման հանձնարարական	**07, 20, 30V, 32A, 50A, 51, 59, 70A**
3	**1**	**0**	**8**	Հաճախորդի կողմից դրամական միջոցների փոխանցման հանձնարարական	**07, 20, 23E, 23P, 23Q, 23S, 30A, 32A, 33B, 36, 50E, 50F, 52E, 57E, 59E, 59F, 70A, 72A, 72B, 77B, 23M, 72C**
4	**1**	**2**	**5**	Հաճախորդի վճարման հանձնարարական	**07, 13C, 20, 23B, 23E, 26T, 32A, 33B, 36, 50J, 50K, 50P, 51A, 52A, 52D, 53A, 53B, 53D, 54A, 54B, 54D, 55A, 55B, 55D, 56A, 56C, 56D, 57A, 57B, 57C, 57D, 59A, 59N, 59P, 70, 71A, 71F, 71G, 72, 77B**
5	**1**	**3**	**2**	Հավաքական վճարումների հանձնարարական	**07, 20, 30V, 32A, 32B, 50A, 50C, 51, 59, 70A**
Բանկային փոխանցումներ					
6	**2**	**0**	**0**	Ֆինանսական կազմակերպության փոխանցման հանձնարարական սեփական հաշիվների միջև	**07, 20, 32A, 53B, 56A, 56D, 57A, 57B, 57D, 72**
7	**2**	**0**	**2**	Միջբանկային վճարման հանձնարարական	**07, 16A, 20, 21, 32A, 50A, 59, 72**
8	**2**	**0**	**8**	Դրամական միջոցների ներգրավման հայտ	**12B, 20, 24B, 30D, 30V, 31, 31A, 37C, 38, 72N, 82**

№	Դաս	Խումբ	Համար	Հաղորդագրության տեսակի անվանում	Դաշտեր
9	2	3	1	Վերջնահաշվարկ և սառեցում	07, 20, 23, 69B, 69D, 69E
Արտարժութային գործարքներ					
10	3	0	7	Արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման հայտ	20, 82, 24D, 23T, 12B, 31, 30V, 11A, 17Y, 72N, 23P, 34C, 19B, 19L, 19H
11	3	0	8	Արտարժույթի առք ու վաճառքի հայտ	20, 82, 24D, 23T, 12B, 31, 30V, 11A, 17Y, 72N, 36T, 19B, 19L, 19H
12	3	0	9	Արժութային սվոփ գործարքի հայտ	20, 82, 24D, 12B, 31, 30V, 31A, 37M, 11A, 72N, 38, 19B,
13	3	1	7	Արտարժույթի կանխիկացում/ապականխիկացում գործարքի հայտի պատասխան	20, 21, 12B, 24D, 32B, 34C, 33B, 23A, 23
14	3	1	8	Արտարժույթի առք/վաճառք գործարքի հայտի պատասխան	20, 21, 12B, 24D, 32B, 36T, 36S, 33B, 23A, 23
15	3	1	9	Արտարժույթի տրամադրման/ներգրավման սվոփ գործարքի հայտի պատասխան	20, 21, 12B, 22H, 37M, 32B, 38, 33B, 34D, 23A, 23
Արժեթղթերի գործարքներ					
16	5	0	2	ՀՀ պետական արժեթղթի առք ու վաճառքի հայտ	12B, 20, 24B, 30V, 31, 35B, 35C, 37A, 72N, 82
17	5	0	3	ՀՀ պետական արժեթղթի տեղաբաշխման աճուրդի հայտ	20, 23, 28, 35A, 35B, 37, 37A
18	5	0	4	ՀՀ պետական արժեթղթի հետգնման գործարքի հայտ	20, 23, 35B, 35C
19	5	0	5	Ռեպո, միջօրյա ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի հայտ	12B, 14, 20, 24B, 37C, 38
20	5	0	6	ՀՀ պետական արժեթղթի հետգնման աճուրդի հայտ	20, 23, 35B, 35C, 37A
21	5	0	7	Երկկողմանի ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի հայտ	14, 20, 24B, 30V, 31, 31A, 37C, 38, 72
22	5	1	1	ՀՀ պետական արժեթղթի տեղաբաշխման աճուրդի հայտի պատասխան	20, 21, 23, 28, 32B, 35A, 35B, 35O, 35R, 37, 37A

№	Դաս	Խումբ	Համար	Հաղորդագրության տեսակի անվանում	Դաշտեր
23	**5**	**1**	**2**	Ֆինանսական գործարքի կնքման հայտի պատասխան	**12B, 20, 21, 23, 23A, 24B, 35C, 37C, 38**
24	**5**	**1**	**3**	ՀՀ պետական արժեթղթի հետգնման աճուրդի հայտի պատասխան	**20, 21, 23A, 35B, 35C, 37, 37A**
25	**5**	**1**	**4**	Ռեպո, հակադարձ ռեպո կամ միջօրյա ռեպո գործարքի կատարման արդյունքի պատասխան	**20, 23, 23A, 24B, 31A, 35B, 35C, 37C, 38**
26	**5**	**1**	**5**	Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրություն	**12B, 20, 23, 24B, 24C, 30V, 31, 35A, 35B, 35C, 83A, 87A**
27	**5**	**1**	**6**	Վերջնահաշվարկի կատարման անդորրագիր	**12B, 20, 21, 23, 23A, 24B, 24C, 35A, 35B, 35C, 83A, 87A**
28	**5**	**2**	**0**	ՀՀ պետական արժեթղթի գնման հանձնարարական	**20, 32B, 35B, 35C, 50A, 59, 72, 83, 87**
29	**5**	**2**	**1**	ՀՀ պետական արժեթղթի վաճառքի հանձնարարական	**20, 32B, 35B, 35C, 50A, 59, 72, 83, 87**
30	**5**	**2**	**2**	ՀՀ պետական արժեթղթի ազատ առաքման հանձնարարական	**20, 35B, 35C, 72, 83, 87**
31	**5**	**2**	**3**	ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների համար արժեթղթերի փոխանցման հանձնարարական	**20, 24B, 35B, 35C, 35Q, 72, 83A, 87A**
32	**5**	**2**	**4**	Ռեպո զամբյուղից արժեթղթերի դուրսբերման հանձնարարական	**20, 35B, 35C, 35Q, 87A**
33	**5**	**3**	**4**	Ծանուցող հաղորդագրություն	**11R, 20, 21, 23, 35B, 72**
34	**5**	**3**	**5**	ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայի ծանուցման հաղորդագրություն	**11R, 20, 21, 23, 72**
35	**5**	**4**	**0**	ՀՀ պետական արժեթղթի գրավադրման հանձնարարական	**20, 32B, 35B, 35C, 50A, 59, 72, 83, 88**
36	**5**	**4**	**1**	ՀՀ պետական արժեթղթի գրավի ընդունման հանձնարարական	**20, 32B, 35B, 35C, 50A, 59, 72, 83, 88**
37	**5**	**4**	**2**	ՀՀ պետական արժեթղթի գրավադրման միակողմանի հանձնարարական	**20, 35B, 35C, 72, 83, 88**
38	**5**	**4**	**3**	ՀՀ պետական արժեթղթի գրավից հանման Գրավառուի հանձնարարական	**20, 32B, 35D, 35E, 50A, 59, 72, 87, 88**

№	Դաս	Խումբ	Համար	Հաղորդագրության տեսակի անվանում	Դաշտեր
39	**5**	**4**	**4**	ՀՀ պետական արժեթղթի գրավից հանման Գրավատուի հանձնարարական	**20, 32B, 35D, 35E, 50A, 59, 72, 87, 88**
40	**5**	**4**	**5**	ՀՀ պետական արժեթղթի գրավից հանման միակողմանի հանձնարարական	**20, 35D, 35E, 72, 87, 88**
41	**5**	**4**	**6**	ՀՀ պետական գրավադրված արժեթղթից հրաժարման հանձնարարական	**20, 35D, 35E, 72, 83, 87**
42	**5**	**4**	**7**	ՀՀ պետական արժեթղթի գրավի փոխարինման Գրավատուի հանձնարարական	**20, 35B, 35C, 35D, 35E, 72, 84, 88**
43	**5**	**4**	**8**	ՀՀ պետական արժեթղթի գրավի փոխարինման Գրավառուի հանձնարարական	**20, 35B, 35C, 35D, 35E, 72, 84, 88**
44	**5**	**7**	**2**	Քաղվածք դեպո հաշվից	**20, 25A, 28, 32B, 35B, 60A, 62A, 66, 67A**
45	**5**	**7**	**5**	Տեղաբաշխման և հետգնման աճուրդների պարամետրերի ամփոփ տեղեկանք	**12B, 12C, 20, 24B, 24C, 30V, 31, 35A, 35B, 35C, 83A, 87A**
Խառը հաղորդագրություններ					
46	**9**	**0**	**0**	Հաշվի դեբետագրման (միջոցների ելքագրման) մասին տեղեկացում	**07, 20, 21, 25, 32A, 52E, 72**
47	**9**	**1**	**0**	Հաշվի կրեդիտագրման (միջոցների մուտքագրման) մասին տեղեկացում	**07, 20, 21, 25, 32A, 50E, 50Q, 52E, 52Q, 56E, 56Q, 72**
48	**9**	**2**	**0**	Հարցումային հաղորդագրություն	**07, 12, 20, 25, 31**
49	**9**	**3**	**0**	Սառեցման փոփոխության հանձնարարական	**07, 20, 23, 69B**
50	**9**	**3**	**1**	Սառեցման հաստատում	**07, 20, 21, 23, 69C**
51	**9**	**3**	**2**	Տեղեկացում սառեցման վերաբերյալ	**07, 13, 20, 21, 23, 25, 32B**
52	**9**	**5**	**0**	Քաղվածք հաշվից	**07, 20, 25, 28, 60F, 60M, 61, 62F, 62M, 64**

№	Դաս	Խումբ	Համար	Հաղորդագրության տեսակի անվանում	Դաշտեր
53	**9**	**5**	**1**	Հաշվի վիճակ	**07, 13, 20, 21, 25, 62M, 64**
54	**9**	**5**	**2**	Վճարման մերժում	**07, 12, 20, 21, 21A, 72**
55	**9**	**6**	**9**	Միջբանկային վճարումների ռեեստր	**07, 20, 30V, 32A, 50A, 51, 59, 70A**
56	**9**	**7**	**2**	Բյուջետային վճարումների ռեեստր	**07, 20, 23E, 23P, 23Q, 23S, 30A, 32A, 33B, 36, 50E, 50F, 52E, 57E, 59E, 70A, 72A, 72B, 77B**
57	**9**	**7**	**3**	Միջբանկային վճարումների ռեեստր (ըստ ՀՏ 108-ի)	**07, 20, 23E, 23P, 23Q, 23S, 30A, 32A, 33B, 36, 50E, 50F, 52E, 57E, 59E, 59F, 70A, 72A, 72B, 77B**
Ընդհանուր խմբի հաղորդագրություններ					
58	**n**	**9**	**2**	Հետկանչման հաղորդագրություն	**07, 11R, 20, 21, 79**
59	**n**	**9**	**5**	Հարցում ճշտման մասին	**07, 11R, 11S, 20, 21, 75, 77**
60	**n**	**9**	**6**	Պատասխան	**07, 11R, 20, 21, 76, 77**
61	**n**	**9**	**8**	Անհատական հաղորդագրություն	**07, 12, 20, 77E**
62	**n**	**9**	**9**	Ազատ ֆորմատով հաղորդագրություն	**07, 20, 21, 79**

Գլուխ 2. Հաղորդագրություններում օգտագործվող դաշտերը, դրանց կազմման տարբերակները և լրացման կանոնները

ԷՀԱ համակարգի միջոցով փոխանցվող յուրաքանչյուր տեսակի հաղորդագրության ֆորմատը բաղկացած է սահմանված պարտադիր (Mandatory) և ոչ պարտադիր (Optional) դաշտերից:

Դաշտերի խմբերը

Դաշտի բնորոշիչը (կոդը)՝ Field Tag-ը, ունի կազմավորման հետևյալ սկզբունքը. Դաշտի բնորոշչի առավելագույն երկարությունը 3 նիշ է, որոնցից առաջին 2 նիշերը պարտադիր են գրանցման համար, իսկ երրորդ նիշը օժանդակ է, որը (առկա լինելու դեպքում) ցույց է տալիս դաշտի ներկայացման հնարավոր տարբերակը:

Դաշտի բնորոշչի առաջին նիշը ներկայացնում է դաշտի խումբը և, ըստ այդմ, օգտագործման ենթակա են դաշտերի հետևյալ 8 խմբերը՝

Դաշտի խումբ	Խմբի անվանումը
0	Ծառայողական տվյալներ
1	Ընդհանուր տեղեկություններ
2	Հղումներ
3	Ամսաթվեր և այլ արժեքներ
5	Ֆինանսական կազմակերպության (բանկեր) և պատվիրատուներ (հաճախորդներ)
6	Հաշվետիրոջ միջոցների շարժ
7	Տեղեկատվական
8	Գործարքի կողմեր

Իր հերթին, դաշտի բնորոշչի երկրորդ նիշը ցույց է տալիս տվյալ խմբին պատկանող դաշտի հերթական համարը: Երբ հաղորդագրության տեսակի ֆորմատի նկարագրության մեջ դաշտի բնորոշչի թվային երկնիշ կոդից հետո գրվում է **a** տառը, դա նշանակում է, որ դաշտն ունի ներկայացման մի քանի տարբերակ և անհրաժեշտ է 3-րդ նիշի տեղը լրացնել տվյալ ֆորմատով նախատեսված դաշտի համապատասխան տարբերակի տառային արժեքը: Օրինակ՝ **:**60a**:**-ն նշանակում է, որ դիտարկվող դաշտը կարող է ներկայացվել մի քանի տարբերակներով, մասնավորապես **:**60A**:**, **:**60F**:** կամ **:**60M**:** և այլն:

Դաշտերի երկարության և դրանցում լրացվող տվյալների բնութագրման համար կիրառվող կոդերը

Էլեկտրոնային հաղորդագրությունների տեսակներում դաշտերի ձևաչափերի նկարագրության մեջ օգտագործվում են SWIFT համակարգի ստանդարտներին համապատասխանող հետևյալ կոդերը (նշանակումները)՝

ա/ Դաշտերում լրացվող տվյալների բնութագրման համար կիրառվող կոդերը

- **a** – տվյալը ընդունում է՝ միայն մեծատառ և տպատառ, (A մինչ Z) տառային արժեք
- **n** – տվյալը ընդունում է՝ միայն ամբողջ դրական՝ բնական, թվերով (0 մինչ 9), թվային արժեք
- **c** – տվյալը ընդունում է՝ միայն մեծատառ և տպատառ տառեր (A մինչ Z) և (կամ) բնական թվերով (0 մինչ 9), տառաթվային արժեք
- **x** – տվյալը ընդունում է՝ տառաթվային, (մեծատառ և փոքրատառ տպատառ տառեր (A մինչ Z), բնական թվեր (0 մինչ 9),) ինչպես նաև այլ թույլատրելի նշան (սիմվոլ) պարունակող արժեք
- **d** – տվյալը ընդունում է՝ թվային արժեքը իր տասնորդական մասով, որը պարտադիր ներառում է նաև իր մեջ

!! տասնորդական կոտորակի ստորակետը (օգտագործվում է գումարներ և տոկոսներ ներկայացնելիս)

բ/ Դաշտերի երկարության բնութագրման համար կիրառվող կոդերը

- **!** - տվյալների կառուցվածքում այն ցույց է տալիս համապատասխան քանակով պարտադիր լրացման պահանջը, իսկ բացակայության դեպքում պետք է լրացվի առնվազն մեկ նիշ
- **nn**-տվյաների արժեքի առավելագույն թույլատրելի երկարությունը փոփոխվող է և կարող է լրացվել մինչ նշած առավելագույն երկարությամբ, սակայն նվազագույն երկարությունը պարտադիր կազմում է 1: Առաջին նիշը բնութագրում է դաշտում տվյալների երկարությունը, իսկ երկրորդ նիշը բնութագրում է այդ տվյալների տեսակը (այս դեպքում՝ n-թվային):
- n!n – տվյալների արժեքի երկարությունը հաստատուն է, որը պարտադիր պետք է ներկայացված լինի նշված քանակի նիշերով (ոչ ավել, ոչ պակաս): Ընդ որում, առաջին նիշը բնութագրում է դաշտում տվյալների երկարությունը, իսկ երկրոդ նիշը բնութագրում է այդ տվյալների տեսակը (այս դեպքում՝ n-թվային):
- **1!e** – պարտադիր մեկ բացատի (white space) գրանցում
- **[nn]** –- այս փակագծերի մեջ սահմանված տեղեկատվությունը ենթակա չէ պարտադիր լրացման: ոչ պարտադիր լրացման նիշեր, որոնք տվյալի (նշված դեպքում թվային) արժեքի բացակայության պարագայում հաղորդագրության մեջ որևէ

դաշտում հանդես եկած՝ դիտարկվող, ենթադաշտը ամբողջությամբ բաց է թողնվում

- **nn*mm** – առավելագույնը nn քանակի տող, յուրաքանչյուրում մինչև mm քանակի համապատասխան նիշ լրացնելու հնարավորություն:

Կոդից (նշանակումներից) առաջ գրանցված թիվը ցույց է տալիս, թե քանի նիշով կարող է հանդես գալ տվյալ կոդը այդ դաշտում:

Օրինակ՝ **6!n1a15d4!a16x[34x]**

- **6!n**-ը պարտադիր վեցանիշ թվային կոդ է, որը միշտ պետք է ներկայացված լինի 6 նիշով
- **1a**-ն տառային միանիշ կոդ է

15d-ն առավելագույնը 15 նիշանի թվային կոդ է, որը պարտադիր ներառում է իր մեջ տասնորդական կոտորակի ստորակետը և ըստ այդմ, թվային մասը չի կարող գերազանցել 14 նիշը, որը ներառում է նաև տասնորդական մասը:

- **4!a**-ն պարտադիր քառանիշ տառային կոդ է, որը միշտ պետք է ներկայացված լինի 4 նիշով (այս դեպքում՝ a-մեծատառ տառեր):
- **16x**-ը առավելագույնը 16 նիշանի տառաթվային կոդ է, այդ թվում թույլատրելի սիմվոլ, այսինքն՝ դաշտը պարունակում է մինչև 16 հատ նիշ
- **[34x]**-ը **ոչ** պարտադիր նիշեր, որոնց առավելագույն երկարությունը մինչ 34 տառաթվային նիշեր են, այդ թվում թույլատրելի սիմվոլներ:
- 5*50x դաշտը **կարող** է պարունակել 5 տող, որտեղ յուրաքանչյուր տողի երկարությունը կարող է կազմել մինչև 50 տառաթվային նիշեր և սիմվոլ:

Դաշտերում կիրառման համար սահմանված տառերը և պայմանանշանները

ԷՀԱ համակարգում, յուրաքանչյուր հաղորդագրության տեսակի ֆորմատի մեջ, **<u>թույլատրվում է</u>** կիրառել հետևյալ հիմնական տառերի և պայմանանշանների (symbols) բազմությունը

•	**0 1 2 3 4 5 6 7 8 9 ( ) { } = ; , № % * . - _ / ? ! ‘ : + ~ @ # $ ^ [ ]** Whitespace (բացատ)
•	A B C D E F G H I J K L M N O P Q R S T U V W X Y Z a b c d e f g h i j k l m n o p q r s t u v w x y z
•	Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Ու Փ Ք Օ Ֆ ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ու փ ք օ ֆ

•	Տառային կոդերի կիրառման ժամանակ կիրառվում են միայն անգլերեն տառեր
•	Հաղորդագրության մեջ՝ «նպատակը» դաշտում, ինչպես նաև սահմանված դաշտերում համապատասխան տվյալների լրացման ժամանակ կարող են կիրառվել միայն Հայկական կամ Լատինական այբբենական տառերը և թույլատրելի սիմվոլները:
•	Հաղորդագրության մեջ, այդ թվում՝ «նպատակը» դաշտում կարող են օգտագործվել նաև Ռուսական լեզվի տառերը և սիմվոլները (բոլոր կատեգորիայի հաղորդագրությունների, այդ թվում՝ ՀՏ 125-ի համար):

ԷՀԱ համակարգում, յուրաքանչյուր հաղորդագրության տեսակի ֆորմատի մեջ՝ **<u>չի թույլատրվում</u>** (կամ սահմանափակվում է) կիրառել հետևյալ հիմնական պայմանանշանների (symbols) բազմությունը

	Տառերի մասին
•	Հաղորդագրության մեջ, այդ թվում՝ նպատակը դաշտում այլ լեզուներով տառերի օգտագործումը չի թույլատրվում, բացառությամբ թույլատրելի տառերի և սիմվոլների
•	Հաղորդագրության մեջ ցանկացած տվյալ չի կարող լրացվել «Յունիկոդով»
	Սիմվոլների մասին
•	Հաղորդագրության մեջ (“)-սիմվոլը չի կարող օգտագործվել ոչ մի տեղ
•	- Տողի սկզբում վերջակետ պայմանանշանը (:) չի կարող օգտագործվել
	Հաղորդագրության մեջ, տողի սկզբում // երկու զատիչներով նշանը չի կարող օգտագործվել, բացառությամբ համապատասխան հաղորդագրության նպատակը դաշտի համար սահմանված դեպքերի

Դաշտերի լրացման կանոնները

Հաղորդագրության տեսակը ձևավորելիս պետք է առաջնորդվել հետևյալ կանոններով՝

- հաղորդագրության մեջ պետք է ներկայացված լինեն նրան պատկանող բոլոր պարտադիր դաշտերը
- հաղորդագրության մեջ ոչ պարտադիր՝ օժանդակ, դաշտերը լրացվում են օգտագործողի հայեցողությամբ
- տվյալ հաղորդագրությանը չպատկանող ոչ մի դաշտ չի կարող հանդես գալ նրա մեջ

- յուրաքանչյուր դաշտը հաղորդագրության մեջ կարող է հանդես գալ միայն մեկ անգամ, բացառությամբ այն դեպքերի, երբ հաղորդագրության տեսակը թույլատրում է նույն դաշտի կրկնություն
- դաշտի ձևաչափը կարող է ունենալ ենթադաշտեր, որոնք իրարից առանձնացվում են / կամ // զատիչներով, ընդ որում // զատիչը օգտագործվում է կոդային բառերը կամ թվերը առանձնացնելու համար: Օրինակ՝ **:**72**://**1**//**
- հաղորդագրության մեջ դաշտերի դասավորվածությունը անհրաժեշտ է պահպանել ըստ ֆորմատում նշված հերթականության
- «**:**» նշանը հանդես է գալիս, որպես հաղորդագրության տողի առաջին նիշ միայն այն դեպքում, երբ գրվում է դաշտի բնորոշչից (**Tag**-ից) առաջ, որը միշտ ներկայացվում է երկու կողմից գրանցված «**:**»-րի մեջ, բոլոր մնացած դեպքերում տողը չի կարող սկսվել «**:**» նշանով
- ամսաթիվ պարունակող դաշտը լրացվում է **օր, ամիս, տարի** DDMMYY տեսքով – **6!n**, ընդ որում, պարտադիր լրացվում են բոլոր հատկացված նիշերը, այսինքն՝ 10-ից փոքր թվերը համալրվում են 0 թվային արժեքով: Օրինակ՝ **010698**
- ժամը կարող է լրացվել **ժամ, րոպե** HHMM տեսքով – **4!n** կամ **ժամ, րոպե, վարկյան** HHMMSS տեսքով – **6!n**՝!24 ժամյա թվատախտակով: Բոլոր՝ 10-ից փոքր թվերը համալրվում են 0 թվային արժեքով, օրինակ՝ **1005** կամ **090532**
- արժույթի կոդը ներկայացվում է եռանիշ տառային կոդով – **3!a**, համաձայն ISO 4217 ստանդարտի: Կոդի առաջին 2 նիշը ցույց է տալիս երկիրը, իսկ երրորդը՝ արժույթը: Օրինակ՝ հայկական դրամ՝ **AMD**, ամերիկյան դոլար՝ **USD**, եվրոպական եվրո՝ **EUR** և այլն
- գումարների ամբողջ մասը միշտ պետք է կոտորակային մասից բաժանված լինի տասնորդական ստորակետով, նույնիսկ այն դեպքում, երբ կոտորակային մասը բացակայում է: Կոտորակային մասը, կախված արժույթի տեսակից, ներկայացվում է 1 կամ 2 նիշով, և եթե կոտորակային մասը բացակայում է, ապա ստորակետից հետո ոչինչ չի գրվում, օրինակ՝ **1500000,** կամ **15000,05**: Տասնորդական ստորակետը և կոտորակային նիշերը (եթե կան) ներառվում են գումարների ներկայացման արտահայտության մեջ առավելագույնը 15 նիշ երկարությամբ (տարողությամբ): Հայկական դրամով փոխանցում (վճարում) կատարելու դեպքում կոտորակային մասը ներկայացվում է երկու նիշով, ընդ որում, ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր կարգով, լրացվում է **0** թվային արժեքը, օրինակ՝ **45600,10**
- գումարի արժեք պարունակող դաշտում ամբողջ մասը պետք է պարտադիր ներկայացված լինի առնվազն մեկ նիշով, օրինակ՝ **0,15**
- եթե դաշտի ձևաչափում նշված է **6*35x** արժեքը, ապա դա նշանակում է, որ տվյալ դաշտում հնարավոր է լրացնել առավելագույնը 6 տող և յուրաքանչյուր տողում մինչև 35 նիշ երկարությամբ (տարողությամբ) տեղեկատվություն, որը սակայն չի ենթադրում դաշտի պարտադիր լրացումը ամբողջությամբ
- դաշտերում հնարավոր է հատուկ կոդերի կիրառում, որը ենթադրում է որոշակի կանոնների պահպանում՝
  - կոդը գրանցվում է անմիջապես «**:**» նշանից հետո, ներառված կրկնակի զատիչներով՝ **:**72**://**01**//** և հանդիսանում է տողի միակ տեղեկատվությունը

- եթե բացի կողից կա լրացուցիչ տեղեկության կարիք, ապա այն գրանցվում է հաջորդ տողից

- Հաղորդագրության ֆորմատում պետք է հանդես գան միայն տվյալ հաղորդագրության տեսակին պատկանող դաշտերի բնորոշիչները (**Tag**-րը)։
- Հաղորդագրության դաշտերի կառուցվածքում, եթե որևէ տողի համար սահմանված տվյալները չեն լրացվում, ապա չի թույլատրվում այդ դատարկ տողերի առկայությունը։ Այս դեպքում, տվյալ դաշտի դատարկ տողին հաջորդ տողերում լրացման համար սահմանված տվյալները պետք է համապատասխանաբար բարձրանան վերև։ Օրինակ՝ :50F: դաշտի առաջին տողում եթե հաշվեհամարը չի նշվել, ապա այդ մասը հաղորդագրության մեջ դատարկ չպետք է լինի և :50F: դաշտի հաջորդ տողի տվյալները, որոնք լրացվում են ֆորմատում՝ ավտոմատ բարձրանում են վերև։
- Յուրաքանչյուր դաշտ նույնացվում է այդ դաշտի բնորոշիչով (**Tag**), որը հանդիսանում է երկու թվային նիշերը և միաժամանակ դրանց հետ սահմանված համապատասխան մեծատառ տառային նիշով։ Միևնույն բնորոշիչը ունեցող դաշտը տարբեր հաղորդագրություններում պետք է ունենա միևնույն կառուցվածքը, որը չի կարող փոփոխվել ցանկացած հաղորդագրության կառուցվածքում այդ դաշտը ներառելու դեպքում։ Սույն սկզբունքը պետք է պահպանվի անկախ հաղորդագրության ձևավորման, փոխանցման և կիրառման տեխնիկածրագրային միջավայրից և բիզնես գործընթացից։

2.1 Հաղորդագրություններում էլեկտրոնային ստորագրության կիրառման համար սահմանված կանոնները

Հաղորդագրության կառուցվածքում՝ էլեկտրոնային ստորագրության կիրառման հնարավորությունը սահմանվում է միայն հետևյալ կատեգորիայի հաղորդագրությունների համար՝

1 – Հաճախորդների փոխանցումներ

2 – Բանկային փոխանցումներ

9 – Խառը հաղորդագրություններ (քաղվածք, հարցում և այլն)

n – Ընդհանուր խմբի հաղորդագրություններ։

Նշված բոլոր կատեգորիաների համար գործող և մշակվող հաղորդագրությունների կառուցվածքում առկա է էլեկտրոնային ստորագրության համար համապատասխան դաշտը։

Էլեկտրոնային ստորագրությունը հաղորդագրության մեջ պարտադիր լրացնելու և կիրառելու պահանջը կարող է սահմանվել մասնակցի հետ կնքվող համապատասխան պայմանագրով և (կամ) համակարգի կանոններով, և (կամ) սույն փաստաթղթով և (կամ) Կենտրոնական բանկի այլ իրավական փաստաթղթերով։

2.2 Հաղորդագրություններում կիրառման համար սահմանված մերժման պատճառի կոդերը

ԷՀԱ համակարգում կիրառվող արտաքին հաղորդագրությունների տեսակներում նախատեսվում է հայտնաբերված սխալները, ինչպես նաև հաղորդագրության ընդունման հաստատումը բնութագրող կոդերի օգտագործումը՝

Կոդ	**Կոդի բովանդակությունը**	Կիրառվում է **մերժման** ժամանակ	
		ՀՏ952-ում մերժման ժամանակ	ՀՏ000[1] - անդորրագիր
//01//	Բանկային հաշիվը բացակայում է	այո	ոչ
//02//	Հաշիվը փակված է	այո	ոչ
//03//	Հաշվում բավարար /հասանելի/ միջոց չկա	այո	ոչ
//04//	Հաշիվը արգելափակված է Դեբետի կամ Կրեդիտի կատարման համար կամ էլ երկուսը միասին կատարելու համար	այո	ոչ
//05//	Նշված արժույթի կոդը չի համապատասխանում դեբետագրվող հաշվի արժույթին	այո	ոչ
//53 //	Ընթացիկ բանկային օրվա կտրվածքով հաղորդագրության :20: դաշտում գրանցված բացառիկ համարը կրկնվում է	այո	ոչ
//16//	Վճարման ենթակա ամբողջ գումարը չի համապատասխանում կրկնվող պարբերություններում նշված վճարվող գումարների հանրագումարին (մասնավորապես՝ ՀՏ132, իսկ ՀՏ969, ՀՏ972, ՀՏ973-ը կից ՀՏ202-ի համար):	այո	ոչ
//17//	Նշված արժույթի կոդը չի համապատասխանում կրեդիտագրվող հաշվի արժույթին (այն վերաբերում է նաև կրկնվող ենթապարբերությունների վճարումներին)	այո	ոչ

[1] ՀՏ 000- անդորրագիր հաղորդագրության համար սահմանված կոդերը երկու շեղ գծիկների (//) մեջ չեն դրվում:

//18//	Դեբետագրվող և կրեդիտագրվող հաշիվների դաշտերում նշված է միևնույն բանկային հաշիվը, սակայն (որպես բացառություն) ՀՏ 231-ի համար դիտարկվող սահմանափակումը չի գործում	այո	ոչ
//19//	ՀՏ-ում գրանցված վճարման ենթակա գումարի մանրադրամը նշված է սխալ ճշտությամբ, մասնավորապես հայկական դրամի լումաները նշված են ոչ տասնորդական ճշգրտությամբ՝ 0,10	այո	Ոչ
//30//	Հաղորդագրության գլխագրում Ուղարկողի անհայտ նույնականացման կոդի առկայություն	այո	Ոչ
//31//	Հաղորդագրությունը ուղարկողը/առաքողը RTGS-ի միջոցով վճարման իրականացման համար իրավասություն չունի	այո	Ոչ
//32//	**Վճարողի** բանկային հաշիվը չի համապատասխանում ստացված հաղորդագրության գլխագրում նշված ուղարկողի /առաքողի նույնականացման կոդին	այո	Ոչ
//33//	Ստացված հաղորդագրության գլխագրում նշված ստացողի/հասցեատիրոջ անհայտ նույնականացման կոդ	այո	Ոչ
//34//	**Շահառուի** բանկային հաշիվը չի համապատասխանում ստացված հաղորդագրության գլխագրում նշված ստացողի/հասցեատիրոջ նույնականացման կոդին	այո	Ոչ
//35//	Հաղորդագրությունը ստացողի համար RTGS-ի միջոցով իրականացվող վճարման համար իրավասություն չունի	այո	Ոչ
//36//	Լրացուցիչ նույնացուցչի անհայտ արժեք, մասնավորապես ՀՏ 231-ի **:23:** դաշտում առկա է լրացման համար /չսահմանված կոդ/	այո	Ոչ

	չկանոնակարգված նույնացուցիչ		
//37//	Վճարման գումարը չի կարող լինել փոքր կամ հավասար 0-ի	այո	Ոչ
//38//	Ջուտացված դիրքերի Դեբետների ընդհանուր գումարը հավասար չէ Կրեդիտների ընդհանուր գումարին (կիրառվում է ՀՏ 231-ի դեպքում)	այո	Ոչ
//39//	**Վճարողի** բանկային հաշվի ստուգիչ նիշի սխալ	այո	Ոչ
//40//	**Շահառուի** բանկային հաշվի ստուգիչ նիշի սխալ	այո	Ոչ
//42//	Դեբետի կատարման համար սառեցված գումարը անբավարար է	այո	Ոչ
//43//	Ստացված վճարման հանձնարարականի ռեեստրը բացակայում է (ՀՏ202-ին կից ՀՏ969, ՀՏ972, ՀՏ973-ռեեստրների համար)	այո	Ոչ
//44//	Ստացված ռեեստրի վճարման հանձնարարականը բացակայում է (ՀՏ969, ՀՏ972, ՀՏ973-ռեեստրներին կից ուղարկվող ՀՏ202-ի համար)	այո	Ոչ
//46//	**Դեպք 1)** ՀՏ 132 վճարային հաղորդագրության մեջ նշված վճարման ենթակա ամբողջ գումարի արժույթի կոդը **չի համապատասխանում** կրկնվող դաշտերում առկա յուրաքանչյուր վճարման գումարի արժույթի կոդին **Դեպք 2)** ՀՏ 202 վճարային հաղորդագրության և նրան կցված ռեեստրի (ՀՏ 969, ՀՏ 972 կամ ՀՏ 973) կրկնվող **պարտադիր** դաշտերում **նշված չէ նույն արժույթի** կոդը **Դեպք 3)** ՀՏ 231-ի կրկնվող դաշտերում առկա են տարբեր արժույթների կոդեր, այսինքն՝ **ներկայացված չէ** մեկ տեսակի (ընդհանուր) արժույթի կոդ	այո	Ոչ

//47//	Վճարային հաղորդագրության մեջ նշված վճարման կատարման ամսաթիվը չի կարող լինել ավելին, քան բանկի ընթացիկ գործառնական օրվա ամսաթիվը: Սույն պահանջը/ստուգումը/ (որպես բացառություն) չի կիրառվում ՀՏ 125ի պարագայում և այս դեպքում այն չի մերժվում:	այո	ոչ
//51//	Համակարգի մասնակցի քլիրինգային հաշվարկային հաշիվը բացակայում է, փակ է, այդ հաշվով գործարք չի կարող կատարվել	այո	Ոչ
//52//	Սառեցման ենթակա գումարի արժույթի կոդը չի համապատասխանում **սառեցվող** հաշվի արժույթին (կիրառվում է ՀՏ 231-ի և ՀՏ 930-ի համար)	այո	ոչ
06	Received message is accepted Ստացված հաղորդագրությունը ընդունվել է	ոչ	այո
07	Համարակալման սխալ՝ ֆայլի անվանման մեջ	ոչ	այո
//08//	Security error Պաշտպանության սխալ	այո	այո
09	Սխալ՝ ֆայլի ընթերցման ժամանակ	ոչ	այո
//10//	An unknown message type Անհայտ հաղորդագրության տեսակ	այո	այո
//11//	Error in header of received message Սխալ ստացված հաղորդագրության գլխագրում	այո	այո
//12//	Error in the unique number of received message (the unique number in the header is repeated) Սխալ ստացված հաղորդագրության գլխագրի բացառիկ համարում (կամ հաղորդագրության գլխագրի բացառիկ համարը կրկնվում է)	այո	այո
//13//	Other (previously not described) error in received message	այո	այո

	Այլ սխալ՝ ստացված հաղորդագրության մեջ, որը նկարագրված չէ		
//14//	Error of message format Սխալ հաղորդագրության ֆորմատում	այո	ոչ
//15//	Registered in the stop list Գրանցված է կասեցման ցանկում	այո	ոչ
//21//	Կապի խափանում/ հաղորդագրության առաքման ձախողում	այո	ոչ
//22//	Electronic signing failure Էլեկտրոնային ստորագրությունը սխալ է/ աղավաղված	այո	ոչ
//S08//	Տեքստը կամ ստորագրությունը աղավաղվել է՝ ստորագրելուց հետո	այո	ոչ
//S11//	Ձեր կատալոգում բացակայում է տեքստը ստորագրող բաժանորդը	այո	ոչ
//S13//	Տեքստը և ստորագրությունը չեն համապատասխանում միմյանց	այո	ոչ
//S15//	Բաժանորդի բանալին փակված է	այո	ոչ

Ստորև Աղյուսակի տեսքով՝ Աղյուսակ 3, ներկայացված է ՀՀ կենտրոնական բանկում գործող արտաքին էլեկտրոնային հաղորդագրությունների ֆորմատներում կիրառման ենթակա դաշտերի ցանկը:

Աղյուսակ 3

№	**Խումբ**	**Համար**	**Տար-բերակ**	**Խմբի և դաշտի անվանումը**	**Չնաչափ**	**ՀՏ**
Ծառայողական տվյալներ						

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Չևաչափ	ՀՏ
1	**0**	**7**		Էլեկտրոնային ստորագրություն	**110!x**	**100, 108, 125, 132, 200, 202, 231, 900, 910, 920, 930, 931, 932, 950, 951, 952, 969, 972, 973, n92, n95, n96, n98, n99**
Ընդհանուր տեղեկություններ						
2	**1**	**1**	**R**	Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ (R → Received, ստացված)*	**6!n/3!n**	534, 535, n92, n95, n96
3	**1**	**1**	**S**	Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ (S → Sent, ուղարկված)*	**6!n/3!n**	n95, n96
4	**1**	**1**	**A**	Հաշվարկային արժույթ	**3!a**	307, 308, 309
5	**1**	**2**		Հայցվող հաղորդագրություն	**3!n**	920, 952, n98
6	**1**	**2**	**B**	Ածուրդի համար	**16x**	208, 502, 505, 512, 515, 516, 575, 307, 308, 309, 317, 318, 319,
7	**1**	**2**	**C**	Ածուրդի արդյունքի պարամետրեր	**5*3!a15d**	575
8	**1**	**3**		Ամսաթվի և ժամի ցուցիչ	**10!n**	932, 951
9	**1**	**3**	**C**	Ժամանակի ցուցանշում	**/8c/4!n1!x4!n**	125
10	**1**	**4**		Հայտի առաջնահերթություն	**2n**	505, 507
11	**1**	**6**	**A**	Կից ռեեստրի վճարումների քանակ	**5n**	202
12	**1**	**7**	**Y**	Մասնակցի գործարքի հաշվի ցուցիչ	**1!a**	307, 308,
13	**1**	**9**	**B**	Առաջարկության ծավալ	**15d**	307, 308, 309,
14	**1**	**9**	**L**	Առաջարկության նվազագույն ծավալ	**15d**	307, 308,
15	**1**	**9**	**H**	Առաջարկության առավելագույն ծավալ	**15d**	307, 308,

* – Սկզբնական հաղորդագրության (Original message) վերաբերյալ պահանջվում կամ տրվում է լրացուցիչ պարզաբանում:

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Ձևաչափ	ՀՏ
Հղումներ						
16	**2**	**0**		Գործառնության համար	**16x**	**100, 108, 125, 132, 200, 202, 208, 231, 502, 503, 505, 507, 511, 512, 513, 514, 515, 516, 520, 521, 522, 523, 524, 534, 535, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 572, 575, 900, 910, 920, 930, 931, 932, 950, 951, 952, 969, 972, 973, n92, n95, n96, n98, n99, 307, 308, 309, 317, 318, 319,**
17	**2**	**1**		Գործառնության հղման համար	**16x**	**202, 511, 512, 513, 516, 534, 535, 900, 910, 931, 932, 951, 952, n92, n95, n96, n99, 317, 318, 319,**
18	**2**	**1**	**A**	Մերժված հաղորդագրության բացառիկ համարը	**16!n**	**952**
19	**2**	**2**	**H**	Գործարքի նույնացուցիչ	**6x**	**319,**
20	**2**	**3**		Լրացուցիչ նույնացուցիչ	**16x**	**231, 503, 511, 512, 514, 515, 516, 534, 535, 930, 931, 932, 317, 318, 319,**
21	**2**	**3**	**A**	Գործարքի կատարման նույնացուցիչ	**8x**	**512, 513, 514, 516, 317, 318,**
22	**2**	**3**	**B**	Բանկի գործառնության կոդ	**4!c**	**125**
23	**2**	**3**	**E**	Հանձնարարականի կոդ	**4!c[/30x]**	**108, 125, 972, 973**
24	**2**	**3**	**P**	Վճարողի նույնացուցիչ (P → Peculiarity)	**6x**	**108, 972, 973, 307,**
25	**2**	**3**	**Q**	Շահառուի նույնացուցիչ (Q → Quality)	**6x**	**108, 972, 973**
26	**2**	**3**	**S**	Պարտապանի նույնացուցիչ (S → Specificity)	**6x**	**108, 972, 973**
27	**2**	**3**	**M**	Վերջնական շահառուի նույնացուցիչ	**6x**	**108**
28	**2**	**3**	**T**	Ածուրդի լրացուցիչ նույնացուցիչ	**4!c**	**307, 308**

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Ձևաչափ	ՀՏ
29	**2**	**4**	**D**	Գործարքի տեսակ	**16x**	**307, 308, 309, 317, 318,**
30	**2**	**4**	**B**	Գործարքի նույնացուցիչ	**4x**	**208, 502, 505, 507, 512, 514, 515, 516, 523, 575**
31	**2**	**4**	**C**	Սեփականության նույնացուցիչ	**4x**	**515, 516, 575**
32	**2**	**5**		Հաշվի համար	**12!n[4n]**	**900, 910, 920, 932, 950, 951**
33	**2**	**5**	**A**	Դեպո հաշվի համար	**8!n**	**572**
34	**2**	**6**	**T**	Գործարքի տեսակի կոդ	**3!c**	**125**
35	**2**	**8**		Հաշվետվության համար կամ հերթական համար	**5n[/3n]**	**503, 511, 572, 950**
Ամսաթվեր և գումարներ						
36	**3**	**0**	**A**	Հանձնարարականի կատարման ամսաթիվ, ժամ և րոպե	**6!n4!n**	**108, 972, 973**
37	**3**	**0**	**D**	Ժամկետայնություն՝ օր (D → Duration)	**3n**	**208**
38	**3**	**0**	**V**	Վճարման ամսաթիվ (V → Value)	**6!n**	**100, 132, 208, 502, 507, 515, 575, 969, 307, 308, 309,**
39	**3**	**1**		Գործարքի կնքման ամսաթիվ	**6!n**	**208, 502, 507, 515, 575, 920, 307, 308, 309**
40	**3**	**1**	**A**	Մարման ամսաթիվ	**6!n**	**208, 507, 514, 309**
41	**3**	**2**	**A**	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	**6!n3!a15d**	**100, 108, 125, 132, 200, 202, 900, 910, 969, 972, 973**
42	**3**	**2**	**B**	Արժույթի կոդ և գումար	**3!a15d**	**132, 511, 520, 521, 540, 541, 543, 544, 572, 317, 318, 319,**
43	**3**	**3**	**B**	Հանձնարարականի արժույթի կոդ և գումար	**3!a15d**	**108, 125, 972, 973, 317, 318, 319**
44	**3**	**4**	**C**	Միջնորդավճարի չափը	**9 d**	**307,**
45	**3**	**4**	**D**	Գործարքի տոկոսադրույքին համապատասխան գումար	**4!c[N]3!a15 d**	**319**
46	**3**	**5**	**A**	Արժեթղթի ծավալ	**3!a15d**	**503, 511, 515, 516, 575**

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Չևաչափ	ՀՏ
47	**3**	**5**	**B**	Արժեթղթի նույնացուցիչ	**[4!c1!e][2!c]10!c**	**502, 503, 511, 513, 514, 515, 516, 520, 521, 522, 523, 524, 534, 540, 541, 542, 547, 548, 572, 575**
48	**3**	**5**	**C**	Փոխանցվող արժեթղթի ծավալ	**15d**	**502, 512, 513, 514, 515, 516, 520, 521, 522, 523, 524, 540, 541, 542, 547, 548, 575**
49	**3**	**5**	**D**	Գրավից հանվող արժեթղթի նույնացուցիչ	**[4!c1!e][2!c]10!c**	**543, 544, 545, 546, 547, 548**
50	**3**	**5**	**E**	Գրավից հանվող արժեթղթի ծավալ	**15d**	**543, 544, 545, 546, 547, 548**
51	**3**	**5**	**O**	Արժեթղթի բավարարված ծավալ	**3!a15d**	**511**
52	**3**	**5**	**Q**	Փոխանցվող արժեթղթի քանակ (Q → Quantity)	**15d**	**523, 524**
53	**3**	**5**	**R**	Արժեթղթի չբավարարված ծավալ (R → Reject)	**3!a15d**	**511**
54	**3**	**6**		Արտարժույթի փոխարժեք	**12d**	**108, 125, 972, 973,**
55	**3**	**6**	**S**	Բավարարման փոխարժեք	**6d**	**318**
56	**3**	**6**	**T**	Արտարժույթի փոխարժեքը կնքվող գործարքով	**6d**	**308, 318,**
57	**3**	**7**		Առաջարկվող գին	**15d**	**503, 511, 513**
58	**3**	**7**	**A**	Եկամտաբերություն	**9d**	**502, 503, 511, 513**
59	**3**	**7**	**C**	Գումար	**15d**	**208, 505, 507, 512, 514**
60	**3**	**7**	**M**	Գործարքի փոխարժեք	**12d**	**309, 319,**
61	**3**	**8**		Տոկոսադրույք	**9d**	**208, 505, 507, 512, 514, 309, 319,**
Ֆինանսական կազմակերպություններ և պատվիրատուներ						
62	**5**	**0**	**A**	Վճարող (A → Acquirer)	**12!n[4n] 4*35x**	**100, 132, 202, 520, 521, 540, 541, 543, 544, 969**
63	**5**	**0**	**C**	Վճարող (C → Customer)	**5!n 4*35x**	**132**
64	**5**	**0**	**E**	Վճարող	**12!n[4n] 4*35x**	**108, 910, 972, 973**

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Չևաչափ	ՀՏ
65	**5**	**0**	**F**	Վճարող	**[12!n[4n]] 5!n 4*35x**	108, 972, 973
66	**5**	**0**	**J**	Հանձնարարող հաճախորդ	**[/34x] 4!a2!a2!c[3!c]**	125
67	**5**	**0**	**K**	Հանձնարարող հաճախորդ	**[/34x] 4*35x**	125
68	**5**	**0**	**P**	Հանձնարարող հաճախորդ	**35x 4*35x**	125
69	**5**	**0**	**Q**	Վճարող	**[35x] 4*35x**	910
70	**5**	**1**		Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ (Social services number)	**10!n**	100, 132, 969
71	**5**	**1**	**A**	Փոխանցող կազմակերպություն	**[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]**	125
72	**5**	**2**	**A**	Հանձնարարող հաճախորդին սպասարկող կազմակերպություն	**[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]**	125
73	**5**	**2**	**D**	Հանձնարարող հաճախորդին սպասարկող կազմակերպություն	**[/1!a][/34x] 4*35x**	125
74	**5**	**2**	**E**	Սպասարկող կազմակերպություն	**12!n[4n] 4*35x**	108, 900, 910, 972, 973
75	**5**	**2**	**Q**	Սպասարկող կազմակերպություն	**[35x] 4*35x**	910
76	**5**	**3**	**A**	Փոխանցողի թղթակից բանկ	**[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]**	125
77	**5**	**3**	**B**	Փոխանցողի թղթակից բանկ	**[/1!a][/34x] [35x]**	125, 200
78	**5**	**3**	**D**	Փոխանցողի թղթակից բանկ	**[/1!a][/34x] 4*35x**	125
79	**5**	**4**	**A**	Ստացողի թղթակից բանկ	**[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]**	125
80	**5**	**4**	**B**	Ստացողի թղթակից բանկ	**[/1!a][/34x] [35x]**	125

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Ձևաչափ	ՀՏ
81	**5**	**4**	**D**	Ստացողի թղթակից բանկ	**[/1!a][/34x] 4*35x**	125
82	**5**	**5**	**A**	Փոխհատուցման երրորդ կողմ	**[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]**	125
83	**5**	**5**	**B**	Փոխհատուցման երրորդ կողմ	**[/1!a][/34x] [35x]**	125
84	**5**	**5**	**D**	Փոխհատուցման երրորդ կողմ	**[/1!a][/34x] 4*35x**	125
85	**5**	**6**	**A**	Միջնորդ կազմակերպություն (բանկ)	**[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]**	125, 200
86	**5**	**6**	**C**	Միջնորդ կազմակերպություն (բանկ)	**/34x**	125
87	**5**	**6**	**D**	Միջնորդ կազմակերպություն (բանկ)	**[/1!a][/34x] 4*35x**	125, 200
88	**5**	**6**	**E**	Միջնորդ կազմակերպություն	**12!n[4n] 4*35x**	910
89	**5**	**6**	**Q**	Միջնորդ կազմակերպություն	**[35x] 4*35x**	910
90	**5**	**7**	**A**	Շահառուի կազմակերպություն (բանկ)	**[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]**	125, 200
91	**5**	**7**	**B**	Շահառուի կազմակերպություն (բանկ)	**[/1!a][/34x] [35x]**	125, 200
92	**5**	**7**	**C**	Շահառուի կազմակերպություն (բանկ)	**/34x**	125
93	**5**	**7**	**D**	Շահառուի կազմակերպություն (բանկ)	**[/1!a][/34x] 4*35x**	125, 200
94	**5**	**7**	**E**	Շահառուին սպասարկող կազմակերպություն	**12!n[4n] 4*35x**	108, 972, 973
95	**5**	**9**		Շահառու	**12!n[4n] 4*35x**	100, 132, 202, 520, 521, 540, 541, 543, 544, 969
96	**5**	**9**	**A**	Շահառու հաճախորդ	**[/34x] 4!a2!a2!c[3!c]**	125
97	**5**	**9**	**E**	Շահառու	**12!n[4n] 4*35x**	108, 972, 973

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Չևաչափ	ՀՏ
98	**5**	**9**	**F**	Շահառու	**5!n 4*35x**	108
99	**5**	**9**	**N**	Շահառու հաճախորդ	**[/34x] 4*35x**	125
100	**5**	**9**	**P**	Շահառու հաճախորդ	**[/34x] 4*(1!n/33x)**	125
Հաշվետիրոջ միջոցների շարժը						
101	**6**	**0**	**A**	Արժեթղթի սկզբնական մնացորդ	**15d**	572
102	**6**	**0**	**F**	Դրամական սկզբնական մնացորդ (F → First)	**1a6!n3!a15d**	950
103	**6**	**0**	**M**	Դրամական միջանկյալ մնացորդ (M → Middle)	**1a6!n3!a15d**	950
104	**6**	**1**		Հաշվետվության տող	**6!n1a15d4!a 16x[/34x]**	950
105	**6**	**2**	**A**	Արժեթղթի վերջնական մնացորդ	**15d**	572
106	**6**	**2**	**F**	Դրամական վերջնական մնացորդ (F → Finished)	**1a6!n3!a15d**	950
107	**6**	**2**	**M**	Դրամական միջանկյալ մնացորդ (M → Middle)	**1a6!n3!a15d**	950, 951
108	**6**	**4**		Դրամական վերջնական հասանելի մնացորդ	**6!n3!a15d**	950, 951
109	**6**	**6**		Գործառնության մանրամասներ	**6!n1a15d3!a 16x/8!n**	572
110	**6**	**7**	**A**	Հաշվետու ամսաթիվ (ժամանակաշրջան)	**6!n[/6!n]**	572
111	**6**	**9**	**B**	Սառեցման կամ ապասառեցման հանձնարարություն	**12!n[4n]3!a 15d**	231, 930
112	**6**	**9**	**C**	Սառեցման նույնացուցիչ	**1a12!n[4n]3 !a15d**	931
113	**6**	**9**	**D**	Փոխանցման նույնացուցիչ	**12!n[4n]3!a 15d**	231
114	**6**	**9**	**E**	Մուտքագրվող գումար (զուտ կրեդիտային դիրք)	**12!n[4n]3!a 15d**	231
Տեղեկատվական						
115	**7**	**0**		Վճարման նպատակ	**4*35x**	125
116	**7**	**0**	**A**	Վճարման նպատակ	**4*35x**	100, 108, 132, 969, 972, 973

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Ձևաչափ	ՀՏ
117	**7**	**1**	**A**	Միջնորդավճարի մանրամասներ	**3!a**	125
118	**7**	**1**	**F**	Փոխանցող կողմի միջնորդավճար	**3!a15d**	125
119	**7**	**1**	**G**	Ստացող կողմի միջնորդավճար	**3!a15d**	125
120	**7**	**2**		Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	**6*35x**	125, 200, 202, 507, 520, 521, 522, 523, 534, 535, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 900, 910, 952
121	**7**	**2**	**A**	Հիմնական պարտապան	**6*35x**	108, 972, 973
122	**7**	**2**	**B**	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	**6*35x**	108, 972, 973
123	**7**	**2**	**N**	Այլ նշումներ	**150*80x**	208, 502, 307, 308, 309,
124	**7**	**2**	**C**	Վերջնական շահառու	**6*35x**	108
125	**7**	**5**		Հարց	**6*35x**	n95
126	**7**	**6**		Պատասխան	**6*35x**	n96
127	**7**	**7**		Պարզաբանում	**20*35x**	n95, n96
128	**7**	**7**	**B**	Կարգավորող մարմնին ուղղված տեղեկատվություն	**3*35x**	108, 125, 972, 973
129	**7**	**7**	**E**	Ենթահաղորդագրություն	**35x [70*50x]**	n98
130	**7**	**9**		Նկարագրություն	**35*50x**	n92, n99
Գործարքի կողմեր						
131	**8**	**2**		**Մասնակցի կոդ**	**2!a5!n**	208, 502 307, 308, 309,
132	**8**	**3**		**Արժեթուղթ առաքող**	**13!n 4*35x**	520, 521, 522, 540, 541, 542, 546
133	**8**	**3**	**A**	**Արժեթուղթ առաքող**	**5!n [4*35x]**	515, 516, 523, 575
134	**8**	**4**		**Գրավատու**	**13!n 4*35x**	547, 548
135	**8**	**7**		**Արժեթուղթ ստացող**	**13!n 4*35x**	520, 521, 522, 543, 544, 545, 546
136	**8**	**7**	**A**	**Արժեթուղթ ստացող**	**5!n [4*35x]**	515, 516, 523, 524, 575

№	Խումբ	Համար	Տար-բերակ	Խմբի և դաշտի անվանումը	Չևաչափ	ՀՏ
137	8	8		Գրավառու	13!n 4*35x	540, 541, 542, 543, 544, 545, 547, 548

Գլուխ 3. Դաշտերի նկարագրություն

Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Ձևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս դաշտում լրացվում է էլեկտրոնային ստորագրությունը:

Դաշտ **:11R:** Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ
Ձևաչափ 6!n/3!n

Այս դաշտում նշվում է սկզբնական **ստացված** հաղորդագրության ամսաթիվը և տեսակը՝
6!n - ամսաթիվ (օր, ամիս, տարի՝ DDMMYY)
3!n - հաղորդագրության տեսակ
Օրինակ՝ **:**11R:270198/100

Դաշտ **:11S:** Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ
Ձևաչափ 6!n/3!n

Այս դաշտում նշվում է սկզբնական **ուղարկված** հաղորդագրության ամսաթիվը և տեսակը՝
6!n - ամսաթիվ (օր, ամիս, տարի՝ DDMMYY)
3!n - հաղորդագրության տեսակ
Օրինակ՝ **:**11S:281297/100

Դաշտ **:12:** Հայցվող հաղորդագրություն
Ձևաչափ 3!n

Այս դաշտը նույնականացնում է հայցվող հաղորդագրության տեսակի եռանիշ թվային արժեքը, օրինակ՝ **:**12:951

Դաշտ **:13:** Ամսաթվի և ժամի ցուցիչ
Ձևաչափ 10!n

Այս դաշտում ներկայացվում է ամսաթիվը – 6!n (օր, ամիս, տարի՝ DDMMYY) և ժամը – 4!n (ժամ, րոպե՝ HHMM), օրինակ՝ **:**13:0401981505

Դաշտ **:16A:** Կից ռեեստրի վճարումների քանակ
Ձևաչափ 5n

Այս դաշտում նկարագրվում է ռեեստր ներկայացնող հաղորդագրության մեջ նշված վճարումների քանակը, օրինակ՝ **:**16A:74583

Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս դաշտում նշվում է բանկի կատարած գործառնության համարը, այսինքն՝ փաստացի հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը, որտեղ առաջարկվում է ներառել՝

- 1 → 5 նիշերում ՀՏ-ն ուղարկող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը՝ xyz**00**
- 6-րդ և 15-րդ նիշերում « **/** » (Slash) զատիչ նշանը
- 7 → 14 նիշերում ՀՏ-ի ուղարկման ամսաթվի ութանիշ թվային արժեքը՝ DDMMYYYY
- վերջին 16-րդ նիշում ՀՏ-ի հերթական (չկրկնվող) համարը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով*:

Անհրաժեշտ է նշել, որ դիտարկվող դաշտում գրանցվող համանման այլ տեղեկատվությունը կարող է պարունակել միայն լատինական տառեր:

Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Ձևաչափ 16x

Այս դաշտում ներկայացվում է գործառնության հետ կապված հղումը: Օրինակ՝ ՀՏ 952 «Վճարման մերժում» հաղորդագրության մեջ **:21:** դաշտում կնշվի մերժված ՀՏ 100 «Վճարման հանձնարարական» հաղորդագրության **:20:** դաշտի արժեքը:

Դաշտ **:21A:** Մերժված հաղորդագրության բացառիկ համարը
Ձևաչափ 16!n

Այս դաշտում նշվում է մերժված հաղորդագրության չկրկնվող համարը: Օրինակ՝ ՀՏ 952 «Վճարման մերժում» հաղորդագրության մեջ այս դաշտում կնշվի մերժված հաղորդագրության բացառիկ համարը՝ :20: դաշտի արժեքը:

Դաշտ :25: Հաշվի համար
Ձևաչափ 12!n[4n]

Այս դաշտում նշվում է այն հաշվեհամարը, որի հետ կատարվում է գործառնությունը: Ընդ որում, 12!n ենթադաշտը պարտադիր է լրացման համար և ստուգվում է ԷՀԱ համակարգի կողմից, իսկ 4n ենթադաշտը կարող է ավելացվել օգտագործողի կողմից, որպես բանկի հաշվեհամարների ներքին կոդավորման համակարգի արդյունք (4n նիշերը հաշվի չեն առնվում ստուգիչ նիշի որոշման ժամանակ և ԷՀԱ-ի կողմից չեն ստուգվում):

Օրինակ՝ **:25:**142002357952

Դաշտ **:28:** Հաշվետվության համար կամ հերթական համար
Ձևաչափ **5n[/3n]**

Այստեղ 5n ենթադաշտում նշվում է հաշվետվության հերթական համարը և, անհրաժեշտության դեպքում, 3n ենթադաշտում կարող է նշվել հաղորդագրության հերթական համարը տվյալ հաշվետվության մեջ: Դիտարկվող դաշտի կիրառումը պայմանավորված է նրանով, որ ՀՏ 950 «Քաղվածք հաշվից» հաղորդագրության մեջ հաշվետվության տողերի քանակը սահմանափակ է և մեկ գործառնական օրվա կտրվածքով հաշվի քաղվածքը կարող է բաղկացած լինել մի քանի ՀՏ-ից: Նման

* – Բանկային օր = 8 ժամ տևողություն ունեցող աշխատանքային օր:

պարագայում, ելնելով առկա հաղորդագրությունների (քաղվածքների) համարակալման անհրաժեշտությունից գրանցվում է քաղվածքի համարը՝ 5n և հերթական հաղորդագրության տեսակի համարը այդ քաղվածքի մեջ՝ 3n:

Օրինակ՝ :28:132/2

Դաշտ **:30V:** Վճարման ամսաթիվ
Ձևաչափ 6!n

Այս դաշտում նշվում է վճարման ամսաթիվը՝ օր, ամիս, տարի:

Դաշտ **:31:** Ամսաթիվ
Ձևաչափ 6!n

Այս դաշտում նշվում է ամսաթիվը՝ օր, ամիս և տարի սկզբունքով, օրինակ՝ :31:290198

Դաշտ **:32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար
Ձևաչափ 6!n3!a15d
Այս դաշտում նշվում է՝

- 6!n ենթադաշտում → վճարման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը, DDMMYY տեսքով, որը չի կարող մեծ լինել ընթացիկ բանկային օրվա ամսաթվից (Այսինքն չի կարող նշվել ապագա ամսաթվով վճարում):
- 3!a ենթադաշտում → արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է վճարը
- 15d ենթադաշտում → վճարվող գումարը, տասնորդական ստորակետից հետո **2** նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ AMD-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է **0** թիվը:

Օրինակ՝ :32A:271298AMD1000000,10 կնշանակի 1998-ի դեկտեմբերի 27-ին վճարման ներկայացրած 1՝000՝000 դրամ 10 լումա գումար:

Դաշտ **:32B:** Արժույթի կոդ և գումար
Ձևաչափ 3!a15d

Այս դաշտում նշվում են :32A: դաշտի համանման տվյալների արժեքները, բացի ամսաթվից: Օրինակ՝ :32B:AMD1500500,60 կնշանակի վճարման ներկայացրած 1՝500՝500 դրամ 60 լումա գումար:

Դաշտ **:50A:** Վճարող
Ձևաչափ 12!n[4n]
4*35x

Այս դաշտում ներկայացվում է փոխանցման աղբյուրը (վճարումը նախաձեռնող հաճախորդը): Դաշտի ներկայացման այս տարբերակում նշվում են վճարողի

հաշվեհամարը և անունը (անվանումը) վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված տվյալներ, հասցեն և այլն:

Դաշտը լրացվում է հետևյալ կարգով՝

- 12!n[4n] – վճարողի հաշվի համար
- 35x - անուն (անվանում)
- 35x - փողոց, շենք
- 35x - քաղաք, փոստային դասիչ
- 35x - լրացուցիչ 5-րդ տող

Ընդ որում, պարտադիր լրացման ենթակա են միայն վճարողի հաշվեհամարը և անունը (անվանումը): Առաջին տողը հաշվի համարից (12!n[4n]) բացի ուրիշ ոչ մի տեղեկատվություն չպետք է պարունակի: Երկրորդ տողում նշվում է միայն վճարողի անունը (անվանումը): Երրորդ տողում լրացվում է վճարողի հասցեն՝ փողոց, շենք և այլն: Չորրորդ տողում նշվում է վայրը՝ քաղաք, գյուղ, ավան և այլն, որտեղ գրանցված է վճարողը:

Եթե տեղեկատվությունը գերազանցում է 35-նիշանոց մեկ տողի սահմանը, ապա կարելի է անցնել հաջորդ տողին: Ամեն դեպքում տողերի քանակը չպետք է լինի 4-ից ավել, չհաշված հաշվեհամարի տողը:

Օրինակ՝ :50A:157015963141
«Նաիրի» ԲԲԸ
Վրացական 49
Երևան 375051

Դաշտ **:50C:** Վճարող
Ձևաչափ 5!n
4*35x

Դաշտի ներկայացման այս տարբերակը օգտագործվում է այն դեպքում, երբ վճարողը բանկում հաշիվ չունի: Լրացվում են վճարումը ընդունող բանկի կոդը և վճարողի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված տվյալներ, հասցեն և այլն:

Օրինակ՝ :50C:14200
Պետրոսյան Պարգև
AA0406085, 070698,004

Դաշտ **:51:** Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ
Ձևաչափ 10!n

Դաշտում արտապատկերվում է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշի համարը այն դեպքերում, եթե վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ և վճարումը համաձայն «Սոցիալական քարտերի կիրառման մասին» ՀՀ օրենքի՝ պետք է պարունակի սոցիալական քարտի համարը:

Օրինակ՝ :51:2414690038

Դաշտ **:59:** Շահառու

Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս դաշտում ներկայացվում է վճարման հասցեատերը՝ շահառուն: Նշվում է շահառուի հաշվեհամարը և անունը (անվանումը) վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված տվյալներ, հասցեն և այլն:

Դաշտը լրացվում է հետևյալ կերպ.

- 1-ին տողում լրացվում է միայն հաշվեհամարը՝ 12!n[4n]
- 2-րդ տողում անունը (անվանումը)՝ 35x
- 3-րդ տողում լրացվում է հասցեն՝ փողոց, շենք, 35x
- 4-րդ տողում նշվում է վայրը՝ քաղաք, գյուղ, ավան և այլն, ինչպես նաև փոստային դասիչը, որտեղ գրանցված է շահառուն, 35x
- 5-րդ տողը նախատեսված է լրացուցիչ տեղեկությունների համար՝ 35x

Եթե տեղեկատվությունը գերազանցում է 35-նիշանոց մեկ տողի սահմանները, ապա կարելի է անցնել հաջորդ տողին: Ամեն դեպքում տողերի քանակը չպետք է գերազանցի 4-ը (առանց հաշվեհամարի տողի):

Օրինակ՝ :59:142005364989
Թորոսյան Թորոս

Դաշտ **:60A:** Արժեթղթի սկզբնական մնացորդ
Չևաչափ 15d

Այս դաշտում ներկայացվում է որոշակի նշված տեսակի պետական արժեթղթի դեպո հաշվի սկզբնական մնացորդը՝ ՀՀ կենտրոնական բանկի գործառնական օրվա բացման պահի դրությամբ:

Դաշտ **:60F:** Դրամական սկզբնական մնացորդ
Չևաչափ 1a6!n3!a15d

Այս դաշտում ներկայացվում է դրամական հաշվի սկզբնական մնացորդը գործառնական օրվա բացման պահի դրությամբ, որտեղ՝

- 1a ենթադաշտում գրանցվում է դեբետի «**D**» կամ կրեդիտի «**C**» նույնացուցիչը (Identifier)
- 6!n – ամսաթիվ՝ օր, ամիս, տարի
- 3!a – արժույթի կոդ
- 15d – գումար

Օրինակ՝ :60F:C100198AMD1246789,20

Դաշտ **:60M:** Դրամական միջանկյալ մնացորդ
Չևաչափ 1a6!n3!a15d

Այն դեպքերում, երբ հաշվից տեղեկությունները տրամադրվում են մեկից ավելի հաղորդագրությունների միջոցով, այս դաշտում ներկայացվում է դրամական սկզբնական մնացորդի միջանկյալ արժեքը (նախորդ հաղորդագրությունում նկարագրված գործառնությունների արդյունքում ստացված մնացորդ): Դիտարկվող դաշտը լրացվում է :60F: դաշտին համանման, օրինակ՝

:60M:D251298AMD1000000,10

Դաշտ **:61:** Հաշվետվության տող
Ձևաչափ 6!n1a15d4!a16x[/34x]

Այս դաշտում ներկայացվում են յուրաքանչյուր գործարքի մանրամասները, որտեղ լրացվում են հետևյալ ենթադաշտերը՝

- 6!n - վճարային գործարքի կատարման ամսաթիվ՝ օր, ամիս, տարի (DDMMYY)
- 1a - դեբետի «**D**» կամ կրեդիտի «**C**» նույնացուցիչ
- 15d - գումար
- 4!a - գործարքի տեսակը նույնականացնող կոդ
  ԷՀԱ համակարգի միջոցով փոխանցված հաղորդագրությունների նույնականացման համար օգտագործվում է **Sxyz** ֆորմատը, ընդ որում, եթե հաշվում փոփոխություն են առաջացրել ոչ ԷՀԱ-ի միջոցով փոխանցված հաղորդագրությունները, ապա օգտագործվում է **Nxyz** ֆորմատը: Երկու դեպքում էլ վերջին երեք նիշերը (xyz) պետք է ունենան հետևյալ նշանակումներից մեկը՝
  - **BDG** – հաշվարկներ բյուջեի հետ
  - **BRF** – պարգևատրում միջնորդության համար (միջնորդավճար)
  - **CHG** – ծախսեր (հաճախորդներին մատուցված ծառայությունների հետ կապված փաստացի կատարված ծախսեր, այդ թվում՝ առաքման, փոստային, հեռախոսային և այլն)
  - **CHK** – չեկեր
  - **CLI** – քլիրինգով ստացված կամ վճարված գումարներ
  - **COL** – ինկասո (օգտագործվում է հիմնական գումարը մուտքագրելիս)
  - **COM** – կոմիսիոն վճարներ
  - **DIV** – շահութաբաժին (dividend)
  - **ECK** – եվրոչեկեր (ներկայացված եվրոչեկերի դիմաց հաճախորդի հաշվի կրեդիտագրում, գնված եվրոչեկերի համար հաճախորդի հաշվի դեբետագրում)
  - **GST** – պետական արժեթղթերի առք ու վաճառք
  - **INT** – տոկոսներ
  - **LDP** – վարկ
  - **SEC** – երաշխիքներ (օգտագործվում է հիմնական գումարը մուտքագրելիս - հաճախորդի հաշվի դեբետագրում բանկի կողմից երաշխիքի վճարված գումարի դիմաց)
  - **STO** – անընդհատ գործող պատվեր (Standing Order)՝ հաճախորդի կարգադրության հիման վրա հաշվի պարբերական դեբետագրում, այսինքն պարբերաբար վճարումների կատարում էլեկտրաէներգիայի, մեքենայի սպասարկման, ալիմենտների դիմաց և այլն
  - **TCK** – ճանապարհային չեկեր
  - **TRF** – փոխանցումներ
  - **MSC** – տարբեր (վերը չնշված բոլոր մնացած գործառնությունները)
  - **SWT**—Փոխանակման աճուրդի հետ կապված, զուտացման արդյունքով փոխանցված կամ ստացված գումար

- **ARC**—«Արքա» քարտերով վճարումների համակարգով վերջնահաշվարկի գումար,
- **STK**—«ՍՏԱԿ» համակարգով վերջնահաշվարկի գումար,
- **APY**—«Արքա Փեյ» համակարգով վերջնահաշվարկի գումար։

- 16x - վճարային գործարքի հղման համարը, որտեղ նշվում է այն հաղորդագրության գործառնության համարը (դաշտ :20:), որը փոփոխություն է առաջացրել հաշվում
- [/34x] - լրացուցիչ տեղեկություններ

Օրինակ՝ **:**61**:**271298D25963,1SBDG1568742

Դաշտ **:62A:** Արժեթղթի վերջնական մնացորդ
Ձևաչափ 15d

Այս դաշտում ներկայացվում է հաշվում որոշակի նշված տեսակի պետական արժեթղթի վերջնական մնացորդը։

Դաշտ **:62F:** Դրամական վերջնական մնացորդ
Ձևաչափ 1a6!n3!a15d

Այս դաշտը պարունակում է գործառնական օրվա ընթացքում բոլոր գործառնությունների արդյունքում ստացված դրամական հաշվի մնացորդը։ Դիտարկվող դաշտը լրացվում է **:**60F**:** դաշտին համանման, օրինակ՝
:62F**:**D251198AMD1000000**,**10

Դաշտ **:62M:** Դրամական միջանկյալ մնացորդ
Ձևաչափ 1a6!n3!a15d

Եթե դրամական հաշվից տեղեկությունները տրամադրվում են մեկից ավելի հաղորդագրությունների միջոցով կամ հաշվի մնացորդի մասին տրամադրվող տեղեկությունը վերջնական չէ տվյալ գործառնական օրվա կտրվածքով, ապա այս դաշտում նշվում է դրամական վերջնական մնացորդի միջանկյալ արժեքը (տվյալ հաղորդագրությունում նկարագրված գործառնությունների արդյունքում ստացված մնացորդը)։ Դիտարկվող դաշտը լրացվում է **:**60F**:** դաշտին համանման, օրինակ՝
:62M**:**C150198AMD120000**,**00

Դաշտ **:64:** Դրամական վերջնական հասանելի մնացորդ
Ձևաչափ 6!n3!a15d

Այս դաշտը ներկայացնում է հաճախորդին հասանելի դրամական վերջնական գումարը, որը կարող է տարբերվել **:**62F**:** դաշտում նշված գումարից։ Դա հնարավոր է այն դեպքում, երբ հաշվին օվերդրաֆտ է տրամադրված կամ հաշիվը ունի չնվազող մնացորդ և այլն։ Դիտարկվող դաշտում լրացվում են հետևյալ ենթադաշտերը՝

- 6!n – ամսաթիվ՝ օր, ամիս, տարի
- 3!a – արժույթի կոդ
- 15d – գումար

Օրինակ՝ **:**64**:**290198AMD258643**,**00

Դաշտ **:70A:** Վճարման նպատակ
Ձևաչափ 4*35x

Այս դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է փոխանցված գումարը:

Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
Ձևաչափ 6*35x

Այս դաշտը օգտագործվում է հաղորդագրությունը ուղարկողից ստացողին հասցեագրված տեղեկությունների փոխանցման համար:
Մերժման կամ գումարի հետ վերադարձի ժամանակ սահմանված համապատասխան հաղորդագրության մեջ կարող են կիրառվել մերժման պատճառի կամ հետ վերադարձի պատճառի հետ կապված կոդեր, ըստ հաղորդագրությունների համար սահմանված սկզբունքի:
Դիտարկվող դաշտի 1-ին տողում կարող են լրացվել տարբեր կոդեր, որոնք բացահայտում են իրավիճակային սահմանված դեպքերը:

Եթե կոդից բացի լրացուցիչ պարզաբանում է պահանջվում, ապա այն պետք է նշվի հաջորդ 35-նիշանի տողից: Կոդը դրվում է անմիջապես «**:**» նշանից հետո և պետք է հանդիսանա 1-ին տողի միակ տեղեկատվությունը: Եթե կոդ չի օգտագործվում, ապա դաշտը լրացվում է ազատ ֆորմատով հատկացված առավելագույնը 35 նիշ պարունակող տողերի սահմաններում:

Օրինակ՝ :72://01//
Խնդրում ենք ճշտել վճարման
հասցեատիրոջ տվյալները

Դաշտ **:75:** Հարց
Ձևաչափ 6*35x

Այս դաշտում գրանցվում է անհրաժեշտ հարցի բուն բովանդակությունը, ընդ որում դիտարկվող դաշտի սահմաններում հնարավոր է ներկայացնել միանգամից մի քանի հարց: Այդ դեպքում ցանկալի է յուրաքանչյուր առաջադրվող հարցը գրել նոր տողից, օրինակ՝

:75:Մեզ տեղեկացրել են, որ վճարման
հասցեատերը չի ստացել վճարումը

Դաշտ **:76:** Պատասխան
Ձևաչափ 6*35x

Այս դաշտում տրվում է պահանջվող պատասխանը: Հնարավոր է մի դաշտում նշել միանգամից մի քանի պատասխան, այդ դեպքում ցանկալի է յուրաքանչուր պատասխան գրել նոր տողից:

Օրինակ՝ :76:Մենք հաստատում ենք գործարքի
կատարումը

Դաշտ **:77:** Պարզաբանում
Ձևաչափ 20*35x

Այս դաշտը օգտագործվում է լրացուցիչ պարզաբանումներ տալու համար, երբ **:75:** և **:76:** դաշտերում հատկացված տողերի քանակը չի բավականացնում հարցումը կամ պատասխանը ամբողջությամբ ներկայացնելու համար:

Դաշտ **:77E:** Ենթահաղորդագրություն
Չևաչափ 35x
[70*50x]

Այս դաշտում լրացվում է առաքման ենթակա հաղորդագրության տեսակի բուն բովանդակությունը՝ իր դաշտերով:

Դաշտ **:79:** Նկարագրություն
Չևաչափ 35*50x

Այս դաշտում կարող է ներկայացվել ցանկացած տեսակի բանկային տեղեկատվություն, ուղղված ինչպես վճարողից շահառուին, այնպես էլ հաղորդագրությունը ուղարկողից այլ տեսակի ստացողին: Դիտարկվող դաշտի համար լրացման կանոններ գոյություն չունեն, բացի տողերի քանակի՝ 35, և նրանց առավելագույն երկարության՝ 50 նիշ, սահմանափակման:

Անհրաժեշտ է նշել, որ վերը նկարագրված յուրաքանչյուր համապատասխան դաշտում գրանցվող տեքստային (բառային) տեղեկատվությունը չի կարող ավարտվել վերջակետի՝ «**:**», նշանով:

Գլուխ 4. Հաղորդագրության կառուցվածքը

Յուրաքանչյուր հաղորդագրություն բաղկացած է 3 մասից՝

- գլխագիր
- տեքստ
- վերջաբան

Հաղորդագրության տեքստը և գլխագիրը, բացառությամբ ամսաթվի, ժամի և բացառիկ (չկրկնվող) համարի, լրացվում են օգտագործողի կողմից:

Հաղորդագրության գլխագրում ներկայացվում են.

- հաղորդագրության տեսակի կոդը՝ 3!n
- հաղորդագրությունը ուղարկողի գլխամասի կոդը՝ 5!n
- հաղորդագրությունը ստացողի գլխամասի կոդը՝ 5!n
- հաղորդագրության բացառիկ համարը՝ 16!n
- հաղորդագրության ուղարկման ամսաթիվը՝ 6!n (օր, ամիս, տարի ⇨ DDMMYY)
- հաղորդագրության ուղարկման ժամը՝ 6!n (ժամ, րոպե, վայրկյան ⇨ HHMMSS)

Օրինակ՝

ՀՏ-ի կոդ	Հաղորդա-գրությու-նը ուղարկող բանկի կոդ	Հաղորդա-գրությու-նը ստացող բանկի կոդ	Հաղորդագրության բացառիկ համար 16!n			Հաղորդա գրության ուղարկ-ման ամսաթիվ	Հաղորդա գրության ուղարկ-ման ժամ
			Վճարո-ղի բանկի կոդ	ուղարկ-ման ամսա-թիվ	հերթա-կան համար		
3!n	5!n	5!n	5!n	6!n	5!n	6!n	6!n
100	**14200**	**10300**	**14218**	**110398**	**00258**	**110398**	**135020**

Տվյալ օրինակում որպես հաղորդագրության տեսակի եռանիշ թվային կոդ նշված է «Վճարման հանձնարարական»-ի կոդը: Հաղորդագրության 16 նիշանի բացառիկ համարում ընդգրկված է ԷՀԱ համակարգի կողմից ՀՏ-ին տրված հերթական՝ 5n, համարը: Ընդ որում, եթե համարի արժեքը հնգանիշ թիվ չէ, ապա թվային արժեքի սկզբից ավելացվում են անհրաժեշտ բացակայող նիշերը 0-ների տեսքով: Դիտարկվող համարը ենթակա չէ փոփոխման հաղորդագրության առաքման՝ վճարողի բանկից մինչև շահառուի բանկ ընկած, ամբողջ ճանապարհի ընթացքում:

Գլխագիրը լրացվում է մեկ տողով և տվյալների արժեքների միջև բացատ (white space) չի դրվում: Հաղորդագրությունը սկսվում է «{» նշանով և վերջանում է «}» հակառակ նշանով: Սկզբի «{» նշանից հետո անմիջապես՝ առանց բացատի, լրացվում է գլխագիրը, որը ավարտվում է ASCII, «Տողի փոխադրում – նոր տող», «↵» նշանով:

Հաղորդագրության վերջին նիշից հետո դրվում է «↵» նշանը, այնուհետև ամենավերջում «}» և «↵» ծառայողական նշանները:

Բուն հաղորդագրությունը կազմվում է դաշտերից: Յուրաքանչյուր դաշտը պետք է լրացվի խստորեն պահպանելով գրանցման կանոնները և ֆորմատը: Հաղորդագրության տեքստային մասը ներկայացվում է **:**«Դաշտի բնորոշիչ»**:** «Դաշտի պարունակություն» զույգերի ամբողջությամբ: Յուրաքանչյուր նոր դաշտ սկսվում է դաշտի բնորոշիչով, որը առջևից և ետևից ներառվում է ծառայողական «**:**» նշանների մեջ, օրինակ՝ **:20:** դաշտ: Դաշտի բնորոշչից հետո անմիջապես՝ առանց բացատի, լրացվում է դաշտի համապատասխան տեղեկատվությունը: Յուրաքանչյուր տող ավարտվում է ASCII «↵» նշանով: Վերջին դաշտի վերջին նիշը լրացնելուց հետո դրվում է «↵» նշանը և այնուհետև (ըստ վերը նկարագրվածի) գրանցվում են ծառայողական «}» և «↵» վերջնական նշանները:

Թվարկած **{**, **}**, ↵ և **:** նշանները յուրաքանչյուր հաղորդագրության տեսակի մեջ կարող են հանդես գալ միայն որպես ծառայողական նիշեր և որևէ դաշտի բուն տեքստային բովանդակության մեջ հանդես գալ չեն կարող:

Օրինակ՝

{**1001420010300142181103980025811039813502O**↵

:20**:**14200/11031998/5↵

:32A**:**110398AMD2070500**,**10↵

:50A**:**142183216548↵

«Զանգեզուր» ՍՊԸ↵

Գ. Նժդեհի 1↵

Գորիս↵

:59**:**121124321678↵

«ԵրԱՋ» ԲԲԸ↵

Ֆուրմանով 2↵

Երևան 375051↵

:70A**:**Համաձայն 251297-ի №12/97 պայմանագրի↵

}↵

Անհրաժեշտ է նշել, որ «BankMail» համակարգում էլեկտրոնային հաղորդագրությունը կարող է առաքվել՝

- ըստ վերը նկարագրվածի, ֆայլի տեսքով ստեղծված հաղորդագրության տեսակի միջոցով

կամ

- MS-SQL տվյալների բազայի հիման վրա ստեղծված «bmInterface» Աղյուսակի միջոցով:

Հարկ է նշել նաև այն հիմնական պայմանանշանների (symbols) բազմությունը, որը կարող է կիրառվել, ԷՀԱ համակարգում, յուրաքանչյուր հաղորդագրության տեսակի ֆորմատի մեջ՝

► ----> կրկնվող դաշտերի (տողերի) պարբերության **սկիզբ**

- ----| կրկնվող դաշտերի պարբերության **վերջ**
- Հաղորդագրության մեջ կիրառման համար թույլատրելի տառերի և պայմանանշանների (symbols) բազմության մասին մանրամասին նշված է **գլուխ 2-ում**
- Պ - հաղորդագրության մեջ տվյալ դաշտի (tag)-ը ՀՏ-ում պարտադիր առկա լինելու կարգավիճակի սահմանվում է Պ -տառով
- Օ - հաղորդագրության մեջ տվյալ դաշտի (tag)-ը ՀՏ-ում ոչ պարտադիր առկա լինելու կարգավիճակը սահմանվում է Օ -տառով

Յուրաքանչյուր ձևավորվող հաղորդագրության առավելագույն մեծությունը (լրացված բոլոր տվյալների, ինչպես նաև պարբերությունների, ենթապարբերությունների հետ միասին), այդ թվում՝ հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, չպետք է գերազանցի 20000 բայթը:

Գլուխ 5. ՀՀ կենտրոնական բանկում կիրառվող արտաքին հաղորդագրությունների տեսակների ֆորմատների նկարագրություն

5.1 Համակարգային հաղորդագրություններ

ՀՏ 000 Անդորրագիր ֆայլի ընդունման մասին

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ) ձևավորվում է «BankMail» էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգի կողմից և ուղարկվում է, ի պատասխան, որևէ արտաքին հասցեատերին: Այն պարունակում է տեղեկություն (հասցեագրված արտաքին նախաձեռնողին) ստացված ֆայլի ստուգման արդյունքի մասին:

Տվյալ հաղորդագրության կառուցվածքն ունի հետևյալ տեսքը՝
{000**IM000045.bma**300715124**06**IM000046.bma}, որտեղ՝

Հաղորդագրության տեսակը 3!n	Այն ֆայլի անվանումը, որին տրամադրվում է անդորրագիր 12!x	Անդորրագրի տրամադրման ամսաթիվ և ժամ 10!n		Սխալի կոդը 2!n	Սպասվող ֆայլի անվանումը 12!x
		6!n	4!n		
000	IM000045.bma	300715	1240	06	IM000046.bma

Այս անդորրագիրը հանդես է գալիս մեկ տողով առանց ՀՏ-ի գլխագրի: Հաղորդագրությունը սկսվում է «{» նշանով և վերջանում է «}» նշանով, տվյալները նրանում լրացվում են առանց բացատների (White space):

Ստուգման ընթացքում բացահայտված հնարավոր սխալների ցուցակը և նրանց կոդերը բերված են հետևյալ Աղյուսակում: Ի տարբերություն այլ ֆորմատների այստեղ սխալների կոդերը «//» կրկնակի զատիչներով չեն տարանջատվում:

Կոդ	Կոդի բովանդակությունը	Կարգավիճակ
06	Հաղորդագրությունը ընդունված է	**Ընդունված է**
07	Համարակալման սխալ՝ ֆայլի անվանման մեջ	**Ընդունված չէ**
08	Պաշտպանության սխալ	
09	Սխալ՝ ֆայլի ընթերցման ժամանակ	
10	Անհայտ հաղորդագրության տեսակ	
11	Սխալ գլխագրում	
12	Սխալ բացառիկ համարում	
13	Սխալ հաղորդագրությունում	

5.2 Դրամական միջոցների փոխանցման հաղորդագրություններ

ՀՏ 100 Վճարման հանձնարարական

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) վճարողի բանկը ուղարկում է շահառուի (ստացողի) բանկին միջնորդավորված ձևով: Դիտարկվող ՀՏ-ն օգտագործվում է վճարման հանձնարարական՝ նաև արտարժույթով, առաքելու համար, բայց այն չի կարող կիրառվել դեպի ՀՀ գանձապետարան (բյուջե) դրամական փոխանցումներ կատարելու համար:

Վճարողին և շահառուին սպասարկող բանկերը միարժեքորեն որոշվում են նրանց հաշվեհամարներով, շնորհիվ ՀՀ կենտրոնական բանկում ընդունված հաշվեհամարների միասնական կոդավորման կարգի:

Հաղորդագրության միջոցով իրականացված փոխանցման հետ կապված դեբետագրվող և կրեդիտագրվող հաշիվները պետք է լինեն միևնույն արժույթի:

Այս հաղորդագրությունը կարելի է ուղարկել հետևյալ ճանապարհներից որևէ մեկով՝

- մասնաճյուղից ԷՀԱ համակարգ մուտքագրվող բոլոր վճարման հանձնարարականները, որոնք հասցեագրված են այլ բանկի մասնաճյուղին պարտադիր անցնում են Ուղարկող մասնաճյուղ ⇨ Ուղարկող գլխամաս ⇨ **ՀՀ կենտրոնական բանկ** ⇨ Ստացող գլխամաս ⇨ Ստացող մասնաճյուղ ուղիով
- միևնույն բանկի տարբեր մասնաճյուղերի միջև վճարման հանձնարարականների փոխանցման դեպքում յուրաքանչյուր հաղորդագրություն անցնում է Ուղարկող մասնաճյուղ ⇨ Գլխամաս ⇨ Ստացող մասնաճյուղ ուղիով
- գլխամասում կազմված վճարման հանձնարարականները, որոնք հասցեագրված են այլ բանկի գլխամասին կամ մասնաճյուղին պարտադիր պետք է անցնեն **ՀՀ կենտրոնական բանկով**

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
O	30V	Վճարման ամսաթիվ	6!n	2
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	3
Պ	50A	Վճարող	12!n[4n] 4*35x	4
O	51	Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ	10!n	5
Պ	59	Շահառու	12!n[4n] 4*35x	6
Պ	70A	Վճարման նպատակ	4*35x	7

O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	8

Պ – պարտադիր, O – օժանդակ

- Մասնաճյուղում **:50A:** դաշտում հաշվեհամարը լրացնելիս պետք է հետևել, որ դաշտում նշված լինի միայն մասնաճյուղում սպասարկվող հաշվեհամարը կամ այդ մասնաճյուղին պատկանող հաշվեհամարը նրա գլխամասում
- Գլխամասում հաշվեհամարը լրացնելիս պետք է հետևել, որ **:50A:** դաշտում լրացված լինի տվյալ գլխամասում կամ նրա որևէ մասնաճյուղում սպասարկվող կամ ԿԲ-ում տվյալ բանկին պատկանող հաշվեհամարներից մեկը
- **:32A:** դաշտում նշված **ցանկացած** արժույթի կոդին (3!a) պետք է համապատասխանեն **:50A:** և **:59:** դաշտերում ներկայացված հաշիվների արժույթները:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չևաչափ 16x
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:30V:** Վճարման ամսաթիվ
   Չևաչափ 6!n
   Այս օժանդակ դաշտում նշվում է հանձնարարականով տրված վճարման օրը:

3) Դաշտ **:32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար
   Չևաչափ 6!n3!a15d
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է՝
- 6!n ենթադաշտում → վճարման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը, DDMMYY տեսքով, որը չի կարող մեծ լինել ընթացիկ բանկային օրվա ամսաթվից (Այսինքն ապագա ամսաթվով վճարումը արգելվում է):
- 3!a ենթադաշտում → արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է վճարը
- 15d ենթադաշտում → վճարվող գումարը, տասնորդական ստորակետից հետո **2** նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ AMD-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է **0** թիվը:

4) Դաշտ **:50A:** Վճարող
   Չևաչափով 12!n[4n]
   4*35x
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է փոխանցման նախաձեռնողը, այսինքն՝ վճարողի հաշվեհամարը՝ 12!n[4n], և անունը (անվանումը)՝ վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված տվյալներ, հասցեն 4*35x:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն՝ Գլուխ 3.

5) Դաշտ **:51:** Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ
Ձևաչափ 10!n

Այս օժանդակ դաշտում նշվում է ֆիզիկական անձի սոցիալական ապահովության քարտի համարը:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն՝ Գլուխ 3.

6) Դաշտ **:59:** Շահառու
Ձևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է վճարման շահառուն: Պարտադիր նշվում են շահառուի հաշվեհամարը՝ 12!n[4n], և անունը (անվանումը)՝ վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված տվյալներ, հասցեն 4*35x: Եթե շահառուի հաշվեհամարը հայտնի չէ (կամ հաշիվը բացակայում է), ապա հաշվեհամարի տողում նշվում է շահառուին սպասարկող բանկի 5 նիշանի կոդը + 6 հատ զրո + 1 հատ ստուգիչ նիշը, այնուհետև (4*35x ենթադաշտում) բացի անուն, ազգանունից լրացվում են նաև շահառուի անձնագրի տվյալները, վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված այլ տվյալներ, հասցեն:

7) Դաշտ **:70A:** Վճարման նպատակ
Ձևաչափ 4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է փոխանցված գումարը:

8) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Ձևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 108 Հաճախորդի կողմից դրամական միջոցների փոխանցման հանձնարարական

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) ձևավորվում է բանկի կամ ոչ բանկ հաճախորդի (ինչպես նաև ՀՀ գանձապետարանի) հանձնարարականի հիման վրա դրամական միջոցների փոխանցման համար:

Սույն հաղորդագրությունը ապահովում է դրամական միջոցների, դրամով կամ արտարժույթով, փոխանցման հնարավորություն հետևյալ շահառուներին՝

- յուրաքանչյուր առևտրային բանկին
- ՀՀ գանձապետարան կամ տեղական բյուջե
- բորսային կամ կենտրոնական դեպոզիտարիային գործարքների իրականացման համար
- որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	23E	Հանձնարարականի կոդ	4!c[/30x]	2
Պ	30A	Կարգադրող-հաճախորդի հանձնարարականի կատարման ամսաթիվ, ժամ և րոպե	6!n4!n	3
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	4
Օ	33B	Հաճախորդի հանձնարարականի արժույթի կոդ և գումար	3!a15d	5
Օ	36	Արտարժույթի փոխարժեք	12d	6
Պ	23P	Վճարողի նույնացուցիչ	6x	7
Պ	50a	Վճարող	E կամ F	8
Օ	52E	Կարգադրող-հաճախորդին սպասարկող կազմակերպություն	12!n[4n] 4*35x	9
Պ	23Q	Շահառուի նույնացուցիչ	6x	10
Պ	59a	Շահառու-հաճախորդ	E կամ F	11
Օ	57E	Շահառու-հաճախորդին սպասարկող կազմակերպություն	12!n[4n] 4*35x	12
Պ	70A	Վճարման նպատակ	4*35x	13

O	72B	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	14
O	23S	Հիմնական պարտապանի նույնացուցիչ	6x	15
O	72A	Հիմնական պարտապան (պարտավորություն ունեցող անձ)	6*35x	16
O	23M	Վերջնական շահառուի նույնացուցիչ	6x	16.1*
O	72C	Վերջնական շահառու	6*35x	16.2*
O	77B	Հաշվետվողականության կոդ	3*35x	17
O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	18

Պ – պարտադիր, O – օժանդակ

գրանցման դաշտ

► **:**32A**:** դաշտում նշված որևէ արժույթի կոդը (3!a) պետք է համապատասխանի **:**50a**:** և **:**59a**:** դաշտերում ներկայացված բանկային հաշիվների արժույթներին:

Դաշտերի նկարագրությունը

1) **Դաշտ :20:** Գործառնության համար

Չնաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) **Դաշտ :23E:** Հանձնարարականի կոդ

Չնաչափ 4!c[/30x]

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ՀՏ 108 հանձնարարականում ներկայացված գումարի վճարման տեսակի կոդը, որը բնութագրում է, թե ինչպիսի հանձնարարական է կատարվում: Սույն :23E: դաշտը բաղկացած է հանձնարարականի հիմնական կոդից՝ 4!c, և լրացուցիչ ստուգման երկրորդ կոդից՝ [/30x]: Համապատասխան տեսակի վճարումը իրականացնելու համար պետք է (խստորեն) կիրառվի վերջինիս համար սահմանված հիմնական կոդի արժեքը (չի կարող օգտագործվել՝ վճարումների համար սահմանված այլ կոդ), օրինակ՝ դեպի բյուջե վճարում կատարելու պարագայում 4!c ենթադաշտում լրացվում է միայն **TUBG** կոդը և ըստ այդմ այլ կոդի արժեք չի կարող լրացվել:

Հանձնարարականի կոդի 4!c ենթադաշտում լրացվում է սույն Աղյուսակում նշված կոդերից մեկը: Իսկ, անհրաժեշտության դեպքում, ոչ պարտադիր ենթադաշտում ([/30x]) կարող է գրանցվել նաև հիմնական կոդի հետ կապված ստուգման երկրորդ (լրացուցիչ տեղեկատվության) կոդը:

Աղյուսակ 1

1.	ԷՀԱ համակարգում կիրառման համար սահմանված հանձնարարականի հիմնական կոդեր	Լրացուցիչ ստուգման երկրորդ կոդ
TUBG	Բյուջետային հաշիվներին ուղղված վճարումներ (տեղական և համայնքային)	
BUDP	Բյուջետային հաշիվներից կատարվող վճարումներ (տեղական և համայնքային)	
BKBK	Միջբանկային վճարում, այդ թվում՝ ոչ բանկ հաճախորդների միջբանկային վճարումները (որոնց դասակարգումը նշված չէ)	
CINB	Ոչ բանկ հաճախորդների վճարումները ուղղված իրենց սպասարկող բանկին կամ շահառու հաճախորդին (ներբանկային վճարում), եթե վերջնական շահառուն և վճարողը սպասարկվում են նույն բանկում	
BRSA	Բորսայական հարթակներում գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումներ (ուղղված դեպի բորսա կամ նրանից ետ փոխանցվող)։ Կիրառվում է երկրորդ կոդի հետ միասին	**EXCHG**, **OVERN**, **STOCK**, **CORT**
CSDT	Կենտրոնական դեպոզիտարիայում գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցում (ուղղված դեպի դեպոզիտարիա կամ նրանից հետ փոխանցվող)։ Կիրառվում է երկրորդ կոդի հետ միասին	**TCRG**, **CORST**, **CORT**
CBMP	Դրամավարկային քաղաքականության գործիքակազմի իրականացման հետ կապված փոխանցումներ (ուղղված դեպի ԿԲ)։ Կիրառվում է երկրորդ կոդի հետ միասին	**AVAND**, **REPO**, **REVREP**
INBU	Ներբյուջետային վճարումներ	

Ստորև նշված երկրորդային կոդերի ցանկը կարող է ընդլայնվել

2.	Ստուգման լրացվող երկրորդ կոդերը (որպես լրացուցիչ պայման) կարող են կիրառվել միայն համապատասխան հիմնական կոդերի հետ միասին (ըստ Աղյուսակ 1-ի)
CORT	Իրականացված առևտրի արդյունքում հաշվարկների (վերջնահաշվարկի) ապահովման նպատակով վճարում, կապված՝ արտարժույթի առք ու վաճառքի, արժեթղթերով և այլ գործարքների հետ
EXCHG	Արտարժույթով առք ու վաճառքի գործառնության հետ կապված

OVERN	Օվերնայթ վարկերի գործառնության հետ կապված
STOCK	Պետական պարտատոմսերով գործառնության հետ կապված
TCRG	Ժամկետային վարկային գործառնության հետ կապված
CORST	Կորպորատիվ արժեթղթերով գործառնության հետ կապված
AVAND	Ավանդային գործառնության հետ կապված
REPO	Ռեպո գործառնության հետ կապված
REVREP	Հակադարձ ռեպո գործառնություն հետ կապված
CBGT	Գանձապետարանի կողմից ԵԱՏՄ գործառնությունների հետ կապված ԷՎՀ-ի միջոցով միջազգային փոխանցումներ/ստացումներ

3) **Դաշտ :30A:** Կարգադրող-հաճախորդի հանձնարարականի կատարման ամսաթիվ, ժամ և րոպե

Չնաչափ 6!n4!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Կարգադրող-հաճախորդին սպասարկող բանկի կամ լիցենզավորված ֆինանսական կազմակերպության կողմից հանձնարարականի կատարման ամսաթիվը, ժամը և րոպեն: Սույն կատարման ամսաթիվը բանկի կողմից հանձնարարականի ուղարկման ամսաթիվը չէ, այն բնութագրում է, երբ են հաճախորդից կանխիկ միջոցները ընդունվել կամ երբ են վճարողի հաշվից անկանխիկ միջոցները ելքագրվել:

Ամսաթվի համար նախատեսված 6!n ենթադաշտը լրացվում է DDMMYY տեսքով, իսկ ժամը և րոպեն լրացվում են 4!n ենթադաշտում՝ HHMM տեսքով:

Եթե վճարումը կատարվել է կանխիկ միջոցներով, ապա հանձնարարականի ընդունման պահից այն համարվում է սպասարկող բանկի կամ լիցենզավորված ֆինանսական կազմակերպության կողմից ակցեպտավորված և կատարված, ուստի լրացվում են վերջինիս վերաբերյալ տվյալները:

Եթե վճարումը պետք է կատարվի անկանխիկ՝ Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվից, ապա այս դաշտում պահանջվում է լրացնել կարգադրող-հաճախորդի հանձնարարականի ակցեպտավորման արդյունքում կատարման ամսաթվի և ժամի վերաբերյալ այն տվյալները, երբ վճարողի հաշվից միջոցները ելքագրվել են (դարձել են անհասանելի):

Հաճախորդի հաշվի միջոցների ելքագրման ամսաթիվը կարող է տարբերվել հաղորդագրության ուղարկման ամսաթվից:

4) **Դաշտ :32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար

Չնաչափ 6!n3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է վճարողի բանկի կողմից հանձնարարականի կատարման նպատակով միջբանկային փոխանցման ամսաթիվը (շահառու-հաճախորդին սպասարկող բանկին (թղթակից բանկ) միջոցների փաստացի փոխանցման հետ կապված հաղորդագրության կատարման ամսաթիվ), արժույթը և փաստացի փոխանցվող գումարը: Ընդ որում, ամսաթվի համար նախատեսված 6!n ենթադաշտը լրացվում է հետևյալ տեսքով

DDMMYY, արժույթի կոդի համար նախատեսված 3!a ենթադաշտում լրացվում է արժույթի կոդը ըստ ISO 4217 ստանդարտի, իսկ փաստացի փոխանցվող գումարը լրացվում է 15d ենթադաշտում:

Նշված 6!n ենթադաշտում պարտադիր պետք է լրացվի միայն ընթացիկ բանկային օրվա ամսաթիվը, այսինքն՝ ապագա ամսաթվով վճարումը չի կարող կատարվել:

Նշված 15d ենթադաշտում գումարը լրացվում է տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ըստ այդմ, հայկական դրամով՝ AMD-ով, փոխանցման ենթակա գումարի պարագայում ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր կարգով, լրացվում է **0** թվային արժեքը:

Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգում սույն դաշտում նշված ամսաթվի մշակման պահանջի հետ կապված այն պետք է լինի հաղորդագրության ուղարկման նույն օրը սակայն, եթե այդ հաղորդագրությունը Կենտրոնական բանկը ստանում է համակարգում սահմանված ժամից հետո, ապա այն մշակվում է հաջորդ գործառնական օրում:

5) **Դաշտ :33B:** Հաճախորդի հանձնարարականի արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d

Այս օժանդակ դաշտում նշվում է կարգադրող-հաճախորդի հանձնարարականով նշված գումարը և արժույթը: Այդ դաշտի համար սահմանված տվյալների լրացումը կրում է միայն տեղեկատվական բնույթ և չպետք է փոփոխվի հաղորդագրության մշակման ամբողջ ընթացքում:

Այս դաշտը (:33B:) լրացվում է, եթե հաճախորդի հանձնարարականով նշված գումարը և արժույթի կոդը տարբերվում են միջբանկային փոխանցման նպատակով ձևավորված հաղորդագրության մեջ :32A: դաշտում լրացված արժույթի կոդից և (կամ) գումարից: Ինչպես նաև լրացվում է , երբ հաճախորդի հանձնարարականով նշված գումարից կատարվել է նաև սահմանված սակագնի գանձում:

Այն դեպքում, երբ :33B: դաշտում լրացված արժույթի կոդը տարբերվում է :32A: դաշտում լրացված արժույթի կոդից, ապա :36: դաշտը ենթակա է պարտադիր լրացման:

6) **Դաշտ :36:** Արտարժույթի փոխարժեք

Ձևաչափ 12d

Այս օժանդակ դաշտում նշվում է այն փոխարժեքը, որով հաղորդագրությունը ուղարկողի կողմից հաճախորդի հանձնարարականով նշված արժույթով գումարը (որը նշված է :33B: դաշտում) փոխարկվել է :32A: դաշտում նշված արժույթով գումարին: Այս (**:36:**) դաշտը լրացվում է միայն **:33B:** դաշտի լրացման դեպքում, որի արժույթը տարբերվում է **:32A:** դաշտի արժույթից:

7) **Դաշտ :23P:** Վճարողի նույնացուցիչ

Ձևաչափ 6x

Այս **պարտադիր՝ :23P:** (P ⇨ Peculiarity), դաշտում նշվում է վճարողի (կարգադրություն ներկայացնողի) նույնացուցիչը, որը փոխկապված է **:50a:** դաշտում լրացվող տվյալների հետ:

Այս դաշտում նշվում է հետևյալ կոդերից մեկը .

- Ֆիզիկական անձ հանդիսացող վճարող՝ **NP** – Natural Person
- Իրավաբանական անձ (այդ թվում՝ ՀՀ իրավական ակտերի համաձայն գրանցված (հաշվառված) հարկ վճարող, նաև անհատ ձեռնարկատեր կամ գերատեսչություն) հանդիսացող վճարող՝ **LP** – Legal Person:

8) **Դաշտ :50a:** Վճարող

Չևաչափ՝	Տարբերակ 50E	12!n[4n]
		4*35x
	կամ	
	Տարբերակ 50F	[12!n[4n]]
		5!n
		4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հանձնարարականը ներկայացնող կարգադրող-հաճախորդը, մասնավորապես լրացվում է վճարողին «կարգադրող-հաճախորդին» բնութագրող տվյալները, որի հանձնարարականի հիման վրա ուղարկվում է հաղորդագրությունը՝ ներկայացված վճարումը կատարելու համար: Եթե Վճարողը՝ «կարգադրող-հաճախորդը», հանդիսանում է հաղորդագրություն ուղարկող բանկը, ապա սույն դաշտը կբնութագրի հաղորդագրություն ուղարկող բանկին:

Անհրաժեշտ է նշել, որ դիտարկվող դաշտը կարող է լրացվել միայն E կամ F տարբերակով:

Եթե կարգադրող-հաճախորդից վճարումը ընդունվել է լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության կողմից, ապա :50a: դաշտի հետ միաժամանակ պարտադիր պետք է լրացվի նաև :52E: դաշտը, որտեղ նշվում են վերջինս բնութագրման համար պահանջվող տվյալները:

Սույն դաշտի 4*35x տողերում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են ցուցիչներ ըստ սահմանված սկզբունքի: Ցուցչի և լրացվող տվյալների միջև դրվում է մեկ զատիչ (սլեշ) նշան (/): Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ իրենց համապատասխան ցուցչի և զատչի կիրառմամբ չեն նշվում: Տվյալ դաշտի լրացման ժամանակ պարտադիր հաշվի է առնվում **:23P:** դաշտում նշված արժեքը: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդի համար լրացվում է ստորև բերված Աղյուսակի 2-րդ սյունակը, իսկ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի դեպքում՝ Աղյուսակի 3-րդ սյունակը:

8.1 - Դաշտ **:50E:** Կարգադրող-հաճախորդ (բանկ)

Չևաչափ	12!n[4n]
	4*35x

Այս տարբերակը լրացվում է այն դեպքում, երբ բանկը, որը ուղարկում է հաղորդագրությունը.

- ինքն է հանդիսանում «կարգադրող-հաճախորդը», իր սեփական վճարումների կատարման համար
- երբ այդ բանկին ներկայացվում է կարգադրող-հաճախորդի հանձնարարականը վճարում կատարելու համար և հանձնարարական ներկայացնող հաճախորդը ունի բանկային հաշիվ անմիջապես տվյալ բանկում: Այսինքն վճարումը կատարում է իր բանկային հաշվից:

Այս դաշտի 12!n[4n] ենթադաշտում նշվում է վճարումը նախաձեռնողի հաշիվը: Այնուհետև 4*35x ենթադաշտում լրացվում են «Կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալները (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն, վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ), ըստ ստորև բերված Աղյուսակի և հաջորդականության.

Աղյուսակ՝ «կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալներ		
Երբ հաճախորդը վճարում է իր բանկային հաշվից		
	Ֆիզիկական անձի դեպքում	Իրավաբանական անձի դեպքում (այդ թվում՝ բանկի գլխամաս կամ մասնաճյուղ)
1	2	3
12!n[4n] ենթադաշտում	Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվի համարը	
4*35x ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում են	
I-ին տող	Անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)	Իրավաբանական անձի անվանումը
II-ից → IV-րդ տողերում	Կարող է լրացվել նաև ստորև նշված տեղեկատվությունը, ըստ առկայության	
	Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը) կամ Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում՝ ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը: Եթե վճարում կատարողը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կամ այլ կարգավիճակ ունեցող անձ (օրինակ՝ փախստական), ապա նշված համարը կարող է չլրացվել:	Հարկ վճարողի հաշվառման համարը

	Անձնագրի տվյալներ կամ ID քարտի համարը կամ անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները	
	Հասցեի վերաբերյալ տվյալներ	
		Որպես լիազորված ղեկավար անձի տվյալներ (բացառությամբ՝ բանկի համար) անուն, ազգանուն, (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)
	Այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:	

8.2 - Դաշտ **:50F:** Կարգադրող-հաճախորդի կանխիկ վճարում (առանց հաշվի)

Ձևաչափ [12!n[4n]]
5!n
4*35x

Այս տարբերակը լրացվում է այն դեպքում, երբ «կարգադրող-հաճախորդը» հաշվեհամար չունի, և վճարումը կատարվում է կանխիկ միջոցներով (առանց վերջինիս հաշվի կիրառման): Տվյալ դեպքում հաշվեհամար ենթադաշտում լրացվում է բանկի միջանկյալ (տարանցիկ) հաշիվը՝ [12!n[4n]], ինչպես նաև կարգադրող-հաճախորդի հանձնարարականի հետ կապված հաղորդագրությունը ուղարկող ֆինանսական կազմակերպության գլխամասի կամ մասնաճյուղի կոդը (5!n), որը տրամադրված է Կենտրոնական բանկի կողմից:

Ընդ որում, պետք է առկա լինի Կենտրոնական բանկի կողմից այդպիսի հնգանիշ կոդով գրանցված ֆինանսական կազմակերպության գլխամաս(մասնաճյուղ):

4*35x ենթադաշտում լրացվում են «կարգադրող-հաճախորդի» հետ կապված (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն) վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալները, ըստ ստորև բերված Աղյուսակի:

«կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալներ		
Երբ հաճախորդը վճարում է կանխիկ (առանց բանկային հաշվի)		
	Ֆիզիկական անձի դեպքում	Իրավաբանական անձի դեպքում
1	2	3
[12!n[4n]] ենթադաշտում	Սպասարկող բանկի միջանկյալ հաշվի համարը	
5!n ենթադաշտում	ՀՏ 108 հաղորդագրությունը ուղարկող ֆինանսական կազմակերպության (ԿԲ-ի կողմից տրամադրված) հնգանիշ կոդը	

<table>
<tr><td>4*35x
ենթադաշտում</td><td colspan="2">Վճարման տեսակից կախված լրացվում են</td></tr>
<tr><td>I-ին տող</td><td>Կարգադրող-հաճախորդի անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td><td>Իրավաբանական անձի անվանումը</td></tr>
<tr><td rowspan="4">II-ից → IV-րդ տողերում</td><td>Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը)
կամ
Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում՝ ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը:
Եթե վճարում կատարողը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կամ այլ կարգավիճակ ունեցող անձ (օրինակ՝ փախստական), ապա նշված համարը կարող է չլրացվել:</td><td>Հարկ վճարողի հաշվառման համարը</td></tr>
<tr><td>Անձնագրի տվյալներ
կամ
ID քարտի համարը
կամ
անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները</td></tr>
<tr><td colspan="2">Հասցեի վերաբերյալ տվյալներ</td></tr>
<tr><td></td><td>Որպես լիազորված ղեկավար անձի տվյալներ (բացառությամբ բանկի համար) անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td></tr>
<tr><td></td><td colspan="2">Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:</td></tr>
</table>

Լրացվող նշված տվյալները չպետք է գերազանցեն հատկացված 4 տողը:

9) **Դաշտ :52E:** Կարգադրող-հաճախորդին սպասարկող (ոչ բանկ) կազմակերպություն

Ձևաչափ 12!n[4n]
4*35x

Այս օժանդակ դաշտը պարտադիր լրացվում է, երբ անմիջականորեն կարգադրող-հաճախորդի կողմից հանձնարարականը ներկայացվում է լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության գլխամասին կամ նրա կառուցվածքային

ստորաբաժանմանը: Եթե կարգադրությունը ներկայացվել է տերմինալի միջոցով, կարող է նշվել գլխամասային ստորաբաժանման տվյալները:

Այս դաշտը պարտադիր լրացվում է, երբ անմիջականորեն կարգադրող-հաճախորդից հանձնարարականը ընդունող կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումը տարբերվում է հաղորդագրությունը ուղարկողից, որը նշվում է **:50a:** դաշտում:

Որպես բնութագրիչներ այս դաշում լրացվում են լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման (գլխամասի/մասնաճյուղի) տվյալները, դրանք են.

	Լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպություն (այդ թվում՝ մասնաճյուղ), երբ վճարումը կատարվում է իրեն սպասարկող բանկում բացված բանկային հաշվով
1	2
12!n[4n] ենթադաշտում	Կազմակերպության բանկային հաշվի համարը
4*35x ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում է
I-ին տող	Հաճախորդին սպասարկող կազմակերպության գլխամասի/մասնաճյուղի անվանումը (որտեղ կատարվել է կարգադրության ընդունում)
II-ից → IV-րդ տողերում	Կարող է ըստ անհրաժեշտության լրացվել այլ տեղեկատվություն՝ առկայության դեպքում:

Լրացվող նշված տվյալները չպետք է գերազանցեն հատկացված 4 տողը:

Սույն դաշտի 4*35x ենթադաշտում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են «Ցուցիչներ» ըստ սահմանված սկզբունքի: «Ցուցչի» և լրացվող տվյալների միջև դրվում է մեկ զատիչ նշան (/): Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ իրենց համապատասխան ցուցչի և զատչի կիրառմամբ չեն նշվում:

:52E: դաշտը լրացվում է, երբ հանձնարարականը անմիջապես հաճախորդից ընդունող կողմը հանդիսանում է լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպություն, որտեղ վճարումը կատարվում է իր բանկային հաշվից: Միաժամանակ, :52E: դաշտը լրացվում է, երբ կարգադրող-հաճախորդին սպասարկող ֆինանսական կազմակերպությունը չի հանդիսանում վճարային համակարգի մասնակից:

10) **Դաշտ :23Q:** Շահառուի նույնացուցիչ

Չևաչափ 6x

Այս **պարտադիր** **:23Q:** (Q ⇨ Quality), դաշտում նշվում է Շահառու հաճախորդին բնութագրող նույնացուցիչը, որը փոխկապված է **:59a:** դաշտում լրացվող տվյալների հետ:

Այս դաշտում նշվում է հետևյալ կոդերից մեկը.

- Ֆիզիկական անձ հանդիսացող Շահառու՝ **NP** – Natural Person
- Իրավաբանական անձ (այդ թվում՝ ՀՀ իրավական ակտերի համաձայն գրանցված (հաշվառված) հարկ վճարող, նաև անհատ ձեռնարկատեր կամ գերատեսչություն) հանդիսացող Շահառու՝ **LP** – Legal Person:

11) **Դաշտ :59a:** Շահառու-հաճախորդ (բանկ կամ հաշվետեր անձ)

Չնաչափ՝ Տարբերակ 59E 12!n[4n]
4*35x

կամ

Տարբերակ 59F 5!n
4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է (:59F: կամ :59E: տարբերակով) դրամական փոխանցումների կատարման հետ կապված այն շահառուն որին հասցեագրված է վճարումը:

:59a: դաշտի **E** տարբերակով նշվում է այն շահառու հաճախորդը, որին ուղղված վճարումը պետք է կատարվի այդ հաճախորդի բանկային հաշվի միջոցով, իսկ **F** տարբերակով նշվում է այն շահառու հաճախորդը, որին ուղղված վճարումը պետք է կատարվի առանց այդ հաճախորդի բանկային հաշվի կիրառման:

:59a: դաշտի 4*35x ենթադաշտում տվյալների լրացման համար կիրառվում են սահմանված ցուցիչներ: Յուրաքանչյուր տողի սկզբում լրացվող ցուցչից հետո պարտադիր նշվում է մեկ զատիչ նշան (/), և այնուհետև լրացվում են մնացած անհրաժեշտ տվյալները: Միևնույն տողում կարող է նշվել **միայն մեկ** ցուցիչ իր համապատասխան (զատչից «/» հետո) լրացվող տվյալներով:

Եթե շահառու հաճախորդին ուղղված վճարումը պետք է կատարվի տվյալ նշված բանկից տարբերվող լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության միջոցով կամ առևտրային բանկի որևէ մասնաճյուղի միջոցով, ապա **:59a:** դաշտի (E կամ F տարբերակի) հետ միաժամանակ լրացվում է նաև **:57E:** դաշտը:

:59a: դաշտի լրացման ժամանակ պարտադիր հաշվի է առնվում **:23Q:** դաշտում նշված արժեքը: Ֆիզիկական անձ հանդիսացող շահառու հաճախորդի դեպքում **:59a:** դաշտում լրացվում են ստորև բերված Աղյուսակի 2-րդ սյունակի տվյալները, իսկ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի դեպքում լրացվում են Աղյուսակի 3-րդ սյունակի տվյալները:

11.1 Դաշտ :59E: Շահառու-հաճախորդ (վճարում բանկին կամ հաշվետեր անձին բանկային հաշվով)

Տարբերակ 59E 12!n[4n]
4*35x

:59a: դաշտի **E** տարբերակը լրացվում է այն դեպքում, երբ բանկը, որը ստացել է ՀՏ 108 հաղորդագրությունը՝

- ինքն է հանդիսանում «շահառուն», այսինքն՝ գումարը ուղղված է անմիջապես բանկին

- ստացված հանձնարարականում նշված շահառու-հաճախորդը ունի բանկային հաշիվ հենց տվյալ բանկում, այսինքն գումարը մուտքագրվում է շահառու-հաճախորդի բանկային հաշվին:

12!n[4n] առաջին ենթադաշտում նշվում է գումարը ստացող շահառու-հաճախորդի բանկային հաշիվը: Այնուհետև 4*35x երկրորդ ենթադաշտում լրացվում են շահառու հաճախորդին նույնականացնելու համար (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն) անհրաժեշտ տվյալները, ըստ հետևյալ Աղյուսակում նշված հաջորդականության:

<table>
<tr><td colspan="3">Երբ շահառու հաճախորդին գումարը վճարվելու է իր բանկային հաշվով, կամ եթե հայտնի չէ շահառու հաճախորդի բանկային հաշիվը, ապա նշվում է շահառուին սպասարկող բանկի միջանկյալ հաշիվը</td></tr>
<tr><td></td><td>Ֆիզիկական անձի դեպքում</td><td>Իրավաբանական անձի դեպքում (այդ թվում՝ բանկ, բանկի մասնաճյուղ)</td></tr>
<tr><td>1</td><td>2</td><td>3</td></tr>
<tr><td>12!n[4n] ենթադաշտում</td><td colspan="2">Շահառու-հաճախորդի բանկային հաշվի համարը
կամ
Շահառու-հաճախորդին սպասարկող բանկի միջանկյալ հաշվի համարը</td></tr>
<tr><td>4*35x ենթադաշտում</td><td colspan="2">Վճարման տեսակից կախված լրացվում է</td></tr>
<tr><td>I-ին տող</td><td>Շահառու-հաճախորդի անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td><td>Իրավաբանական անձի անվանումը</td></tr>
<tr><td rowspan="4">II-ից → IV-րդ տողերում</td><td colspan="2">Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը ըստ առկայության</td></tr>
<tr><td>Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում՝ ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը</td><td rowspan="2">Հարկ վճարողի հաշվառման համարը</td></tr>
<tr><td>Անձնագրի տվյալներ
կամ
ID քարտի համարը
կամ
անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները</td></tr>
<tr><td colspan="2">Հասցեի վերաբերյալ տվյալներ</td></tr>
</table>

		Որպես լիազորված ղեկավար անձի տվյալներ (բացառությամբ բանկի համար) անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)
	Այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:	

Վարկի մարմանն ուղղված վճարում կատարելու ժամանակ.

ա/ եթե վճարումն ուղղված է վարկային կազմակերպության կողմից վարկառուին տրված վարկի մարմանը, ապա հաղորդագրության մեջ **:59E:** դաշտում նշվում են, տվյալ ՀՏ 108 հաղորդագրությունը ստացող բանկում սպասարկվող (գրանցված), այդ վարկային կազմակերպության տվյալները՝ բանկային հաշվի համարը (12!n[4n]), վարկային կազմակերպության անվանումը և այլն (4*35x): Այնուհետև վարկային կազմակերպության միջոցով սպասարկվող վարկառու հաճախորդի տվյալները լրացվում են **:72B:** դաշտում, որտեղ՝ **MOC/** ցուցչի միջոցով նշվում են վարկային կոդի տվյալները, իսկ **NAM/** ցուցչի միջոցով նշվում է վարկառուի անվանումը կամ անունն ու ազգանունը:

բ/ եթե վճարումն ուղղված է առևտրային բանկի կողմից վարկառուին տրված վարկի մարմանը, որը իրականացվելու է այդ հաճախորդի հաշվի կիրառմամբ, ապա հաղորդագրության **:59E:** դաշտի 12!n[4n] ենթադաշտում նշվում է այդ վարկառու հաճախորդի հաշվի համարը, իսկ 4*35x ենթադաշտում լրացվում են վարկառուի հետ կապված այլ անհրաժեշտ տվյալները: Միաժամանակ, վարկային կոդի տվյալը նշվում է **:72B:** դաշտում՝ **MOC/** ցուցչի միջոցով:

11.2 Դաշտ :59F: Շահառու-հաճախորդի հետ կապված վճարում (առանց հաշվի)

Տարբերակ 59F 5!n

4*35x

:59a: դաշտի **F** տարբերակը լրացվում է այն դեպքում, երբ «Շահառու-հաճախորդի» հաշվեհամարը առկա չէ և շահառուին ուղղված վճարումն (այդ թվում՝ պարտավորության դիմաց) իրականացվում է առանց նրա բանկային հաշվի կիրառման:

Հաղորդագրությունը ուղարկող Ֆինանսական կազմակերպությունը :59F: դաշտի կիրառման ժամանակ պետք է Շահառու հաճախորդի անվան հետ միասին ապահովի վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալների լրացումը, մասնավորապես ա) իրավական ակտերով սահմանված տվյալների լրացումը (օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, և այլն), կամ բ) վարկային կոդի հետ կապված տվյալի լրացումը, այդ նպատակով :72B: դաշտում սահմանված տեսքով՝ ըստ համապատասխան ցուցիչի:

:59F: դաշտը կարող է հաղորդագրության մեջ առկա լինել (կիրառվել) միայն այն դեպքում, երբ **:23E:** դաշտում նշված է «**BKBK**» կամ «**CINB**» կոդերից որևէ մեկը:

Եթե առևտրային բանկի նկատմամբ առկա պարտավորության մարումը իրականացվում է առանց այդ բանկում գտնվող հաճախորդի հաշվի կիրառման, ապա ՀՏ 108

հաղորդագրության **:59F:** դաշտում նշվում են այդ վարկատու (շահառու) բանկի տվյալները: Միաժամանակ, բանկում սպասարկվող վարկառու հաճախորդի տվյալները լրացվում են **:72B:** դաշտում, որտեղ՝ **MOC/** ցուցչի միջոցով նշվում է վարկային կոդի տվյալները , իսկ **NAM/** ցուցչի միջոցով նշվում է վարկառուի անվանումը:

Սահմանված **:59F:** տարբերակի 5!n ենթադաշտում նշվում է հաղորդագրությունը ստացող ֆինանսական կազմակերպության գլխամասի (մասնաճյուղի) հնգանիշ կոդը, որը տրամադրված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Անհրաժեշտ է նշել, որ **:59F:** տարբերակի կիրառմամբ, որպես շահառու ՀՀ կենտրոնական բանկին ուղղված վճարում չի կատարվում, այսինքն 5!n ենթադաշտում չի կարող լրացվել 10300 կոդը:

Այնուհետև 4*35x ենթադաշտում լրացվում են «շահառու-հաճախորդի» հետ կապված տվյալները (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն, վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ), ըստ ստորև բերված Աղյուսակում նշված հաջորդականության.

	Վճարման կատարում ուղղված շահառու-հաճախորդին առանց վերջինիս բանկային հաշվի կիրառման	
	Ֆիզիկական անձի դեպքում	Իրավաբանական անձի դեպքում
1	2	3
5!n ենթադաշտում	ՀՏ 108 հաղորդագրությունը ստացող ֆինանսական կազմակերպության հնգանիշ կոդը՝ տրված ՀՀ ԿԲ-ի կողմից	
4*35x ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում են	
I-ին տողում	Շահառու-հաճախորդի անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)	Իրավաբանական անձի անվանումը
II-ից → IV-րդ տողերում	Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը, ըստ սահմանված կարգի	
	Անձնագրի տվյալներ կամ ID քարտի համարը կամ անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները	Հարկ վճարողի հաշվառման համարը
	Այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:	

12) **Դաշտ :57E:** Շահառու-հաճախորդին սպասարկող ոչ բանկ կազմակերպություն

Ձևաչափ 12!n[4n]
4*35x

Այս օժանդակ դաշտում նշվում են դրամական փոխանցումների կատարման հետ կապված հաճախորդի անմիջական սպասարկումը իրականացնող (լիցենզավորված) ոչ բանկ ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումը (գլխամասը կամ մասնաճյուղը) բնութագրող անհրաժեշտ տվյալները:

Այս դաշտը պարտադիր լրացվում է, երբ շահառու-հաճախորդին սպասարկող կազմակերպությունը տարբերվում է ՀՏ 108 հաղորդագրությունը անմիջապես ստացող կողմից, որը նշվում է **:59E:** կամ **:59F:** տարբերակում:

Որպես բնութագրիչներ այս դաշտում լրացվում են լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման (գլխամասի կամ մասնաճյուղի) հետևյալ տվյալները.

	Լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպություն (գլխամաս, մասնաճյուղ), երբ վճարումը կատարվում է իր բանկային հաշվով
1	2
12!n[4n] ենթադաշտում	Կազմակերպության բանկային հաշվի համարը սպասարկող բանկում
4*35x ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում է
I-ին տող	Շահառու-հաճախորդին սպասարկող կազմակերպության գլխամասի կամ մասնաճյուղի անվանումը (որտեղ իրականացվում է սպասարկումը)
II-ից → IV-րդ տողերում	Կարող է ըստ անհրաժեշտության լրացվել այլ տեղեկատվություն:

4*35x ենթադաշտում լրացվող տվյալները չպետք է գերազանցեն նշված 4 տող սահմանափակումը:

Սույն դաշտի 4*35x տողերում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են «Ցուցիչներ» ըստ սահմանված սկզբունքի: «Ցուցչի» և լրացվող տվյալների միջև դրվում է մեկ զատիչ նշան (/): Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ իրենց համապատասխան ցուցչի և զատիչի կիրառմամբ չեն նշվում:

:57E: դաշտը լրացվում է նաև այն դեպքում, երբ Շահառու-հաճախորդին սպասարկող ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունը չի հանդիսանում ԿԲ վճարային համակարգի մասնակից:

:57E: դաշտը օգտագործվում է, երբ անմիջականորեն հաճախորդին սպասարկող կազմակերպությունը հանդիսանում է լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանում (գլխամաս կամ մասնաճյուղ), որի դեպքում շահառու-հաճախորդի դրամական միջոցները մուտքագրվում են տվյալ բանկում սպասարկվող ոչ բանկ կազմակերպության բանկային հաշվին:

13) **Դաշտ :70A:** Վճարման նպատակ

Չևաչափ 4*35x

Այս պարտադիր դաշտում նշվում են վճարման հետ կապված մանրամասները, ինչպես նաև կարող է տրվել հղում այլ հաղորդագրության վրա որը (իր հերթին) պարունակում է մանրամասներ շահառու-հաճախորդին ուղղված վճարման մասին:

Սույն դաշտում ներկայացված տեղեկատվությունը նախատեսված է միայն շահառու-հաճախորդի համար, որը հանդիսանում է փոխանցվող դրամական միջոցների վերջնական շահառուն:

14) **Դաշտ :72B:** Հաղորդագրություն ստացողին ուղղված տեղեկատվություն

Չևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում նշվում է ուղարկողից դեպի ստացող կողմին ուղղված անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն, որը պարտադիր պետք է լրացվի կոդերի տեսքով: Այս դաշտում տվյալները լրացվում են խիստ սահմանված կառուցվածքով:

Աղյուսակում նշված հիմնական կոդերի արժեքները սահմանվում են հետևյալ՝ 3!c/ ձևաչափով: Սույն դաշտում կարող են կիրառվել միայն ստորև ներկայացված Աղյուսակում սահմանված կոդերը: Նշված կոդերից հետո դրվում է մեկ զատիչ (/), այնուհետև լրացվում են վերջինիս վերաբերող համապատասխան տվյալները ըստ սահմանված ձևի և սկզբունքի:

Եթե սահմանված հիմնական կոդի հետ լրացվող տեղեկատվությունը ամբողջությամբ չի տեղավորվում մեկ տողի 35x սահմանաչափում, և անհրաժեշտ է շարունակությունը լրացնել հաջորդ տողում, ապա հաջորդ տողի սկզբում նորից լրացվում է նույն կոդը, որից հետո նշում է մեկ զատիչ (/), և այնուհետև լրացվում է (տվյալ կոդի հետ կապված) անհրաժեշտ տեղեկատվության շարունակությունը:

Աղյուսակ Ա1	:72B: դաշտում լրացվող հիմնական կոդերի ցանկը, սահմանված ձևաչափը և դրանց ներքո կիրառվող պայմանանշանները, ինչպես նաև լրացման ենթակա տեղեկատվության մեկնաբանությունը		
Հիմնական կոդի արժեքը 3!c	**Չևաչափը**	**Չևաչափի նիշերը**	**Մեկնաբանություն** (յուրաքանչյուր կոդի դիմաց կարող է լրացվել միայն վերջինիս համար սահմանված տեղեկատվությունը)
REN	REN/4!c/3!n/16x /2!n[1a] REN/16x		Շահառուի բանկի կողմից հետ վերադարձվող գումարի փոխանցում: Շահառու բանկի կողմից ստացված գումարի հետ փոխանցման դեպքում, երբ Կենտրոնական բանկում անհրաժեշտ հաշվապահական ձևակերպումը (ԿԲ-ում հաշիվների Դեբետ-Կրեդիտ) արդեն կատարվել է, ապա գումարը հետ վերադարձնելու համար կարող է ձևավորվել նոր ՀՏ 108 (պատասխան) հաղորդագրություն, որի :72B: դաշտում պետք է լրացվի ստորև նշված կոդը սահմանված ձևաչափով: Ընդ որում,

			գումարի հետ վերադարձի REN կոդը պետք է լրացվի «:72B:» դաշտի անմիջապես առաջին տողում, այնուհետև՝ մյուս տվյալները: Երկրորդ (REN/16x) մասը միշտ լրացվում է հաջորդ տողի սկզբից:
		4!c/	4!c հատվածում նշվում է գումարի վերադարձի պատճառը բնութագրող ցուցիչը: Ընդ որում կարող է կիրառվել հետևյալ ցուցիչներից որևէ մեկը՝ նշված համապատասխան պատճառների բնութագրման համար. AC04 → Փակված հաշվին փոխանցվող գումարի հետ վերադարձ AC05 → Գոյություն չունեցող հաշվին փոխանցվող գումարի հետ վերադարձ AC06 → Արգելափակված հաշվին փոխանցվող գումարի հետ վերադարձ BE01 → Նշված հաշվին չհամապատասխանող Շահառուի օգտին փոխանցվող գումարի հետ վերադարձ AM08 → Ավել փոխանցված գումարի հետ վերադարձ: AM09 – Նշվել է (փոխանցվել է) սխալ գումար, որի պատճառով կատարվել է հետ վերադարձ CH11 – Շահառուի նույնականացման տվյալի սխալ, որի պատճառով կատարվել է հետ վերադարձ FF07 – Նպատակը դաշտի տվյալը սխալ է կամ չի համաձայնեցվել, կամ չի լրացվել, որի պատճառով կատարվել է գումարի հետ վերադարձ TM01 - Փոխկապված հաղորդագրությունը (վճարումը կամ փոխանցման գործարքը) ստացվել է վերջինիս մշակման համար համաձայնեցված ժամկետից հետո, որի պատճառով կատարվել է հետ վերադարձ
			ED05 - Վճարման/գործարքի/ հետ կապված հաշվարկը չի կատարվել, որի պատճառով կատարվել է հետ վերադարձ
		3!n/	Այնուհետև 3!n հատվածում նշվում է սխալ փոխանցումը պարունակող (նախնական) հաղորդագրության տեսակի կոդը
		16x/	16x հատվածում լրացվում է այդ հաղորդագրության գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը,
		2!n[1a]/	իսկ 2!n[1!a] հատվածում լրացվում է նշված (4 նիշանի) անճշտությունը պարունակող ստույգ դաշտի համարը (Tag-ը):

	REN (հաջորդ տող)	/16x	Իր հերթին, 2-րդ տողի 16x հատվածում կարող է լրացվել (REN կոդից հետո) նախնական հաղորդագրության կրկնվող ենթապարբերության մեջ (եթե այն առկա է) ներառված ոչ ճիշտ փոխանցման հետ կապված գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը : REN/16x մասը միշտ լրացվում է հաջորդ տողում կրկին ՝ REN/ կոդից հետո:
PDD	PDD/2c1!x 22c1!x 3c1!x 6!n1!x5n, PDD/2c/22c /3c/6!n/5n		Վճարման մանրամասներ նորմավորված: Սույն ձևաչափում բոլոր 1!x-ենթամասերը հանդիսանում են որպես անջատիչ, և դրվում է մեկ **զատիչ** (/) նշանը:
		2c/22c	2c1!x 22c → մասը դա վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի սերիան՝ 2c և համարն է՝ 22c: եթե բացակայում են մինչև 22c երկարությամբ կոդերի տվյալները, ապա վերջինիս փոխարեն լրացվում է (/0) մեկ զատիչ և մեկ Զրո**/0**: Եթե բացակայում է փաստաթղթի սերիան՝2c կամ այն մուտքագրված չէ, ապա այս նիշերի համար լրացվում է OT-կոդը Այլ փաստաթուղթ, որը չունի հատուկ դասակարգում:
		/3c	1!x 3c→ մասը դա վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի տեսակի կոդն է՝ 3c : Որտեղ
			վճարման հիմք հանդիսացող փաստաթղթերի տեսակի համար (3c) կիրառվում են սույն կոդերի տեսակները՝ AGR-Պայմանագիր LDC-Լիցենզիայի վճար AKT-Ստուգման ակտ TDC-Հարկային հաշվետվության ձև CDC -Մաքսային հայտարարագիր JAT-Դատական ակտ PAT-Ոստիկանության ակտ NOD-Առանց հատուկ փաստաթղթի OTH-Այլ փաստաթուղթ որը չունի հատուկ դասակարգում
		/6!n	1!x 6!n→ մասը դա վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի ամսաթիվն է DDMMYY տեսքով (օր՝ փաստաթղթի տեսակից կախված դա կարող է լինել փաստաթղթի տրման, կնքման կամ որևէ այլ ամսաթիվ): Սույն ամսաթվի տվյալների բացակայության դեպքում՝ 6!n պարտադիր նիշի փոխարեն կնշվեն (0) նշված քանակով 6 հատ Զրոներ **/000000**:

		/5n	1!x5n→ մասը դա տնտեսության ճյուղն է, որտեղ նշվում է տնտեսական գործունեության դասակարգչով սահմանված և կիրառվող կոդը: Եթե այս տվյալը բացակայում է, ապա մինչև 5n երկարությամբ կոդերի տվյալների փոխարեն լրացվում է (/0) մեկ զատիչ և մեկ Զրո **/0**:
PD2	PD2/30x	30x	30x → մասում լրացվում են վճարման մանրամասները՝ ազատ ձևով (եթե փաստաթղթի համարը նորմավորված չէ) : PD2 կոդը կիրառվում է PDD կոդի հետ միասին: Այն առանձին այն չի օգտագործվում:
PND	PND/6!n16n1!a		Թոշակների/նպաստների և դրան հավասարեցված այլ վճարների մանրամասներ:
		6!n	6!n → հատվածում լրացվում է թոշակառուին ընթացիք վճարվող գումարի ժամանակահատվածը MMYYYY (ամիս և տարի) տեսքով
		16n	16n → հատվածում լրացվում է թոշակառուի հաշվառման հաշիվը
		1!a	1!a → հատվածում լրացվում է անձի կենսաթոշակի, նպաստի կամ սոցիալական ապահովության վճարի պայմանական ցուցիչը: Այն կարող է ընդունել սույն արժեքները՝ C – պարտադիր կենսաթոշակային վճար V (Voluntary) – կամավոր կենսաթոշակային վճար D – այլ կենսաթոշակի կամ նպաստի վճարում S – պարտադիր սոցիալական վճար
PDC	PDC/2!c[5!c]		Վճարման նպատակի կոդը և գործառնության կատարման եղանակը, որտեղ
		2!c	2!c → հատվածում լրացվում է գործառնության կատարման համար հիմք հանդիսացող կարգադրությունը հաճախորդի կողմից ինչ ձևով/եղանակով է ներկայացված: Հաճախորդի կարգադրության ներկայացման ձևի/եղանակի դասակարգման հետ կապված կարող են նշվել հետևյալ կոդերը՝
			01 – վճարման հանձնարարականի ներկայացում՝ բանկային հաշվով կատարված վճարու 02 – վճարման պահանջագրի կատարում 03 – ATM-ով կամ POS տերմինալով կատարված քարտային վճարում 04 – ինքնասպասարկման տերմինալով կանխիկ վճարում 05 – էլեկտրոնային առևտրի /ինտերնետ միջավայրում/ սպասարկման գծով վճարումները

			06 – բանկ հաճախորդ համակարգերով կարգադրության ներկայացումը 07 – կանխիկ վճարում ֆինանսական կազմակերպության միջոցով/առանց ինքնասպասարկման տերմինալի կիրառման/ 99 – այլ, որի դասակարգումը հատուկ չի առանձնացված:
		[5!c]	[5!c] → հատվածում լրացվում է վճարման նպատակի դասակարգման համար սահմանված հատուկ ցուցիչը (ըստ՝ ստորև նշված խմբերի)
			Տրանսպորտի և ճանապարհորդության խմբի ցուցիչներ՝ AMATS –Հաշվարկներ կապված՝ Օդային տրանսպորտով փոխադրումների հետ AMRLS – Հաշվարկներ կապված ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային փոխադրումների հետ AMSTR – Հաշվարկներ կապված ճանապարհորդության տոմսի ձեռքբերման հետ AMOTT – Հաշվարկներ կապված այլ (չնշված) տեսակի տրանսպորտային փոխադրումների հետ
			Ծառայությունների մատուցման խմբի ցուցիչներ՝ AMSCO – Հաշվարկներ կապված՝ շինարարության հետ AMINS – Հաշվարկներ կապված՝ ապահովագրական ծառայությունների մատուցման հետ AMFIS – Հաշվարկներ կապված՝ ֆինանսական կազմակերպությունների միջև գործառնությունների կատարման հետ AMITS – Հաշվարկներ կապված՝ հեռահաղորդակցման, տեղեկատվության, տեխնիկական միջոցների կամ համակարգչային ծառայությունների հետ AMTTS – Հաշվարկներ կապված՝ առևտրի և այլ բնույթի գործարար ծառայությունների հետ AMPRS – Հաշվարկներ կապված՝ մշակութային կամ հանգստի կազմակերպման ծառայություններին, այդ թվում՝ դրանց տոմսերի ձեռքբերումը AMPHS – Հաշվարկներ կապված՝ամբուլատոր կամ ստացիոնար բուժօգնության ծառայությունների հետ AMGMS – Հաշվարկներ կապված՝ վերանորոգման և սպասարկման ծառայությունների հետ AMESS – Հաշվարկներ կապված՝անշարժ գույքի ձեռքբերման հետ AMOTS – Հաշվարկներ կապված՝ այլ (չնշված) տեսակի ծառայությունների մատուցման հետ
			Եկամուտների և տոկոսների խմբի ցուցիչներ՝ AMIID – Հաշվարկներ կապված՝ շահաբաժնի կամ այլ դրամական պարտավորության հետ

			AMPRR – Հաշվարկներ՝ կապված անշարժ գույքի վարձակալության հետ AMISS – Հաշվարկներ՝ կապված արժեթղթերի տոկոսների հետ AMIOL – Հաշվարկներ՝ կապված վարկերի տոկոսների հետ AMIOD – Հաշվարկներ՝ կապված ավանդների տոկոսների հետ AMOTI – Հաշվարկներ՝ կապված այլ (չնշված) տեսակի եկամուտների հետ
			Կառավարության ուղղված վճարումների խմբի ցուցիչներ՝ AMGRI - Պետական և համայնքային բյուջե հարկերի, տուրքերի հետ կապված վճարումներ (իրավաբանական անձանց և անհատների), կապիտալ տրանսֆերտներ և այլն AMGRP -Կենսաթոշակների, նպաստների վճարումներ, բյուջեից վճարվող դրամական օգնություններ AMRGP - Պետական և համայնքային բյուջեից հարկերի վերադարձ (իրավաբանական և ֆիզիկական անձ) AMOTG - Պետական և համայնքային բյուջե ուղղված այլ տեսակի չնշված վճարներ AMROT - Պետական և համայնքային բյուջեից կատարվող այլ տեսակի չնշված վճարումներ
			Անձնական/ Անհատական գործառնությունների խմբի ցուցիչներ՝ AMCHC - Բարեգործական նվիրատվություններ և նմանատիպ այլ գործառնություններ (իրավաբանական և ֆիզիկական անձանցից), AMSAL - Աշխատավարձ, արտաժամյա վարձավճար, դրամական նպաստներ (ոչ պետական) և այլ նմանատիպ գործառնությունները AMPAN - բյուջե ուղղված՝ կենսաթոշակի հետ կապված և այլ նմանատիպ վճարումներ: Ինչպես նաև կուտակային կենսաթոշակի հետ կապված դեպի բյուջե կատարվող վճարումներ AMOTO - Անհատական գործողությունների հետ կապված, այլ տեսակի չնշված վճարումներ
			Վարկի մարման կամ ավանդի վերադարձման խմբի ցուցիչներ՝ AMMCR – Հաշվարկներ՝ կապված հիփոթեքային վարկերի մարման հետ AMCCR – Հաշվարկներ՝ կապված սպառողական վարկերի մարման հետ AMOCR – Հաշվարկներ՝ կապված այլ (չնշված) տեսակի վարկերի մարման հետ

			AMDPR – Հաշվարկներ՝ կապված ավանդների վերադարձի հետ AMOTR – Հաշվարկներ՝ կապված տվյալ խմբին առնչվող այլ (չնշված) տեսակի վճարումների հետ
			Պորտֆելային ներդրումներ: Արժեթղթերի, ինչպես նաև բաժնետոմսերի ձեռքբերման կամ արտարժույթի գնման (Ֆինանսական կազմակերպությունների կողմից) խմբի ցուցիչներ՝ AMDSL – Հաշվարկներ՝ կապված արժեթղթերի, ինչպես նաև բաժնետոմսերի ձեռք բերման և վաճառքի հետ AMFXD – Հաշվարկներ՝ կապված արտարժույթի առք ու վաճառքի հետ AMFDL – Հաշվարկներ՝ կապված ՀՀ ֆինանսական շուկայում ընդունված ածանցյալ ֆինանսական գործիքի հետ AMOTF – Հաշվարկներ՝ կապված տվյալ խմբին առնչվող այլ (չնշված) տեսակի ֆինանսական գործառնությունների հետ
			Այլ (չնշված) տեսակների գործառնությունների խմբի ցուցիչներ՝ AMEDU – Հաշվարկներ՝ կապված կրթական ծառայությունների մատուցման հետ AMCOM – Հաշվարկներ՝ կապված հաճախորդների կողմից ֆինանսական կազմակերպություններին կատարված կոմիսիոն վճարների, ինչպես նաև հաճախորդներին մատուցված ծառայությունների հետ և այլն AMUTL – Հաշվարկներ՝ կապված կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների հետ AMLND – Հաշվարկներ՝ կապված հաճախորդներին վարկերի տրամադրման հետ AMMCR – Հաշվարկներ՝ կապված բժշկական ապահովագրության և այլն տեսակի փոխհատուցման վճարների հետ AMCON – Հաշվարկներ՝ կապված արտարժույթի փոխարկման հետ (գործառնություններ հաճախորդների հետ) AMPIN – Հաշվարկներ՝ կապված ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներդրումային գործառնությունների հետ AMTOF – Հաշվարկներ՝ կապված ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց միջև դրամական միջոցների փոխանցումների հետ AMOAT – Հաշվարկներ՝ կապված վճարողի կողմից իր բանկային հաշվին կատարվող փոխանցումների հետ (հաշվի համալրում)

			AMMWI – Հաշվարկներ՝ կապված էլեկտրոնային քսակի (էլեկտրոնային փողի) լիցքավորման հետ AMMWO – Հաշվարկներ՝ կապված էլեկտրոնային քսակի (էլեկտրոնային փողի) ելքագրման հետ (երբ կատարվում է նշված միջոցների փոխանցում) ուղղված դեպի բանկային հաշվին AMOTP – Հաշվարկներ՝ կապված տվյալ խմբին առնչվող այլ (չնշված) տեսակի գործառնությունների կատարման արդյունքում վճարումների հետ:
MOC	MOC/1!x30x		Վարկային/կրեդիտ կոդը: Սույն կոդի միջոցով նշվում է հաճախորդի վարկային/կրեդիտ կոդը, որը տրամադրվել է համաձայն ԿԲ իրավական ակտերի: Վարկային կոդը պարտադիր կիրառվում է հաճախորդի կողմից կանխիկ միջոցներով կամ անկանխիկ եղանակով իր վարկային/կրեդիտային պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար: Ֆինանսական կազմակերպությունը պարտավոր է ապահովել սույն դաշտի մշակումը, երբ այն լրացված է հաղորդագրության մեջ և/կամ վերաբերում է իր հաճախորդին: Որտեղ՝
		1!x	1!x → ենթամասը կարող է ընդունել հետևյալ արժեքները/ենթակոդերը՝ M-վարկի մայր գումարի, դրա դիմաց տոկոսի, ինչպես նաև վարկի հետ կապված տույժի (տուգանքի) վճարում, L - վարկի մայր գումարի վճարում, P- վարկի տոկոսի վճարում, F- վարկի հետ կապված տույժի, տուգանքի վճարում: 1!x-ի միջոցով L, P և F ենթակոդերով նշված գործառնությունը կատարվում է, եթե այդ մասին հստակ սահմանված է Ֆինանսական կազմակերպության և հաճախորդի հետ կնքված պայմանագրում: Ընդ որում, եթե դրանց մասին սահմանված չէ, ապա Ֆինանսական կազմակերպությունը կարող է հաղորդագրության մեջ նշված ենթակոդը անտեսել և մշակել որպես M ենթակոդ:
		30x	30x → մասում նշվում է հաճախորդին տրված վարկային/կրեդիտ կոդը, որը տրամադրել է իրեն սպասարկող Ֆինանսական կազմակերպությունը: Ընդ որում՝ Վարկային/կրեդիտ կոդը կառուցվում է ըստ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից այդ մասին սահմանված կարգի:

			Հաղորդագրության մեջ վարկառու հաճախորդի հաշիվը և MOC ցուցիչի տվյալները միաժամանակ նշված լինելու դեպքում, օրենքով սահմանված կարգով դրամական միջոցները պետք է մուտքագրվեն նշված հաշվին, այնուհետև իրականացվում է նշված վարկի մարման գործընթացը, ըստ օրենսդրության պահանջների:
NAM	NAM/31x	31x	Վարկառուի անվանումը կամ անուն, ազգանունը: 31x → մասում լրացվում է՝ սպասարկվող վարկառուի անվանումը կամ անուն, ազգանունը: Այս տվյալները լրացվում են, ըստ սահմանված պահանջների ներկայացման դեպքում: **NAM** կոդը կիրառվում է «MOC» կոդից հետո, վերջինիս հետ միասին:
CPO	CPO/30x		«Անդորրագրի բացառիկ համարը»
		30x	30x → մասում նշվում է՝ ՀՀ իրավական ակտերով սահմանված այն «Անդորրագրի բացառիկ համարը», որը կապված է հաճախորդի կողմից կանխիկ միջոցներով կամ անկանխիկ եղանակով վճարման կատարման հետ:
INV	INV/30x	30x	30x → մասում նշվում է՝ Հաշիվ-ապրանքագիրը, իր ամսաթվով, հղման համարով և նկարագրությամբ: Նշված կոդից հետո սույն տվյալները լրացվում են ոչ նորմավորված ձևով՝ մինչև 30x նիշ:
IPI	IPI/20x	20x	20x→ մասում լրացվում է՝ բացառիկ հղման համար, որը թույլ է տալիս նույնականացնել փոխկապված վճարումը (մինչև 20x նիշ):
RFB	RFB/16x	16x	16x → մասում նշվում է՝ Հղման համարը, շահառու-հաճախորդի համար (մինչև 16x նիշ)
ROC	ROC/30x	30x	30x → մասում լրացվում է՝ Կարգադրող-հաճախորդի նշում կամ հղում (մինչև 30x նիշ
REC	REC/30x		REC/- կոդը կիրառվում է ՀՏ108 հաղորդագրությունը ստացող կողմին ուղղված տեղեկատվությունը նորմավորված ձևով լրացնելու համար:
		30x	REC/ կոդի միջոցով լրացվող տեղեկատվությունը Կենտրոնական բանկի կողմից փոխանցվում է հաջորդ կողմին: «REC/» կոդի միջոցով Կենտրոնական բանկին ուղղված տեղեկատվություն չի կարող լրացվել:
			Գանձապետարանի կողմից ԵԱՏՄ երկրներ ուղղված՝ «REC/» կոդից անմիջապես հետո նշվում է «a/»-երկրորդային կոդը՝ պահանջվող կուրսի և գումարի վերաբերյալ տվյալները լրացնելու նպատակով: Սահմանվող ձևաչափն է «REC/a/rate/sum», որտեղ rate-ը

			հանդիսանում է այն արժույթի եռանիշ կոդը, որին փոխարկվելու է ՀՀ դրամով փոխանցվող գումարը, և նշվում է համաձայնեցված կուրսը, իսկ sum-ը հանդիսանում է վերջնական շահառուին փոխանցվող արժույթի եռանիշ կոդը և համաձայնեցված արտարժույթի գումարը: Կուրսի և գումարի վերաբերյալ տվյալների լրացման ժամանակ դրանց միջև դրվում է ձևաչափով սահմանված «մեկ սլեշը»:
	Նշված հիմնական կոդերի արժեքները լրացվում են առջևի (3!c)- մասում: Իսկ հիմնական կոդի և լրացվող համապատասխան տեղեկատվության միջև պարտադիր դրվում է մեկ «/» զատիչ նշանը: Յուրաքանչյուր կոդից հետո երկու զատիչ (//) չի կարող օգտագործվել, ինչպես նաև չեն կարող նշվել «կառավարող» սիմվոլներ:		

Նշված ցանկը կարող է Կենտրոնական բանկի կողմից ընդլայնվել:

Աղյուսակ Ա2-ով, ստորև առանձնացվել և նշվել են միայն վերը նշված Ա1 Աղյուսակով **:72B:** դաշտի համար սահմանված հիմնական կոդերը և դրանց մեկնաբանությունը՝ հաճախորդին սպասարկող օպերատորի կիրառման տեսակետից

Աղյուսակ Ա2	:72B: դաշտում կիրառման համար սահմանված կոդերի ցանկը, դրանց ձևաչափը և մեկնաբանությունը օգտագործող	
Կոդի արժեքը 3!c	Ձևաչափը (Ֆորմատը)	**Մեկնաբանություն** (յուրաքանչյուր կոդի դիմաց կարող է լրացվել միայն վերջինիս համար սահմանված տեղեկատվությունը)
INV	INV/30x	Invoice Հաշիվ-ապրանքագիր՝ ամսաթվով, հղման համարով և նկարագրությամբ: Նշված կոդից հետո սույն տվյալները լրացվում են ոչ նորմավորված ձևով՝ մինչև 30x նիշ:
IPI	IPI/20x	Բացառիկ հղման համար, որը թույլ է տալիս նույնականացնել փոխկապված վճարումը (մինչև 20x նիշ):
RFB	RFB/16x	Reference of Beneficiary Հղման համարը՝ շահառու-հաճախորդի համար (մինչև 16x նիշ):
ROC	ROC/30x	Reference of Ordering Customer Կարգադրող-հաճախորդի նշում կամ հղում (մինչև 30x նիշ):
REN	REN/4!c/3!n/16x/2!n[1a] REN/16x	Refund Շահառուի բանկի կողմից հետ վերադարձվող գումարի փոխանցվում: REN/16x մասը միշտ լրացվում է հաջորդ տողում (մանրամասն տես Աղյուսակ Ա1-ում)

PDD	PDD/2c1!x22c 1!x3c1!x 6!n1!x5n	Payment details Վճարման մանրամասներ նորմավորված : (Մանրամասն, տես՝ Աղյուսակ A1-ում)
PD2	PD2/30x	Payment details 2 Վճարման մանրամասներ ազատ ձևով (եթե փաստաթղթի համարը նորմավորված չէ): PD2 կոդը կիրառվում է PDD կոդի հետ միասին, և առանձին այն չի օգտագործվում
PND	PND/6!n16n1! a	Pension Details Կենսաթոշակի և դրան հավասարեցված այլ վճարման մանրամասներ: (Մանրամասն տես Աղյուսակ A1-ում)
PDC	PDC/2!c[5!c]	Payment Details Code Վճարման նպատակի կոդը և գործառնության կատարման եղանակը
CPO	CPO/ 30x	Սույն կոդի միջոցով նշվում է ՀՀ իրավական ակտերով սահմանված «Անդորրագրի բացառիկ համարը», որը կապված է հաճախորդի կողմից կանխիկ միջոցներով կամ անկանխիկ եղանակով վճարման կատարման հետ:
MOC	MOC/1!x30x	Սույն կոդի միջոցով նշվում է հաճախորդի «Վարկային/կրեդիտ կոդը»: (Մանրամասն տես Աղյուսակ A1-ում)
NAM	NAM/31x	Սույն կոդի միջոցով նշվում է սպասարկվող վարկառուի անվանումը կամ անուն ազգանունը: Այս տվյալները լրացվում են ըստ սահմանված պահանջների ներկայացման դեպքում: **NAM** կոդը կիրառվում է «MOC» կոդից հետո, վերջինիս հետ միասին
REC	REC/30x	Հաղորդագրությունը ստացող կողմին ուղղված տեղեկատվություն (մինչև 30x նիշ): (Մանրամասն տես Աղյուսակ A1-ում)

15) **Դաշտ :23S:** Հիմնական պարտապանի նույնացուցիչ

Չևաչափ 6x

Այս օժանդակ՝ **:23S:** (S ⇨ Specificity), դաշտում նշվում է հիմնական պարտապանի (պարտավություն ունեցող անձի) նույնացուցիչը, որը փոխկապված է **:72A:** դաշտում լրացվող տվյալների հետ: Այս դաշտում նշվում է հետևյալ կոդերից մեկը.

- Ֆիզիկական անձ հանդիսացող Պարտապան՝ **NP** – Natural Person

- Իրավաբանական անձ (այդ թվում՝ ՀՀ իրավական ակտերի համաձայն գրանցված (հաշվառված) հարկ վճարող, նաև անհատ ձեռնարկատեր կամ գերատեսչություն) հանդիսացող Պարտապան՝ **LP** – Legal Person:

16) **Դաշտ :72A:** Հիմնական պարտապան (պարտավություն ունեցող անձ)

Չևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում լրացվում է տեղեկատվություն հիմնական պարտապան հանդիսացող անձի (պարտավորություն ունեցող անձի) վերաբերյալ.

Եթե **:50a:** դաշտում նշված վճարողը (կարգադրող-հաճախորդը) տարբերվում է (հաղորդագրության **:72A:** դաշտում լրացվող) հիմնական պարտապան հանդիսացող անձից, որը ունի որոշակի պարտավորություններ **:59a:** դաշտում նշված շահառուի հանդեպ, ապա **:72A:** դաշտը ենթակա է պարտադիր լրացման: Այս պարագայում կարգադրող-հաճախորդը կատարում է վճարում մեկ այլ՝ հիմնական պարտապան հանդիսացող, անձի փոխարեն:

:72A: դաշտի լրացման ժամանակ պարտադիր հաշվի է առնվում **:23S:** դաշտում նշված արժեքը: Հիմնական պարտապանը Ֆիզիկական անձ հանդիսանալու դեպքում լրացվում են ստորև բերված Աղյուսակի 2-րդ սյունակի տվյալները, իսկ իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ Աղյուսակի 3-րդ սյունակի տվյալները:

«Հիմնական պարտապան»-ի բնութագրման համար անհրաժեշտ տվյալները (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն, վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ) (requisites) նկարագրված են ստորև բերված Աղյուսակում.

<table>
<tr><td></td><td colspan="2">Երբ հաճախորդը վճարում է «Հիմնական պարտապան» հանդիսացող անձի փոխարեն</td></tr>
<tr><td></td><td>«Հիմնական պարտապան» հանդիսացող ֆիզիկական անձի համար</td><td>«Հիմնական պարտապան» հանդիսացող իրավաբանական անձի համար</td></tr>
<tr><td>1</td><td>2</td><td>3</td></tr>
<tr><td>6*35x
սահմանա-
չափում</td><td colspan="2">Վճարման տեսակից կախված լրացվում են</td></tr>
<tr><td>I-ին տող</td><td>Անուն, Ազգանուն (Հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td><td>Իրավաբանական անձի անվանումը</td></tr>
<tr><td rowspan="2">II-ից → VI-րդ տողերում</td><td colspan="2">Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը, ըստ առկայության</td></tr>
<tr><td>Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը)
կամ
Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու</td><td>Հարկ վճարողի հաշվառման համարը</td></tr>
</table>

	դեպքում՝ ՀՕՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը: Եթե հիմնական պարտապանը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կամ այլ կարգավիճակ ունեցող անձ (օրինակ՝ փախստական), ապա նշված համարը կարող է չլրացվել:	
	Անձնագրի տվյալներ կամ ID քարտի համարը կամ անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները կամ անձի մահվան հետ կապված տրված փաստաթղթի՝ Մահվան վկայականի, տվյալները	
	Հասցեի վերաբերյալ տվյալներ	
		Որպես լիազորված ղեկավար անձի (բացառությամբ բանկի համար) անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)
	Այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:	

«Հիմնական պարտապան» հանդիսացող անձի վերաբերյալ լրացվող տվյալները չպետք է գերազանցեն նշված 6 տողի սահմանաչափը:

«:72A:» դաշտը կիրառվում է սահմանված սույն կանոնների համաձայն: Միևնույն ժամանակ, «72A» դաշտը պարտադիր պետք է լրացվի նաև այն դեպքում, եթե հաղորդագրության «:23E:»-դաշտում լրացվել է «TUBG/CBGT» կոդերի համախումբը:

Սույն դաշտի 6*35x ենթադաշտում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են սահմանված «Ցուցիչները», ըստ նշված սկզբունքի: «Ցուցիչի» և լրացվող տվյալների միջև դրվում է մեկ զատիչ նշան (/): Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ՝ իրենց համապատասխան ցուցիչների կիրառմամբ, չեն նշվում»:

16.1) Դաշտ :23M: Վերջնական շահառուի նույնացուցիչ

Չևաչափ 6x

Այս օժանդակ՝ :23M: դաշտում նշվում է Վերջնական շահառուի (գումարը ստացող անձ, որը տարբերվում է շահառուից) նույնացուցիչը, որը փոխկապված է «:72C:» դաշտում լրացվող տվյալների հետ: «23M:» օժանդակ դաշտը պարտադիր լրացվում է և «:72C:» դաշտի հետ միասին: «23M:» դաշտում նշվում է հետևյալ կոդերից մեկը.

- Ֆիզիկական անձ հանդիսացող Պարտապան՝ NP – Natural Person
- Իրավաբանական անձ (այդ թվում՝ ՀՀ իրավական ակտերի համաձայն գրանցված (հաշվառված) հարկ վճարող, նաև անհատ ձեռնարկատեր կամ գերատեսչություն) հանդիսացող Վերջնական շահառու՝ LP – Legal Person:

16.2) Դաշտ :72C: Վերջնական շահառու
Ձևաչափ 6*35x
Այս օժանդակ դաշտում լրացվում է տեղեկատվություն Վերջնական շահառու հանդիսացող անձի (գումարը ստացող անձ, որը տարբերվում է շահառուից) վերաբերյալ.
Եթե «:59a:» դաշտում նշված շահառուն տարբերվում է հաղորդագրության «:72C:» դաշտում լրացվող Վերջնական շահառու հանդիսացող անձից, ապա «:72C:» դաշտը ենթակա է պարտադիր լրացման: Այս դեպքում, «:59a:» դաշտում նշված շահառուն հանդիսանում է լիազոր կողմ՝ փոխանցված գումարը ստանալու և վերջնական շահառուին տրամադրելու համար, այսինքն փոխանցվող գումարը տնօրինելու իրավունքը պատկանում է վերջնական շահառու հանդիսացող անձին, որի փոխարեն գումարը ստանում է շահառուն:
«:72C:» դաշտի լրացման ժամանակ պարտադիր հաշվի է առնվում «:23M:» դաշտում նշված արժեքը: Վերջնական շահառուն Ֆիզիկական անձ հանդիսանալու դեպքում լրացվում են ստորև բերված Աղյուսակի 2-րդ սյունակի տվյալները, իսկ իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ Աղյուսակի 3-րդ սյունակի տվյալները:
«:72C:» դաշտը կիրառվում է սույն կանոնների համաձայն: Միևնույն ժամանակ, «:72C:» դաշտը պարտադիր պետք է լրացվի նաև այն դեպքում, եթե հաղորդագրության «:23E:»-դաշտում լրացվել է «BUDP/CBGT» կոդերի համախումբը:
«Վերջնական շահառուի» բնութագրման համար անհրաժեշտ տվյալները (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն, վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ) նկարագրված են ստորև բերված Աղյուսակում.

	Երբ հաճախորդը գումարը ստանում է «Վերջնական շահառու» հանդիսացող անձի փոխարեն	
	« Վերջնական շահառու » հանդիսացող ֆիզիկական անձի համար	« Վերջնական շահառու» հանդիսացող իրավաբանական անձի համար
1	2	3
6*35x սահմանա-չափում	Վճարման տեսակից կախված լրացվում են	
I-ին տող	Անուն, Ազգանուն (Հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)	Իրավաբանական անձի անվանումը

<table>
<tr><td rowspan="6">II-ից → VI-րդ տողերում</td><td colspan="2">Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը՝ ըստ առկայության</td></tr>
<tr><td>Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը)
կամ
Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում՝ ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը:
Եթե հիմնական պարտապանը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կամ այլ կարգավիճակ ունեցող անձ (օրինակ՝ փախստական), ապա նշված համարը կարող է չլրացվել:</td><td rowspan="3">Հարկ վճարողի հաշվառման համարը</td></tr>
<tr><td>Անձնագրի տվյալներ
կամ
ID քարտի համարը
կամ
անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները
կամ
անձի մահվան հետ կապված տրված փաստաթղթի՝
Մահվան վկայականի, տվյալները</td></tr>
<tr><td colspan="2">Հասցեի վերաբերյալ տվյալներ</td></tr>
<tr><td></td><td>Որպես լիազորված ղեկավար անձի (բացառությամբ բանկի համար) անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td></tr>
<tr><td colspan="2">Այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:</td></tr>
</table>

«Վերջնական շահառու» հանդիսացող անձի վերաբերյալ լրացվող տվյալները չպետք է գերազանցեն նշված 6 տողի սահմանաչափը և լրացվում են հաղորդագրության համար սահմանված ցուցիչների միջոցով:

Սույն դաշտի 6*35x ենթադաշտում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են սահմանված «Ցուցիչները»՝ ըստ նշված սկզբունքի: «Ցուցիչի» և լրացվող տվյալների միջև դրվում է մեկ զատիչ նշան (/): Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ՝ իրենց համապատասխան ցուցիչների կիրառմամբ, չեն նշվում:

ՀS108-ի հաղորդագրության միջոցով, երբ որպես շահառու (կամ շահառուի բանկ) հանդիսանում է Կենտրոնական բանկը, իսկ որպես վերջնական շահառու հանդիսանալու է Կենտրոնական բանկում սպասարկվող հաճախորդը (որը չի հանդիսանում ԷՎՀ մասնակից), ապա «:72C:» դաշտի կիրառմամբ ՀՀ կենտրոնական բանկին ուղղված վճարում չի ուղարկվում (կատարվում):

17) **Դաշտ :77B:** Հաշվետվողականության կոդ

Չևաչափ 3*35x

Այս օժանդակ դաշտում նշվում է վճարման հետ կապված պետական կարգավորող մարմինների կողմից սահմանված անհրաժեշտ տեղեկատվությունը Կարգադրող-հաճախորդի (Հիմնական պարտապանի), ինչպես նաև Շահառու-հաճախորդի վերաբերյալ:

Սույն (**:77B:**) դաշտում կարող են լրացվել միայն ստորև ներկայացված Աղյուսակում սահմանված հիմնական կոդերը, որոնց կիրառման համար սահմանվում է 3!c/ ձևաչափը: Նշված յուրաքանչյուր հիմնական կոդից հետո լրացվում է մեկ զատիչ (/) և այնուհետև վերջինիս վերաբերող համապատասխան տվյալները ըստ սահմանված սկզբունքի:

Եթե սահմանված կոդի հետ կապված լրացվող համապատասխան տեղեկատվությունը ամբողջությամբ չի տեղավորվում մեկ տողի 35x սահմանաչափում, և անհրաժեշտ է շարունակությունը լրացնել հաջորդ տողում, ապա հաջորդող տողի սկզբում նորից նշվում է նույն կոդը, և այնուհետու մեկ զատիչ (/) նշանից հետո լրացվում է անհրաժեշտ տեղեկատվության (տվյալ կոդի հետ կապված) շարունակությունը:

:77B: դաշտում կիրառման համար սահմանված կոդերի ցանկը նշված է ստորև բերված Աղյուսակում: Ընդ որում

Բյուջե կատարվող վճարումների ընթացքում **:77B:** դաշտում կիրառվող **PTD** կոդի լրացումը պարտադիր է:

Աղյուսակ Բ1	:77B: դաշտում լրացվող կոդերի ձևաչափի ներքո կիրառվող պայմանանշանները և դրանց համար լրացվող տեղեկատվությունը		
Հիմնական կոդի արժեքը 3!c	**Ձևաչափը**	**Ձևաչափի նիշերը**	**Մեկնաբանություն** (յուրաքանչյուր կոդի դիմաց կարող է լրացվել միայն վերջինիս համար սահմանված տեղեկատվությունը)
PTD	PTD/2!c1!c6!n1!c6!n2!c1!x 5c1!x 5c		Պարտավորության վճարման տեսակի ժամկետը և այլ սահմանված բնութագրիչների ենթադաշտ:
		2!c	Առաջին 2!c մասում լրացվում է Վճարվող պարտավորության տեսակի կոդը՝ որը փոխկապված է (**PTD** ձևաչափում) նշված ժամանակահատվածի համար իրականացվող վճարման հետ: Սույն կոդը կարող է ընդունել հետևյալ արժեքները՝ FP-առաջին կամավոր վճարում

			TP-ընթացիկ տարվա կամավոր վճարում EP-ամփոփիչ/եզրափակիչ վճարում ZD- վճարումներ անցած/խախտված ժամկետների համար OP-Հետաձգված պարտավորության մարում (օր. ըստ պայմանագրի) AP- հաշվարկված տուգանքի վճարում (օր. ըստ ստուգման արդյունքի) YP- հաշվարկված տույժի վճարում GP-Լիավճար RO-Վերաձևակերպում LO-Ներդիրի տրամադրում OT- Այլ՝ չդասակարգված վճարում
		1!c6!n	Հարկային վճարման ժամանակահատվածի սկիզբ: 1!c –նշվում է՝ M,-որը նշանակում է ժամանակահատվածի սկիզբ: 6!n-ժամանակահատվածի սկզբի ամսաթիվն է, որը լրացվում է DDMMYY (օր, ամիս, տարի) տեսքով: Սույն ամսաթվի տվյալների բացակայության դեպքում՝ 6!n պարտադիր նիշերի փոխարեն կնշվեն (0) նշված քանակով 6 հատ Զրոներ /000000: Եթե վճարումը կատարվում է կոնկրետ ժամկետի դրությամբ, որտեղ ժամանակահատվածի սկիզբը չի նշվում, ապա լրացվում է միայն ժամանակահատվածի վերջը: Այս դեպքում 1!c-ը (M) –ից հետո սահմանված ժամկետի ենթամասում լրացվում է 0-զրոներ:
		1!c6!n	Հարկային վճարման ժամանակահատվածի վերջ 1!c – մասում նշվում է՝ E, -որը նշանակում է ժամանակահատվածի վերջը: 6!n-ժամանակահատվածի վերջի ամսաթիվն է, որը լրացվում է DDMMYY (օր, ամիս, տարի) տեսքով: Ժամանակահատվածի վերջը լրացվում է 0-զրոներ եթե հաճախորդի կողմից ոչ մի ժամկետ չի նշվել: Սույն ամսաթվի տվյալների բացակայության դեպքում՝ 6!n պարտադիր նիշերի փոխարեն լրացվում են (0) նշված քանակով 6 հատ Զրոներ /000000:

		2!c	Երկրորդ 2!c մասում լրացվում է Վճարում կատարողին բնութագրող կոդը: Այս կոդը կարող է ընդունել հետևյալ արժեքները HT-հարկատուի/ պարտապանի կողմից վճարված գումար GT-Երաշխավոր անձի կողմից վճարված գումար TT-Երրորդ անձի կողմից վճարված գումար OT - Այլ՝ չդասակարգված վճարող:
		1!x 5c	Առաջին 1!x 5c մասում լրացվում է Հարկատուին սպասարկող տարածքային մաքսային կամ հարկային մարմինների կոդը, որը պարտադիր է բյուջետային վճարման ժամանակ: Որտեղ, 1!x –ի փոխարեն լրացվում է մեկ սլեշ նշանը: Եթե 5c մասում լրացման ենթակա կոդի արժեքը բացակայում է, ապա մինչև 5c երկարությամբ տվյալների փոխարեն լրացվում է (/0) մեկ սլեշ/զատիչ և մեկ Զրո՝ /0:
		1!x 5c	երկրորդ 1!x 5c մասում լրացվում է Վճարված գումարը ստացող մարմնի կոդը: Որտեղ, 1!x –ի փոխարեն լրացվում է մեկ սլեշ նշանը: Եթե 5c մասում լրացման ենթակա կոդի արժեքը բացակայում է, ապա մինչև 5c երկարությամբ տվյալների փոխարեն լրացվում է (/0) մեկ սլեշ/զատիչ և մեկ Զրո՝ /0:
BPD	BPD/6!n		Շահառու հաճախորդին վճարումը կատարելու (ըստ կարգադրող-հաճախորդի հանձնարարականի) ամսաթվի ենթադաշտ: Միջբանկային կամ ներբանկային վճարումների ժամանակ կարող է նշվել շահառուին վճարումը կատարելու ժամկետի/ամսաթվի մասին պայմանը:
		6!n	6!n- մասում լրացվում է այդ ամսաթիվը՝ DDMMYY (օր, ամիս, տարի) տեսքով:
REZ	REZ/1!x/1x		Վճարողի և (կամ) հիմնական պարտապանի ռեզիդենտության կարգավիճակի մասին լրացվում է այս կոդի միջոցով: Վճարողի և (կամ) հիմնական պարտապանի կարգավիճակի բնութագրելու համար 1!x և 1x –նիշերից յուրաքանչյուրը կարող է ընդունել

			հետևյալ կոդերը՝ R-ռեզիդենտ է, N- Ոչ ռեզիդենտ է: Այն դեպքում, երբ 1x -ի (կամ 1!x) կարգավիճակը չի նշվել, ապա դրանց արժեքները լրացվում է 0-զրո:
		1!x	առաջին 1!x –նիշը բնութագրում է վճարողի ռեզիդենտության կարգավիճակը, իսկ
		/1x	երկրորդ 1x- նիշը բնութագրում է հիմնական պարտապանի ռեզիդենտության կարգավիճակը:
	Նշված հիմնական կոդերի արժեքները լրացվում են առջևի (3!c)- մասում: Իսկ հիմնական կոդի և լրացվող համապատասխան տեղեկատվության միջև պարտադիր դրվում է մեկ «/» զատիչ նշանը: Յուրաքանչյուր կոդից հետո երկու զատիչ (//) չի կարող օգտագործվել, ինչպես նաև չեն կարող նշվել «կառավարող» սիմվոլներ:		

Նշված ցանկը կարող է Կենտրոնական բանկի կողմից ընդլայնվել:

Աղյուսակ Բ2-ով, ստորև առանձնացվել և նշվել է միայն վերը նշված Բ1 Աղյուսակով **:77B:** դաշտի համար սահմանված հիմնական կոդերը և դրանց մեկնաբանությունը (հակիրճ)՝ հաճախորդին սպասարկող օպերատորի կիրառման տեսակետից

Աղյուսակ Բ2	77B: դաշտում կիրառման համար սահմանված կոդերի ցանկը, դրանց ձևաչափը և մեկնաբանությունը:	
Հիմնական կոդի արժեքը 3!c	**Ձևաչափը**	**Մեկնաբանություն** (յուրաքանչյուր կոդի դիմաց կարող է լրացվել միայն վերջինիս համար սահմանված տեղեկատվությունը)
PTD	PTD/2!c1!c6!n 1!c6!n2!c1!x 5c 1!x 5c	Payment Type Date Պարտավորության վճարման տեսակի ժամկետը և այլ սահմանված բնութագրիչների ենթադաշտ: Մանրամասն տես՝ Աղյուսակ Բ1-ում
BPD	BPD/6!n	Beneficiary Payment Date Շահառու-հաճախորդին ուղղված (ըստ կարգադրող-հաճախորդի հանձնարարականի) վճարումը կատարելու ամսաթիվը, որը լրացվում է DDMMYY (օր, ամիս, տարի) տեսքով:
REZ	REZ/1!x/1x	Վճարողի և (կամ) հիմնական պարտապանի ռեզիդենտության կարգավիճակի մասին լրացում: Մանրամասն՝ տես Աղյուսակ Բ1-ում

18) **Դաշտ :07:** Էլեկտրոնային ստորագրություն

Ձևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում լրացվում է հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմի էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 108 հաղորդագրության լրացման ընթացքում ստուգման և մշակման ենթակա հատուկ այլ պայմաններ

Եթե հաղորդագրության մեջ լրացված է 33B դաշտը, որտեղ նշված արժույթի կոդը տարբերվում է 32A դաշտում լրացված արժույթի կոդից , ապա 36 դաշտը պարտադիր պետք է լրացվի, իսկ հակառակը՝ միայն 36 դաշտի լրացում անթույլատրելի է:
Եթե էլեկտրոնային հաղորդագրությունը ձևավորվում է բյուջետային և այլ պարտադիր վճարումներ կատարելու համար, որտեղ անհրաժեշտ է լրացնել նաև հաճախորդի կողմից նշված հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, ապա դրանք կարող են լրացվել նաև 77B դաշտում:

Հաղորդագրության 50a, 59a, 72A դաշտերը, որոնք համապատասխանաբար փոխկապված են 23P, 23Q, 23S, դաշտում լրացվող NP, LP կոդերի հետ, անհրաժեշտ է պահպանել դրանց համար սահմանված ցուցիչների կիրառումը, ըստ սահմանված կանոնների:
Ֆինանսական կազմակերպությունը պետք է ապահովի հաղորդագրության մեջ լրացվող ՀՎՀՀ-ի ստուգումը և ճշգրտումը համապատասխան շտեմարանի տվյալների հետ:
Սույն հաղորդագրության նկարագրության մեջ (5!n) կոդ նշելով հասկացվում է Կենտրոնական բանկի կողմից բանկին/կազմակերպությանը տրամադրված հնգանիշ կոդը:

	Հաղորդագրության դաշտերի նկարագրության համար կիրառվող նշանակումներ:
1	2
	Կոդերի սահմանման ժամանակ կիրառվում են միայն անգլերեն տառեր
	Հաղորդագրության :20: դաշտը չպետք է սկսվի կամ ավարտվի «/» նշանով, ինչպես նաև չպետք է պարունակի երկու հաջորդական զատիչ «//» նշաններ
	Հաղորդագրության տողերում «ցուցիչների» և տվյալների լրացման սկզբունքները
(4*35 x) և այլն	Տվյալ դաշտի (4*35 x) տողերում տվյալների լրացման ժամանակ «ցուցիչները» կիրառվում են ըստ սահմանված սկզբունքի: «ցուցիչները» կարող են լինել 0-ից մինչև 9 թվերը և լատինական այբուբենի տառերը: Յուրաքանչյուր «ցուցիչ» կիրառվում է միայն տվյալ սահմանված տեղեկատվության համար: «Ցուցչի » և լրացվող տվյալների միջև դրվում է (/)-մեկ սլեշ: Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ ցուցչի և սլեշի կիրառմամբ չի նշվում: Եթե անվանումը երկար է, և երկրորդ տողում այն պետք է շարունակվի, ապա այս տողի սկզբում նույնպես պետք է դրվի սահմանված անվանման խմբի ցուցիչը:

	«Ցուցիչը» իրենից ներկայացնում է թիվ կամ տառ (/)-մեկ սլեշի հետ միասին: Նույն տողում երկու անգամ ցուցիչ կամ (/)- սլեշ չի կիրառվում:
[հաշիվ]	Եթե որև դաշտի լրացման կառուցվածքում հաշվի ձևաչափը նշված է այս [ ]-փակագծերի մեջ, ապա տվյալ դաշտում լրացման ենթակա հաշիվը կարող է չլրացվել: Այն դեպքում, երբ հաշիվը չի լրացվում, ապա ֆորմատի ձևավորման ժամանակ դատարկ տող չպետք է առկա լինի, և ըստ տվյալ դաշտի մյուս տվյալների համար սահմանված ձևաչափի ՝ չլրացված [հաշիվ] մասին անմիջապես հաջորդող տվյալները բարձրանում են վերև: (սույն հստակեցումը տրվել է պարզաբանման միջոցով)

Հաղորդագրություններում կիրառման համար սահմանված են հետևյալ «ցուցիչները», ըստ նշված տվյալների խմբերի*		
ցուցիչ	(/)-մեկ սլեշ	կիրառվող տվյալների խմբի անվանումը
1	/	Ֆիզիկական անձի (նաև անհատ ձեռնարկատեր) Անուն, Ազգանուն, (Հայրանունը՝ անձնագրում առկայության դեպքում): Իսկ իրավաբանական անձի դեպքում նշվում է՝ Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը (բացառությամբ՝ սպասարկող բանկի)
2	/	ցուցիչ 2/-ի միջոցով լրացվում է միայն Հարկ վճարողի հաշվառման համարը (8-նիշ, ֆորմատը՝ 1!c/8!n), (ՀՎՀՀ)
5	/	ցուցիչ 5/-ի միջոցով լրացվում է Հանրային ծառայությունների համարանիշը (10-նիշ, ֆորմատը՝ 1!c/10!n), (ՀԾՀ)
6	/	ցուցիչ 6/-ի միջոցով լրացվում է Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տրված տեղեկանքի համարը (10-նիշ, ֆորմատը՝ 1!c/10!x):
3	/	ցուցիչ 3/-ի միջոցով լրացվում են Հայաստանի Հանրապետության կողմից իրավական ակտերի համաձայն տրված անձը հաստատող փաստաթղթի կամ վերջինիս փոխարինող այլ փաստաթղթի տվյալները (Անձնագիր, ID-քարտ, կենսաչափական անձնագիր և այլն): (տես՝ Հավելված 1-ը):
7	/	ցուցիչ 7/-ի միջոցով լրացվում է Օտարերկրյա պետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթի տվյալները: (տես՝ Հավելված 1-ը)
4	/	ցուցիչ 4/-ի միջոցով լրացվում է անձի մահվան հետ կապված տրված փաստաթղթի՝ Մահվան վկայականի տվյալները: (տես՝ Հավելված 1-ը):
8	/	Հասցեի վերաբերյալ տեղեկատվություն

0	/	Ղեկավարի՝ անուն, ազգանուն (հայրանունը՝ անձնագրում առկայության դեպքում)
9	/	Այլ չդասակարգված տվյալներ
f	/	Սպասարկող-վճարող բանկի/կազմակերպության անվանումը
c	/	ցուցիչ c /-ի միջոցով լրացվում է Էլեկտրոնային փողերի հաշվառման հաշիվը: (Կիրառվում է 72A» և«72C» դաշտերում[2]):
	Բյուջեի կողմից SWIFT-ով արտասահման վճարում կատարելու/վճարում ստանալու ժամանակ վերը նշված ցուցիչներից բացի կիրառվում են նաև հետևյալ ցուցիչները	
b	/	BIC կոդի լրացում
i	/	Շահառուի հաշվեհամարը արտասահմանյան բանկում
n	/	Օտարերկրյա անձի կամ կազմակերպության անվանումը (այդ թվում՝ բանկի)՝ SWIFT-ով փոխանցման համար
q	/	Քլիրինգային համակարգի կողմից տրված կոդի լրացում

ՀՏ 108 հաղորդագրության «72A» և «72C» դաշտերի 6*35x ենթադաշտում տվյալների լրացման համար սահմանված ցուցիչների միջոցով լրացվող տեղեկատվությունից բացի, սույն պարբերությունն Ակ ուսակ 2-ով նշված տեղեկատվությունը լրացնել ու դեպքում «72A» և «72C» դաշտերում կարող են կիրառվել նաև ստորև սահմանված լրացուցիչ կոդերը՝ ըստ նշված ձևաչափի:

(Ակ ուսակ 2) Ահմանված տվյալների ցուցիչի միջոցով լրացվող տեղեկատվության համար կիրառվող լրացուցիչ կոդեր		
Ահմանված տվյալների ցուցիչը	Կիրառվող լրացուցիչ կոդեր	Տեղեկատվության բովանդակությունը
9/	ac/	Վերջնական շահառուի հաշվեհամարը արտասահմանում սպասարկող կազմակերպության մոտ՝ «iban» կամ «ban» կառուցվածքով:
9/	bic/	Ֆինանսական կազմակերպության SWIFT-ի bic կոդը:
9/	bin/	Ֆինանսական կազմակերպության կոդը, որը կիրառվում է օտարերկրյա ավճարային համակարգում և տարբերվում է SWIFT -ի «bic» կոդից:
9/	tin/	Օտարերկրյա իրավաբանական անձի նույնականացման համարը՝ արտասահմանում:
9/	ai/	Այլ պահանջվող տվյալներ:
Սույն Ակ ուսակում նշված լրացուցիչ կոդերի ցանկի ստուգում «ԷՀԱՀ»-ի կողմից չի իրականացվում:		

Հավելված 1

[2] - ԷՀԱ-ում կիրառման մեջ է դրվում 04.03.2022թ-ից 6-ամիս հետո (ՀՀ ԿԲ նախագահի 03.03.22թ թիվ 1/89 Լ որոշում):

Անձը հաստատող փաստաթղթի և մահվան վկայականի տվյալների լրացման հաջորդականությունը

(«ՀՏ 108 Հաճախորդի կողմից դրամական միջոցի փոխանցման հանձնարարական», «ՀՏ 972 Բյուջետային վճարումների ռեեստր», «ՀՏ 973 Միջբանկային վճարումների ռեեստր», «ՀՏ910 Հաշվի կրեդիտագրման/միջոցների մուտքագրման/ մասին տեղեկացում» և «ՀՏ 900 Հաշվի դեբետագրման/միջոցների ելքագրման/մասին տեղեկացում» հաղորդագրություններում կիրառման համար)

1. Վճարումների իրականացման համար կիրառվող հաղորդագրությունների համապատասխան դաշտերում՝ իրավական ակտերի համաձայն պահանջվող տվյալները (Անձը հաստատող փաստաթղթի, Նույնականացման քարտի, Անձնագրին փոխարինող այլ փաստաթղթի տվյալներ) լրացվում և նշվում են ըստ ստորև սահմանված կառուցվածքի տեսքով՝ պահպանելով Աղյուսակ 2-ով նշված հաջորդականությունը: Ընդ որում .

1) Հայաստանի Հանրապետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթերը լրացվում են «3/»-րդ ցուցիչի միջոցով
2) Օտարերկրյա պետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթերը լրացվում են «7/»-րդ ցուցիչի միջոցով

2. Անձը հաստատող փաստաթղթի համար սահմանված համապատասխան ցուցիչից հետո պարտադիր նշվում է.

1) «Փաստաթղթի տեսակի դասակարգման հատուկ կոդը», որը կիրառվում է ներկայացվող անձը հաստատող փաստաթղթերի դասակարգման նպատակով,
2) Ֆիզիկական անձի «անձը հաստատող փաստաթղթի տվյալները»՝ ըստ ՀՀ այլ իրավական ակտերի պահանջների ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի:

3. «Փաստաթղթի տեսակի դասակարգման հատուկ կոդը» կիրառվում է համաձայն ստորև նշված դասակարգման, ըստ նշված փաստաթղթի դասակարգման համար սահմանված համապատասխան կոդի:

Աղյուսակ 1				
«Փաստաթղթի տեսակի դասակարգման հատուկ կոդը»				«Անձը հաստատող փաստաթղթի տվյալները»
ՀՀ իրավական ակտի անվանումը	Կիրառվող փաստաթղթերի տեսակի անվանումը	Փաստա-թղթի տեսակի դասա-կարգման հատուկ կոդերի ցանկ	«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքով սահմանված (30.11.2011թ, ՀՕ-288-Ն) ՀԾՀ-ն առկա է (համաձայն ՀՀ	Ըստ նշված յուրաքանչյուր (փաստաթղթի համար նշվող տվյալներում առնվազն ներառվում է.)

			Կառավարության 05.04.2012թ թիվ 419Ն որոշման)	
1	2	3	4	5
Անձը հաստատող փաստաթղթեր՝ ՀՀ օրենսդրության համաձայն				
1) «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենք (30.11.2011թ, ՀՕ-287-Ն)	Անձնագիր՝ համաձայն սույն օրենքի (այսուհետ՝ կենսաչափական անձնագիր)	AB		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
2) «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք (30.11.2011թ, ՀՕ-286-Ն)	ՀՀ քաղաքացու նույնականացման քարտը (համաձայն սույն օրենքի)	AI	ՀԾՀ-ն առկա է ՀՀ քաղաքացու նույնականացման քարտում	փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
Անձը հաստատող փաստաթղթերի տեսակը՝ համաձայն ՀՀ կառավարության 22.12.1999թ. թիվ 767 որոշման				
	1. ՀՀ քաղաքացիների համար՝ անձը հաստատող փաստաթղթերի տեսակները՝			
	ա/ Անձնագիրը (Անձնագիր-ՀՀ կառավարության 25.12.1998 թ. թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիր) (այսուհետ՝ Անձնագիր)	AP		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
	բ/ Զինվորական գրքույկը	MD		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը

	գ/ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, դրանք են			
	Անձնագրի դիմաց- 821 որոշմամբ սահմանված անձնագիր (ժամանակավորապես տրվող փաստաթուղթ)	TD		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
	նույնականացման քարտի դիմաց (ժամանակավորապես տրվող վկայական)	TI	ՀՇՀ-ն առկա է (համաձայն ՀՀ Կառավարության 05.04.2012 թ. թիվ 419Ն որոշման)	փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
	դ/ մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը	BC		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
	2. ապաստան հայցողների համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը,	AS	ՀՇՀ-ն առկա է (համաձայն ՀՀ Կառավարության 05.04.2012թ թիվ 419Ն որոշման)	փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
	3. ապաստան ստացած փախստականների համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը	RD	ՀՇՀ-ն առկա է (համաձայն ՀՀ Կառավարության 05.04.2012 թ. թիվ 419Ն որոշման)	փաստաթղթի՝ ա/սերիան և համարը բ/վավերակա-նության ժամկետ
	4. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթերի տեսակները՝			
	ա/ օտարերկրյա պետության անձնագիրը	FP		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը

				բ/ծննդյան ամսաթիվ գ/տրման ամսաթիվ
	բ/ անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը	FD		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը բ/ծննդյան ամսաթիվ գ/տրման ամսաթիվ
	գ/ օտարերկրյա քաղաքացու կացության քարտը	CC	ՀՕՀ-ն առկա է (համաձայն ՀՀ Կառավարության 05.04.2012թ թիվ 419Ն որոշման) - ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացու կացության քարտում: - ՀՀ-ում մշտապես բնակվող բայց քաղաքացիություն չունեցող անձի փաստաթղթում	փաստաթղթի՝ ա/սերիան և համարը գ/տրման ամսաթիվ
	5. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը	PS	ՀՕՀ-ն առկա է (համաձայն ՀՀ Կառավարության 05.04.2012 թ. թիվ 419Ն որոշման)	փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
Կիրառվող այլ փաստաթղթերի դասակարգում (որոնք չեն հանդիսանում անձը հաստատող փաստաթուղթ), որոնց տվյալները լրացվում են 9/-ցուցիչի միջոցով				
«Ճանապարհա-յին երթևեկության անվտանգու-թյան ապահովման մասին» ՀՀ օրենք	Վարորդական վկայականը	DV		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը

(08.07.2005թ., ՀՕ-166-Ն)				
«Մահվան վկայական» փաստաթղթի դասակարգում (որը չի դիտարկվում անձը հաստատող փաստաթուղթ), որի վերաբերյալ տվյալները լրացվում են 4/-ցուցիչի միջոցով				
«Քաղաքացիա-կան կացության ակտերի մասին» ՀՀ օրենք (08.12.2004թ., ՀՕ-9-Ն)	Մահվան վկայականը	DC		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը բ/տրման ամսաթիվ գ/մահացած անձի անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար (առկայության դեպքում)
Այլ չնշված փաստաթուղթը (անձը հաստատող փաստաթուղթ), որը սահմանված է միջազգային ստանդարտով և կարող է կիրառվել ՀՀ տարածքում, ապա լրացվում է՝ 7/ ցուցիչի միջոցով եթե տրված է օտարերկրյա պետության կողմից, 3/ ցուցիչի միջոցով եթե տրված է Հայաստանի Հանրապետության կողմից		OD		փաստաթղթի՝ ա/սերիան և համարը
Նշված ցանկը կարող է Կենտրոնական բանկի կողմից ընդլայնվել, ըստ անհրաժեշտության				

ա/ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերի համաձայն անձի նույնականացման համար պահանջվող այն տվյալները, որոնց լրացման համար համապատասխան նիշեր չեն նախատեսվել (օրինակ՝ քաղաքացիության վերաբերյալ, և այլն), կարող են լրացվել տվյալ դաշտի այլ չդասակարգված տվյալներ՝ 9/-ցուցիչի միջոցով:

4. Հաշվի առնելով անձը հաստատող յուրաքանչյուր փաստաթղթի տեսակը, դրանց վերաբերյալ տվյալները՝ նշվում են ստորև սահմանված ֆորմատով, ըստ այդ տվյալների լրացման համար սահմանված հաջորդականության (Աղյուսակ 2):
5. Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված տվյալների լրացման ձևաչափը և այդ տվյալների լրացման հաջորդականությունը

Աղյուսակ 2
1!c/ 2!c 2!a 1!a21x 1!a8n 1!a8n 1!a8n, որտեղ

1!c /	2!c	2!a	1!a21x	1!a8n	1!a8n	1!a8n
Նշվում է Սահման-ված ցուցիչը («3/» կամ «7/»)	Փաստա-թղթի դասակարգ-ման կոդը (համաձայն Աղյուսակ 1, սյունակ 3)	Փաստա-թուղթը տրամա-դրող (թողարկող) երկրի կոդը	Փաստա-թղթի սերիան և համարը	Տրման (Issue) ամսաթիվը DDMMYYYY (օր/ամիս/տարի)	Ծննդյան ամսաթիվը DDMMYYYY (օր/ամիս/տարի)	Վավերակա-նության (Expiry) ամսաթիվը DDMMYYYY (օր/ամիս/տարի)
ա) Հայաստանի Հանրապետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված տվյալների լրացման ֆորմատի օրինակ						
3/	2!c	2!a	1!a21x	1!a8n	1!a8n	1!a8n
Օրինակ						
ցուցիչը՝ «3/» Նույնակա-նացման քարտ	AI	AM	N000457779	I0	B0	E0
ցուցիչը՝ «3/» Կենսաչա-փական անձնագիր	AB	AM	NAK0477779	I0	B0	E0
ցուցիչը՝ «3/» Փախստա-կանի կոնվեն-ցիոն ճամփորդա-կան փաստա-թուղթ	RD	AM	NVIICL4199722217	I0	B0	E14122017
բ) Օտարերկրյա պետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթի հետ կապված տվյալների լրացման ֆորմատի օրինակ.						
7/	2!c	2!a	1!a21x	1!a8n	1!a8n	1!a8n
ցուցիչը՝ «7/» Օտարեր-կրյա պետության անձնագիր	FP	GR	NII4199777	I14122007	B01051970	E0

գ) Անձը հաստատող փաստաթղթերի համար սահմանված ֆորմատում յուրաքանչյուր տվյալի լրացման ժամանակ, պետք է պահպանվի վերջինիս լրացման համար սահմանված կառուցվածքը: Ընդ որում.

Տվյալների լրացման համար սահմանված կառուցվածքը հետևյալն է.			
		ՀՀ իրավական ակտերի համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթերի կիրառման համար (տես՝ Աղյուսակ 1-ը, բացառությամբ 4-րդ կետի «ա», «բ» ենթակետ)	Օտարերկրյա պետության անձնագիր, կամ անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերի համար (տես՝ Աղյուսակ 1-ի 4-րդ կետի «ա», «բ» ենթակետերը)
1	2	3	4
1.	«1!c/» սահմանված ցուցիչը	«3/»-ցուցիչ, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթերի լրացման դեպքում	«7/»-ցուցիչ, որը կիրառվում է օտարերկրյա պետության կողմից տրված անձը հաստատող փաստաթղթերի լրացման դեպքում
2	Փաստաթղթի տեսակի դասակարգման հատուկ կոդը՝	2!c - (տառաթվային 2-նիշ) Ըստ Աղյուսակ 1-ի սյունակ 3-ով նշված կոդի լրացվում է (AB AI AP, MD, BC, TD, TI, AS, RD, PS, CC) Եթե տվյալ փաստաթղթի դասակարգման համար կոդը բացակայում է նշվում է OD	2!c - (տառաթվային 2-նիշ) Ըստ Աղյուսակ 1-ի սյունակ 3-ով նշված կոդի լրացվում է (FP, FD) Եթե տվյալ փաստաթղթի դասակարգման համար կոդը բացակայում է նշվում է OD
3	Փաստաթուղթը տրամադրող (թողարկող) երկրի կոդը	2!a - (տառային, լատինատառ 2 նիշ) Նշվում է ըստ ԻՍՕ-3166-1 ստանդարտի	2!a - (տառային, լատինատառ 2 նիշ) Նշվում է ըստ ԻՍՕ-3166-1 ստանդարտի
4	Փաստաթղթի Սերիան և համարը	1!a և 21x նիշ 1!a – լատինատառ նշվում է N, որպես սերիայի և համարի նիշ: Այնուհետև լրացվում են փաստաթղթի սերիան և համարը, որոնք նշվում են միասին մինչև 21x նիշ): Անձնագրի, կենսաչափական անձնագրի, նույնականացման	1!a և 21x նիշ 1!a – լատինատառ նշվում է N, որպես սերիայի և համարի նիշ: Այնուհետև լրացվում են փաստաթղթի սերիան և համարը, որոնք նշվում են միասին մինչև 21x նիշ):

		քարտի համար նշվում է (9!x)-նիշ:	
5	Տրման (Issue) ամսաթիվը	1!a - (տառային) և 8n – (թվային) նիշեր 1!a – նշվում է I, որպես տրման ամսաթվի նիշ: 8n - Տրման ամսաթիվը լրացվում է (DDMMYYYY) օր/ամիս/տարի հաջորդականությամբ (8n - ամսաթվի՝ չնշվելու դեպքում I-ից հետո դրվում է մեկ զրո)	1!a - (տառային) և 8n – (թվային) նիշեր 1!a – նշվում է I, որպես տրման ամսաթվի նիշ: 8n - Տրման ամսաթիվը լրացվում է (DDMMYYYY) օր/ամիս/տարի հաջորդականությամբ (8n - ամսաթվի՝ չնշվելու դեպքում I-ից հետո դրվում է մեկ զրո)
6	Ծննդյան ամսաթիվը	1!a - (տառային) և 8n – (թվային) նիշեր 1!a – նշվում է B, որպես ծննդյան ամսաթվի նիշ: 8n - Ծննդյան ամսաթիվը լրացվում է (DDMMYYYY) օր/ամիս/տարի հաջորդականությամբ (8n - ամսաթվի՝ չնշվելու դեպքում B-ից հետո դրվում է մեկ զրո)	1!a - (տառային) և 8n – (թվային) նիշեր 1!a – նշվում է B, որպես ծննդյան ամսաթվի նիշ: 8n - Ծննդյան ամսաթիվը լրացվում է (DDMMYYYY) օր/ամիս/տարի հաջորդականությամբ (8n - ամսաթվի՝ չնշվելու դեպքում B-ից հետո դրվում է մեկ զրո)
7	Վավերականության (Expiry) ամսաթիվը	1!a - (տառային) և 8n – (թվային) նիշեր 1!a – նշվում է E, որպես վավերականության ամսաթվի նիշ 8n - Վավերականության ամսաթիվը լրացվում է (DDMMYYYY) օր/ամիս/տարի հաջորդականությամբ (8n - ամսաթվի՝ չնշվելու դեպքում B-ից հետո դրվում է մեկ զրո)	1!a - (տառային) և 8n – (թվային) նիշեր 1!a – նշվում է E, որպես վավերականության ամսաթվի նիշ 8n - Վավերականության ամսաթիվը լրացվում է (DDMMYYYY) օր/ամիս/տարի հաջորդականությամբ (8n - ամսաթվի՝ չնշվելու դեպքում B-ից հետո դրվում է մեկ զրո)

6. «Մահվան վկայական» փաստաթղթի ներկայացման դեպքում, վերջինիս հետ կապված համապատասխան տվյալները լրացվում են հետևյալ ֆորմատով և հաջորդականությամբ.

Աղյուսակ 3

«Մահվան վկայական» փաստաթղթերի հետ կապված տվյալների լրացման ֆորմատը և այդ տվյալների լրացման հաջորդականությունը.					
	1!c /2!c2!a 1!a13x1!a8n 1!a9c, որտեղ				
1!c /	2!c	2!a	1!a13x	1!a8n	1!a9c
Սահմանված ցուցիչը «4/»	Մահվան վկայական փաստաթղթի տեսակի դասակարգման հատուկ կոդը» (տես՝ Աղյուսակ 1, այունակ 3)	Մահվան վկայական փաստաթուղթը տրամադրող (թողարկող) երկրի կոդը	Մահվան վկայականի՝ սերիան և համարը	Մահվան վկայականի տրման (Issue) ամսաթիվը DDMMYYYY (օր/ամիս/տարի)	Մահացած անձի անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը
	Մահվան վկայական փաստաթղթի համար սահմանված ֆորմատում յուրաքանչյուր տվյալի լրացման ժամանակ, պետք է պահպանվի վերջինիս լրացման համար սահմանված կառուցվածքը: Ընդ որում.				
	2!c – (տառաթվային) նշվում է DC:	2!a - (տառային, լատինատառ 2 նիշ) Նշվում է ըստ ԻՍՕ-3166-1 ստանդարտի	1!a - (տառային) և 13x 1!a – նշվում է լատինատառ N, որպես սերիայի և համարի տվյալի նիշ, որից հետո լրացվում են այս փաստաթղթի տվյալները մինչև 13x-նիշ: (13x-տառաթվային փաստաթղթի սերիան և համարը նշվում են միասին)	1!a (տառային) և 8n – (թվային) 1!a – նշվում է I-տրման ամսաթվի նիշ: Այնուհետև նշվում է տրման ամսաթիվը:	1!a (տառային) և 9c – (տառաթվային) 1!a – նշվում է D, որպես մահացածի անձը հաստատող փաստաթղթի տվյալի նիշ: 9c-անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը: Չնշվելու դեպքում D-ից հետո դրվում է մեկ զրոյի նիշ
Օրինակ					
ցուցիչը 4/	DC	AM	NLL88844433311	I14122007	D0

ՀՏ 125 Հաճախորդի վճարման հանձնարարական

ՀՏ 125 հաղորդագրությունը ենթակա է կիրառման ՀՀ կենտրոնական բանկի «Գործառնական օր» ավտոմատացված համակարգում պահանջվող ծրագրային փոփոխությունները շահագործման հանձնելու օրվանից, որի մասին կուղարկվի տեղեկացում:

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) նախատեսված է ՀՀ դրամով կամ արտարժույթով դրամական փոխանցում (վճարում) իրականացնելու համար և այն կիրառվում է՝

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Կենտրոնական բանկին ուղղված վճարման հանձնարարական ներկայացնելու համար, երբ՝
  a. Ֆինանսների նախարարությունը նախաձեռնում է դեպի արտասահման (SWIFT համակարգի միջոցով) դրամական փոխանցում
  b. Ֆինանսների նախարարության Միասնական դրամային հաշվի և Գանձապետական ներքին հաշիվների միջև կատարվում է դրամական փոխանցում, որը կարող է ներառել նաև արտարժույթի փոխարկում:
- ՀՀ կենտրոնական բանկում արտասահմանից, SWIFT համակարգով, ստացված վճարման հանձնարարականի առաքման համար դեպի շահառու հանդիսացող Ֆինանսների նախարարություն

Ըստ այդմ՝

- արտասահման փոխանցում կատարելու համար ՀՀ ֆինանսների նախարարությունից, Կենտրոնական բանկում՝ «BankMail» համակարգով, ստացված ՀՏ 125 հաղորդագրության հիման վրա ավտոմատ ձևավորվում է Հաճախորդի կրեդիտային փոխանցման հանձնարարական՝ MT 103 Single Customer Credit Transfer, **կամ** Հաճախորդի կրեդիտային փոխանցման արագ մշակման հանձնարարական՝ MT 103 **STP** Single Customer Credit Transfer, համաձայն SWIFT համակարգի ստանդարտների
- Կենտրոնական բանկում, օտարերկրյա Վճարողի նախաձեռնությամբ, SWIFT համակարգի միջոցով ստացված MT 103 կամ MT 103 STP հաղորդագրությունը (հասցեագրված ՀՀ ֆինանսների նախարարությանը) ավտոմատ փոխարինվում է ՀՏ 125 հաղորդագրությամբ և այնուհետև առաքվում է դեպի ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՏ 125-ի **:72:** դաշտում կարող են լրացվել որոշակի տվյալներ հատուկ կոդերի կիրառմամբ, որոնք ուղղված են Կենտրոնական բանկին:





Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Ա կրկնվող պարբերություն ---->				
Օ	13C	Ժամանակի ցուցանշում	/8c/4!n1!x4!n	2
-----|				
Պ	23B	Բանկի գործառնության կոդ	4!c	3
Բ կրկնվող պարբերություն ---->				
Օ	23E	Հանձնարարականի կոդ	4!c[/30x]	4
-----|				
Օ	26T	Գործարքի տեսակի կոդ	3!c	5
Պ	32A	Կատարման ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	6
Օ	33B	Հանձնարարականի արժույթի կոդ և գումար	3!a15d	7
Օ	36	Արտարժույթի փոխարժեք	12d	8
Պ	50a	Հանձնարարող հաճախորդ	J կամ K կամ P	9
Օ	51A	Փոխանցող կազմակերպություն	[/1!a][/34x] 4!a2!a2!c[3!c]	10
Օ	52a	Հանձնարարող հաճախորդին սպասարկող կազմակերպություն	A կամ D	11
Օ	53a	Փոխանցողի թղթակից բանկ	A, B կամ D	12
Օ	54a	Ստացողի թղթակից բանկ	A, B կամ D	13
Օ	55a	Փոխհատուցում իրականացնող երրորդ կողմ	A, B կամ D	14
Օ	56a	Միջնորդ կազմակերպություն (բանկ)	A, C կամ D	15
Օ	57a	Շահառուի կազմակերպություն (բանկ)	A, B, C կամ D	16
Պ	59a	Շահառու հաճախորդ	A, N կամ P	17

O	70	Վճարման նպատակ	4*35x	18
Պ	71A	Միջնորդավճարի վերաբերյալ մանրամասներ	3!a	19
Գ կրկնվող պարբերություն ---->				
O	71F	Փոխանցող կողմի միջնորդավճար	3!a15d	20
-----┤				
O	71G	Ստացող կողմի միջնորդավճար	3!a15d	21
O	72	Փոխանցողից Ստացող կողմին ուղղված տեղեկություն	6*35x	22
O	77B	Կարգավորող մարմնին ուղղված տեղեկատվություն	3*35x	23
O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	24

Պ – պարտադիր լրացման դաշտ, O – օժանդակ դաշտ

- ՀՏ 125 հաղորդագրության առավելագույն թույլատրելի չափը, առանց **:07:** դաշտի պարունակության, չպետք է գերազանցի **1՛920** նիշը
- Եթե ՀՏ 125 հաղորդագրության մեջ **համատեղ առկա են** **:52a:**, **:53a:**, **:54a:**, **:55a:**, **:56a:** և **:57a:** դաշտերը՝
  - լրացված **A** տարբերակով (բացառությամբ՝ **:53a:** դաշտի, որը կարող է լրացված լինել նաև **B** տարբերակով), ինչպես նաև **:59a:** պարտադիր դաշտը լրացված է **A** կամ **P** տարբերակով, ապա ՀՏ 125-ը փոխակերպվում է MT 103 STP հաղորդագրությանը
  - և դրանցից առնվազն մեկը լրացված չէ **A** տարբերակով (իսկ **:59a:** դաշտը նշված է N տարբերակով), ապա ՀՏ 125-ը փոխակերպվում է MT 103 հաղորդագրությանը:
- **C1** կանոն ⇨ եթե առկա **:33B:** դաշտի արժույթի կոդը տարբերվում է **:32A:** դաշտի արժույթի կոդից, ապա **:36:** դաշտի առկայությունը պարտադիր է, հակառակ դեպքում **:36:** դաշտը չի գրանցվում
- **C3** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI** կոդը, ապա **:23E:** դաշտը կարող է պարունակել միայն **SDVA**, **TELB**, **PHOB** կամ **INTC** կոդերից մեկը:
  Եթե **:23B:** դաշտը պարունակում է **SSTD** կամ **SPAY** կոդը, ապա **:23E:** դաշտը չի գրանցվում
- **C4** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI**, **SSTD** կամ **SPAY** կոդերից մեկը, ապա **:53a:** դաշտը չի կարող լրացվել D տարբերակով
- **C5** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI**, **SSTD** կամ **SPAY** կոդերից մեկը և առկա է **:53a:** դաշտը B տարբերակով, ապա **:53B:** դաշտում պարտադիր լրացվում է Գործարքի կողմի նույնացուցիչը
- **C6** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI**, **SSTD** կամ **SPAY** կոդերից մեկը, ապա **:54a:** դաշտը կարող է լրացվել միայն **A** տարբերակով
- **C7** կանոն ⇨ եթե առկա է **:55a:** դաշտը, ապա պարտադիր լրացվում են նաև **:53a:** և **:54a:** դաշտերը

- **C8** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI**, **SSTD** կամ **SPAY** կոդերից մեկը, ապա **:55a:** դաշտը կարող է լրացվել միայն **A** տարբերակով
- **C9** կանոն ⇨ եթե առկա է **:56a:** դաշտը, ապա պարտադիր լրացվում է նաև **:57a:** դաշտը
- **C10** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI** կոդը, ապա **:56a:** դաշտը չի գրանցվում:
  Եթե **:23B:** դաշտը պարունակում է **SSTD** կամ **SPAY** կոդը, ապա **:56a:** դաշտը կարող է լրացվել **A** կամ **C** տարբերակով: Եթե լրացվում է **C** տարբերակը, ապա այն պետք է պարունակի քլիրինգ կոդը
- **C11** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI**, **SSTD** կամ **SPAY** կոդերից մեկը, ապա **:57a:** դաշտը կարող է լրացվել **A**, **C** կամ **D** տարբերակով: Ընդ որում, **D** տարբերակում պարտադիր է 1-ին ենթադաշտի (Գործարքի կողմի նույնացուցչի) լրացումը
- **C12** կանոն ⇨ եթե **:23B:** դաշտը պարունակում է **SPRI**, **SSTD** կամ **SPAY** կոդերից մեկը, ապա «Շահառու հաճախորդ» **:59a:** դաշտում պարտադիր է 1-ին ենթադաշտի (Հաշվի) լրացումը
- **C13** կանոն ⇨ եթե որևէ **:23E:** դաշտը պարունակում է **CHQB** կոդը, ապա «Շահառու հաճախորդ» **:59a:** դաշտում 1-ին ենթադաշտը (Հաշիվը) չի լրացվում
- **C14** կանոն ⇨ եթե **:71A:** դաշտը պարունակում է **OUR** արժեքը, ապա **:71F:** դաշտը չի նշվում:
  Եթե **:71A:** դաշտը պարունակում է **SHA** արժեքը, ապա **:71G:** դաշտը չի նշվում:
  Եթե **:71A:** դաշտը պարունակում է **BEN** արժեքը, ապա պարտադիր է առնվազն մեկ **:71F:** դաշտի լրացումը, իսկ **:71G:** դաշտը չի նշվում
- **C15** կանոն ⇨ եթե առկա է (առնվազն մեկ) **:71F:** կամ **:71G:** դաշտը, ապա պարտադիր է **:33B:** օժանդակ դաշտի լրացումը, հակառակ դեպքում **:33B:** դաշտի նշումը պարտադիր չէ
- **C16** կանոն ⇨եթե առկա չէ **:56a:** դաշտը, ապա կրկնվող **:23E:** որևէ դաշտը չի կարող պարունակել **TELI** կամ **PHOI** արժեքը
- **C17** կանոն ⇨ եթե առկա չէ **:57a:** դաշտը, ապա կրկնվող **:23E:** որևէ դաշտը չի կարող պարունակել **TELE** կամ **PHON** արժեքը
- **C18** կանոն ⇨ **:71G:** և **:32A:** դաշտերում պետք է լրացվի արժույթի նույն կոդը:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտը օգտագործվում է գործարքի բացառիկ (չկրկնվող) համարը նշելու համար և չպետք է սկսվի կամ ավարտվի «/» նշանով, ինչպես նաև չպետք է պարունակի երկու հաջորդական «//» նշաններ:

2) Դաշտ **:13C:** Ժամանակի ցուցանշում
   Ձևաչափ /8c/4!n1!x4!n ⇨ Կոդ – Ժամանակի ցուցանշում – Նշան – Ժամանակի փոփոխություն (ժամային գոտու տարբերությունը)

Այս օժանդակ դաշտը (**U** կրկնվող պարբերություն) սահմանում է վճարման հանձնարարականի մշակման հետ կապված մեկ կամ մի քանի ժամանակի նշում (ներ):

Կոդի ենթադաշտում (/8c/) կարող է օգտագործվել «/» նշանների միջև լրացվող հետևյալ կոդերից որևէ մեկը.

- **CLSTIME** → CLS-ի ժամը – Կենտրոնական եվրոպական ժամանակով (CET) արտահայտված այն ժամանակային պահը, որի համար՝ մինչև նշված ժամը, դրամական միջոցների վճարումը պետք է մուտքագրվի կենտրոնական բանկում CLS Bank-ի հաշվին, այդ մասին տրամադրելով հաստատում
- **RNCTIME** → Ստացման ժամը – Կենտրոնական եվրոպական ժամանակակով (CET) արտահայտված այն ժամանակային պահը, երբ TARGET2 վճարումը մուտքագրվել է ստացող կենտրոնական բանկում
- **SNDTIME** → Ուղարկման ժամը – Կենտրոնական եվրոպական ժամանակակով (CET) արտահայտված այն ժամանակային պահը, երբ TARGET2 վճարումը ելքագրվել է փոխանցող կենտրոնական բանկից:

Երկրորդ (4!n) ենթադաշտում ժամի նշումը ունի հետևյալ տեսքը HHMM.

1!x ենթադաշտի նշանը լրացվում է որպես՝ + կամ -!:

Չորրորդ (4!n) ենթադաշտում ժամային գոտու տարբերության վերաբերյալ տվյալը լրացվում է ժամ-րոպե՝ HHMM, տեսքով, որտեղ ժամի բաղադրիչը «HH», պետք է լինի 00-ից 13-ի սահմաններում, իսկ րոպեի բաղադրիչը «MM» 00-ից 59-ի սահմաններում: Այդ միջակայքից դուրս գտնվող ցանկացած «HH» կամ «MM» բաղադրիչը մերժվում է:

3) Դաշտ **:23B:** Բանկի գործառնության կոդ

Ձևաչափ 4!c ⇨ Տեսակ

Այս **պարտադիր** դաշտը ցույց է տալիս գործառնության տեսակը: Պետք է օգտագործվի հետևյալ կոդերից մեկը.

- **CRED** → Նորմալ կրեդիտային փոխանցում – նշված կոդի կիրառմամբ հաղորդագրությունը վերաբերվում է կրեդիտային փոխանցմանը, որը չի մշակվում ըստ SWIFT համակարգի ծառայությունների մատուցման պահանջների (SWIFT Service Level)
- **CRTS** → Ստուգիչ հաղորդագրություն – նշված կոդի կիրառմամբ հաղորդագրությունը վերաբերվում է ստուգման նպատակով կատարվող կրեդիտային փոխանցմանը
- **SPAY** → SWIFTPay – նշված կոդի կիրառմամբ հաղորդագրությունը վերաբերվում է կրեդիտային փոխանցմանը, որը ենթակա է մշակման ըստ SWIFTPay ծառայությունների մատուցման պահանջների (SWIFTPay Service Level)
- **SPRI** → Առաջնահերթություն – նշված կոդի կիրառմամբ հաղորդագրությունը վերաբերվում է կրեդիտային փոխանցմանը, որը ենթակա է մշակման ըստ առաջնահերթության սպասարկման պահանջների (Priority Service Level)
- **SSTD** → Ստանդարտ – նշված կոդի կիրառմամբ հաղորդագրությունը վերաբերվում է կրեդիտային փոխանցմանը, որը ենթակա է մշակման ըստ ստանդարտ ծառայությունների մատուցման պահանջների (Standard Service Level):

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ի սկզբանե (by default) ենթակա է կիրառման **CRED** կոդը, իսկ **CRTS** կոդի լրացման պարագայում ՀՏ 125 հաղորդագրության փոխակերպումը MT 103 հաղորդագրությանը չի իրականացվում և չի կատարվում համապատասխան հաշվապահական ձևակերպումը:

4) Դաշտ **:23E:** Հանձնարարականի կոդ

Ձևաչափ 4!c[/30x] ⇨ Հանձնարարականի կոդ – Լրացուցիչ տեղեկություն

Այս օժանդակ (Բ կրկնվող պարբերություն) դաշտում լրացվում է Հանձնարարականի կոդը, որը պետք է պարունակի հետևյալ արժեքներից մեկը, մասնավորապես.

- **CORT** → Կորպորատիվ առևտուր – Վճարումը կատարվում է առևտրի հետ կապված վերջնահաշվարկի ժամանակ, օրինակ՝ արտարժույթի գործարք կամ արժեթղթերի գործարք
- **INTC** → Ներխմբային վճարում – Վճարում նույն խմբին պատկանող երկու ընկերությունների միջև
- **REPA** → Փոխկապված վճարում – Վճարումն ունի փոխկապված էլեկտրոնային վճարման հղում
- **SDVA** → Նույն օրվա վճարում – Վճարումը պետք է իրականացվի շահառուին նույն օրը:

Լրացուցիչ տեղեկություններ թույլատրվում են միայն այն դեպքում, երբ **:23E:** դաշտում լրացվում է **REPA** կոդը:

Այս դաշտի կրկնման դեպքում նշված կոդերը պետք է լրացվեն հետևյալ հերթականությամբ.

SDVA
INTC
REPA
CORT

Դաշտի մեկ անգամից ավել կիրառման դեպքում չի թույլատրվում **REPA** և **CORT** կոդերի համատեղ լրացումը:

Տվյալ դաշտի կրկնման դեպքում նույն կոդի արժեքը չի կարող լրացվել ավելի քան մեկ անգամ:

Այս դաշտը կարող է կրկնվել գործարքի կողմերին մի քանի կոդավորված հրահանգներ տալու համար:

REPA կոդը ցույց է տալիս, որ կատարվող վճարումը դա՝ հաճախորդների միջև էլեկտրոնային վճարումների պարագայում (օրինակ՝ «e-payment» համակարգի միջոցով), իրականացված նախաձեռնության արդյունքն է: Այս կոդը նախատեսված է շահառուի բանկի համար, որը պետք է գործի ըստ էլեկտրոնային վճարումների համակարգի գործիքակազմի:

Անհրաժեշտ է նշել, որ (ներկա պահին) **:23E:** դաշտը ենթակա չէ կիրառման ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

5) Դաշտ **:26T:** Գործարքի տեսակի կոդ

Ձևաչափ 3!c ⇨ Տեսակ

Այս օժանդակ դաշտը բնորոշում է առանձին գործարքի բնույթը, նպատակը և (կամ) պատճառը, օրինակ՝ աշխատավարձեր, կենսաթոշակներ, շահաբաժիններ:

Այս դաշտում կարող են օգտագործվել EUROSTAT-ի «Վճարային հաշվեկշիռների հավաքագրման կոդերի ցանկ»-ի կոդերը:

Անհրաժեշտ է նշել, որ այս դաշտում, պարտադիր կարգով, լրացվում են նաև համապատասխան կոդեր, եթե վճարումը ուղղված է Ռուսաստանի Դաշնության

ֆինանսների նախարարությանը, մասնավորապես նրան սպասարկող թղթակից բանկին: Ուստի, տվյալ դաշտի առկայությունը փոխկապված է **:59a:** և **:77B:** դաշտերի հետ:

ՀՀ կենտրոնական բանկում (ՀՏ 125-ի հիման վրա) MT 103 հաղորդագրության ձևավորման ընթացքում **:26T:** և **:77B:** դաշտերում լրացվող տվյալների արժեքները կարող են (անհրաժեշտության դեպքում) խմբագրվել ձեռքի մուտքի միջոցով:

6) Դաշտ **:32A:** Կատարման ամսաթիվ, արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 6!n3!a15d ⇨ Ամսաթիվ – Արժույթ – Գումար

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կատարման ամսաթիվը (6!n), արժույթի կոդը (3!a) և վերջնահաշվարկի գումարը (15d): Դրամական միջոցների փոխանցման ամսաթիվը պետք է լինի վավեր ամսաթիվ, որը արտահայտվում է DDMMYY (օր-ամիս-տարի) տեսքով: Արժույթը պետք է վավեր լինի ISO 4217 ստանդարտով սահմանված արժույթի կոդին:

Վճարման գումարի արժեքը ներկայացվում է տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ՝ 0,01:

Մասնավորապես, ՀՀ դրամով փոխանցման (վճարման) գումարի ներկայացման պարագայում, ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր կարգով, լրացվում է **0** թվային արժեքը:

Անհրաժեշտ է նշել, որ Կենտրոնական բանկում վարվող, ՀՀ ֆինանսների նախարարության բանկային հաշիվը ներկայացվում է ՀՀ դրամով, իսկ ՀՏ 125 հանձնարարականում լրացվող՝ փաստացի վճարման ենթակա, գումարը կարող է նշվել արտարժույթով:

7) Դաշտ **:33B:** Հանձնարարականի արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d ⇨ Արժույթ – Գումար

Այս օժանդակ դաշտում նշվում է հանձնարարականի արժույթի կոդը (3!a) և գումարը (15d): 15d ենթադաշտի գումարը լրացվում է տեղեկատվության նպատակով և պետք է անփոփոխ մնա փոխանցման ողջ գործառնական շղթայում:

Երբ Կենտրոնական բանկում ՀՏ 125 հաղորդագրությունը փոխակերպում է MT 103-ի, **:33B:** դաշտը MT 103-ում ՀՀ դրամի պարագայում չի լրացվում:

Արժույթը պետք է վավեր լինի ISO 4217 արժույթի կոդին:

Գումարի արժեքը ներկայացվում է տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ՝ 0,01: Ընդ որում, ՀՀ դրամով վճարման գումարի ներկայացման պարագայում ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր կարգով, լրացվում է **0** թվային արժեքը:

Փոխանցողի կողմից արժույթի փոխարկում կամ փոխանակում կատարելու դեպքում այս դաշտի առկայությունը պարտադիր է:

Հարկ է նշել, որ տվյալ դաշտում լրացվող գումարը դա (հանձնարարող) հաճախորդի կողմից, փոխանցող բանկին, ներկայացված հանձնարարականով վճարման ենթակա գումարն է:

Հետևաբար, ՀՏ 125 հաղորդագրությունում **:33B:** դաշտի առկայության պարագայում, եթե չկա Փոխանցողի կամ Ստացողի կողմից կատարված ծախսերի գանձման վերաբերյալ տեղեկատվություն և չկա արժույթի փոխարկում կամ փոխանակում, ապա **:32A:** դաշտի գումարի արժեքը պետք է հավասար լինի առկա **:33B:** դաշտում լրացված արժեքին:

8) Դաշտ **:36:** Արտարժույթի փոխարժեք

Ձևաչափ 12d ⇨ Փոխարժեք

Այս օժանդակ դաշտում լրացվում է **:**33B**:** դաշտում նշված գումարի փոխարկման հետ կապված փոխարժեքը, որը ներկայացվում է տասնորդական ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ՝ 0,0001:

Այս դաշտում փոխարժեքի լրացումը հանդիսանում է Փոխանցողի հրահանգը՝ համապատասխան փոխանցվող գումարի հետ կապված փոխարկում կամ փոխանակում իրականացնելու վերաբերյալ:

Եթե ՀՏ 125 հաղորդագրությունում ՀՀ դրամով նշված գումարը ենթակա է փոխարկման այլ արժույթով, ապա ձևավորվող համապատասխան MT 103 հաղորդագրության **:**36**:** դաշտում ՀՀ դրամի արժեքը չի լրացվում:

9) Դաշտ **:50a:** Հանձնարարող հաճախորդ

Ձևաչափ՝ Տարբերակ J → [/34x] – Հաշիվ

4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ (համանման է SWIFT-ի MT 103 հաղորդագրության **A** տարբերակին)

Տարբերակ K → [/34x] – Հաշիվ

4*35x – Անվանում և հասցե

Տարբերակ P → 35x – Գործարքի կողմի նույնացուցիչ

4*35x – Անվանում և հասցե (համանման է SWIFT-ի MT 103 հաղորդագրության **F** տարբերակին)

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործարքը նախաձեռնող հանձնարարող հաճախորդը:

P տարբերակում համապատասխան տողերի տվյալների արժեքները պետք է լրացվեն հետևյալ կանոն 1-ի **կամ** 2-ի ձևաչափի համաձայն՝

- Կանոն 1 ⇨ Տող 1-ում (Գործարքի կողմի նույնացուցիչ) լրացվում է՝ /34x → /(Բանկի հաշվի համար)

  Տողեր 2, 3, 4 և 5-ում (Անվանում և հասցե) լրացվում է՝ 1!n/33x → (Ցուցիչը, որպես թվային արժեք)/(Մանրամասներ, լրացվող տվյալի)

- Կանոն 2 ⇨ Տող 1-ում (Գործարքի կողմի նույնացուցիչ) լրացվում է՝ 4!a/2!a/27x → (Կոդ)/(Երկրի կոդ)/(Նույնացուցիչ)

  Տողեր 2, 3, 4 և 5-ում (Անվանում և հասցե) լրացվում է՝ 1!n/33x → (Ցուցիչը, որպես թվային արժեք)/(Մանրամասներ, լրացվող տվյալի):

Եթե մանրամասների լրացման շարունակության համար անհրաժեշտ է կատարել անցում հաջորդ տողին (տողադարձ), ապա այն (համապատասխանաբար) պետք է սկսվի նախորդ տողի սկզբում լրացված նույն ցուցչով:

Սույն դաշտի **P** տարբերակում Գործարքի կողմի նույնականացման հետ կապված տվյալները լրացնելիս (համաձայն Կանոն 2-ի երբ առաջին տողը լրացվում է (4!a/2!a/27x

-(Կոդ)(Երկրի կոդ)(Նույնացուցիչ)) ձևաչափով) կիրառվում են հետևյալ կոդերից որեէ մեկը, ըստ այդ կոդի համար սահմանված տվյալների .

- **ARNU** → Օտարերկրացու գրանցման համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **ARNU**/Երկրի ISO կոդ/Օտարերկրացու գրանցման համար
- **CCPT** → Անձնագրի համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **CCPT**/Երկրի ISO կոդ/Անձնագրի համար
- **CUST** → Հաճախորդի նույնականացման համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **CUST**/Հաճախորդի նույնականացման համարը տրամադրող (թողարկող) երկրի ISO կոդ/Հաճախորդի նույնականացման համարը տրամադրող հաստատություն (իրավասու մարմին)/Հաճախորդի նույնականացման համար
- **DRLC** → Վարորդական վկայականի համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **DRLC**/Վարորդական վկայականը տրամադրող (թողարկող) երկրի ISO կոդ/Վարորդական վկայականը տրամադրող հաստատություն (իրավասու մարմին)/Վարորդական վկայականի համար
- **EMPL** → Գործատուի համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **EMPL**/Գրանցող մարմնի երկրի ISO կոդ/Գրանցող մարմին/Գործատուի համար
- **NIDN** → Ազգային նույնականացման համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **NIDN**/Երկրի ISO կոդ/Ազգային նույնականացման համար
- **SOSE** → Սոցիալական ապահովության համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **SOSE**/Երկրի ISO կոդ/Սոցիալական ապահովության համար
- **TXID** → Հարկային հաշվառման համար – Կոդի կիրառման դեպքում տվյալների լրացումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **TXID**/Երկրի ISO կոդ/Հարկային հաշվառման համար:

P տարբերակում (Կանոն 1-ի կամ 2-ի համաձայն) թվային ցուցիչը պետք է պարունակի հետևյալ արժեքներից որևէ մեկը.

- **1** → Հանձնարարող հաճախորդի անունը (անվանումը) – Թվային արժեքի կիրառումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **1**/Հանձնարարող հաճախորդի անունը (անվանումը)
- **2** → Հասցե – Թվային արժեքի կիրառումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **2**/Հասցե (հասցեատողում նշվում են օրինակ՝ փողոցի անվանումը և համարը կամ շենքի համարը և անվանումը)
- **3** → Երկիր և քաղաք – **3** թվային արժեքը առաջին անգամ նշելիս պետք է խստորեն հետևել բերված օրինակի հաջորդականությանը՝ **3**/Երկրի ISO կոդ/Լրացուցիչ (օժանդակ) մանրամասներ:

  Եթե անհրաժեշտ է օժանդակ մանրամասների տվյալների արժեքների լրացումը շարունակել հաջորդ տողից (առաջին տողի ոչ բավարար երկարության պատճառով),

ապա այն պետք է կրկին սկսվի **3** թվային ցուցչով, որից հետո նշվում է շեղ գծիկ «/» և այնուհետև լրացվում է օժանդակ մանրամասների շարունակությունը:

Լրացուցիչ (օժանդակ) մանրամասները կարող են ներառել քաղաքն իր փոստային կոդով (օրինակ՝ փոստային դասիչ (ZIP code)) և երկրի վարչատարածքային միավորը (օրինակ՝ նահանգ, մարզ, վարչաշրջան): Ցանկալի է, որպեսզի **3** թվային ցուցչի միջոցով նշվեն բնակության երկիրն ու քաղաքը

- **4** → Ծննդյան ամսաթիվը – Այս թվային արժեքի կիրառումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **4/**Ծննդյան ամսաթիվը YYYYMMDD (տարի-ամիս-օր) տեսքով
- **5** → Ծննդավայրը – Թվային արժեքի կիրառումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **5/**Երկրի ISO կոդ/Ծննդավայր
- **6** → Հաճախորդի նույնականացման համար – Թվային արժեքի կիրառումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **6/**Հաճախորդի (անմիջական վճարողի) նույնականացման համարը տրամադրող (թողարկող) երկրի ISO կոդ/Նույնականացման համարը տրամադրող հաստատություն (իրավասու մարմին)/Հաճախորդի նույնականացման համար
- **7** → Ազգային նույնականացման համար – Թվային արժեքի կիրառումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **7/**Երկրի ISO կոդ/Ազգային նույնականացման համար
- **8** → Լրացուցիչ տեղեկություն – Թվային արժեքի կիրառումը պետք է խստորեն համապատասխանի հետևյալ օրինակի հաջորդականությանը՝ **8/**լրացվում է հետևյալ տարբերակներից որևէ մեկի տեղեկատվությունը**.**
  - **a)** P տարբերակի 1-ին (35x) ենթադաշտում նշվող «**Գործարքի կողմի նույնացուցիչ**» տվյալը՝ ըստ սահմանված Կանոն 2-ի, լրացվում է → 4!a/2!a/27x ⇨ (Կոդ)/(Երկրի կոդ)/(Նույնացուցիչ) ձևաչափով
  - **b)** P տարբերակի 2-րդ (4*35x) ենթադաշտում նշվող «Անվանում և հասցե» տվյալները լրացվում են **6** թվային արժեքի (ցուցչի) համաձայն, ըստ որի ներկայացվում է **Հաճախորդի նույնականացման համարը**
  - **c)** P տարբերակի 2-րդ (4*35x) ենթադաշտում նշվող «Անվանում և հասցե» տվյալները լրացվում են **7** թվային արժեքի (ցուցչի) համաձայն, ըստ որի ներկայացվում է **Ազգային նույնականացման համարը**:

J տարբերակում նույնականացման կոդը (4!a2!a2!c[3!c] երկրորդ ենթադաշտ) պետք է լինի ֆինանսական հաստատության նույնականացման միջազգային գրանցված՝ **BIC**, կոդը:

Վերը նշված **a)** կետում Երկրի կոդ տվյալի արժեքը պետք է համապատասխանի երկրի վավեր ISO կոդին:

P տարբերակի 2-րդ ենթադաշտում (Անվանում և հասցե) թվային ցուցիչները լրացվում են հետևյալ կերպ՝

- Առաջին տողը սկսվում է **1** թվանշանով (ցուցչով)
- Ցուցիչների արժեքները ներկայացվում են ըստ թվային հերթականության
- **2** թվանշանը չի կարող օգտագործվել առանց **3** թվային արժեքի
- Առաջին անգամ **3** թվանշանը լրացնելիս նրան պետք է հաջորդի (շեղ գծիկից «/» հետո) երկրի վավեր ISO կոդը
- **4** թվանշանը չի կարող օգտագործվել առանց **5** թվային արժեքի և հակառակը

- **4** թվանշանին հաջորդում է ճշգրիտ լրացված ամսաթիվը YYYYMMDD (տարի-ամիս-օր) տեսքով, ընդ որում այդ ամսաթիվը, որը համապատասխանում է փոխանցողի վայրի տեղական ամսաթվին, չի կարող լինել ավելի ուշ (ապագա), քան այն ամսաթիվը, երբ հաղորդագրությունը փաստացի ուղարկվել է SWIFT համակարգին
- **5**, **6** և **7** յուրաքանչյուր թվային արժեքին հաջորդում է շեղ գծիկ «/», հետո երկրի վավեր ISO կոդը, այնուհետև նորից շեղ գծիկ «/», որից հետո նշվում են լրացուցիչ տվյալների մանրամասները
- **4**, **5**, **6**, **7** և **8** թվային արժեքները չպետք է կրկնվեն
- **8** թվային արժեքի կիրառումը թույլ է տրվում միայն հետևյալ դեպքերում.
  a) Հանձնարարող հաճախորդի վերաբերյալ P տարբերակի առաջին (35x) ենթադաշտում՝ (Կոդ)/(Երկրի կոդ)/(Նույնացուցիչ) ձևաչափով, նշվող «Գործարքի կողմի նույնացուցիչ» տվյալի արժեքի շարունակությունը անհրաժեշտ **տողադարձով** լրացնելու համար
  b) Հաճախորդի նույնականացման համարի վերաբերյալ P տարբերակի երկրորդ (4*35x) ենթադաշտում նշվող, **6** թվային արժեքին հաջորդող, «Անվանում և հասցե» տվյալների արժեքների շարունակությունը անհրաժեշտ **տողադարձով** լրացնելու համար
  c) Ազգային նույնականացման համարի վերաբերյալ P տարբերակի երկրորդ (4*35x) ենթադաշտում նշվող, **7** թվային արժեքին հաջորդող, «Անվանում և հասցե» տվյալների արժեքների շարունակությունը անհրաժեշտ **տողադարձով** լրացնելու համար:

P տարբերակի 2-րդ ենթադաշտում (Անվանում և հասցե) **1**, **2** և **3** թվային ցուցիչները կարող են կրկնվել, դրանցից յուրաքանչյուրի հետ կապված, տվյալների արժեքները տողադարձով (հաջորդ տողում) լրացնելու ժամանակ: Ընդ որում, **2** թվային ցուցչի առկայության դեպքում, **3** թվանշանն առաջին անգամ նշելու պարագայում լրացուցիչ մանրամասների մեջ պետք է ներկայացվի տեղեկություն անհրաժեշտ քաղաքի վերաբերյալ:

P տարբերակի 1-ին ենթադաշտում՝ (Կոդ)/(Երկրի կոդ)/(Նույնացուցիչ) ձևաչափով նշվող, «Գործարքի կողմի նույնացուցիչ» տվյալի արժեքի լրացման ժամանակ, եթե հանձնարարող հաճախորդի նույնացուցիչը ներկայացնելու համար անհրաժեշտ է գրանցման լրացուցիչ հատված, ապա պետք է կիրառվի նշված նույնացուցչի լրացման հետևյալ տարբերակներից որևէ մեկը.

1. Առաջին տարբերակ (նախընտրելի), հանձնարարող հաճախորդի նույնականացման իրականացում այլ (տարբերվող) նույնացուցչի միջոցով, որի լրացման երկարությունը խնդրահարույց **չէ**
2. Երկրորդ տարբերակ, շարունակել տեղեկատվության լրացումը 2-րդ ենթադաշտում (Անվանում և հասցե) **8** թվային ցուցչի կիրառմամբ:

P տարբերակի 2-րդ ենթադաշտում «Անվանում և հասցե» տվյալների արժեքների լրացման ժամանակ, եթե Հաճախորդի նույնականացման համարը՝ **6** թվային ցուցչի միջոցով, **կամ** հանձնարարող հաճախորդի Ազգային նույնականացման համարը՝ **7** թվային ցուցչի միջոցով, ներկայացնելու պարագայում պահանջվում է գրանցման լրացուցիչ հատված, ապա ենթակա է կիրառման լրացման հետևյալ տարբերակներից որևէ մեկը.

1. Առաջին տարբերակ (նախընտրելի), հանձնարարող հաճախորդի նույնականացման իրականացում այլ (տարբերվող) նույնացուցչի միջոցով, որի լրացման երկարությունը խնդրահարույց **չէ**
2. Երկրորդ տարբերակ, շարունակել տեղեկատվության լրացումը 2-րդ ենթադաշտում (Անվանում և հասցե) **8** թվային ցուցչի կիրառմամբ:

Հանձնարարող հաճախորդի հաշվի համարը հայտնի լինելու դեպքում այն պետք է նշվի **J** կամ **K** տարբերակների Հաշիվը ներկայացնող 1-ին ենթադաշտում ([/34x]):

[/34x] ենթադաշտում զատիչ «/» նշանից հետո լրացվում է ՀՀ կենտրոնական բանկում առկա Ֆինանսների նախարարության՝ 12 նիշանի, հաշվեհամարը, որը ենթակա է դեբետագրման: Ընդ որում, նշված հաշվեհամարից հետո կարող է լրացվել գանձապետարանում սպասարկվող հաճախորդի հաշվեհամարը, որը տարանջատվում է առաջին նշված հաշվեհամարից զատիչ «/» նշանով: Եթե լրացված գանձապետական հաշիվը բացակայում է Կենտրոնական բանկում առկա պետական բյուջեի ներքին հաշիվների ցուցակում, ապա ՀՏ 125-ի **:36:** դաշտում նշվող փոխարժեքը պետք է վավերացվի սահմանված առք ու վաճառքի փոխանակման արժեքով:

10) Դաշտ **:51A:** Փոխանցող կազմակերպություն

Չնաչափ [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ

4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ

Այս օժանդակ դաշտում նշվում է ՀՏ 125 հաղորդագրությունը Փոխանցող կազմակերպությունը, որը լրացվում է միայն SWIFT համակարգում սահմանված ֆայլային փաթեթով՝ FileAct, գործողությունների կատարման ընթացքում:

:51A**:** դաշտը կարող է տեղեկություն պարունակել Փոխանցողի բանկային հաշվի մասին, որը պետք է դեբետագրվի՝

- [/1!a] – լրացվում է **D** տառը
- [/34x] – լրացվում է դեբետագրվող հաշվի համարը (տվյալ երկրում սահմանված կառուցվածքով կամ IBAN միջազգային համարը, ըստ ISO 13616:2007 ստանդարտի)
- 4!a2!a2!c[3!c] – լրացվում է Միջազգային նույնականացման կոդը, որպես ֆինանսական կազմակերպության BIC կոդ, ըստ ISO 9362:2014 ստանդարտի:

:20**:** (Գործառնության համար) դաշտում ներկայացված դիտարկվող ՀՏ 125-ի նույնականացման համարը այս **:**51A**:** դաշտում նշվող տվյալների հետ միասին օգտագործվում է հարցումների, չեղարկումների և այլ նման գործառնությունների դեպքում:

:51A**:** դաշտը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, առաքվող ՀՏ 125 հաղորդագրության մեջ, ենթակա չէ լրացման, սակայն նրան հասցեագրված (SWIFT համակարգով ուղարկված) MT 103 հաղորդագրության մեջ այն կարող է լրացված լինել:

11) Դաշտ **:52a:** Հանձնարարող հաճախորդին սպասարկող կազմակերպություն

Չնաչափ՝ Տարբերակ A → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ

4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ

Տարբերակ D → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ

4*35x – Անվանում և հասցե

Այս օժանդակ դաշտում նշվում է հանձնարարող հաճախորդին սպասարկող ֆինանսական կազմակերպությունը, երբ այն տարբերվում է հաղորդագրությունը

փոխանցող կողմից, նույնիսկ եթե **:50a:** դաշտում լրացված լինի բանկային հաշվի IBAN միջազգային համարը:

:52a: դաշտը կարող է տեղեկություն պարունակել վճարման հանձնարարող կողմի բանկային հաշվի մասին, որը բացված է հաղորդագրությունը փոխանցող կազմակերպությունում՝

- [/34x] – լրացվում է հաշվի համարը (տվյալ երկրում սահմանված կառուցվածքով կամ IBAN միջազգային համարը, ըստ ISO 13616:2007 ստանդարտի)
- 4!a2!a2!c[3!c] – լրացվում է Միջազգային նույնականացման կոդը, որպես ֆինանսական կազմակերպության BIC կոդ, ըստ ISO 9362:2014 ստանդարտի:

A կամ **D** տարբերակի «Գործարքի կողմի նույնացուցիչ» ենթադաշտում կարող է նշվել ազգային վճարահաշվարկային համակարգի կոդը, որի առջևում լրացվում է կրկնակի շեղ գծիկ «//»:

Նախընտրելի է **A** տարբերակը, իսկ **D** տարբերակը պետք է օգտագործվի միայն այն դեպքում, երբ հանձնարարող ֆինանսական կազմակերպությունը չունի BIC կոդ:

12) Դաշտ **:53a:** Փոխանցողի թղթակից բանկ

Ձևաչափ՝ Տարբերակ A → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ
Տարբերակ B → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
[35x] – Գտնվելու վայրը
Տարբերակ D → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4*35x – Անվանում և հասցե

Անհրաժեշտության դեպքում այս օժանդակ դաշտում լրացվում է Փոխանցող կազմակերպության կամ նրա մասնաճյուղի կամ էլ այլ ֆինանսական կազմակերպության բանկային հաշիվը, որի դեբետագրման միջոցով Փոխանցողը պետք է իրականացնի նշված գումարի փոխհատուցումը Ստացող կողմին:

Դիտարկվող տարբերակների [/34x] հատվածում կարող է լրացվել բանկային հաշվի համարը (տվյալ երկրում սահմանված կառուցվածքով կամ IBAN միջազգային համարը, ըստ ISO 13616:2007 ստանդարտի):

Նույնականացման կոդ ենթադաշտում լրացվում է ֆինանսական կազմակերպության BIC կոդը:

Նախընտրելի է կիրառման **A** տարբերակը:

Եթե Փոխանցողը Ստացող կողմի մոտ ունի տարբեր արժույթներով մի քանի հաշիվներ կամ միևնույն արժույթով տարբեր հաշիվներ, ապա տվյալ գործարքի համապատասխան արժույթով գումարի վճարման համար պետք է նշվի կիրառվող հաշիվներից մեկը: Ընդ որում, **:53a:** դաշտի **B** տարբերակում պարտադիր նշվում է համապատասխան դեբետագրվող կամ կրեդիտագրվող բանկային հաշիվը՝ «Գործարքի կողմի նույնացուցիչ» ենթադաշտի [/34x] հատվածում:

Ուստի, **:53a:** դաշտի **B** տարբերակի կիրառման դեպքում պարտադիր պետք է լրացվի Գործարքի կողմի նույնացուցչի [/34x] հատվածը:

:53a: դաշտի առկայությունը պարտադիր է նաև այն դեպքում, երբ Փոխանցողի կողմից ուղարկված վճարման հանձնարարականում նշված է այլ արժույթ, որին

համապատասխան բանկային հաշիվը Ստացողի (կամ **:54a:** դաշտում նշված Ստացողի մասնաճյուղի) մոտ բացակայում է:

Հաղորդագրության մեջ **:53a:** և **:54a:** դաշտերի կիրառումը և մեկնաբանումը, բոլոր դեպքերում, պայմանավորված է գործարքի արժույթով, ինչպես նաև Փոխանցող և Ստացող կողմերի միջև փոխանցվող արտարժույթի գծով թղթակցային հարաբերություններով:

13) Դաշտ **:54a:** Ստացողի թղթակից բանկ

Ձևաչափ՝ Տարբերակ A → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ
Տարբերակ B → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
[35x] – Գտնվելու վայրը
Տարբերակ D → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4*35x – Անվանում և հասցե

Այս օժանդակ դաշտում լրացվում է Ստացող կազմակերպության կամ նրա մասնաճյուղի, ինչպես նաև այլ ֆինանսական կազմակերպության բանկային հաշիվը և նույնականացման տվյալները: Նշված հաշվի կրեդիտագրման միջոցով Ստացող կողմին հասանելի է դառնում հաղորդագրությունում ներկայացված գումարը:

Դիտարկվող տարբերակների [/34x] հատվածում կարող է լրացվել բանկային հաշվի համարը (տվյալ երկրում սահմանված կառուցվածքով կամ IBAN միջազգային համարը, ըստ ISO 13616:2007 ստանդարտի):

Նույնականացման կոդ ենթադաշտում լրացվում է ֆինանսական կազմակերպության BIC կոդը:

Եթե դրամական միջոցները դառնում են հասանելի Ստացողի մասնաճյուղին այլ միջնորդ ֆինանսական կազմակերպության միջոցով, որը տարբերվում է **:53a:** դաշտում նշված ֆինանսական կազմակերպությունից, ապա դիտարկվող (փոխհատուցման) միջնորդ ֆինանսական կազմակերպությունը պետք է ներկայացվի **:54a:** դաշտում, իսկ **:55a:** դաշտում պետք է նշվի Ստացողի մասնաճյուղը:

Նախընտրելի է կիրառման **A** տարբերակը:

B տարբերակը պետք է կիրառվի միայն Գտնվելու վայրի հետ միասին ([35x]), ընդ որում Գործարքի կողմի նույնացուցչի [/34x] հատվածը լրացվում է պարտադիր կարգով:

Եթե **:54a:** դաշտում նշվում է Ստացող կազմակերպության մասնաճյուղը, որին չի նախորդում **:53a:** դաշտը կամ նախորդող **:53a:** դաշտում նշված է Փոխանցող կազմակերպության բանկային հաշիվը, որը սպասարկվում է Ստացողի մասնաճյուղում, ապա Ստացողը դիմում է իր մասնաճյուղին փոխհատուցում ստանալու պահանջով:

Եթե **:54a:** դաշտում նշված է Ստացողի մասնաճյուղը, իսկ **:53a:** դաշտում նշված է Փոխանցողի մասնաճյուղը, ապա կախված փոխանցման գումարի արժույթից և Փոխանցողի ու Ստացողի միջև առկա փոխհարաբերություններից տվյալ փոխանցված գումարը ստանալու համար Ստացողը դիմում է իր մասնաճյուղին կամ այն վճարվում է մատնանշված մասնաճյուղի կողմից:

Այլ դեպքերում, եթե **:54a:** դաշտում նշվում է Ստացողի մասնաճյուղը, ապա փոխանցվող գումարը վճարվում է Ստացողին **:54a:** դաշտում ներկայացված իր մասնաճյուղի կողմից:

:54a: դաշտում Փոխանցող կազմակերպության մասնաճյուղը նշված լինել չի կարող:

Եթե **:53a:** դաշտում նշված Փոխանցողի մասնաճյուղը կամ այլ ֆինանսական կազմակերպությունը հանդես է գալիս նաև որպես Ստացողի բանկային հաշվի սպասարկող, ապա **:54a:** դաշտը չի կիրառվում:

Եթե **:54a:** դաշտում նշված ֆինանսական կազմակերպությունը Ստացողի մասնաճյուղը չէ, ապա **:54a:** դաշտին պետք է նախորդի **:53a:** դաշտը, ընդ որում, այդ պարագայում **:54a:** դաշտում նշված ֆինանսական կազմակերպությունն է վճարում գումարը Ստացողին:

:53a: և **:54a:** դաշտերի կիրառումը և մեկնաբանումը, բոլոր դեպքերում, պայմանավորված է գործարքի արժույթով և Փոխանցողի ու Ստացողի միջև այդ (փոխանցվող) արժույթի նկատմամբ առկա թղթակցային հարաբերությունով:

:54a: դաշտը ենթակա չէ լրացման ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, սակայն այն կարող է լրացված լինել, որպես SWIFT-ի MT 103 հաղորդագրության փոխակերպում հանդիսացող ՀՏ 125 հաղորդագրության մեջ, որը «BankMail» համակարգի միջոցով (Կենտրոնական բանկի կողմից) առաքվում է ՀՀ ֆինանսների նախարարություն:

14) Դաշտ **:55a:** Փոխհատուցում իրականացնող երրորդ կողմ

Ձևաչափ՝ Տարբերակ A → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ
Տարբերակ B → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
[35x] – Գտնվելու վայրը
Տարբերակ D → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4*35x – Անվանում և հասցե

Այս օժանդակ դաշտում նշվում է Ստացողի մասնաճյուղը, այն դեպքում, երբ փոխանցված գումարը հասանելի է այդ մասնաճյուղին որևէ երրորդ ֆինանսական կազմակերպության միջոցով և որը տարբերվում է **:53a:** դաշտում նշված ֆինանսական կազմակերպությունից:

Դիտարկվող տարբերակների [/34x] հատվածում կարող է լրացվել բանկային հաշվի համարը (տվյալ երկրում սահմանված կառուցվածքով կամ IBAN միջազգային համարը, ըստ ISO 13616:2007 ստանդարտի):

Նույնականացման կոդը պետք է լրացվի, որպես նշված ֆինանսական կազմակերպության BIC կոդ և, ըստ այդմ, նախընտրելի է կիրառման **A** տարբերակը:

:55a: դաշտը ենթակա չէ լրացման ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, սակայն այն կարող է լրացված լինել (զուտ տեղեկատվական նպատակով), որպես SWIFT-ի MT 103 հաղորդագրության փոխակերպում հանդիսացող ՀՏ 125 հաղորդագրության մեջ, որը «BankMail» համակարգի միջոցով (Կենտրոնական բանկի կողմից) առաքվում է դեպի Ֆինանսների նախարարություն:

15) Դաշտ **:56a:** Միջնորդ կազմակերպություն (բանկ)

Ձևաչափ՝ Տարբերակ A → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ
Տարբերակ C → /34x – Գործարքի կողմի նույնացուցիչ
Տարբերակ D → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4*35x – Անվանում և հասցե

Այս օժանդակ դաշտում լրացվում է վճարային շղթայում Շահառուի բանկի համար միջնորդ այն ֆինանսական կազմակերպությունը, որի միջոցով դրամական միջոցները պետք է հասանելի լինեն Շահառուի բանկին:

Դիտարկվող տարբերակների [/34x] հատվածում կամ /34x դաշտում կարող է լրացվել բանկային հաշվի համարը (տվյալ երկրում սահմանված կառուցվածքով կամ IBAN միջազգային համարը, ըստ ISO 13616:2007 ստանդարտի):

A տարբերակի «Նույնականացման կոդ» ենթադաշտում՝ 4!a2!a2!c[3!c], պետք է լրացվի նշված ֆինանսական կազմակերպության BIC կոդը (եթե այն առկա է):

A տարբերակը, որպես կանոն, նախընտրելի է կիրառման համար:

[/34x] հատվածում կամ /34x դաշտում **2!a** ձևաչափով լրացվող ազգային վճարահաշվարկային համակարգի (օրինակ՝ ՀՀ-ի պարագայում, AM) սահմանված կոդից առաջ պարտադիր նշվում է կրկնակի շեղ գծիկ «//», իսկ դիտարկվող համակարգի կոդից հետո անմիջապես լրացվում է նրա մասնակցի նույնականացման կոդը:

Մասնավորապես (A, C կամ D տարբերակի), «Գործարքի կողմի նույնացուցիչ» ենթադաշտում կամ դաշտում կարող են լրացվել SWIFT-ի կողմից սահմանված կոդերը, ըստ համապատասխան ազգային համակարգերի և դրանց մասնակիցների նույնականացման համար կիրառվող կոդերի: Ըստ այդմ, դիտարկվող ազգային վճարահաշվարկային համակարգի նույնականացման կոդի լրացման պարագայում, այն պետք է նշվի **միայն մեկ անգամ**, որտեղ՝ կրկնակի շեղ գծիկից «//» հետո, համակարգի և մասնակցի կոդերը լրացվում են որպես առաջին տվյալ, օրինակ **:56a:** և **:57a:** դաշտերում:

Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների վիրտուալ համակարգում մասնակիցների նույնականացման համար կիրառվող կոդերը (վերը նշված սկզբունքով) լրացնելու համար՝ ՀՏ 125 հաղորդագրության մեջ, կարող է կիրառվել հետևյալ ձևաչափը՝ //**AM**5!n, որտեղ **AM** կոդը ներկայացնում է ԿԲ-ի էլեկտրոնային վճարումների վիրտուալ համակարգը, իսկ 5!n-ը՝ տվյալ համակարգի մասնակից հանդիսացող ֆինանսական կազմակերպությունը նույնականացնող, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված (հնգանիշ բացառիկ) կոդն է:

Օրինակ, եթե SWIFT-ով պետք է կատարվի փոխանցում ԱՄՆ բանկերին, որտեղ հաշվարկները իրականացվում են «Fedwire» համակարգով, ապա «Fedwire»-ում գործող յուրաքանչյուր բանկի նույնականացման կոդը պետք է լրացվի //**FW** կոդից հետո: Իսկ, եթե վճարումը պետք է կատարվի (տվյալ երկրի) համապատասխան վճարահաշվարկային համակարգով՝ համախառն վերջնահաշվարկի կիրառմամբ (RTGS), ապա կարող է լրացվել //**RT** կոդը, ըստ SWIFT-ով սահմանված կանոնների (եթե հատուկ կոդ չի նշվել):

Ուստի, վճարումների կատարման ժամանակ, վերը նշված կոդերը և SWIFT-ով սահմանված այլ համապատասխան կոդերը ենթակա են լրացման **:56a:** դաշտի «Գործարքի կողմի նույնացուցիչ» ենթադաշտում կամ դաշտում:

Ստացող կողմի համար ազգային վճարահաշվարկային համակարգում կիրառվող կոդը պարտադիր է և այն [/34x] հատվածում կամ /34x դաշտում նշելու պարագայում՝

ա) **A** տարբերակի դեպքում, վերջինիս հետ չպետք է լրացվի որևէ այլ տեղեկատվություն

բ) **C** կամ **D** տարբերակի դեպքում, այդ կոդից հետո պարտադիր պետք է լրացվի տվյալ վճարահաշվարկային համակարգի համապատասխան մասնակցի նույնականացման կոդը:

D տարբերակն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպության BIC կոդի միջոցով (դիտարկվող վճարահաշվարկային համակարգում) հնարավոր չէ նույնականացնել Գործարքի կողմին: Ընդ որում, **D** տարբերակի կիրառման պարագայում՝ 4*35x ենթադաշտում, պարտադիր լրացվում է նաև ֆինանսական կազմակերպության անվանումը և հասցեն:

ՀՀ կենտրոնական բանկում (ՀՏ 125-ի հիման վրա) MT 103 հաղորդագրության ձևավորման ընթացքում առկա **:56a:** դաշտում լրացվող տվյալների արժեքները կարող են (անհրաժեշտության դեպքում) խմբագրվել ձեռքի մուտքի միջոցով:

16) Դաշտ **:57a:** Շահառուի կազմակերպություն (բանկ)

Ձևաչափ՝ Տարբերակ A → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ
Տարբերակ B → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
[35x] – Գտնվելու վայրը
Տարբերակ C → /34x – Գործարքի կողմի նույնացուցիչ
Տարբերակ D → [/1!a][/34x] – Գործարքի կողմի նույնացուցիչ
4*35x – Անվանում և հասցե

Այս օժանդակ դաշտում նշվում է այն ֆինանսական կազմակերպությունը, որը սպասարկում է շահառու հաճախորդի հաշիվը: **:57a:** դաշտը կիրառելի է նաև **:59a:** դաշտում IBAN նույնացուցչի լրացման պարագայում:

Դիտարկվող տարբերակների [/34x] հատվածում կամ /34x դաշտում կարող է լրացվել բանկային հաշվի համարը (տվյալ երկրում սահմանված կառուցվածքով կամ IBAN միջազգային համարը, ըստ ISO 13616:2007 ստանդարտի):

A տարբերակի «Նույնականացման կոդ» ենթադաշտում՝ 4!a2!a2!c[3!c], պետք է լրացվի նշված ֆինանսական կազմակերպության BIC կոդը (եթե այն առկա է):

A տարբերակը, որպես կանոն, նախընտրելի է կիրառման համար:

[/34x] հատվածում կամ /34x դաշտում **2!a** ձևաչափով լրացվող ազգային վճարահաշվարկային համակարգի (օրինակ՝ ՀՀ-ի պարագայում, AM) սահմանված կոդից առաջ պարտադիր նշվում է կրկնակի շեղ գծիկ «//», իսկ դիտարկվող համակարգի կոդից հետո անմիջապես լրացվում է նրա մասնակցի նույնականացման կոդը:

Մասնավորապես (ընտրված տարբերակի), «Գործարքի կողմի նույնացուցիչ» ենթադաշտում կամ դաշտում կարող են լրացվել SWIFT-ի կողմից սահմանված կոդերը, ըստ համապատասխան ազգային համակարգերի և դրանց մասնակիցների նույնականացման համար կիրառվող կոդերի: Ըստ այդմ, դիտարկվող ազգային վճարահաշվարկային համակարգի նույնականացման կոդի լրացման պարագայում, այն պետք է նշվի **միայն մեկ անգամ**, որտեղ՝ կրկնակի շեղ գծիկից «//» հետո, համակարգի և մասնակցի կոդերը լրացվում են որպես առաջին տվյալ, օրինակ **:56a:** և **:57a:** դաշտերում:

Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների վիրտուալ համակարգում մասնակիցների նույնականացման համար կիրառվող կոդերը (վերը նշված սկզբունքով) լրացնելու համար՝ ՀՏ 125 հաղորդագրության մեջ, կարող է կիրառվել հետևյալ ձևաչափը՝ //**AM**5!n, որտեղ **AM** կոդը ներկայացնում է ԿԲ-ի էլեկտրոնային վճարումների վիրտուալ համակարգը, իսկ 5!n-ը՝ տվյալ համակարգի մասնակից հանդիսացող

ֆինանսական կազմակերպությունը նույնականացնող, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված (հնգանիշ բացառիկ) կոդն է:

Օրինակ, եթե SWIFT-ով պետք է կատարվի փոխանցում ԱՄՆ բանկերին, որտեղ հաշվարկները իրականացվում են «Fedwire» համակարգով, ապա «Fedwire»-ում գործող յուրաքանչյուր բանկի նույնականացման կոդը պետք է լրացվի **//FW** կոդից հետո: Իսկ եթե վճարումը պետք է կատարվի (տվյալ երկրի) համապատասխան վճարահաշվարկային համակարգով՝ համախառն վերջնահաշվարկի կիրառմամբ (RTGS), ապա կարող է լրացվել **//RT** կոդը, ըստ SWIFT-ով սահմանված կանոնների (եթե հատուկ կոդ չի նշվել):

Ուստի, վճարումների կատարման ժամանակ, վերը նշված կոդերը և SWIFT-ով սահմանված այլ համապատասխան կոդերը ենթակա են լրացման **:57a:** դաշտի «Գործարքի կողմի նույնացուցիչ» ենթադաշտում կամ դաշտում:

Ստացող կողմի համար ազգային վճարահաշվարկային համակարգում կիրառվող կոդը պարտադիր է և այն [/34x] հատվածում կամ /34x դաշտում նշելու պարագայում՝

ա) **A** տարբերակի դեպքում, վերջինիս հետ չպետք է լրացվի որևէ այլ տեղեկատվություն

բ) **C** կամ **D** տարբերակի դեպքում, այդ կոդից հետո պարտադիր պետք է լրացվի տվյալ վճարահաշվարկային համակարգի համապատասխան մասնակցի նույնականացման կոդը:

D տարբերակն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպության BIC կոդի միջոցով (դիտարկվող վճարահաշվարկային համակարգում) հնարավոր չէ նույնականացնել Գործարքի կողմին: Ընդ որում, **D** տարբերակի կիրառման պարագայում՝ 4*35x ենթադաշտում, պարտադիր լրացվում է նաև ֆինանսական կազմակերպության անվանումը և հասցեն:

ՀՏ 125 հաղորդագրության մեջ **:57a:** դաշտի բացակայությունը նշանակում է, որ տվյալ հաղորդագրությունը ստացող կազմակերպությունը հանդիսանում է Շահառուի բանկը:

17) Դաշտ **:59a:** Շահառու հաճախորդ

Ձևաչափ՝ Տարբերակ A → [/34x] – Հաշիվ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ
Տարբերակ N → [/34x] – Հաշիվ
4*35x – Անվանում և հասցե (կիրառվում է, որպես MT 103-ի **No letter** տարբերակ, ըստ SWIFT ստանդարտի)
Տարբերակ P → [/34x] – Հաշիվ
4*(1!n/33x) – Ցուցիչ, անվանում և հասցեի մանրամասներ (կիրառվում է, որպես MT 103-ի **F** տարբերակ, ըստ SWIFT ստանդարտի)

Այս **պարտադիր** դաշտում նշվում է փոխանցվող գումարը ստացող վերջնական շահառու հաճախորդը:

P տարբերակում լրացվող ցուցիչը (1!n/) պետք է ունենա հետևյալ թվային արժեքներից մեկը.

- **1** – Շահառու հաճախորդի անվանումը,
  1 թվանշանին հաջորդում է շեղ գծիկը «/» և այնուհետև Շահառու հաճախորդի անվանումը
- **2** – Հասցեատող,

2 թվանշանին հաջորդում է շեղ գծիկը «/» և այնուհետև հասցեատողը, որտեղ լրացվում է, օրինակ՝ փողոցի անունը և համարը, շենքի անվանումը կամ փոստային ինդեքսի համարը

- **3** – Երկիր և քաղաք,

  3 թվանշանին հաջորդում է շեղ գծիկը «/» և այնուհետև երկրի ISO կոդը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, հաջորդ շեղ գծիկից «/» հետո լրացվում են ոչ պարտադիր լրացուցիչ մանրամասները 33x նիշերի սահմանում:

  Եթե լրացուցիչ մանրամասների շարունակության գրանցման համար անհրաժեշտ է կատարել անցում հաջորդ տողին, ապա այն պետք է սկսվի կրկին լրացվող **3/** թվանշանով:

  Լրացուցիչ մանրամասները կարող են ընդգրկել հետևյալ տվյալները՝ քաղաքն ու փոստային ինդեքսը (օրինակ՝ ZIP կոդը) և երկրի վարչատարածքային միավորը (օրինակ՝ նահանգ, մարզ կամ գավառ): Ցանկալի է, որ նշվեն հանձնարարող հաճախորդի կողմից մշտական բնակության երկրի կոդն ու քաղաքը:

Նույնականացման կոդը (4!a2!a2!c[3!c]) պետք է լինի ֆինանսական կազմակերպության գրանցված BIC կոդը:

P տարբերակում «Ցուցիչ, անվանում և հասցեի մանրամասներ»՝ 4*(1!n/33x), ենթադաշտի համար 1!n/ ձևաչափով ներկայացվող ցուցիչները ենթակա են լրացման հետևյալ կանոններով.

- Առաջին տողը պետք է սկսվի **1** թվանշանով
- Թվանշանները ներկայացվում են ըստ թվային հերթականության
- **2** թվանշանը չի կարող կիրառվել առանց **3** թվային արժեքի
- Առաջին անգամ **3** թվանշանի կիրառմանը պետք է հաջորդի («/» զատչից հետո) երկրի վավեր ISO կոդը:

Պարտադիր է լրացման համար առնվազն շահառու հաճախորդի անվանումը կամ նրա BIC կոդը (առկա լինելու պարագայում):

Շահառու հաճախորդի հաշվի համարը, հայտնի լինելու դեպքում, պետք է նշվի «Հաշիվ» ենթադաշտում ([/34x]):

P տարբերակում՝

- Յուրաքանչյուր տողի Ցուցիչ (1!n) հատվածում լրացվող թվային արժեքները կարող են կրկնվել հաջորդ տողի սկզբում, եթե անհրաժեշտ է կատարել տողադարձ, լրացման ենթակա տվյալների արժեքները հերթական տողում շարունակելու համար
- **2** թվանշանի առկայության դեպքում **3** թվային արժեքը առաջին անգամ նշելիս անհրաժեշտ է լրացուցիչ մանրամասներում ներառել նաև դիտարկվող քաղաքին վերաբերվող տվյալները:

Ռուսական ռուբլով վճարումների կատարման ժամանակ, **եթե** «Հաշիվ» ենթադաշտում ([/34x]) նշված՝ 20 նիշանի, հաշվեհամարը բավարարում է հետյալ պայմաններին՝

- Սկսվում է 40302 թվային արժեքով
- Սկսվում է 40501 թվային արժեքով և 14-րդ նիշը հավասար է «2»
- Սկսվում է 40601 թվային արժեքով և 14-րդ նիշը հավասար է «1» կամ «3»
- Սկսվում է 40701 թվային արժեքով և 14-րդ նիշը հավասար է «1» կամ «3»
- Սկսվում է 40503 թվային արժեքով և 14-րդ նիշը հավասար է «4»

- Սկսվում է 40603 թվային արժեքով և 14-րդ նիշը հավասար է «4»
- Սկսվում է 40703 թվային արժեքով և 14-րդ նիշը հավասար է «4»

ապա **:**26T**:** ⇨ «Գործարքի տեսակի կոդ» և **:**77B**:** ⇨ «Կարգավորող մարմնին ուղղված տեղեկատվություն» դաշտերը պարտադիր են լրացման համար:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկում ստացված ՀՏ 125 հաղորդագրության հիման վրա ձևավորվող MT 103 հաղորդագրության մեջ **:**26T**:** և **:**77B**:** դաշտերում լրացվող տվյալների արժեքները, անհրաժեշտության դեպքում, կարող են խմբագրվել ձեռքի մուտքի միջոցով:

18) Դաշտ **:70:** Վճարման նպատակ

Չևաչափ 4*35x ⇨ Շարադրական

Այս օժանդակ դաշտում ներկայացվում են առանձին գործարքի մանրամասները կամ հղում է կատարվում մեկ այլ հաղորդագրությանը, որը պարունակում է մանրամասներ դիտարկվող գործարքի վերաբերյալ և, որոնք ենթակա են փոխանցման շահառու հաճախորդին:

Կարող է կիրառվել «/» շեղ գծիկների միջև լրացված հետևյալ կոդերից որևէ մեկը.

- **INV** (Invoice) – Հաշիվ-ապրանքագիր
  Դիտարկվող կոդին հետևում են ամսաթիվը, հղումը և Հաշիվ-ապրանքագրի մանրամասները
- **IPI** (International Payment Instruction) – Միջազգային վճարման հանձնարարություն
  Տվյալ կոդից հետո նշվում է անհրաժեշտ միջազգային վճարման հանձնարարությունը նույնականացնող բացառիկ հղումը (դիտարկվող կոդին կարող է հաջորդել մինչև 20 նիշ երկարությամբ տեղեկատվությունը)
- **RFB** (Reference for Beneficiary) – Շահառուին ուղղված հղում
  Տվյալ կոդից հետո նշվում է Շահառու հաճախորդին նույնականացնող հղումը (դիտարկվող կոդին կարող է հաջորդել մինչև 16 նիշ երկարությամբ տեղեկատվությունը)
- **ROC** (Reference of Customer) – Հաճախորդին ուղղված հղում
  Տվյալ կոդից հետո նշվում է հանձնարարող հաճախորդին նույնականցնող հղումը
- **TSU** (Trade Services Utility transaction) – Առևտրային գործարքի հետ կապված ծառայությունների վճարում
  Դիտարկվող կոդի հետ կապված տվյալները լրացվում են հետևյալ կերպ՝ **/TSU/**Առևտրային գործարքով մատուցված ծառայությունների նույնացուցիչ/Հաշիվ-ապրանքագրի համար/Վճարման գումար:

Վճարահաշվարկային նպատակների համար Փոխանցողը պետք է Ստացողի հետ ճշգրտի **:**70**:** դաշտի երկարության սահմանափակումները:

Այս դաշտում լրացվող տեղեկատվությունը նախատեսված է միայն շահառու հաճախորդի համար, այսինքն այս տեղեկատվության ուղարկումը նախաձեռնվում է միայն փոխանցողի կողմից:

Լրացման ենթակա բազմաթիվ հղումները պետք է տարանջատվեն իրարից կրկնակի շեղ գծիկներով «//»: Նույն տեսակի երկու հղումների միջև միևնույն կոդը կրկին չի լրացվում:

MT 103 հաղորդագրության **:**70**:** դաշտը, STP սկզբունքով մշակելու համար, պետք է լրացված լինի ըստ ISO 11649 ստանդարտի, այսինքն դիտարկվող դաշտում պետք է ներկայացված լինի Վարկատուի հետ կապված հղումը: Սույն տվյալի արժեքը լրացվում է

նախատեսված առաջին տողում առանց որևէ նախորդող սիմվոլների, ընդ որում, այն պետք է լինի միակ գրանցված տեղեկությունը առաջին տողում:

19) Դաշտ **:71A:** Միջնորդավճարի վերաբերյալ մանրամասներ

Ձևաչափ 3!a ⇨ Կոդ

Այս **պարտադիր** դաշտում նշվում է, թե գործարքի որ Կողմն է կատարելու միջնորդավճարները:

:71A**:** դաշտում ենթակա է լրացման հետևյալ կոդերից մեկը.

- **BEN** (Beneficiary) – Շահառու
  Գործարքի հետ կապված բոլոր միջնորդավճարները (ծախսերը) կատարում է Շահառու հաճախորդը
- **OUR** – «Գումարը գանձվում է հանձնարարող հաճախորդից»
  Գործարքի հետ կապված բոլոր միջնորդավճարները (ծախսերը) կատարում է հանձնարարող հաճախորդը
- **SHA** (Shared) – Համատեղ վճարներ
  Գործարքի հետ կապված բոլոր միջնորդավճարները (ծախսերը), բացի հանձնարարող հաճախորդի բանկային հաշիվը սպասարկող ֆինանսական հաստատության կողմից կատարվող ծախսի, կրում է Շահառու հաճախորդը:

ՀՀ տարածքում տեղական վճարների կատարման դեպքում օգտագործվում է **CBT** (CBRA Tariff) կոդը:

Եթե ՀՏ 125 հաղորդագրությունում առկա է լրացված **CBT** կամ **OUR** կոդը, ապա ՀՏ 125-ի հիման վրա ձևավորվող MT 103 կամ MT 103 STP հաղորդագրությունում գրանցվում է **OUR** կոդը: Իսկ, եթե ՀՏ 125-ում նշվում է **BEN** կամ **SHA** կոդը, ապա MT 103 հաղորդագրության ձևավորման ժամանակ անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ստուգում:

20) Դաշտ **:71F:** Փոխանցող կողմի միջնորդավճար

Ձևաչափ 3!a15d ⇨ Արժույթ – Գումար

Այս օժանդակ դաշտում (Գ կրկնվող պարբերություն) նշվում է գործարքի իրականացման շղթայում սկզբնական Փոխանցողի, ինչպես նաև նրան հաջորդող բանկերի կողմից գանձվող միջնորդավճարների (ծախսերի) արժույթի կոդը՝ 3!a, ըստ ISO 4217 ստանդարտի և գումարը՝ 15d:

Գանձման ենթակա գումարի արժեքը ներկայացվում է տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ՝ 0,01: Ընդ որում, ՀՀ դրամի պարագայում ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր կարգով, լրացվում է **0** թվային արժեքը:

:32A**:** դաշտում, որպես միջբանկային փոխանցման գումար, նշվում է այն **զուտ** գումարը, որից նախապես նվազեցվել են ուղարկող կողմի կատարած ծախսերը:

:71F**:** դաշտը կարող է կրկնվել, որպեսզի Ստացող կողմը տեղեկացվի դրամական միջոցների փոխանցման ողջ շղթայում գանձված յուրաքանչյուր միջնորդավճարի (ծախսի) արժույթի և գումարի մասին:

Միջնորդավճարները (ծախսերը) պետք է նշվեն այն հերթականությամբ, որով կատարվել են նվազեցումներ (պահումներ) փոխանցվող գումարից: Ըստ այդմ, 1-ին կրկնվող դաշտում լրացվում է միջոցների փոխանցման շղթայում ներառված՝ վճարումը նախաձեռնող բանկից հետո, 1-ին միջանկյալ փոխանցող բանկի կողմից կատարվող ծախսը,

որի չափով նվազեցվում է փոխանցման ենթակա նախնական գումարը: Այնուհետև 2-րդ կրկնվող դաշտում (համանմանորեն) լրացվում է 2-րդ բանկի կատարվող ծախսը և այլն, իսկ վերջին **:71F:** դաշտում միշտ նշվում է, Վճարողի հանձնարարականով, վճարումը նախաձեռնող բանկի ծախսը:

21) Դաշտ **:71G:** Ստացող կողմի միջնորդավճար

Չևաչափ 3!a15d ⇨ Արժույթ – Գումար

Այս օժանդակ դաշտում նշվում են, փոխանցվող գումարի ստանալու հետ կապված, Ստացող կողմի կատարած ծախսի արժույթի կոդը՝ 3!a, ըստ ISO 4217 ստանդարտի և գումարը՝ 15d:

Գումարի արժեքը ներկայացվում է տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ՝ 0,01: Ընդ որում, ՀՀ դրամի պարագայում ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր կարգով, լրացվում է **0** թվային արժեքը:

:71G**:** դաշտի լրացման դեպքում գումարի արժեքը 0 լինել չի կարող:

Եթե **:**71A**:** դաշտում լրացվում է **OUR** կոդը, ապա **:**71G**:** դաշտում ներկայացվում է այն կատարվող ծախսը (միջնորդավճարը), որը ենթակա է վճարման հանձնարարող (դրամական փոխանցումը նախաձեռնող) հաճախորդի կողմից և կանխավճարի տեսքով ներառվում է միջբանկային փոխանցման գումարում:

22) Դաշտ **:72:** Փոխանցողից Ստացող կողմին ուղղված տեղեկություն

Չևաչափ 6*35x ⇨ Շարադրական նորմավորված կառուցվածքով ֆորմատ

Այս օժանդակ դաշտում, լրացման ենթակա տողերի համար, կիրառվում են հետևյալ ձևաչափերը՝

- Տող 1 → 8c/[Լրացուցիչ տեղեկություն] (Կոդ)(Շարադրական)
- Տողեր 2 ⇨ 6 → [8c/[Լրացուցիչ **տեղեկության շարունակություն**]] (Կոդ)(Շարադրական)
  կամ
  [8c/[Լրացուցիչ տեղեկություն]] (Կոդ)(Շարադրական):

:72: դաշտում ներկայացվում է լրացուցիչ տեղեկատվություն Ստացող կողմի կամ Գործարքի կողմ հանդիսացող այլ նշված անձի համար:

Երկկողմանի համաձայնությունից զատ, մնացած բոլոր դեպքերի պարագայում, Փոխանցողի և Ստացողի միջև տեղեկատվության առաքման համար կոդի գրանցման հատվածում՝ 8c/, շեղ գծիկից առաջ լրացվում է հետևյալ կոդերից մեկը.

- **ACC** (Account in institution) – Շահառուի բանկ
  ACC կոդից հետո նշվում են Շահառուի բանկին ուղղված հանձնարարությունները
- **INS** (Instructing institution) – Հանձնարարող կազմակերպություն
  INS կոդից հետո նշվում է Հանձնարարող կազմակերպությունը, որը հրահանգում է Փոխանցողին կամ վճարման շղթայում նրան նախորդող կազմակերպությանը կատարել նախատեսված գործարքը
- **INT** (Intermediary institution) – Միջնորդ կազմակերպություն
  INT կոդից հետո նշվում են Միջնորդ կազմակերպությանը (բանկին) ուղղված հանձնարարությունները
- **REC** (Receiver) – Ստացող
  REC կոդից հետո նշվում են Ստացող կողմին ուղղված հանձնարարությունները:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ԿԲ ուղարկված, ինչպես նաև հակառակը՝ ԿԲ կողմից դեպի ՀՀ ֆինանսների նախարարություն
ուղարկվող ՀՏ 125 հաղորդագրության **:72:** դաշտը պետք է պարտադիր լրացվի, պահպանելով ստորև բերված կանոնները:

Այն դեպքում, եթե ստացվի իրավիճակ, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը դատարկ ուղարկի **:72:** դաշտը ապա ՀՏ 125 -ը պետք է մերժվի՝ «Սխալ հաղորդագրության ֆորմատում-//14//» կոդով:

Կարևոր պահ ՀՏ 125 -ի ստացման ժամանակ՝ առանց այս ստուգման՝
հաշիվների դեբետագրում-կրեդիտագրում Չպետք է իրականացվի:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՏ 125 հաղորդագրության ձևավորման ժամանակ **:72:** դաշտում յուրաքանչյուր լրացվող տողի սկզբում նշվող կոդից առաջ զատիչ «/» նշանը չի դրվում: Սակայն Կենտրոնական բանկում ստացված (անթերի) ՀՏ 125-ի հիման վրա ձևավորվող MT 103-ի կամ MT 103 STP-ի **:72:** դաշտում լրացվող յուրաքանչյուր տողի սկզբում նշվող կոդից առաջ՝ ըստ SWIFT ստանդարտի, պարտադիր գրանցվում է զատիչ նշանը:
ՀՏ 125 հաղորդագրության **:72:** դաշտում լրացվող առաջին տողի սկզբում կարող են նշվել **REC** կոդով հետևյալ ենթակոդերը (մեկը կամ մի քանիսը միասին), մասնավորապես.

1) **REC/SWIFT/**2!c/**CN**7c/**AN**4!n/**TL**2!c → որտեղ՝
   a) **SWIFT** – ենթակոդը նշանակում է (հաճախորդից ստացված) ՀՏ 125 հաղորդագրության փոխակերպում MT 103 կամ MT 103 STP հաղորդագրության և այնուհետև առաքում SWIFT համակարգի միջոցով
   b) 2!c – հատվածում կարող է ներկայացվել **CS** կամ **SP** ցուցիչը: ՀՏ 125 հաղորդագրությունում **CS** – նշանակում է, որ գումարի փոխանցման ժամանակ այն չպետք է փոխարկվի, իսկ **SP** – նշանակում է, որ գումարի փոխանցման ժամանակ այն ենթակա է փոխարկման
   c) **CN**7c – **CN** (Client Number) ենթակոդը բնորոշում է ՀՏ 125 հաղորդագրությունը նախաձեռնող հաճախորդին, իսկ 7c – հատվածում լրացվում է այդ հաճախորդին նույնականացնող կոդը: ՀՀ ֆինանսների նախարարության համար 7c-ն կարող է լրացվել որպես՝
      - **900BUDT**, որը նշանակում է սեփական գործառույթների ապահովման համար բյուջետային միջոցներից, SWIFT համակարգի միջոցով, կատարվող միջազգային փոխանցում
      - **900PRIU**, որը նշանակում է (Ֆինանսների նախարարության կողմից) Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ-ի) կամ ՊՈԱԿ-ի համար, SWIFT համակարգի միջոցով, կատարվող միջազգային փոխանցում:
   d) **AN**4!n – ենթակոդը (ՀՏ 125-ում) բնորոշում է հոդվածը իր համապատասխան 4!n համարով: Այն ենթակա է ստուգման ՀՀ կենտրոնական բանկի կողմից, ինչպես նաև պետք է ստուգվեն փոխարժեքի և հանձնարարող հաճախորդի հաշվով՝ ՀՀ ֆինանսների նախարարության անալիտիկ հաշվով, գործարքի կատարման որոշ

կանոններ: Եթե (հոդվածի համարը) 4!n = **0000**, ապա հոդվածի ստուգում չի կատարվում

e) **TL**2!c – ենթակոդը (ՀՏ 125-ում) բնորոշում է տառադարձության (transliteration) կանոնը, որի համապատասխան ցուցիչը լրացվում է 2!c հատվածում: Եթե 2!c = **RU**, ապա ՀՏ 125-ի փոխակերպման ժամանակ ռուսական տառերով լրացված տվյալները համապատասխանաբար MT 103-ում կամ MT 103 STP-ում տառադարձվում են լատինական տառերով: Իր հերթին, եթե 2!c = **ZZ**, ապա տառադարձություն (transliteration) չի կատարվում:

2) **REC/SWIFT/IN/CN**7c → այս գրառումը նշանակում է՝ SWIFT համակարգով ստացված, MT 103 կամ MT 103 STP հաղորդագրության հիման վրա, ՀՏ 125 հաղորդագրության ձևավորում և այնուհետև առաքում դեպի ՀՀ ֆինանսների նախարարություն, որտեղ՝
   - **IN** – ենթակոդը բնորոշում է մուտքային վճարման հաղորդագրությունը, որի միջոցով ստացվել են դրամական միջոցները
   - **CN**7c – ըստ վերը նշված c) կետի՝ Ֆինանսների նախարարության համար, 7c = **900BUDT**!:

3) **REC/DOMIC/**3!c**/CN**7c**/AN**4!n → որտեղ՝
   - **DOMIC** – ենթակոդը նշանակում է, որ հաճախորդից ստացված ՀՏ 125 հաղորդագրությունը չի փոխակերպվում MT 103 կամ MT 103 STP հաղորդագրության, այսինքն ստացված ՀՏ 125-ը կիրառվում է զուտ (ՀՀ տարածքում իրականացվող) ներքին գործարքների կատարման համար
   - 3!c – հատվածում կարող է ներկայացվել գործարքը բնութագրող **FEX** ցուցիչը ՀՏ 125 հաղորդագրությունում **FEX** – նշանակում է, որ Կենտրոնական բանկը պետք է իրականացնի փոխարկում (տարվա ընթացքում) Ֆինանսների նախարարության Միասնական դրամայի հաշվի և Գանձապետական ներքին հաշիվների միջև /9000…../ , **CN**7c – ըստ վերը նշված c) կետի՝ Ֆինանսների նախարարության համար, 7c = **900BUDT**
   - **AN**4!n – տես նախորդ d) կետի բացատրությունը:

4) **REC/LC**1c**/REF**23c → այս գրառումը նշանակում է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված ՀՏ 125 հաղորդագրության միջոցով կատարվող վճարումը փոխկապված է նշված հղումով ակրեդիտիվ գործարքի հետ, որտեղ՝
   - **LC**1c – ենթակոդը բնորոշում է ակրեդիտիվը, իսկ 1c հատվածում լրացվում է ակրեդիտիվի տեսակի ցուցիչը: Ներկայումս 1c ցուցիչը կարող է ընդունել միայն «**U**» արժեքը, որը նշանակում է չհաստատվող (Unconfirmed) ակրեդիտիվ
   - **REF**23c – ենթակոդը ներկայացնում է ակրեդիտիվի հետ կապված հղման համարը, որում 23c հատվածում լրացվում է (դիտարկվող ակրեդիտիվի) հղման ստույգ համարը:

Ակրեդիտիվի հղման համարը (ՀՏ 125-ի հիման վրա) ձևավորվող MT 103 կամ MT 103 STP հաղորդագրության **:72:** դաշտում լրացվում է հետևյալ ձևաչափով՝

:72:/REC/LCU/REF23c

ըստ նկարագրված տվյալների:

5) **REC/CA**28n → այս գրառումը լրացվում է, ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված, (Կենտրոնական բանկում ձևավորվող) ՀՏ 125 հաղորդագրության **:72:** դաշտում, որտեղ **CA** ենթակոդը բնորոշում է դրամական փոխանցման համար

անհրաժեշտ բանկային հաշիվը, իսկ 28n հատվածում նշվում է այդ հաշվի ստույգ համարը՝ ՀՀ կենտրոնական բանկում ընդունված 12!n[4n] ձևաչափով:

Ստացված ՀՏ 125 հաղորդագրության համար առաջին քայլով պետք է ստուգել :72: դաշտում նշված տեղեկատվությունը, և դրա հիման վրա կատարել համապատասխան ստուգումներ, ըստ հոդվածի, գանձապետական հաշվեհամարի, փոխարժեքի ընտրության, կրոս-կուրսի և այլնի հետ կապված, սահմանված պահանջների ապահովման համար: Կատարվում է «Գործառնական օր» համակարգում մուտքագրված ՀՀ ֆինանսների նախարարության հոդվածի և (կամ) հաշվեհամարների տեղեկատուների տվյալների հետ ստուգում, որտեղ՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Կենտրոնական բանկ ներկայացված ՀՏ 125 հաղորդագրության միջոցով կատարվող արտասահման փոխանցումների, ինչպես նաև փոխարկման գործարքների կատարման ժամանակ փոխարկման կուրսը կիրառվում է համաձայն ստորև նշված կանոնների:

2. Գանձապետարանի կողմից ուղարկված ՀՏ 125-ում, :50a: դաշտում կարող է նշվել գանձապետարանի կողմից վարվող հաշիվ, կամ վերջինիս պատկանող հաշիվը ԿԲ-ում: Հակառակ դեպքում այդ ՀՏ 125-ը մերժվում է:

3. Եթե ըստ ՀՏ 125 հաղորդագրության մեջ նշված տվյալների՝ համապատասխան հոդվածը եվ (կամ) գանձապետական հաշվեհամարը առկա է, ապա ծրագիրը ավտոմատ եղանակով պետք է ընտրի՝

ա) բյուջետային ուղերձում նախատեսված փոխարժեքը (եթե այդ արժույթի համար այն սահմանվել է) և համեմատի ՀՏ 125-ի համապատասխան դաշտի (:36:) տվյալին:

բ) Այն դեպքում, երբ այդ արժույթը բացակայում է բյուջետային ուղերձում, ապա.

բ1) եթե առկա է ԿԲ-ի կողմից սահմանված տվյալ օրվա վաճառքի/առքի փոխարժեքը այդ արժույթի համար, հաշվարկվում է կրոս-կուրսը համաձայն Կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության միջև կնքված պայմանագրի: Այն համեմատվում է ՀՏ 125-ի համապատասխան դաշտի (:36:) տվյալին:

բ2) եթե բացակայում է ԿԲ-ի կողմից սահմանված վաճառքի/առքի փոխարժեքը այդ արժույթի համար (այսինքն առկա է միջին փոխարժեքը), ապա հաշվի է առնվում նախորդ օրվա միջին փոխարժեքը և հաշվարկվում է կրոս-կուրսը համաձայն Կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության միջև կնքված պայմանագրի: Այն համեմատվում է ՀՏ 125-ի համապատասխան դաշտի (:36:) տվյալին:

գ) ՀՏ 125 հաղորդագրության հոդվածը եվ գանձապետական հաշվեհամարը միաժամանակ նշված լինելու դեպքում առաջնային է հոդվածի համեմատումը և ստուգումը ԿԲ տեղեկագրում, այս դեպքում գանձապետական հաշվեհամարի առկայությունը ԿԲ-ի տեղեկագրում չի ստուգվում:

4. ըստ ՀՏ 125 հաղորդագրության մեջ նշված տվյալների՝ համապատասխան հոդվածը նշված չլինելու դեպքում միշտ կատարվում է գանձապետական հաշվեհամարի ստուգում, արդյոք այն առկա է ԿԲ տեղեկագրում: Ընդ որում.

ա/ եթե ՀՏ 125-ում նշված գանձապետական հաշվեհամարը առկա է Կենտրոնական բանկի տեղեկագրում, ապա մշակման գործընթացը կատարվում է այն սկզբունքով, ինչպես նկարագրված է հոդվածի առկայության համար (տես 3-րդ կետը):

բ/ եթե ՀՏ 125-ում նշված գանձապետական հաշվեհամարը բացակայում է ԿԲ տեղեկագրում, սակայն այն հանդիսանում է գանձապետական հաշիվ, (որը նախատեսված չէ ԾԻԳ-երի համար՝ տես գ) ենթակետ, ապա ծրագրային ապահովումը պետք է ավտոմատ եղանակով ընտրի.

բ1/ վաճառքի դեպքում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված տվյալ օրվա արտարժույթի վաճառքի փոխարժեքը: Այն համեմատվում է ՀՏ 125-ի համապատասխան դաշտի (:36:) տվյալին:

բ2/ առքի դեպքում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված տվյալ օրվա արտարժույթի առքի փոխարժեքը: Այն համեմատվում է ՀՏ 125-ի համապատասխան դաշտի (:36:) տվյալին:

բ3/ Այն դեպքում, երբ ԿԲ-ի կողմից սահմանված չէ այդ արժույթի առքի կամ վաճառքի փոխարժեքը, ապա ծրագիրը ավտոմատ կերպով ընտրում է այդ արժույթի **նախորդ** օրվա ԿԲ-ի կողմից սահմանված միջին փոխարժեքը: Այն համեմատվում է ՀՏ 125 հաղորդագրության համապատասխան դաշտի (:36:) տվյալին:

գ/ եթե ՀՏ 125-ում նշված գանձապետական հաշվեհամարը բացակայում է ԿԲ տեղեկագրում, սակայն այն հանդիսանում է ԾԻԳ-երի համար նախատեսված գանձապետական հաշիվ, (որտեղ միջբանկային հաշվեհամարի կառուցվածքում (12!n[4n]) առաջին յոթ նիշերը ունեն հետևյալ տեսքը՝ 9000009xxxxc), ապա ծրագիրը պետք է ավտոմատ եղանակով փոխարժեքի ընտրումը իրականացնի ըստ 3-րդ կետի ա) և բ) տարբերակներում նշված դեպքերի: Սույն ենթակետում նշված՝ ԾԻԳ-երի հետ կապված փոխարկումները կատարվում են համաձայն Կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության միջև կնքված պայմանագրի (համաձայնագրի), ըստ սահմանված կարգի:

5. Գործառնության կատարման համար 3-րդ և 4-րդ կետերի տարբերակներում նշված համեմատվող տվյալները պետք է համապատասխանեն իրար, հակառակ դեպքում ՀՏ 125-ը մերժվում է:

6. Երբ ՀՏ 125 հաղորդագրության համապատասխան դաշտում նշված է այլ հոդված, որը բացակայում է ԿԲ տեղեկագրում, ապա գործառնությունը կատարվում է հաշվի առնելով գանձապետական հաշվեհամարի առկայությունը ԿԲ տեղեկագրում, ըստ 4-րդ կետի՝ ա) և բ) տարբերակներում նշված դեպքերի:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ՀՏ 125 հաղորդագրության :32A: դաշտում նշվում են.
ա/ համապատասխան արժույթով փոխանցման ենթակա միջոցները, եթե կատարվում է արտասահման փոխանցում, կամ
բ/ այն արժույթով միջոցները, որոնք պետք է փոխարկվեն (գնվեն), եթե կատարվում է միայն փոխարկման գործարք:

Արտասահման փոխանցման ժամանակ, ՀՏ 125-ի :33B: օժանդակ դաշտում նշվում է փոխանցվող արտարժույթին համապատասխան դրամական միջոցների չափը: Ընդ որում, ՀՏ 125-ում :33B: դաշտը լրացված լինելու դեպքում միաժամանակ :36: դաշտում պարտադիր պետք է լրացվի փոխարկման կուրսը, որը պետք է ստուգվի մինչև գործարքի կատարումը և համապատասխանի այդ գործարքի կատարման համար Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև սահմանված պահանջներին:

Փոխանցումների, փոխարկումների կատարման ժամանակ ՀՏ 125-ի :32A: դաշտում նշվում են այն արժույթով միջոցները, որոնք պետք է փոխարկվեն (որոնք գնվում են), իսկ :33B: դաշտում նշվում են այն արժույթով միջոցները, որոնք վաճառվում են և ենթակա են փոխարկման: Ընդ որում.

ա/ եթե կատարվում է ստանդարտ փոխարկում (գործարքում կիրառվող արժույթներից մեկը հանդիսանում է ՀՀ դրամը), ապա ՀՏ 125 հաղորդագրության :36: դաշտում նշվում է համապատասխան փոխարկման կուրսը, որը պետք է ստուգվի ԿԲ-ում, մինչև գործարքի կատարումը:

բ/ եթե կատարվում է բարդ փոխարկում (գործարքում կիրառվում են երկու տարբեր արտարժույթային միջոցներ, օրինակ՝ USD-ից դեպի EUR), ապա ՀՏ 125 հաղորդագրության :36: դաշտում նշվում է փոխարկվող երկու արտարժույթների միջև հաշվարկված կրոս-կուրսը, որը պետք է ստուգվի ԿԲ-ում, մինչև գործարքի կատարումը: Կրոս-կուրսը հաշվարկվում է Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև (պայմանագրով) սահմանված կարգի համաձայն:

գ/ փոխանցումների, ինչպես նաև փոխարկումների (ստանդարտ կամ բարդ գործարքների) ժամանակ ՀՏ 125 հաղորդագրության մեջ նշված փոխարկման կուրսը պետք է համապատասխանի այդ գործարքի կատարման համար ԿԲ-ի և Ֆինանսների նախարարության միջև սահմանված (վերը նշված) պահանջներին:

դ/ եթե ստացված ՀՏ 125 հաղորդագրության մեջ :32A: դաշտում նշված արժույթը տարբերվում է դեբետագրվող հաշվի արժույթից, ապա :33B: և :36: դաշտերը պետք է լրացված լինեն:

Արտասահմանից ստացված MT 103 հաղորդագրությունը ՀՏ 125-ի վերածելու ժամանակ MT 103 հաղորդագրության :32A:, :33B:, :36: դաշտերում նշված տվյալները նույն ձևով լրացվում են ՀՏ 125 հաղորդագրության համապատասխան դաշտերում:

«Վճարման նպատակ» (:70:) դաշտում տվյալների լրացման համար տողերը չբավարարելու դեպքում, դրանք լրացվում են :72: դաշտում SWIFT-ում կիրառվող կանոնների համաձայն: Ընդ որում, այս իրավիճակի դեպքում, երբ ՀՏ 125 հաղորդագրությունը վերածվում է MT 103-ի, որը փոխանցվում է Ռուսաստան (և որի ժամանակ կատարվում է նաև տառադարձություն (transliteration)), ապա :72: դաշտում բացի սահմանված կոդերից կիրառվում է NZP/ կոդը, «Վճարման նպատակ» դաշտի շարունակությունը լրացնելու համար:

Եթե ստացված MT 103-ում վերջնական շահառուի հաշվեհամարը նշված է «Վճարման նպատակ» (:70:) դաշտում կամ այլ եղանակով, որի հետ կապված պահանջվում է հաշվեհամարի լրացուցիչ մուտքագրում (ձեռքի միջոցով), հաղորդագրության հետագա ավտոմատ մշակումը ապահովելու համար, ապա այս պարագայում մուտքագրված հաշվեհամարը ՀՏ 125 հաղորդագրության մեջ լրացվում է :72: դաշտում՝ REC/CA28n կոդի միջոցով:

Մեկնաբանություն՝ վերը նշված փոխարկումների գործընթացներն իրականացվում են ըստ Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված պայմանագրի (համաձայնագրի) դրույթների:

:72: դաշտը չի կիրառվում այն տեղեկատվության լրացման համար, որի հետ կապված հաղորդագրության մեջ նախատեսված են այլ համապատասխան դաշտեր:

Խիստ անհրաժեշտ է օգտագործել վերը նշված ստանդարտ կոդերը: Ամեն դեպքում, երբ այս դաշտում կոդերի օգտագործման մասին երկկողմանի պայմանավորվածություններ են գործում, կոդը պետք է համապատասխանի **:72:** դաշտի կառուցվածքային ձևաչափին:

Վերը նշված **INS** կոդը կարող է կրկնվել (սույն դաշտի լրացման ենթակա տողերում) դիտարկվող գործարքի շղթայում ներգրավված բոլոր ֆինանսական կազմակերպությունները նշելու համար:

ՀՏ 125 հաղորդագրության մեջ միայն **:72:** դաշտում տվյալների լրացման ժամանակ տողադարձի կատարման համար՝ նոր տողի սկզբում, չի կիրառվում կրկնակի շեղ գծիկ «//» (ի տարբերություն MT 103 կամ MT 103 STP հաղորդագրության): Ըստ այդմ, տողադարձի կատարման պարագայում **հաջորդ տողի սկզբում** նշվում է դիտարկվող տվյալի լրացման համար նախատեսված նույն կոդը, այնուհետև նշվում է շեղ գծիկ «/» (մեկ հատ զատիչ նշան), որից հետո լրացվում է այդ տվյալին վերաբերվող տեղեկատվության շարունակությունը:

23) Դաշտ **:77B:** Կարգավորող մարմնին ուղղված տեղեկատվություն

Ձևաչափ 3*35x ⇨ Շարադրական

Այս օժանդակ դաշտը ենթակա է պարտադիր լրացման ռուսական ռուբլով Ռուսաստանի Դաշնության պետական բյուջե ուղղված վճարումներ կատարելու ժամանակ:

:77B: դաշտում շարադրական տեքստից բացի կարող են լրացվել նաև հետևյալ ձևաչափով տողերը՝

- Տող 1 → /8a/2!a[//Լրացուցիչ տեղեկություն] (Կոդ)(Երկրի կոդ)(Շարադրական տեքստ)
- Տողեր 2 & 3 → [//Լրացուցիչ տեղեկատվության շարունակություն] (Շարադրական տեքստ)

:77B: դաշտը ներկայացնում է Փոխանցող կամ Ստացող երկրի (իշխանությունների) կարգավորող մարմնի կողմից պահանջվող կանոնադրական և (կամ) կարգավորիչ տեղեկությունները:

Երբ պետք է նույնականացվի հանձնարարող կամ շահառու հաճախորդի ռեզիդենտությունը, Կոդի ենթադաշտում կարող է լրացվել հետևյալ կոդերից մեկը՝ նշված շեղ գծիկների միջև «/»:

- **BENEFRES** (Beneficiary Residence) – շահառու հաճախորդի ռեզիդենտություն
- **ORDERRES** (Order Residence) – հանձնարարող հաճախորդի ռեզիդենտություն:

Վերը նշված առաջին տողի ձևաչափում «Երկրի կոդ»-ը հանձնարարող կամ շահառու հաճախորդի ռեզիդենտության հետ կապված երկրի ISO կոդն է:

Ներկայացված տեղեկությունը չպետք է ուղղակիորեն տեղափոխվի այլ դաշտ լրացվելու համար:


24) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն

Ձևաչափ 110!x

Այս օժանդակ դաշտում լրացվում է ուղարկող կողմի էլեկտրոնային ստորագրությունը «Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման պարագայում:

ՀՏ 132 Հավաքական վճարումների հանձնարարական

Այս հաղորդագրության տեսակը օգտագործվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ է կատարել փոխանցում բազմաթիվ հաշիվներից մեկ հաշվի վրա, օրինակ՝ ծախսված էլեկտրաէներգիայի վարձ, հեռախոսավարձ և այլն: Հաղորդագրությունը կիրառվում է դրամով և արտարժույթով վճարումների իրականացման համար:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
O	30V	Վճարման ամսաթիվ	6!n	2
Պ	32B	Արժույթի կոդ և գումար	3!a15d	3
Պ	59	Շահառու	12!n[4n] 4*35x	4
Ա1 կրկնվող ենթապարբերություն ----➢				
Պ	20	Գործառնության համար	16x	5
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	6
Պ	50a	Վճարող	A կամ C	7
O	51	Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ	10!n	8
Պ	70A	Վճարման նպատակ	4*35x	9
-----┤				
O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	10

- Հաղորդագրության Ա1 ենթապարբերությունը կարող է կրկնվել առավելագույնը 50 անգամ
- **:32B:** և **:32A:** դաշտերում նշված արժույթի կոդերը պետք է համապատասխանեն միմյանց
- **:32A:** դաշտերում նշված գումարների հանրագումարը պետք է հավասար լինի **:32B:** դաշտում նշված գումարին:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար

Չնաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը: Ընդ որում՝

Ա-պարբերության :20: դաշտում պարտադիր լրացվում է հաղորդագրության ձևավորման հետ կապված բացառիկ (չկրկնվող) համարը:

Կրկնվող Ա1- ենթապարբերության :20: դաշտում լրացվում է սույն հաղորդագրության միջոցով կատարվող վճարումներում ընդգրկված, համապատասխան հաճախորդի հանձնարարականի կատարման հետ կապված գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը: Սույն տարբերակից բացի, կրկնվող :20: դաշտը կարող է օգտագործվել նաև այն դեպքում, երբ ՀՏ 132 հաղորդագրությունը ձևավորվում է նաև այլ ստացված ՀՏ-երի հիման վրա: Այս դեպքում կրկնվող :20: դաշտում նշվում է ստացված համապատասխան ՀՏ-ի գործառնության բացառիկ համարի տվյալը, որպես հղում:

1) Դաշտ **:30V:** Վճարման ամսաթիվ

Չնաչափ 6!n

Այս օժանդակ դաշտում նշվում է հանձնարարականով սահմանված վճարման օրը DDMMYY տեսքով:

2) Դաշտ **:32B:** Արժույթի կոդ և գումար

Չնաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության :32A: դաշտերում նշված գումարների հանրագումարը: Ընդ որում՝

- 3!a ենթադաշտում → արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է վճարը
- 15d ենթադաշտում → վճարվող/փոխանցվող գումարը, տասնորդական ստորակետից հետո **2** նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ **AMD**-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է **0** թիվը:

3) Դաշտ **:59:** Շահառու
Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է վճարման Շահառուն, որտեղ 12!n[4n] ենթադաշտում լրացվում է Շահառուի հաշվեհամարը բանկում, որին փոխանցվում է :32B: դաշտում գրանցված գումարը: Իր հերթին, 4*35x ենթադաշտում լրացվում է Շահառուի անվանումը կամ անունն ու ազգանունը (ինչպես նաև իրավական ակտերով սահմանված անձի նույնականացման տվյալներ և այլն): Եթե հաշվեհամարը բացակայում է, ապա նրան հատկացված տողի 12 նիշերը լրացվում են հետևյալ կերպ՝ 5 նիշ բանկի գլխամասի կոդ + 6 հատ զրո + ստուգիչ նիշ:

6) Դաշտ **:32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար
Չևաչափ 6!n3!a15d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է՝

- 6!n ենթադաշտում → վճարման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը, DDMMYY տեսքով, որը չի կարող մեծ լինել ընթացիկ բանկային օրվա ամսաթվից (Այսինքն չի կարող նշվել ապագա ամսաթվով վճարում):
- 3!a ենթադաշտում → արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է վճարը
- 15d ենթադաշտում → վճարվող գումարը, տասնորդական ստորակետից հետո **2** նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ AMD-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է **0** թիվը:

Միևնույն հաղորդագրության մեջ կրկնվող դաշտերում պետք է նշվեն միևնույն արժույթով գումարներ:

7) Դաշտ **:50a:** Վճարող
Չևաչափ՝ տարբերակ **A** (:50A:) 12!n[4n]
4*35x

տարբերակ **C** (:50C:) 5!n
4*35x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է գումարի փոխանցման նախաձեռնողը:

A տարբերակի դեպքում 12!n[4n] ենթադաշտում նշվում է Վճարողի հաշվեհամարը բանկում, իսկ 4*35x ենթադաշտում լրացվում է նրա անվանումը կամ անունն ու ազգանունը (ինչպես նաև իրավական ակտերով սահմանված անձի նույնականացման տվյալներ և այլն):

C տարբերակի դեպքում, բանկում հաշվեհամար չունեցող Վճարողի պարագայում, 5!n ենթադաշտում նշվում է գումարը փոխանցող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը, իսկ 4*35x ենթադաշտում լրացվում է Վճարողի անվանումը կամ անունն ու ազգանունը և անձնագրի տվյալները (ինչպես նաև իրավական ակտերով սահմանված անձի նույնականացման տվյալներ և այլն):

8) Դաշտ **:51:** Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ

Չևաչափ 10!n

Այս օժանդակ դաշտում նշվում է ֆիզիկական անձի սոցիալական ապահովության քարտի համարը:

9) Դաշտ **:70A:** Վճարման նպատակ

Չևաչափ 4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է փոխանցված գումարը:

10) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն

Չևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է (հաղորդագրությունը ուղարկող կողմի) էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 200 Ֆինանսական կազմակերպության համար նախատեսված հաշիվների միջև փոխանցման հանձնարարական

«Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) կարող է ուղարկվել առևտրային բանկի կողմից միայն դեպի ՀՀ կենտրոնական բանկ: Այն կիրառվում է միևնույն Ֆինանսական կազմակերպության համար (Կենտրոնական բանկում վարվող) նույն արժույթով, դեբետագրվող և կրեդիտագրվող հաշիվների միջև դրամական միջոցների փոխանցում կատարելու նպատակով: Ընդ որում, ՀՏ 200 հաղորդագրության միջոցով դեբետագրվող հաշիվը պետք է հանդիսանա Ֆինանսական կազմակերպության սեփական հաշիվը՝ Կենտրոնական բանկում:

Սույն հաղորդագրությունը կիրառվում է.

1) Ռեպո-հակադարձ ռեպո համակարգի հետ կապված դրամական միջոցների փոխանցման ժամանակ, մասնավորապես.

" Հակադարձ ռեպո գործարքների կատարման նպատակով,

" Միջօրյա ռեպո գործարքների մարման նպատակով:

Նշված դեպքերում ՀՏ 200 հաղորդագրության միջոցով փոխանցումը կատարվում է՝

ա/ Ֆինանսական կազմակերպության թղթակցային հաշվից դեպի վերջինիս համար Հակադարձ ռեպոյի կնքման նպատակով բացված հաշվին,

բ/ Ֆինանսական կազմակերպության թղթակցային հաշվից դեպի վերջինիս համար Միջօրյա ռեպո մարման նպատակով բացված հաշվին:

Սույն ենթակետով նշված գործառնությունների համար ՀՏ 200 հաղորդագրությունը ենթակա է կիրառման Կենտրոնական բանկի նոր «Գործառնական օր» ավտոմատացված համակարգը շահագործման հանձնելու օրվանից:

2) «USԱԿ» դրամական փոխանցումների համակարգի» հետ կապված միջոցների փոխանցման ժամանակ, մասնավորապես.

" «USԱԿ» համակարգի հետ կապված, Կենտրոնական բանկում բացված բանկի սեփական վճարային հաշվի և իր թղթակցային հաշվի միջև փոխանցումների կատարման նպատակով:


Նշված դեպքերում ՀՏ 200 հաղորդագրության միջոցով փոխանցումը կատարվում է.

ա/ Ֆինանսական կազմակերպության թղթակցային հաշվից դեպի վերջինիս համար բացված սեփական վճարային հաշվին,

բ/ Կենտրոնական բանկում բացված բանկի սեփական վճարային հաշվից դեպի Ֆինանսական կազմակերպության թղթակցային հաշվին:

Սույն ենթակետով նշված գործառնությունների համար ՀՏ 200 հաղորդագրությունը ենթակա է կիրառման Կենտրոնական բանկի «Գործառնական օր» ավտոմատացված համակարգում «USԱԿ դրամական փոխանցումների համակարգի» շահագործման օրվանից:

3) Հարկ է նշել, որ ՀՏ 200 հաղորդագրության դաշտերը համանման են՝ SWIFT համակարգում կիրառվող MT 200 հաղորդագրությանը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգավիճակ	Դաշտի բնորոշիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	2
Օ	53B	Հանձնարարականը նախաձեռնող կազմակերպություն	[/1!a][/34x] [35x]	3
Օ	56a	Միջնորդ կազմակերպություն	A or D	4
Պ	57a	Հանձնարարականը կատարող կազմակերպություն	A, B or D	5
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	6
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	7

Պ – պարտադիր գրանցման դաշտ, Օ – օժանդակ լրացման դաշտ

- Փոխանցման հանձնարարականի շահառուն հանդիսանում է հենց ինքը ուղարկող կողմը:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում լրացվում է կատարման ենթակա գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 6!n3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է

- 6!n ենթադաշտում → փոխանցման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը, DDMMYY տեսքով, որը չի կարող մեծ լինել ընթացիկ բանկային օրվա ամսաթվից (այսինքն չի կարող նշվել ապագա ամսաթվով վճարում)

- 3!a ենթադաշտում → արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է դրամական միջոցների փոխանցումը
- 15d ենթադաշտում → ՀՀ դրամով փոխանցվող գումարի արժեքը, տասնորդական ստորակետից հետո **2** նիշի ճշտությամբ: Ընդ որում, դրամային՝ **AMD**-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է **0** թիվը:

3) Դաշտ **:53B:** Հանձնարարականը նախաձեռնող կազմակերպություն

Ձևաչափ [/1!a][/34x] – Գործառնության կողմ
[35x] – Բնութագրող տվյալներ

Այս օժանդակ դաշտում կարող են նշվել կատարման ենթակա փոխանցման հետ կապված հետևյալ տվյալները՝

- [/1!a] → զատչից (/) հետո լրացվում է **D** (Debiting) տառը, որը նշանակում է դրամական միջոցների ելքագրում (դեբետագրում)
- [/34x] → զատչից (/) հետո, լրացվում է դեբետագրման ենթակա հաշվի համարը::53B: դաշտում, հաշվեհամարի ենթադաշտը պարտադիր պետք է լրացվի: Հաշվեհամարը նշվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի համաձայն
- [35x] → կարող են լրացվել փոխանցումը նախաձեռնող կողմին բնութագրող այլ անհրաժեշտ տվյալները, օրինակ՝ անվանում, հասցե և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկին ուղղված ՀՏ 200 հաղորդագրության մեջ **:53B: օժանդակ դաշտի լրացումը պարտադիր է**, հակառակ դեպքում ստացված ՀՏ 200 հաղորդագրությունը ենթակա է մերժման և չի կատարվում:

4) Դաշտ **:56a:** Միջնորդ կազմակերպություն

Ձևաչափ՝ տարբերակ A → [/1!a][/34x] – Գործառնության կողմ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ
տարբերակ D → [/1!a][/34x] – Գործառնության կողմ
4*35x – Անվանում և հասցե

Այս օժանդակ դաշտը, Կենտրոնական բանկին ուղղված ՀՏ 200 հաղորդագրության մեջ, **ենթակա չէ լրացման**:

5) Դաշտ **:57a:** Հանձնարարականը կատարող կազմակերպություն

Ձևաչափ՝ տարբերակ A → [/1!a][/34x] – Գործառնության կողմ
4!a2!a2!c[3!c] – Նույնականացման կոդ

տարբերակ B → [/1!a][/34x] – Գործառնության կողմ
[35x] – Բնութագրող տվյալներ

տարբերակ D → [/1!a][/34x] – Գործառնության կողմ
4*35x – Անվանում և հասցե

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ֆինանսական կազմակերպությունը, որտեղ կատարվում է փոխանցման հանձնարարականում նշված գումարի կրեդիտագրումը:

A, B և D տարբերակներում առկա ենթադաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

- [/1!a] → հատվածում (բոլոր տարբերակների համար զատչից՝ /, հետո) լրացվում է **C** (Crediting) տառը, որը նշանակում է դրամական միջոցների մուտքագրում (կրեդիտագրում)
- [/34x] → հատվածում (բոլոր տարբերակների համար զատչից՝ /, հետո), լրացվում է կրեդիտագրման ենթակա հաշվի համարը: Հաղորդագրության :57a: դաշտում, հաշվեհամարի ենթադաշտը պարտադիր պետք է լրացվի: Հաշվեհամարը նշվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի համաձայն
- [35x] → ենթադաշտում (տարբերակ **B**) կարող են լրացվել փոխանցման գումարը ստացող կողմին՝ շահառուին, բնութագրող այլ անհրաժեշտ տվյալները, օրինակ՝ անվանում, հասցե և այլն: Առանց հաշվեհամար ենթադաշտի այս տողը չի լրացվում:
- 4*35x → ենթադաշտում (տարբերակ **D**) լրացվում են փոխանցման գումարը ստացող կողմի (շահառուի) անվանումը և այլ անհրաժեշտ տվյալները, օրինակ՝ հասցե և այլն: Առանց հաշվեհամար ենթադաշտի այս տողերը չեն լրացվում:

A տարբերակի «Նույնականացման կոդ» ենթադաշտում լրացվում է ֆինանսական կազմակերպության BIC կոդը (առկա լինելու պարագայում), ըստ ISO 9362:2014 ստանդարտի, երբ այն կիրառվի Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգում:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկին ուղղված ՀՏ 200 հաղորդագրության մեջ սույն դաշտի **:**57A**:** տարբերակը չպետք է լրացվի և կիրառվի :

Հաղորդագրության մեջ կրեդիտագրվող հաշվի արժույթը (ըստ վերը նշված նախաբանի) պարտադիր կերպով պետք է համընկնի **:**53B**:** դաշտում լրացված դեբետագրվող հաշվի արժույթի հետ:

ՀՀ կենտրոնական բանկ ուղարկվող հաղորդագրության մեջ կարող է կիրառվել **:**57a**:** դաշտի B կամ D տարբերակը:

6) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն

Ձևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում կարող է հաղորդագրության ուղարկողից ստացողին ներկայացվել լրացուցիչ տեղեկատվություն (բացատրություն) կապված փոխանցման հանձնարարականի կատարման մանրամասների հետ:

Կենտրոնական բանկին ուղարկվող հաղորդագրության մեջ տեղեկատվությունը լրացվում է «ACC» կամ «REC» կոդերի միջոցով: Նշված կոդերից հետո դրվում է մեկ զատիչ «/» նշանը, որից հետո նշվում է լրացուցիչ տեղեկատվությունը (բացատրությունը): Սույն դաշտում լրացվող կոդերից առաջ որևէ զատիչ «/» նշանը չպետք է կիրառվի:

7) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն

Ձևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում գրանցվում է ուղարկող կողմի էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 202 Միջբանկային վճարման հանձնարարական

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ) օգտագործվում է ՀՀ դրամով և արժույթով միջբանկային վճարումներ (փոխանցումներ) կատարելու համար: Սույն հաղորդագրությունը կիրառվում է ա/ առանց ՀՏ202-ին կից ռեեստրի ուղարկմամբ, ինչպես նաև բ/ ՀՏ202-ին կից համապատասխան ռեեստրի (ՀՏ969, կամ 972, կամ 973) ուղարկմամբ: Ընդ որում

1) ՀՏ202 հաղորդագրությունը առանց ռեեստրի կիրառվում է՝ ԷՎՀ անմիջական մասնակիցների համար Կենտրոնական բանկում գտնվող Վճարողի և Շահառուի թղթակցային (հաշվարկային) հաշիվների միջև միջոցների փոխանցում կատարելու դեպքում: Հաղորդագրության մեջ Վճարողի կամ Շահառուի դաշտերում չի կարող լրացվել վերջիններիս կողմից սպասարկվող հաճախորդի հաշվեհամար: Այս դեպքում, Վճարող կամ շահառու կարող են հանդիսանալ Էլեկտրոնային վճարումների համակարգի անմիջական մասնակիցները (Բանկեր, Դեպոզիտարիա, Բորսա և այլն), որոնց համար Կենտրոնական բանկում բացված է համապատասխան բանկային հաշիվ՝ ԷՎՀ-ին անդամակցության և վճարումների կատարման համար: Այսինքն՝ ՀՏ202 հաղորդագրության մեջ «վճարողի» և «շահառուի» դաշտերի լրացման ժամանակ նշվում են ԷՎՀ-ի մասնակիցների համար ԿԲ-ում բացված համապատասխան հաշվեհամարները:

2) Միջբանկային հաշվարկների կատարման ժամանակ ՀՏ 202-ը կից սույն կատալոգով սահմանված ռեեստր հաղորդագրությունը կարող է ուղարկվել/կիրառվել ստորև ներկայացված վճարումների դեպքերում.


ա. Վճարող հաճախորդ-Վճարողի բանկ-Շահառուի բանկ-Շահառու (Customer - Payer Bank - Beneficiary Bank – Beneficiary):

բ. Վճարողի բանկ [սեփական վճարում] -Շահառուի բանկ-Շահառու (Payer Bank (owner payment) - Beneficiary Bank – Beneficiary):

գ. Վճարող հաճախորդ-Վճարողի բանկ-Շահառուի բանկ [որպես Շահառու] (Customer - Payer Bank - Beneficiary Bank (as beneficiary)):

3) Վերը նշված դեպքերում՝ ՀՏ 202-ը (առանց ռեեստրի), ինչպես նաև ՀՏ 202-ը կից ռեեստրով կարող են կիրառվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ սահմանված արտարժույթով փոխանցումներ կատարելու համար, բացառությամբ բյուջե կատարվող վճարումների:

Ֆինանսական կազմակերպությունը պետք է ապահովի ՀՏ 202-ի կիրառման հնարավորությունը (առանց ռեեստրի, ինչպես նաև կից ռեեստրով) փոխանցումների իրականացման հնարավորությունը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Օ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	3
Օ	16A	Կից ռեեստրի վճարումների քանակ	5n	4
Պ	50A	Վճարող	12!n[4n] 4*35x	5
Պ	59	Շահառու	12!n[4n] 4*35x	6
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	7
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	8

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- **:21:** օժանդակ դաշտի առկայության դեպքում **:16A:** դաշտը ենթակա է պարտադիր լրացման
- **:32A:** դաշտում նշված որևէ արժույթի կոդը (3!a) պետք է համապատասխանի **:50A:** և **:59:** դաշտերում ներկայացված բանկային հաշիվների արժույթներին:
- :21: օժանդակ դաշտի առկայության դեպքում, :32A: դաշտում նշված արժույթի կոդը (3!a) պետք է համապատասխանի այդ հաղորդագրությանը կից ուղարկվող համապատասխան ռեեստրի :32A: դաշտում նշված արժույթի կոդին, որի ստուգումը ապահովում է վճարողի և շահառուի բանկը:
- :21: օժանդակ դաշտի առկայության դեպքում, :32A: դաշտում նշված գումարը պետք է համապատասխանի այդ հաղորդագրությանը կից ուղարկվող համապատասխան ռեեստրի կրկնվող ենթապարբերությունների :32A: դաշտում նշված գումարների հանրագումարին, որի ստուգումը ապահովում է վճարողի և շահառուի բանկը:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է բանկի կատարվող գործառնության բացառիկ համարը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
   Չևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում նշվում է ձևավորված ՀՏ 202 վճարային հաղորդագրությանը կից ուղարկվող համապատասխան ռեեստրի (ՀՏ 969, ՀՏ 972, ՀՏ 973) գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը:

Հաղորդագրությանը կից ռեեստրի կիրառման դեպքում **:21:** դաշտը ենթակա է պարտադիր լրացման:

3) Դաշտ **:32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար
   Չևաչափ 6!n3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է՝

- 6!n ենթադաշտում վճարման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը DDMMYY տեսքով, որը չի կարող մեծ լինել ընթացիկ բանկային օրվա ամսաթվից, (Այսինքն չի իրականացվում ապագա ամսաթվով վճարում):
- 3!a ենթադաշտում արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է վճարումը
- 15d ենթադաշտում վճարվող (փոխանցվող) գումարը, տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ AMD-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է 0 թիվը:

4) Դաշտ **:16A:** Կից ռեեստրի վճարումների քանակ
   Չևաչափ 5n

Այս օժանդակ դաշտում՝ նշվում է հաղորդագրությանը կից ռեեստրի ուղարկման դեպքում, այդ համապատասխան ՀՏ 969, ՀՏ 972 կամ ՀՏ 973 ռեեստրի մեջ ընդգրկված վճարումների քանակը:

Հաղորդագրությանը կից Ռեեստրի կիրառման դեպքում **:16A:** դաշտը ենթակա է պարտադիր լրացման:

5) Դաշտ **:50A:** Վճարող
   Չևաչափ 12!n[4n]
   4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է վճարում կատարողը, մասնավորապես 12!n[4n] ենթադաշտում գրանցվում է Վճարողի հաշվեհամարը բանկում, և 4*35x ենթադաշտում

լրացվում է նրա անվանումը կամ անունն ու ազգանունը (ինչպես նաև իրավական ակտերով սահմանված այլ տվյալներ):

6) Դաշտ **:59:** Շահառու
Ձևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է վճարման ստացողը, մասնավորապես 12!n[4n] ենթադաշտում գրանցվում է Շահառուի հաշվեհամարը բանկում, և 4*35x ենթադաշտում լրացվում են նրա անվանումը կամ անունն ու ազգանունը (ինչպես նաև իրավական ակտերով սահմանված այլ տվյալներ):

7) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
Ձևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում նշվում է հաղորդագրության վերաբերյալ ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվությունը: Սույն դաշտի 1-ին տողում կարող է լրացվել կատարվող գործարքի տեսակը բնութագրող հետևյալ կոդերից որևէ մեկը՝

Կոդ	Կոդի բովանդակություն
//T01//	Արտարժույթով առք ու վաճառքի գործարք
//T02//	ՀՀ պետական արժեթղթի հետ գործարք
//T03//	Կորպորատիվ արժեթղթի հետ գործարք
//T04//	Միջնորդավճար
//REN//	Փոխանցված գումարի հետ վերադարձ

Նշված կոդերը կիրառելու դեպքում պարտադիր լրացվում են առաջին տողում: Եթե անհրաժեշտ է կոդից բացի նշել նաև լրացուցիչ պարզաբանում, ապա այն լրացվում է 2-րդ տողից սկսած: Կոդը լրացվում է անմիջապես **72** բնորոշչի «**:**» նշանից հետո և հանդիսանում է 1-ին տողի միակ տեղեկատվությունը, որտեղ կոդի կառուցվածքում «**T**» տառը նշանակում է գործառնության (Transaction) կոդ, իսկ «**REN**» (Refund) հապավումը նշանակում է գումարի հետ վերադարձի կոդ: Եթե չկա կոդը նշելու անհրաժեշտությունը, ապա դաշտը լրացվում է ազատ ֆորմատով՝ հատկացված տողերի և նիշերի սահմաններում:

Անհրաժեշտ է նշել, որ, եթե Կենտրոնական բանկում արդեն կատարվել է ստացված վճարման հանձնարարականի հետ կապված անհրաժեշտ հաշվապահական ձևակերպումը մասնակցի թղթակցային հաշիվների մակարդակով Դեբետագրումը-Կրեդիտագրումը, ապա սխալի հայտնաբերման դեպքում, փոխանցվ**ող** գումարի հետ վերադարձը ապահովելու համար հաղորդագրության մեջ նշված գումարը ստացող բանկի կողմից՝ կարող է ձևավորվել նոր ՀՏ **202** (պատասխան) հաղորդագրություն:

Գումարի հետ վերադարձի դեպքում **:72:** դաշտը լրացվում է հետևյալ ձևաչափով՝

:72://REN// ⇨ 1-ին տող

4!c**/**3!n**/**16x**/**2!n[1!a] ⇨ 2-րդ տող

16x ⇨ 3-րդ տող

Որտեղ, :72: դաշտի առաջին տողում ըստ նշված սկզբունքի պետք է լրացվի միայն «REN» կոդը, այնուհետև երկրորդ տողի **4!c** հատվածում նշվում է փոխանցվող գումարի վերադարձի պատճառը բնութագրող (4-նիշանի) ցուցիչներից որևէ մեկը, **3!n** հատվածում գրանցվում է սխալ փոխանցումը պարունակող (4!c անճշտությունով) նախնական հաղորդագրության տեսակի կոդը, **16x** հատվածում լրացվում է այդ հաղորդագրության գործառնության համարը՝ **:20:** դաշտի արժեքը, իսկ **2!n**[**1!a**] հատվածում լրացվում է անճշտություն պարունակող դաշտի ստույգ համարը:

Իր հերթին, երրորդ տողում **կարող է լրացվել** վերադարձման ենթակա գումարի սկզբնական ուղարկման հետ կապված կրկնվող պարբերության մեջ (եթե այն առկա է) ներառված ոչ ճիշտ փոխանցման հետ կապված ստույգ գործառնության համարը՝ **:20:** դաշտի արժեքը:

Նշված ձևաչափի կառուցվածքում՝ երկրորդ տողի սկզբի 4!c հատվածում, վերադարձի պատճառի բնութագրման նպատակով կարող է կիրառվել հետևյալ ցուցիչներից որևէ մեկը՝

AC04 →Փակված հաշվին փոխանցվող գումարի հետ վերադարձ

AC05 → Գոյություն չունեցող հաշվին փոխանցվող գումարի հետ վերադարձ

AC06→Արգելափակված հաշվին փոխանցվող գումարի հետ վերադարձ

BE01 → Նշված հաշվին չհամապատասխանող Շահառուի օգտին փոխանցվող գումարի հետ վերադարձ

AM08 → Ավել փոխանցված գումարի հետ վերադարձ

8) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն

Ձևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 208 Դրամական միջոցների ներգրավման հայտ

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ կենտրոնական բանկի «Դրամական միջոցների ներգրավման ավտոմատացված համակարգ»-ին: Այն ձևավորվում է ավանդի բացման գործարքի կնքման համար, ինչպես աճուրդի միջոցով այնպես էլ երկկողմանի փոխգործակցության հիման վրա:

Այս հաղորդագրության մեջ կարող են ներկայացվել աճուրդի մասնակցության համար գործարքների կնքման մի քանի առաջարկություններ **կամ** երկկողմանի դրամական միջոցների ներգրավման գործարքի կնքման մեկ առաջարկություն:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	82	Մասնակցի կոդ	2!a5!n	2
Պ	24B	Գործարքի նույնացուցիչ	4x	3
Օ	12B	Աճուրդի համար	16x	4
Օ	31	Գործարքի կնքման ամսաթիվ	6!n	5
Օ	30V	Վճարման ամսաթիվ	6!n	6
Օ	31A	Մարման ամսաթիվ	6!n	7
Օ	30D	Գործարքի ժամկետայնություն	3n	8
Ա1 կրկնվող ենթապարբերություն ---->				
Պ	37C	Գործարքի գումար	15d	9
Պ	38	Գործարքի տոկոսադրույք	9d	10
-----|				
Օ	72N	Այլ նշումներ	150*80x	11

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

գրանցման դաշտ

- Հաղորդագրության մեջ :12B: դաշտը լրացնելու պարագայում :31:, :30V:, :31A:, :30D: և :72N: դաշտերը ենթակա չեն լրացման, այսինքն :12B: դաշտի արժեքը անհամատեղելի է նշված դաշտերի արժեքների հետ և հակառակը
- :31: դաշտի արժեքը չի կարող մեծ լինել :30V: դաշտի արժեքից՝ :31: ≤ :30V:
- :30V: դաշտի արժեքը պետք է փոքր լինի :31A: դաշտի արժեքից՝ :30V: < :31A:
- Հաղորդագրության մեջ «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ
- Դրամական միջոցների ներգրավման տարեկան տոկոսադրույքի հաստատագրված (fixed) արժեքով ածուրդի հայտի, ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի, համար ձևավորված «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ
- :37C: դաշտի արժեքը պետք է լինի դրական ամբողջ թիվ՝ 15d > 0
- :38: դաշտի արժեքը չի կարող լինել բացասական թիվ՝ 9d ≥ 0

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ ՀՏ 208 հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը, որտեղ առաջարկվում է ներառել.

- 1ı→ı5 նիշերում, հաղորդագրությունը ուղարկող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը՝ xyz**00**
- 6-րդ և 15-րդ նիշերում «/» (Slash) զատիչ նշանը
- 7ı→ı14 նիշերում, հաղորդագրության ուղարկման ամսաթվի ութանիշ թվային արժեքը՝ DDMMYYYY
- վերջին 16-րդ նիշում հաղորդագրության հերթական համարը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով (Բանկային օր = 8 ժամ տևողություն ունեցող աշխատանքային օր)։

2) Դաշտ **:82:** Մասնակցի կոդ
   Ձևաչափ 2!a5!n

Այս **պարտադիր** դաշտի առաջին ենթադաշտում՝ 2!a, նշվում են դրամական միջոցների ներգրավման գործարքը նախաձեռնողի գլխամասի **7** նիշանի կոդի առաջին **2** նիշերը, այն է՝ գործունեության երկրի անգլերեն հապավումը (ISO code)՝ **AM**, իսկ երկրորդ ենթադաշտում՝ 5!n, գլխամասի կոդի մնացած **5** նիշերը:

3) Դաշտ **:24B:** Գործարքի նույնացուցիչ
   Ձևաչափ 4x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա գործարքի տեսակը, որտեղ գրանցվում է միայն հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **DPA** – դրամական միջոցների ներգրավում ածուրդի միջոցով (Deposit Auction)
- **DDPA** – դրամական միջոցների ներգրավում երկկողմանի գործարքի հիման վրա (Dual Deposit Agreement)

4) Դաշտ **:12B:** Աճուրդի համար
Չևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում կարող է նշվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացվող դրամական միջոցների ներգրավման գործարքների կնքման աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

5) Դաշտ **:31:** Գործարքի կնքման ամսաթիվ
Չևաչափ 6!n

Այս օժանդակ դաշտում նշվում է դրամական միջոցների ներգրավման **երկկողմանի** գործարքի կնքման ամսաթիվը DDMMYY տեսքով:

6) Դաշտ **:30V:** Վճարման ամսաթիվ
Չևաչափ 6!n

Այս օժանդակ դաշտում նշվում է դրամական միջոցների ներգրավման (կնքման ենթակա) **երկկողմանի** գործարքի **կատարման** ամսաթիվը DDMMYY տեսքով:

7) Դաշտ **:31A:** Մարման ամսաթիվ
Չևաչափ 6!n

Այս օժանդակ դաշտում նշվում է դրամական միջոցների ներգրավման (կնքման ենթակա) **երկկողմանի** գործարքի մարման ամսաթիվը DDMMYY տեսքով:

8) Դաշտ **:30D:** Գործարքի ժամկետայնություն
Չևաչափ 3n

Այս օժանդակ դաշտում նշվում է դրամական միջոցների ներգրավման (կնքման ենթակա) **երկկողմանի** գործարքի պայմանագրի տևողությունը ըստ օրերի քանակի, որը հավասար է՝
Մարման ամսաթիվ (**:**31A**:**) **–** Վճարման ամսաթիվ (**:**30V**:**)։

9) Դաշտ **:37C:** Գործարքի գումար
Չևաչափ 15d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է (հայտում ներառված) դրամական միջոցների ներգրավման յուրաքանչյուր առաջարկության դրամական արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **0** նիշի ճշտությամբ:

10) Դաշտ **:38:** Գործարքի տոկոսադրույք
Չևաչափ 9d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա **գործարքի տոկոսադրույքը**, այն է դրամական միջոցների ներգրավման տարեկան եկամտաբերության պահանջվող տոկոսային արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **4** նիշի ճշտությամբ (0,0001):

11) Դաշտ **:72N:** Այլ նշումներ

Չևաչափ 150*80x

Այս օժանդակ դաշտի 150 տողերում, **երկկողմանի** հայտը ուղարկողի կողմից, կարող է գրանցվել, գործարքի կնքման հետ կապված, որևէ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

ՀՏ 231 Վերջնահաշվարկ և սառեցում

Հաղորդագրության այս տեսակը քլիրինգ և (կամ) պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունը հաշվարկային փուլը ավարտելուց հետո ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկ՝ վերջնահաշվարկի կատարման և հաջորդ հաշվարկային փուլի վերաբերյալ դրամական միջոցների սառեցման նպատակով:

«Հաղորդագրության այս տեսակը կիրառվում է համապատասխան վճարահաշվարկային համակարգի մասնակիցների համար բացված բանկային հաշիվներով փոխարինել, այդ թվում՝ թղթակցային, հաշվարկային կամ վճարային հաշվով, (այսուհետ՝ բանկային հաշվով), վերջնահաշվարկ իրականացնելու և/կամ հաջորդ հաշվարկային փուլի համար դրամական միջոցներ սառեցնելու (լիմիտներ սահմանելու) նպատակով, այդ համակարգի կանոններով սահմանված կարգով:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	2
Բ կրկնվող պարբերություն ----≫				
O	69D	Դուրս գրվող գումար (զուտ դեբետային դիրք)	12!n[4n]3!a15d	3
-----┤ **Գ** կրկնվող պարբերություն ----≫				
O	69E	Մուտքագրվող գումար (զուտ կրեդիտային դիրք)	12!n[4n]3!a15d	4
-----┤ **Դ** կրկնվող պարբերություն ----≫				
O	69B	Սառեցման հանձնարարություն	12!n[4n]3!a15d	5
-----┤ **Ե** պարբերություն				
O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	6

Պ – պարտադիր, O – օժանդակ

► Հաղորդագրության չափսը չպետք է գերազանցի 20 000 բայթ մեծությունը

- Եթե հաղորդագրության մեջ :69D: կամ :69E: դաշտերից մեկը լրացվել է, ապա նշվածներից մյուս դաշտը ենթակա է պարտադիր լրացման,
- Եթե հաղորդագրության մեջ :69D: և :69E: դաշտերը բացակայում են/(չեն լրացվել), ապա :69B: դաշտը ենթակա է պարտադիր լրացման
- Եթե հաղորդագրության մեջ :69D: և :69E: դաշտերը առկա են, ապա :69B: դաշտը կարող է բացակայել:

- Բոլոր կրկնվող պարբերությունների :69D:, :69E: և :69B: դաշտերում լրացվող արժույթի կոդը պարտադիր պետք է ունենա նույն արժեքը (3!a):

- Եթե :23: դաշտում լրացված է ARCA/FRZ կոդը, կամ ARPAY/FRZ կոդը ապա հաղորդագրության մեջ :69D:, :69E: և :69B: դաշտերից պետք է լրացվի միայն 69B դաշտը, իսկ :69D:, :69E: դաշտերը չեն լրացվում:
- Եթե :23: դաշտում լրացված է ARCA/STL&FRZ կոդը, կամ ARPAY/STL&FRZ կոդը ապա հաղորդագրության մեջ :69D:, :69E: և :69B: օժանդակ դաշտերի համախմբությունից պետք է լրացվեն :69D:, :69E: և :69B: կամ միայն :69D: և :69E: դաշտերը
  ՀՏ 231 Հաղորդագրությունը ուղարկող կողմը պետք է ապահովի :23: դաշտում կիրառման համար սահմանված կոդերի ստուգումը:
- հաղորդագրության մեջ :69D: դաշտում լրացված արժույթի կոդով գումարը չի կարող մեծ լինել նշված մասնակցի նույն արժույթով բանկային հաշվին համապատասխան համակարգի (ըստ 23 դաշտի արժեքի) վերջբահաշվարկի համար սառեցված միջոցներից:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չնաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
   Չնաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ՀՏ 231 հաղորդագրության գործառույթի կոդը, որը սահմանվել է կիրառման համար ըստ համապատասխան համակարգի, մասնավորապես.

ա/ «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի» համար լրացվում է հետևյալ կոդերից որևէ մեկը՝

- **ARCA[/STL&FRZ]** (Settlement and Freezing) → վերջնահաշվարկ և հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (limit-ի) սառեցում,
- **ARCA[/FRZ]** → հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (limit-ի) սառեցում:

բ/ «USԱԿ» դրամական փոխանցումների Հայաստանյան միասնական համակարգի համար լրացվում է հետևյալ կոդը.

- **STAK** → վերջնահաշվարկ և հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (limit-ի) սառեցում:

գ/ «Արքա Փեյ» համակարգի համար լրացվում է հետևյալ կոդերից որևէ մեկը՝

- **ARPAY[/STL&FRZ]** (Settlement and Freezing) →«Արքա Փեյ» համակարգով գործարքների վերջնահաշվարկ և հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (Lmit-ի) սառեցում,
- **ARPAY[/FRZ]** → «Արքա Փեյ» համակարգով գործարքների կատարման հաջորդ փուլի համար միայն վերջնահաշվարկի գումարի (Limit-ի) սառեցում:»

3) Դաշտ **:69D:** Դուրս գրվող գումար (զուտ դեբետային դիրք)

Ձևաչափ 12!n[4n]3!a15d

Այս օժանդակ դաշտի ձևաչափում, յուրաքանչյուր ենթադաշտում նշվում է՝

12!n[4n] → բանկային հաշվի համարը, որից դուրս են գրվելու դրամական միջոցները
3!a → Արժույթի կոդը, ըստ ISO 4217 ստանդարտի, որով կատարվելու է փոխանցումը
15d → Գումարը (տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ), որը դուրս է գրվելու նշված բանկային հաշվից: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ **AMD**-ով փոխանցումների ժամանակ տասնորդական ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր լրացվում է **0** թիվը :

Միևնույն հաղորդագրության բոլոր :69D: դաշտերում լրացված բանկային հաշիվներից՝ ելքագրվող միջոցների հանրագումարը պետք է հավասար լինի այդ հաղորդագրության բոլոր :69E: դաշտերում լրացված բանկային հաշիվներին մուտքագրվող միջոցների հանրագումարին:

4) Դաշտ **:69E:** Մուտքագրվող գումար (զուտ կրեդիտային դիրք)

Ձևաչափ 12!n[4n]3!a15d

Այս օժանդակ դաշտի ձևաչափում, յուրաքանչյուր ենթադաշտում նշվում է՝

12!n[4n] → համապատասխան համակարգի մասնակցի բանկային հաշվի համարը, որին մուտքագրվելու են դրամական միջոցները
3!a → Արժույթի կոդը, ըստ ISO 4217 ստանդարտի, որով կատարվելու է փոխանցումը
15d → Գումարը (տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ), որը մուտքագրվելու է նշված բանկային հաշվին: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ **AMD**-ով փոխանցումների ժամանակ տասնորդական ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր լրացվում է **0** թիվը :

5) Դաշտ **:69B:** Սառեցման հանձնարարություն

Ձևաչափ 12!n[4n]3!a15d

Այս օժանդակ դաշտի ձևաչափում յուրաքանչյուր ենթադաշտում նշվում է՝

12!n[4n] → համապատասխան համակարգի մասնակցի բանկային հաշվի համարը, որտեղ պետք է սառեցվեն դրամական միջոցները
3!a → Գործարքի արժույթի կոդը, ըստ ISO 4217 ստանդարտի, որով կատարվելու է անհրաժեշտ գումարի սառեցումը վերջնահաշվարկի ապահովման համար

15d → Գումարը (տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ), որը պետք է սառեցվի համապատասխան մասնակցի բանկային հաշվի վրա: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ AMD-ով գումարի սառեցման դեպքում տասնորդական ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր լրացվում է 0 թիվը :
Անհրաժեշտ է նշել, որ :69B: դաշտում լրացվող՝ սառեցման ենթակա գումարի չափը կարող սահմանվել նաև 0 թիվը: Այս դաշտում լրացվում են միայն դրական թվեր:

Հաղորդագրության 23 դաշտում նշված համակարգի վերջնահաշվարկի ապահովման համար մասնակիցների միջոցների սառեցման և հաստատումների ուղարկման նպատակով՝ ստացված ՀՏ231 հաղորդագրության մեջ :69D: և :69E: դաշտերում լրացված մասնակիցները (դրանք միասին վերցրած) համեմատվում են :69B: դաշտերում նշված մասնակիցների հետ, որի արդյունքում կիրառվում են ստորև նշված կանոնները.

I. Այն դեպքում, երբ ստացված հաղորդագրության մեջ լրացված են՝ :69D: և :69E: դաշտերը, (որտեղ որոշ մասնակիցների համար զուտ դիրքերի տվյալները կարող են նշված չլինել/բացակայել) և միաժամանակ լրացված են դրամական միջոցների սառեցման :69B: դաշտերը (որտեղ որոշ մասնակիցների համար նոր սառեցվող միջոցների տվյալները կարող են նշված չլինել/բացակայել) ապա.

ա/ եթե :69D: դաշտում նշված մասնակցի համար լրացված է նաև համապատասխան :69B: դաշտը, ապա իրականացվում է այդ դաշտում նշված նոր գումարի սառեցումը, 23 դաշտում լրացված համակարգով վերջնահաշվարկի ապահովման համար:

բ/ եթե :69E: դաշտում նշված մասնակցի համար լրացված է նաև համապատասխան :69B: դաշտը, ապա իրականացվում է այդ դաշտում նշված նոր գումարի սառեցումը, 23 դաշտում նշված համակարգով վերջնահաշվարկի ապահովման համար:

գ/ եթե :69D: դաշտում նշված մասնակցի համար լրացված չէ նոր դրամական միջոցների սառեցման չափը՝ :69B: դաշտում (այն բացակայում է), ապա սառեցումը կատարվում է վերջնահաշվարկի կատարման ժամանակ այդ մասնակցի բանկային հաշվին (23 դաշտում նշված համակարգի համար) փաստացի առկա սառեցված գումարը նվազեցնելով, այդ բանկի համար :69D: դաշտում նշված գումարի չափով: Այսինքն՝ բանկի միջոցների ելքագրման արդյունքում շարունակում է սառեցվել՝ վերջնահաշվարկի պահին փաստացի սառեցված գումարից կատարված նվազեցման արդյունքում (ըստ :69D: դաշտի) ձևավորված մնացորդը :

դ/ եթե :69 E: դաշտում նշված մասնակցի համար լրացված չէ նոր դրամական միջոցների սառեցման չափը՝ :69B: դաշտում (այն բացակայում է), ապա սառեցումը շարունակում է մնալ նույնը՝ փաստացի առկա սառեցված գումարի չափով, որը առկա է վերջնահաշվարկի կատարման ժամանակ այդ մասնակցի բանկային հաշվին (23 դաշտում նշված համակարգի համար):

II. Այն դեպքում, երբ :69D: և :69E: դաշտերում որևէ մասնակցի համար նշված չեն (բացակայում են) զուտ դիրքերի տվյալներ, և միաժամանակ այդ նույն մասնակիցների համար :69B: դաշտում սառեցման նոր սահմանաչափեր նշված չեն (բացակայում են), ապա այդ մասնակիցների համար սառեցումը շարունակվում է մնալ նույնը՝ փաստացի առկա սառեցված գումարի չափով, որը առկա էր վերջնահաշվարկի կատարման ժամանակ այդ մասնակցի բանկային հաշվին 23 դաշտում նշված համակարգի համար):

III. Այն դեպքում, երբ ստացված հաղորդագրության մեջ լրացված են միայն՝ :69D: և :69E: դաշտերը, (սակայն որոշ մասնակիցների համար զուտ դիրքերի տվյալները կարող են նշված չլինել/բացակայել), իսկ դրամական միջոցների սառեցման հետ կապված :69B: դաշտերը նշված չեն (բացակայում են), ապա.

ա/ :69D: և :69E: դաշտերում լրացված մասնակիցների համար կիրառվում են սույն սկզբունքների I-ին կետի գ/ և դ/ ենթակետերով սահմանված կանոնները:

բ/ :69D: և :69E: դաշտերում չնշված (բացակայող) մասնակիցների համար կիրառվում են սույն սկզբունքների II կետով սահմանված կանոնները:

IV. Այն դեպքում, երբ ստացված հաղորդագրության մեջ նշված չեն (բացակայում են)՝ :69D: և :69E: դաշտերը, սակայն լրացված են միայն նոր դրամական միջոցների սառեցման վերաբերյալ :69B: դաշտերը (սակայն որոշ մասնակիցների համար նոր սառեցվող միջոցների տվյալները կարող են նշված չլինել/բացակայել), ապա

ա/ :69B: դաշտերում լրացված մասնակիցների համար կատարվում է 69B: դաշտերում նշված գումարի չափով նոր միջոցների սառեցումը, 23 դաշտում նշված համակարգի համար:

բ/ :69B: դաշտերում չնշված (բացակայող) մասնակիցների համար կիրառվում են սույն սկզբունքների II -րդ կետով սահմանված կանոնները:

6) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն

Չևաչափ 110!x


«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

5.3 Արտարժութային գործառնությունների իրականացման հաղորդագրություններ

ՀՏ 307 Արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման հայտ

Հաղորդագրության այս տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ ԿԲ-ի «Ֆինանսական գործարքների կնքման համակարգ»-ին: Այն ձևավորվում է **Արտարժույթի կանխիկացման** կամ **ապականխիկացման** գործարքի կնքման համար, ինչպես աճուրդի միջոցով, այնպես էլ երկկողմանի փոխգործակցության հիման վրա:

Այս հաղորդագրության մեջ կարող են ներկայացվել աճուրդի մասնակցության համար գործարքների կնքման մեկ կամ մի քանի առաջարկություն (առավելագույնը աճուրդի հայտարարությամբ սահմանված քանակով), երկկողմանի բանակցությունների միջոցով իրականացվող գործառնությունների հայտարարության մասնակցության համար գործարքների կնքման մեկ կամ մի քանի առաջարկություն (առավելագույնը հայտարարությամբ սահմանված քանակով), կամ երկկողմանի՝ Արտարժույթի կանխիկացում/ապականխիկացում՝ գործարքի մեկ առաջարկություն:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի №	Դաշտի անվանում	Դաշտի ֆորմատ	№
Պարտադիր Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	82	Մասնակցի կոդ	2!a5!n	2
Պ	24D	Գործարքի տեսակ	16x	3
Ο	23T	Աճուրդի լրացուցիչ նույնացուցիչ	4!c	4
Ο	12B	Աճուրդի համար	16x	5
Պ	31	Գործարքի կնքման ամսաթիվ	6!n	6
Պ	30V	Գործարքի կատարման ամսաթիվ	6!n	7
Պ	11A	Հաշվարկային արժույթ	3!a	8
Պ	17Y	Մասնակցի գործարքի հաշվի ցուցիչ	1!a	9

O	72N	Այլ նշում	150*80x	10
Պ	23P	Վճարողի (միջնորդավճար վճարողի) նույնացուցիչ	6x	11
Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերություն --->				
Պ	34C	Միջնորդավճարի չափը	9d	12
O	19B	Առաջարկության ծավալ	15d	13
O	19L	Առաջարկության նվազագույն ծավալ	15d	14
O	19H	Առաջարկության առավելագույն ծավալ	15d	15
-----|				

Պ – պարտադիր գրանցման դաշտ

O - օժանդակ գրանցման դաշտ

► Հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, հաղորդագրությունը չպետք է գերազանցի 20000 բայթը:

► Հաղորդագրության մեջ Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ:

► Գործարքի ֆիքսված տիպով աճուրդի հայտի**,** ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի հիման վրա ձևավորված Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ:

► Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունում պարտադիր է կամ (:34C:, :19B:) զույգը, կամ (:34C:, :19L:, :19H:) եռյակը կամ (:34C:, :19B:, :19L:, :19H:) քառյակը:

► Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունում պարտադիր է **(:34C:, :19B:)** դաշտերի զույգը, եթե

- **:23:** դաշտը ընդունում է **CLAC** արժեքը, կամ
- բացակայում է **:23:** դաշտը (երկկողմանի գործարքի հայտում)

► Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունում պարտադիր է **(:34C:, :19L:, :19H:)** եռյակը կամ (:34C:, :19B:, :19L:, :19H:) քառյակը, եթե **:23:** դաշտը ընդունում է «**CHAC»** արժեքը:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ :20: Գործառնության համար

Չևաչափ 16x

Այս պարտադիր դաշտում նշվում է տվյալ **ՀՏ 307** հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը, որտեղ առաջարկվում է ներառել.

- 1!÷!5 նիշերում, հաղորդագրությունը ուղարկող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը՝ xyz**00**
- 6-րդ և 15-րդ նիշերում « / » (Slash) զատիչ նշանը
- 7!÷!14 նիշերում, հաղորդագրության ուղարկման ամսաթվի ութանիշ թվային արժեքը՝ ddmmyyyy
- վերջին 16-րդ նիշում հաղորդագրության հերթական համարը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով (Բանկային օր = 8 ժամ տևողություն ունեցող աշխատանքային օր):

2) Դաշտ :**82**: Մասնակցի կոդ
Չևաչափ 2!a5!n

Այս **պարտադիր** դաշտի առաջին ենթադաշտում 2!a, նշվում են գործարքի մասնակցի գլխամասի **7** նիշանի կոդի առաջին 2 նիշերը, այն է՝ գործունեության երկրի անգլերեն հապավումը (ISO code) AM, իսկ երկրորդ ենթադաշտում 5!n, գլխամասի կոդի մնացած թվային 5 նիշերը: Ընդ որում, 5!n ենթադաշտի 4-րդ և 5-րդ նիշերը լրացվում են **0** թվանշաններով:
Օրինակ՝ **11500**

3) Դաշտ :24D: Գործարքի տեսակ
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա գործարքի տեսակը, որտեղ գրանցվում է միայն հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **CSHIN** –արտարժույթի կանխիկացում
- **CSHOUT** –արտարժույթի ապականխիկացում
- **DCSHIN** –արտարժույթի կանխիկացման երկկողմանի գործարք
- **DCSHOUT** –արտարժույթի ապականխիկացման երկկողմանի գործարք
- **CSHINDUAL** – Երկկողմանի արտարժույթի կանխիկացում հայտարարությամբ
- **CSHOUTDUAL** - Երկկողմանի արտարժույթի ապականխիկացում հայտարարությամբ

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Գործարքի տեսակ» դաշտին համապատասխան:

4) Դաշտ :23T: Աճուրդի լրացուցիչ նույնացուցիչ
Չևաչափ 4!c

Այս **օժանդակ** դաշտում նշվում է աճուրդի տեսակը, որի համար Մասնակիցը ուղարկում է հայտ: Կարող են լրացվել հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **CLAC** [classic auction]- դասական աճուրդ
- **CHAC** [by choise auction]- ըստ ընտրության աճուրդ:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Աճուրդի տեսակ» դաշտին համապատասխան:

- Երբ դաշտում գրանցվում է «**CLAC»** (classic auction, դասական աճուրդ) կոդը, ապա Ա1 կրկնվող պարտադիր ենթապարբերությունում պարտադիր պետք է լրացված լինի **(:34C:, :19B:)** դաշտերի զույգը:
- Երբ դաշտում գրանցվում է «**CHAC»** (by choice auction, աճուրդ ըստ ընտրության) կոդը, ապա **(:34C:, :19L:, :19H:)** դաշտերի եռյակը կամ (:34C:, :19B:, :19L:, :19H:) քառյակը պարտադիր է Ա1 կրկնվող պարտադիր ենթապարբերությունում:
- Դաշտը բացակայում է երկկողմանի գործարքի դեպքում:

5) **Դաշտ :12B: Աճուրդի համար**

Չևաչափ 16x

Այս **օժանդակ** դաշտում նշվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացվող Արտարժույթի կանխիկացում/ապականխիկացում գործարքների կնքման աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Աճուրդի համար» դաշտին համապատասխան:

Երկկողմանի գործարքի կնքման հայտի համար **:12B:** դաշտը ենթակա չէ լրացման:

6) Դաշտ :31: Գործարքի կնքման ամսաթիվ

Չևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **գործարքի կնքման** ամսաթիվը ddmmyy ձևաչափով, որը **ոչ** երկկողմանի գործարքի պարագայում փաստացի աճուրդի անցկացման օրվա ամսաթիվն է:

:31: դաշտի արժեքը չի կարող մեծ լինել :30V: դաշտի արժեքից՝ :31: ≤ :30V:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Կնքման ամսաթիվ» դաշտին համապատասխան:

7) Դաշտ :30V: Գործարքի կատարման ամսաթիվ

Չևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է աճուրդի կամ երկկողմանի գործարքի արդյունքում նախօրոք կնքված **գործարքի՝** արտարժույթի կանխիկացում կամ ապականխիկացում, **կատարման** ամսաթիվը ddmmyy ձևաչափով:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Կատարման ամսաթիվ» դաշտին համապատասխան:

8) Դաշտ :11A: Հաշվարկային արժույթ

Չևաչափ 3!a

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կանխիկացվող կամ ապականխիկացվող, արտարժույթի հետ իրականացվող գործարքի արժույթը, որտեղ կարող է գրանցվել միջազգային ISO ստանդարտին համապատասխանող 3 նիշանի արժույթի կոդը, մասնավորապես

- **USD –** ԱՄՆ դոլար
- **EUR –** ԵՎՐՈ

- և այլն!:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Արտարժույթի ISO կոդ» դաշտին համապատասխան:

9) Դաշտ :17Y: Մասնակցի գործարքի հաշվի ցուցիչ
Ձևաչափ **1!a**

Այս **պարտադիր** դաշտում նշվում է, թե ինչ հաշվով է կատարվելու գործարքը՝ **«ԿԲ-ում արտարժութային հաշվով»**, թե **«ոչ ԿԲ-ում արտարժութային հաշվով»**: Մասնավորապես, կարող է գրանցվել հետևյալ կոդերից որևէ մեկը՝

- **Y -** ԿԲ-ում արտարժութային հաշիվ
- **N –** ոչ ԿԲ-ում արտարժութային հաշիվ

:17Y: դաշտը լրացվում է աճուրդի հայտարարության «Արտարժութային հաշվի տիպ» դաշտին համապատասխան (ավտոմատ եղանակով):

Եթե հայտարարությունում ոչինչ լրացված չէ արտարժութային հաշվի հետ կապված, ապա այս դաշտը ավտոմատ պետք է լրացվի Y, և գործարքները պետք է կատարվեն **ԿԲ հաշիվներով:** Այս դեպքում դաշտը հասանելի չէ Մասնակցին այլ բան լրացնելու համար:

Երկկողմանի գործարքի պարագայում, եթե պայմանավորվածությամբ գործարքները պետք է կատարվեն **ոչ ԿԲ-ում** արտարժութային հաշիվներով, ապա Մասնակիցը հնարավորություն ունի լրացնելու **:17Y:** դաշտը:

:17Y: դաշտի արժեքը **Y** լինելու **(:17Y:=Y)** դեպքում, գործարքները կատարվում են **ԿԲ հաշիվներով:**

10) Դաշտ :72N: Այլ նշումներ
Ձևաչափ **150*80x**

Այս օժանդակ դաշտի 150 տողերում, աճուրդի կամ **երկկողմանի** հայտը ուղարկողի կողմից, կարող է գրանցվել, գործարքի կնքման հետ կապված, որևէ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

11) Դաշտ :23P: Վճարողի (միջնորդավճար վճարողի) նույնացուցիչ
Ձևաչափ **6x**

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործարքի կատարման հետ կապված Միջնորդավճար վճարող կողմի նույնացուցիչը, այսինքն Արտարժույթի կանխիկացման կամ Արտարժույթի ապականխիկացման գործարքի համար միջնորդավճարի տոկոսադրույքը՝ վճարող կողմի նույնացուցիչը: Մասնավորապես, կարող է գրանցվել հետևյալ կոդերից որևէ մեկը՝

- **CB -** ԿԲ
- **PARTY –** Մասնակից

Դաշտը լրացվում է աճուրդի հայտարարության մեջ «Միջնորդավճար վճարող կողմ» վավերապայմանին համապատասխան (ավտոմատ եղանակով):

Երկկողմանի գործարքի դեպքում լրացվում է Մասնակցի կողմից, ըստ գործարքի մանրամասների պայմանավորվածության:

12) Դաշտ :34C: Միջնորդավճարի չափը
Ձևաչափ **9d**

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքվող գործարքի միջնորդավճարը՝ գործարքի համար կողմերի միջև համաձայնեցված տոկոսադրույք:
Ֆիքսված աճուրդի կամ երկկողմանի գործարքի դեպքում կիրառվում է 1 անգամ, իսկ տատանվող տիպի աճուրդի համար կարող է առաջարկվել առավելագույնը 10 անգամ:
Գործարքի միջնորդավճարը ներկայացվում է տասնորդական ստորակետից առաջ և ստորակետից հետո 2 նիշ ճշտությամբ: Կարող է ընդունել նաև 0 արժեք:

13) Դաշտ :19B: Առաջարկության ծավալ
Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է Մասնակցի կողմից նախապատվություն տրված կանխիկացվող կամ ապականխիկացվող արտարժույթի ծավալը: Այն ֆիքսված աճուրդի կամ երկկողմանի գործարքի դեպքում միակն է լինում, իսկ տատանվող տիպի աճուրդի համար կարող է առաջարկվել տարբեր միջնորդավճարներով՝ առավելագույնը 10 անգամ:
Առաջարկության ծավալ դաշտում նշվում է 15 նիշից բաղկացած ամբողջ թիվ:

14) Դաշտ :19L: Առաջարկության նվազագույն ծավալ
Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է Մասնակցի կողմից կանխիկացվող կամ ապականխիկացվող արտարժույթի ծավալի **նվազագույն** արժեքը: Դաշտը կիրառելի է միայն **Ըստ ընտրության** աճուրդի դեպքում (**:23:=CHAC**) և կարող է առաջարկվել տարբեր միջնորդավճարներով՝ առավելագույնը 10 անգամ:
Առաջարկության նվազագույն ծավալ դաշտում նշվում է 15 նիշից բաղկացած ամբողջ թիվ:


15) Դաշտ :19H: Առաջարկության առավելագույն ծավալ
Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է Մասնակցի կողմից կանխիկացվող կամ ապականխիկացվող արտարժույթի ծավալի **առավելագույն** արժեքը: Դաշտը կիրառելի է միայն Ըստ ընտրության աճուրդի դեպքում (**:23:=CHAC**) և կարող է առաջարկվել տարբեր միջնորդավճարներով ՝ առավելագույնը 10 անգամ:
Առաջարկության առավելագույն ծավալ դաշտում նշվում է 15 նիշից բաղկացած ամբողջ թիվ:

ՀՏ 308 Արտարժույթի առք ու վաճառքի հայտ

Հաղորդագրության այս տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ կենտրոնական բանկի «Ֆինանսական գործարքների կնքման համակարգ»-ին: Այն ձևավորվում է Արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքի կնքման համար, ինչպես աճուրդի միջոցով, այնպես էլ երկկողմանի փոխգործակցության հիման վրա:

Այս հաղորդագրության մեջ կարող են ներկայացվել աճուրդի մասնակցության համար գործարքների կնքման մեկ կամ մի քանի առաջարկություն (առավելագույնը աճուրդի հայտարարությամբ սահմանված քանակով), երկկողմանի բանակցությունների միջոցով իրականացվող գործառնությունների հայտարարության մասնակցության համար գործարքների կնքման մեկ կամ մի քանի առաջարկություն (առավելագույնը հայտարարությամբ սահմանված քանակով), կամ երկկողմանի՝ Արտարժույթի առք/վաճառք՝ գործարքի մեկ առաջարկություն:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի №	Դաշտի անվանում	Դաշտի ֆորմատ	№
Պարտադիր Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	82	Մասնակցի կոդ	2!a5!n	2
Պ	24D	Գործարքի տեսակ	16x	3
Օ	23T	Աճուրդի լրացուցիչ նույնացուցիչ	4!c	4
Օ	12B	Աճուրդի համար	16x	5
Պ	31	Գործարքի կնքման ամսաթիվ	6!n	6
Պ	30V	Գործարքի կատարման ամսաթիվ	6!n	7
Պ	11A	Հաշվարկային արժույթ	3!a	8
Պ	17Y	Մասնակցի գործարքի հաշվի ցուցիչ	1!a	9
Օ	72N	Այլ նշումներ	150*80x	10
Պարտադիր Ա1 կրկնվող ենթապարբերություն				

---->				
Պ	36T	Արտարժույթի փոխարժեքը կնքվող գործարքով	6d	11
O	19B	Առաջարկության ծավալ	15d	12
O	19L	Առաջարկության նվազագույն ծավալ	15d	13
O	19H	Առաջարկության առավելագույն ծավալ	15d	14
-----|				

Պ – պարտադիր գրանցման դաշտ

O - օժանդակ գրանցման դաշտ

► Հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, հաղորդագրությունը չպետք է գերազանցի 20000 բայթը:

► Հաղորդագրության մեջ Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ:

► Գործարքի ֆիքսված տիպով աճուրդի հայտի, ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի հիման վրա ձևավորված Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ:

► Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունում պարտադիր է կամ (:36:, :19B:) զույգը, կամ (:36:, :19L:, :19H:) եռյակը կամ (:36:, :19B:, :19L:, :19H:) քառյակը:

► Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունում պարտադիր է **(:36:, :19B:)** դաշտերի զույգը, եթե

- **:23:** դաշտը ընդունում է **«CLAC/STAC»** արժեքներից որևէ մեկը, կամ
- բացակայում է **:23:** դաշտը (երկկողմանի գործարքի հայտում)

► Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունում պարտադիր է **(:36:, :19L:, :19H:)** եռյակը կամ (:36:, :19B:, :19L:, :19H:) քառյակը, եթե **:23:** դաշտը ընդունում է «**CHAC»** արժեքը:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ :20: Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս պարտադիր դաշտում նշվում է տվյալ **ՀՏ 308** հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը, որտեղ առաջարկվում է ներառել.

- 1!÷!5 նիշերում, հաղորդագրությունը ուղարկող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը՝ xyz**00**
- 6-րդ և 15-րդ նիշերում « / » (Slash) զատիչ նշանը
- 7!÷!14 նիշերում, հաղորդագրության ուղարկման ամսաթվի ութանիշ թվային արժեքը՝ ddmmyyyy

- վերջին 16-րդ նիշում հաղորդագրության հերթական համարը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով (Բանկային օր = 8 ժամ տևողություն ունեցող աշխատանքային օր):

2) Դաշտ :82: Մասնակցի կոդ

Ձևաչափ 2!a5!n

Այս **պարտադիր** դաշտի առաջին ենթադաշտում 2!a, նշվում է գործարքի մասնակցի գլխամասի **7** նիշանի կոդի առաջին 2 նիշերը, այն է գործունեության երկրի անգլերեն հապավումը (ISO code) AM, իսկ երկրորդ ենթադաշտում 5!n, գլխամասի կոդի մնացած թվային 5 նիշերը: Ընդ որում, 5!n ենթադաշտի 4-րդ և 5-րդ նիշերը լրացվում են **0** թվանշաններով:

Օրինակ՝ **11500**

3) Դաշտ :24D: Գործարքի տեսակ

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա գործարքի տեսակը, որտեղ գրանցվում է միայն հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **FXBUY** –արտարժույթի առք
- **FXSELL** –արտարժույթի վաճառք
- **DFXBUY** –արտարժույթի առքի երկկողմանի գործարք
- **DFXSELL** –արտարժույթի վաճառքի երկկողմանի գործարք
- **FXBUYDUAL** – Երկկողմանի արտարժույթի առք հայտարարությամբ
- **FXSELLDUAL** - Երկկողմանի արտարժույթի վաճառք հայտարարությամբ

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Գործարքի տեսակ» դաշտին համապատասխան:

4) Դաշտ :23T: Աճուրդի լրացուցիչ նույնացուցիչ

Ձևաչափ 4!c

Այս **օժանդակ** դաշտում նշվում է աճուրդի տեսակը, որի համար Մասնակիցը ուղարկում է հայտ: Կարող են լրացվել հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **CLAC** [classic auction]- դասական աճուրդ
- **STAC** [step auction] – քայլային աճուրդ
- **CHAC** [by choise auction]- ըստ ընտրության աճուրդ

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Աճուրդի տեսակ» դաշտին համապատասխան:

► Երբ դաշտում գրանցվում է «**CHAC**» (by choice auction) կոդը, ապա **(:36:, :19L:, :19H:)** դաշտերի եռյակը կամ (:36:, :19B:, :19L:, :19H:) քառյակը պարտադիր է Ա1 կրկնվող պարտադիր ենթապարբերությունում:

Դաշտը բացակայում է երկկողմանի գործարքի դեպքում:

5) Դաշտ :12B: Աճուրդի համար

Ձևաչափ 16x

Այս **օժանդակ** դաշտում նշվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացվող Արտարժույթի առք/վաճառք գործարքների կնքման աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Աճուրդի համար» դաշտին համապատասխան:

Երկկողմանի գործարքի կնքման հայտի համար **:12B:** դաշտը ենթակա չէ լրացման:

6) Դաշտ :31: Գործարքի կնքման ամսաթիվ

Ձևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **գործարքի կնքման** ամսաթիվը ddmmyy ձևաչափով, որը **ոչ** երկկողմանի գործարքի պարագայում փաստացի աճուրդի անցկացման օրվա ամսաթիվն է:

:31: դաշտի արժեքը չի կարող մեծ լինել :30V: դաշտի արժեքից՝ :31: ≤ :30V:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Կնքման ամսաթիվ» դաշտին համապատասխան:

7) Դաշտ :30V: Գործարքի կատարման ամսաթիվ

Ձևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է աճուրդի կամ երկկողմանի գործարքի արդյունքում նախօրոք կնքված **գործարքի՝** արտարժույթի առքի կամ վաճառքի, **կատարման** ամսաթիվը ddmmyy ձևաչափով:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Կատարման ամսաթիվ» դաշտին համապատասխան:

8) Դաշտ :11A: Հաշվարկային արժույթ

Ձևաչափ 3!a

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գնվող կամ վաճառվող, արտարժույթի հետ իրականացվող գործարքի արժույթը, որտեղ կարող է գրանցվել միջազգային ISO ստանդարտին համապատասխանող 3 նիշանի արժույթի կոդը, մասնավորապես

- **USD –** ԱՄՆ դոլար
- **EUR –** ԵՎՐՈ
- և այլն!:

Դաշտը լրացվում է ավտոմատ՝ աճուրդի հայտարարության «Արտարժույթի ISO կոդ» դաշտին համապատասխան:

9) Դաշտ :17Y: Մասնակցի գործարքի հաշվի ցուցիչ

Ձևաչափ **1!a**

Այս **պարտադիր** դաշտում նշվում է, թե ինչ հաշվով է կատարվելու գործարքը՝ **«ԿԲ-ում արտարժութային հաշվով»**, թե **«ոչ ԿԲ-ում արտարժութային հաշվով»**: Մասնավորապես, կարող է գրանցվել հետևյալ կոդերից որևէ մեկը՝

- **Y -** ԿԲ-ում արտարժութային հաշիվ
- **N –** ոչ ԿԲ-ում արտարժութային հաշիվ

:17Y: դաշտը լրացվում է աճուրդի հայտարարության «Արտարժութային հաշվի տիպ» դաշտին համապատասխան (ավտոմատ եղանակով):

Եթե հայտարարությունում ոչինչ լրացված չէ արտարժութային հաշվի հետ կապված, ապա այս դաշտը ավտոմատ պետք է լրացվի Y, և գործարքները պետք է կատարվեն **ԿԲ հաշիվներով:** Այս դեպքում դաշտը հասանելի չէ Մասնակցին այլ բան լրացնելու համար:

Երկկողմանի գործարքի պարագայում, եթե պայմանավորվածությամբ գործարքները պետք է կատարվեն **ոչ ԿԲ-ում** արտարժութային հաշիվներով, ապա Մասնակիցը հնարավորություն ունի լրացնելու **:17Y:** դաշտը:

:17Y: դաշտի արժեքը **Y** լինելու **(:17Y:=Y)** դեպքում, գործարքները կատարվում են **ԿԲ հաշիվներով:**

10) Դաշտ :72N: Այլ նշումներ

Ձևաչափ **150*80x**

Այս օժանդակ դաշտի 150 տողերում, աճուրդի կամ **երկկողմանի** հայտը ուղարկողի կողմից, կարող է գրանցվել, գործարքի կնքման հետ կապված, որևէ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

11) Դաշտ :36T: Արտարժույթի փոխարժեքը կնքվող գործարքով

Ձևաչափ 6d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքվող գործարքի փոխարժեքը՝ գործարքի հիմքում ընկած միավոր արտարժույթի գինը՝ արտահայտված ՀՀ դրամով, որը ֆիքսված աճուրդի կամ երկկողմանի գործարքի դեպքում կիրառվում է 1 անգամ, իսկ տատանվող տիպի աճուրդի համար կարող է առաջարկվել առավելագույնը 10 անգամ:
Գործարքի փոխարժեքը ներկայացվում է տասնորդական ստորակետից առաջ 3 նիշ, ստորակետից հետո՝ 2 նիշ ճշտությամբ:

12) Դաշտ :19B: Առաջարկության ծավալ

Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է Մասնակցի կողմից նախապատվություն տրված գնվող կամ վաճառվող ծավալը: Այն ֆիքսված աճուրդի կամ երկկողմանի գործարքի դեպքում միակն է

լինում, իսկ տատանվող տիպի աճուրդի համար կարող է առաջարկվել տարբեր փոխարժեքներով՝ առավելագույնը 10 անգամ:
Առաջարկության ծավալ դաշտում նշվում է 15 նիշից բաղկացած ամբողջ թիվ:

13) Դաշտ :19L: Առաջարկության նվազագույն ծավալ

Չևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է Մասնակցի կողմից գնվող կամ վաճառվող ծավալի **նվազագույն** արժեքը: Դաշտը կիրառելի է միայն **Ըստ ընտրության** աճուրդի դեպքում (**:23:=CHAC**) և կարող է առաջարկվել տարբեր փոխարժեքներով՝ առավելագույնը 10 անգամ:
Առաջարկության նվազագույն ծավալ դաշտում նշվում է 15 նիշից բաղկացած ամբողջ թիվ:

14) Դաշտ :19H: Առաջարկության առավելագույն ծավալ

Չևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է Մասնակցի կողմից գնվող կամ վաճառվող ծավալի **առավելագույն** արժեքը: Դաշտը կիրառելի է միայն Ըստ ընտրության աճուրդի դեպքում (**:23:=CHAC**) և կարող է առաջարկվել տարբեր փոխարժեքներով՝ առավելագույնը 10 անգամ:
Առաջարկության առվելագույն ծավալ դաշտում նշվում է 15 նիշից բաղկացած ամբողջ թիվ:

ՀՏ 309 Արժութային սվոփ գործարքի հայտ

Հաղորդագրության այս տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ ԿԲ-ի «Ֆինանսական գործարքների կնքման համակարգ»-ին: Այն ձևավորվում է Արտարժույթի տրամադրման սվոփ կամ Արտարժույթի ներգրավման սվոփ գործարքների կնքման համար, ինչպես աճուրդի միջոցով, այնպես էլ երկկողմանի փոխգործակցության հիման վրա:

Այս հաղորդագրության մեջ կարող են ներկայացվել աճուրդի մասնակցության համար գործարքների կնքման մեկ կամ մի քանի առաջարկություն (առավելագույնը աճուրդի հայտարարությամբ սահմանված քանակով) կամ երկկողմանի՝ Արտարժույթի տրամադրման սվոփ/ներգրավման սվոփ՝ գործարքի մեկ առաջարկություն:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի №	Դաշտի անվանում	Դաշտի ֆորմատ	№
Պարտադիր Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	82	Մասնակցի կոդ	2!a5!n	2
Պ	24D	Գործարքի տեսակ	16x	3
Ο	12B	Աճուրդի համար	16x	4
Պ	31	Գործարքի կնքման ամսաթիվ	6!n	5
Պ	30V	Գործարքի կատարման ամսաթիվ	6!n	6
Պ	31A	Մարման ամսաթիվ	6!n	7
Պ	37M	Գործարքի փոխարժեք	12d	8
Պ	11A	Հաշվարկային արժույթ	3!a	9
Ο	72N	Այլ նշումներ	150*80x	10
Պարտադիր Ա1 կրկնվող ենթապարբերություն ---->				

Պ	38	Սվոփ տոկոսադրույք	9d	11
Պ	19B	Առաջարկության ծավալ	3!a15d	12
-----|				

Պ – պարտադիր գրանցման դաշտ

Օ - օժանդակ գրանցման դաշտ

- Հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, հաղորդագրությունը չպետք է գերազանցի 20000 բայթը:

- Հաղորդագրության մեջ Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ:

- Գործարքի ֆիքսված տիպով աճուրդի հայտի, ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի հիման վրա ձևավորված Պարտադիր A1 կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ :20: Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս պարտադիր դաշտում նշվում է տվյալ **ՀՏ 309** հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը, որտեղ առաջարկվում է ներառել.

- 1!÷!5 նիշերում, հաղորդագրությունը ուղարկող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը՝ xyz**00**
- 6-րդ և 15-րդ նիշերում « / » (Slash) զատիչ նշանը
- 7!÷!14 նիշերում, հաղորդագրության ուղարկման ամսաթվի ութանիշ թվային արժեքը՝ ddmmyyyy
- վերջին 16-րդ նիշում հաղորդագրության հերթական համարը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով (Բանկային օր = 8 ժամ տևողություն ունեցող աշխատանքային օր):

2) Դաշտ :82: Մասնակցի կոդ

Ձևաչափ 2!a5!n

Այս **պարտադիր** դաշտի առաջին ենթադաշտում 2!a, նշվում են գործարքի մասնակցի գլխամասի **7** նիշանի կոդի առաջին 2 նիշերը, այն է գործունեության երկրի անգլերեն հապավումը (ISO code) AM, իսկ երկրորդ ենթադաշտում 5!n, գլխամասի կոդի մնացած թվային 5 նիշերը: Ընդ որում, 5!n ենթադաշտի 4-րդ և 5-րդ նիշերը լրացվում են **0** թվանշաններով:

Օրինակ՝ **11500**

3) Դաշտ :24D: Գործարքի տեսակ

Ձևաչափ 16 x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա գործարքի տեսակը, որտեղ գրանցվում է միայն հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **SWPIN** –արտարժույթի տրամադրման սվոփ (աճուրդի դեպքում)
- **SWPOUT** –արտարժույթի ներգրավման սվոփ (աճուրդի դեպքում)
- **DSWPIN** –արտարժույթի տրամադրման սվոփ երկկողմանի գործարք
- **DSWPOUT** –արտարժույթի ներգրավման սվոփ երկկողմանի գործարք
- **SWPINDUAL** –արտարժույթի տրամադրման սվոփ երկկողմանի հայտարարությամբ
- **SWPOUTDUAL** –արտարժույթի ներգրավման սվոփ երկկողմանի հայտարարությամբ

4) Դաշտ :12B: Աճուրդի համար

Ձևաչափ 16x

Այս **օժանդակ** դաշտում նշվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացվող Արտարժույթի տրամադրման/ներգրավման սվոփ գործարքների կնքման աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

Երկկողմանի գործարքի կնքման հայտի համար **:12B:** դաշտը ենթակա չէ լրացման:

5) Դաշտ :31: Գործարքի կնքման ամսաթիվ

Ձևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **գործարքի կնքման** ամսաթիվը ddmmyy ձևաչափով, որը **ոչ** երկկողմանի գործարքի պարագայում փաստացի աճուրդի անցկացման օրվա ամսաթիվն է:
:31: դաշտի արժեքը չի կարող մեծ լինել :30V: դաշտի արժեքից՝ :31: ≤ :30V:

6) Դաշտ :30V: Գործարքի կատարման ամսաթիվ

Ձևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է աճուրդի կամ երկկողմանի գործարքի արդյունքում նախօրոք կնքված **գործարքի՝** արտարժույթի տրամադրման կամ ներգրավման սվոփ, **կատարման** ամսաթիվը ddmmyy ձևաչափով:

7) Դաշտ :31A: Մարման ամսաթիվ

Ձևաչափ 6!n

Այս **օժանդակ** դաշտում նշվում է (կնքման ենթակա) արտարժույթի տրամադրման/ներգրավման սվոփ գործարքի մարման ամսաթիվը **ddmmyy** ձևաչափով:

8) Դաշտ :37M: Գործարքի փոխարժեք

Ձևաչափ 12d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործարքի սփոթ փոխարժեքը:

9) Դաշտ :11A: Հաշվարկային արժույթ

Ձևաչափ 3!a

Այս **պարտադիր** դաշտում նշվում է արտարժույթի հետ իրականացվող գործարքի արժույթը, որտեղ կարող է գրանցվել միջազգային ISO ստանդարտին համապատասխանող 3 նիշանի արժույթի կոդը, մասնավորապես

- **USD –** ԱՄՆ դոլար
- **EUR –** ԵՎՐՈ
- և այլն!:

10) Դաշտ :72N: **Այլ նշումներ**

Ձևաչափ **150*80x**

Այս օժանդակ դաշտի 150 տողերում, աճուրդի կամ **երկկողմանի** հայտը ուղարկողի կողմից, կարող է գրանցվել, գործարքի կնքման հետ կապված, որևէ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Ա1 կրկնվող ենթապարբերություն

---->

11) Դաշտ :38: Գործարքի տոկոսադրույք

Ձևաչափ **9d**

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքվող գործարքի սվոփ տոկոսադրույքը, որը ֆիքսված աճուրդի կամ երկկողմանի գործարքի դեպքում կիրառվում է 1 անգամ, իսկ տատանվող տիպի աճուրդի համար կարող է առաջարկվել առավելագույնը 10 անգամ:

12) Դաշտ :19B: Առաջարկության ծավալ

Ձևաչափ 3!a/15d


Այս **պարտադիր** դաշտում նշվում է Մասնակցի կողմից նախապատվություն տրված ծավալը: Այն ֆիքսված աճուրդի կամ երկկողմանի գործարքի դեպքում միակն է լինում, իսկ տատանվող տիպի աճուրդի համար կարող է առաջարկվել տարբեր սվոփ տոկոսադրույքներով՝ առավելագույնը 10 անգամ: Արժույթ ենթադաշտում՝ 3!a, նշվում է արժույթի կոդը, իսկ 15d ենթադաշտում՝ 15 նիշից բաղկացած ամբողջ թիվ:

-----|

ՀՏ 317 Արտարժույթի կանխիկացում/ապականխիկացում գործարքի հայտի պատասխան

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ ԿԲ-ի «Ֆինանսական գործարքների կնքման համակարգ»-ից Արտարժույթի կանխիկացում/ապականխիկացում գործարքի մասնակցին, ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ **307** հայտի: Հաղորդագրությունը կիրառվում է Գործարքի մասնակցին՝ գործարքների **կնքման և (կամ) մերժման** արդյունքների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

Դիտարկվող հաղորդագրության մեջ ներկայացվում է նշված հայտում առկա՝ աճուրդի միջոցով գործարքների կնքման փուլում, բավարարված, մասնակիորեն բավարարված և չբավարարված առաջարկությունները, ինչպես նաև երկկողմանի փոխգործակցության հիման վրա ձևավորված միակ առաջարկության բավարարման կամ մերժման պատասխանը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգավիճակ	Դաշտի №	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Օ	12B	Աճուրդի համար	16x	3
Պ	24D	Գործարքի տեսակ	16x	4
Ա1 կրկնվող ենթապարբերություն --->				
Պ	32B	Արժույթի կոդ և գումար	3!a15d	5
Պ	34C	Միջնորդավճար	9d	6
Պ	33B	Կարգադրության արժույթի կոդ և գումար	3!a15d	7
Պ	23A	Գործարքի կնքման նույնացուցիչ	8x	8
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	9
-----|				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

գրանցման դաշտ

- Հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, հաղորդագրությունը չպետք է գերազանցի 20000 բայթը:

- Երկկողմանի գործարքի կնքման պատասխան հաղորդագրության մեջ օժանդակ **:12B:** դաշտը չի գրանցվում (բացակայում է)
- Հաղորդագրության մեջ «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ:
- Գործարքի միջնորդավճարի հաստատագրված (fixed) արժեքով աճուրդի հայտի**,** ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի**,** համար ձևավորված «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ :20: Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ **ՀՏ 317** հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ :21: Գործառնության հղման համար

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաղորդագրության տեսակի գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որը հիմք է հանդիսանում տվյալ ՀՏ 317 հաղորդագրության ձևավորման համար:

Տվյալ դեպքում նշվում է ՀՏ307 հաղորդագրության :20: դաշտի արժեքը:

3) Դաշտ :12B: Աճուրդի համար

Ձևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում կարող է նշվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացված ֆինանսական գործարքների կնքման համապատասխան աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

4) Դաշտ :24D: Գործարքի տեսակ

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **կնքված** կամ մերժված **գործարքի տեսակը**, որտեղ գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- **CSHIN** –արտարժույթի կանխիկացում
- **CSHOUT** –արտարժույթի ապականխիկացում
- **DCSHIN** –արտարժույթի կանխիկացման երկկողմանի գործարք
- **DCSHOUT** –արտարժույթի ապականխիկացման երկկողմանի գործարք

5) Դաշտ :32B: Արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Կանխիկացված կամ Ապականխիկացված արտարժույթի կոդը և գումարը, որը գործարքի կնքման արդյունքում բավարարվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն:

6) Դաշտ :34C: Միջնորդավճար

Ձևաչափ 9d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Գործարքի տոկոսադրույքը:

Ֆիքսված տիպով աճուրդի և Երկկողմանի գործարքի դեպքում կողմերի միջև համաձայնեցված տոկոսադրույքը, իսկ տատանվող տիպով աճուրդի դեպքում բավարարված միջնորդավճարը:

Գործարքի միջնորդավճարը ներկայացվում է տասնորդական ստորակետից առաջ 2 նիշ, ստորակետից հետո՝ 2 նիշ ճշտությամբ:

7) Դաշտ :33B: Կարգադրության արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Միջնորդավճարին համապատասխան դրամային գումարը, որը պետք է վճարի Միջնորդավճար վճարող կողմը:

8) Դաշտ :23A: Գործարքի կնքման նույնացուցիչ

Ձևաչափ 8x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր առաջարկության դիտարկման արդյունքի նույնացուցիչը, ըստ այդմ տվյալ դաշտում գրանցվում է միայն հետևյալ կոդերից մեկը՝

- **SAT** – բավարարված (Satisfied)
- **STP** – մասնակիորեն բավարարված (Satisfied Partly)
- **NST** – չբավարարված (Not Satisfied)։

9) Դաշտ :23: Լրացուցիչ նույնացուցիչ


Ձևաչափ 16x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր բավարարված (մասնակիորեն բավարարված) կամ չբավարարված առաջարկությա**ն**, համապատասխան ավտոմատացված համակարգի կողմից, տրված բացառիկ համարը:

ՀՏ 318 Արտարժույթի առք/վաճառք գործարքի հայտի պատասխան

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ ԿԲ-ի «Ֆինանսական գործարքների կնքման համակարգ»-ից Արտարժույթի առք/վաճառք գործարքի մասնակցին, ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ **308** հայտի: Հաղորդագրությունը կիրառվում է Գործարքի մասնակցին՝ գործարքների **կնքման և (կամ) մերժման** արդյունքների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

Դիտարկվող հաղորդագրության մեջ ներկայացվում է նշված հայտում առկա՝ աճուրդի միջոցով գործարքների կնքման փուլում, բավարարված, մասնակիորեն բավարարված և չբավարարված առաջարկությունները, ինչպես նաև երկկողմանի փոխգործակցության հիման վրա ձևավորված միակ առաջարկության բավարարման կամ մերժման պատասխանը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի №	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Ο	12B	Աճուրդի համար	16x	3
Պ	24D	Գործարքի տեսակ	16x	4
Ա1 կրկնվող ենթապարբերություն --->				
Պ	32B	Արժույթ ի կող և գումար	3!a15d	5
Պ	36T	Արտարժույթի փոխարժեքը կնքվող գործարքով	6d	6
Ο	36S	Բավարարման փոխարժեք	6d	7
Պ	33B	Կարգադրության արժույթի կոդ և գումար	3!a15d	8
Պ	23A	Գործարքի կնքման նույնացուցիչ	8x	9
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	10
-----|				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

գրանցման դաշտ

- Հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, հաղորդագրությունը չպետք է գերազանցի 20000 բայթը:

- Երկկողմանի գործարքի կնքման պատասխան հաղորդագրության մեջ օժանդակ **:12B:** դաշտը չի գրանցվում (բացակայում է)
- Հաղորդագրության մեջ «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ
- Գործարքի տարեկան տոկոսադրույքի հաստատագրված (fixed) արժեքով աճուրդի հայտի**,** ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի**,** համար ձևավորված «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ :20: Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ **ՀՏ 318** հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ :21: Գործառնության հղման համար

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաղորդագրության տեսակի գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որը հիմք է հանդիսանում տվյալ ՀՏ 318 հաղորդագրության ձևավորման համար:

Տվյալ դեպքում նշվում է ՀՏ308 հաղորդագրության :20: դաշտի արժեքը:

3) Դաշտ :12B: Աճուրդի համար

Ձևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում կարող է նշվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացված ֆինանսական գործարքների կնքման համապատասխան աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

4) Դաշտ :24D: Գործարքի տեսակ

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **կնքված** կամ մերժված **գործարքի տեսակը**, որտեղ գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- **FXBUY** –արտարժույթի առք
- **FXSELL** –արտարժույթի վաճառք
- **DFXBUY** –արտարժույթի առքի երկկողմանի գործարք
- **DFXSELL** –արտարժույթի վաճառքի երկկողմանի գործարք.

- **FXBUYDUAL –** Երկկողմանի արտարժույթի առք հայտարարությամբ
- **FXSELLDUAL -** Երկկողմանի արտարժույթի վաճառք հայտարարությամբ

5) Դաշտ :32B: Արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Գնված կամ Վաճառված արտարժույթի կոդը և գումարը, որը գործարքի կնքման արդյունքում բավարարվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն:

6) Դաշտ :36T: Արտարժույթի փոխարժեքը կնքվող գործարքով

Ձևաչափ 6d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքվող Գործարքի հիմքում ընկած միավոր արտարժույթի գինը՝ արտահայտված ՀՀ դրամով:

Գործարքի փոխարժեքը ներկայացվում է տասնորդական ստորակետից առաջ 3 նիշ, ստորակետից հետո՝ 2 նիշ ճշտությամբ:

7) **Դաշտ :36S: Բավարարման փոխարժեք**

Ձևաչափ 6d

Այս **օժանդակ** դաշտում նշվում է Գործարքի բավարարված փոխարժեքը՝ միավոր արտարժույթի գինը՝ արտահայտված ՀՀ դրամով:

Գործարքի բավարարման փոխարժեքը ներկայացվում է տասնորդական ստորակետից առաջ 3 նիշ, ստորակետից հետո՝ 2 նիշ ճշտությամբ:
Դաշտը պարտադիր կիրառելի է Արտարժույթի առք և վաճառք գործարքի դեպքում:

8) Դաշտ :33B: Կարգադրության արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Արտարժույթի առք գործարքի դեպքում գործարքի դրամային համարժեքը՝ գնված արտարժույթին համապատասխան ՀՀ դրամի կոդը՝ AMD և գումարը (վճարվող գումարը) , իսկ Արտարժույթի վաճառք գործարքի դեպքում՝ գործարքի դրամային համարժեքը՝ վաճառված արտարժույթին համապատասխան ՀՀ դրամի կոդը՝ AMD և գումարը (ստացվող գումարը):

9) Դաշտ :23A: Գործարքի կնքման նույնացուցիչ

Ձևաչափ 8x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր առաջարկության դիտարկման արդյունքի նույնացուցիչը, ըստ այդմ տվյալ դաշտում գրանցվում է միայն հետևյալ կոդերից մեկը՝

- **SAT** – բավարարված (Satisfied)

- **STP** – մասնակիորեն բավարարված (Satisfied Partly)
- **NST** – չբավարարված (Not Satisfied)։

10) Դաշտ :23: Լրացուցիչ նույնացուցիչ

Չևաչափ 16x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր բավարարված (մասնակիորեն բավարարված) կամ չբավարարված առաջարկությանը համապատասխան՝ ավտոմատացված համակարգի կողմից տրված բացառիկ համարը:

ՀՏ 319 Արտարժույթի տրամադրման/ներգրավման սվոփ գործարքի հայտի պատասխան

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ ԿԲ-ի «Ֆինանսական գործարքների կնքման համակարգ»-ից Արտարժույթի տրամադրման/ներգրավման սվոփ գործարքի մասնակցին, ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ **309** հայտի:

Հաղորդագրությունը կիրառվում է Գործարքի մասնակցին՝ գործարքների **կնքման և (կամ) մերժման** արդյունքների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

Դիտարկվող հաղորդագրության մեջ ներկայացվում է նշված հայտում առկա՝ աճուրդի միջոցով գործարքների կնքման փուլում, բավարարված, մասնակիորեն բավարարված և չբավարարված առաջարկությունները, ինչպես նաև երկկողմանի փոխգործակցության հիման վրա ձևավորված միակ առաջարկության բավարարման կամ մերժման պատասխանը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգավիճակ	Դաշտի №	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Օ	12B	Աճուրդի համար	16x	3
Պ	22H	Գործարքի նույնացուցիչ	6x	4
Պ	37M	Գործարքի փոխարժեք	12d	5
Ա1 կրկնվող ենթապարբերություն ---->				
Պ	32B	Արժույթի կոդ և գումար	3!a15d	6
Պ	38	Գործարքի տոկոսադրույք	9d	7
Պ	33B	Կարգադրության արժույթի կոդ և գումար	3!a15d	8
Պ	34D	Գործարքի տոկոսադրույքին համապատասխան գումար	4!c[N]3!a15d	9
Պ	23A	Գործարքի կնքման նույնացուցիչ	8x	10
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	11
-----|				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

գրանցման դաշտ

► Հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, հաղորդագրությունը չպետք է գերազանցի 20000 բայթը:

- Երկկողմանի գործարքի կնքման պատասխան հաղորդագրության մեջ օժանդակ **:12B:** դաշտը չի գրանցվում (բացակայում է)
- Հաղորդագրության մեջ «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ,
- Գործարքի տարեկան տոկոսադրույքի հաստատագրված (fixed) արժեքով աճուրդի հայտի, ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի, համար ձևավորված «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ :20: Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ **ՀՏ 319** հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ :21: Գործառնության հղման համար

Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաղորդագրության տեսակի գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որը հիմք է հանդիսանում տվյալ ՀՏ 319 հաղորդագրության ձևավորման համար:

3) Դաշտ :12B: Աճուրդի համար

Ձևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում կարող է նշվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացված ֆինանսական գործարքների կնքման համապատասխան աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

4) Դաշտ :22H: Գործարքի նույնացուցիչ

Ձևաչափ **6x**

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **կնքված** կամ մերժված **գործարքի տեսակը**, որտեղ գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- **SWPIN** – Արտարժույթի տրամադրման սվոփ
- **SWPOUT**– Արտարժույթի ներգրավման սվոփ

5) Դաշտ :37M: Գործարքի փոխարժեք

Ձևաչափ 12d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Գործարքի հիմքում ընկած միավոր արտարժույթի գինը՝ արտահայտված ՀՀ դրամով, ընթացիկ օրվա դրությամբ:

A1 կրկնվող ենթապարբերություն
---->

6) Դաշտ :32B: Արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Տրամադրված կամ Ներգրավված արտարժույթի կոդը և գումարը, որը գործարքի կնքման արդյունքում բավարարվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն:

7) Դաշտ :38: Գործարքի տոկոսադրույք

Ձևաչափ 9d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Գործարքի տոկոսադրույքը, որը հիմք է հանդիսացել Սվոփ տոկոսագումարին համարժեք դրամային գումարի հաշվարկման համար:

8) Դաշտ :33B: Կարգադրության արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է Արտարժույթի տրամադրման սվոփ գործարքի դեպքում գործարքի դրամային համարժեքը՝ ներգրավված արտարժույթին համապատասխան՝ ՀՀ դրամի կոդը՝ AMD և գումարը (վճարվող գումարը) , իսկ Արտարժույթի ներգրավման սվոփ գործարքի դեպքում՝ գործարքի դրամային համարժեքը՝ տրամադրված արտարժույթին համապատասխան ՀՀ դրամի կոդը՝ AMD և գումարը (ստացվող գումարը):

9) Դաշտ :34D: Գործարքի տոկոսադրույքին համապատասխան գումար

Ձևաչափ 4!c[N]3!a15d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է Սվոփ տոկոսադրույքին համապատասխանող՝ Բանկի կամ Կենտրոնական բանկի կողմից վճարվող դրամային գումարը:

10) Դաշտ :23A: Գործարքի կնքման նույնացուցիչ

Ձևաչափ 8x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր առաջարկության դիտարկման արդյունքի նույնացուցիչը, ըստ այդմ տվյալ դաշտում գրանցվում է միայն հետևյալ կոդերից մեկը՝

- **SAT** – բավարարված (Satisfied)
- **STP** – մասնակիորեն բավարարված (Satisfied Partly)
- **NST** – չբավարարված (Not Satisfied)։

11) Դաշտ :23: Լրացուցիչ նույնացուցիչ

Ձևաչափ 16x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր բավարարված (մասնակիորեն բավարարված) կամ չբավարարված առաջարկությանը, համապատասխան ավտոմատացված համակարգի կողմից, տրված բացառիկ համարը:

-----┤

5.4 Արժեթղթերով գործառնությունների իրականացման հաղորդագրություններ

ՀՏ 502 ՀՀ պետական արժեթղթի առք ու վաճառքի հայտ

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի առք ու վաճառքի ավտոմատացված համակարգ»-ին: Այն ձևավորվում է (Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի շրջանակներում) գանձապետական պարտատոմսի առքի կամ վաճառքի գործարքի կնքման համար, ինչպես աճուրդի միջոցով այնպես էլ երկկողմանի փոխգործակցության հիման վրա:

Այս հաղորդագրության մեջ կարող են ներկայացվել աճուրդի մասնակցության համար գործարքների կնքման մի քանի առաջարկություններ **կամ** երկկողմանի առք ու վաճառքի գործարքի կնքման մեկ առաջարկություն:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	82	Մասնակցի կոդ	2!a5!n	2
Պ	24B	Գործարքի նույնացուցիչ	4x	3
Օ	12B	Աճուրդի համար	16x	4
Օ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	5
Օ	31	Գործարքի կնքման ամսաթիվ	6!n	6
Օ	30V	Վճարման ամսաթիվ	6!n	7
Ա1 կրկնվող ենթապարբերություն --->				
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	8
Պ	37A	Եկամտաբերություն	9d	9
-----|				
Օ	72N	Այլ նշումներ	150*80x	10

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

գրանցման դաշտ

- Հաղորդագրության մեջ :12B: դաշտը լրացնելու պարագայում :35B:, :31:, :30V: և :72N: դաշտերը ենթակա չեն լրացման, այսինքն :12B: դաշտի արժեքը անհամատեղելի է նշված դաշտերի արժեքների հետ և հակառակը
- :31: դաշտի արժեքը չի կարող մեծ լինել :30V: դաշտի արժեքից՝ :31: ≤ :30V:
- Հաղորդագրության մեջ «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ
- Արժեթղթի տարեկան եկամտաբերության հաստատագրված (fixed) տոկոսադրույքով աճուրդի հայտի, ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի, համար ձևավորված «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ
- :35C: դաշտի արժեքը պետք է լինի դրական ամբողջ թիվ՝ 15d > 0
- :37A: դաշտի արժեքը չի կարող լինել բացասական թիվ՝ 9d ≥ 0

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ ՀՏ 502 հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը, որտեղ առաջարկվում է ներառել.

- 1→5 նիշերում, հաղորդագրությունը ուղարկող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը՝ xyz**00**
- 6-րդ և 15-րդ նիշերում « / » (Slash) զատիչ նշանը
- 7→14 նիշերում, հաղորդագրության ուղարկման ամսաթվի ութանիշ թվային արժեքը՝ DDMMYYYY
- վերջին 16-րդ նիշում հաղորդագրության հերթական համարը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով (Բանկային օր = **8** ժամ տևողություն ունեցող աշխատանքային օր)։

2) Դաշտ **:82:** Մասնակցի կոդ
   Ձևաչափ 2!a5!n

Այս **պարտադիր** դաշտի առաջին ենթադաշտում՝ 2!a, նշվում է պետական արժեթղթի առքի կամ վաճառքի գործարքը նախաձեռնողի գլխամասի **7** նիշանի կոդի առաջին **2** նիշերը, այն է գործունեության երկրի անգլերեն հապավումը (ISO code)՝ **AM**, իսկ երկրորդ ենթադաշտում՝ 5!n, գլխամասի կոդի մնացած **5** նիշերը:

3) Դաշտ **:24B:** Գործարքի նույնացուցիչ
   Ձևաչափ 4x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա գործարքի տեսակը, որտեղ գրանցվում է միայն հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **BUY** – Աճուրդով պետական պարտատոմսի առք
- **SELL** – Աճուրդով պետական պարտատոմսի վաճառք
- **DBUY** – Պետական պարտատոմսի երկկողմանի առք (Dual Buy)
- **DSEL** – Պետական պարտատոմսի երկկողմանի վաճառք (Dual Sell)։

4) Դաշտ **:12B:** Աճուրդի համար
Չևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում կարող է նշվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացվող պետական արժեթղթի առք ու վաճառքի գործարքների կնքման աճուրդի հայտարարության բացառիկ համարը:

5) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Չևաչափ [4!c1!e][2!c]10!c

Այս օժանդակ դաշտում նշվում է, **երկկողմանի** գործարքի գնվող կամ վաճառվող, գանձապետական պարտատոմսի **պետական գրանցման** (թողարկման) **համարը**:

6) Դաշտ **:31:** Գործարքի կնքման ամսաթիվ
Չևաչափ 6!n

Այս օժանդակ դաշտում նշվում է արժեթղթի առքի կամ վաճառքի **երկկողմանի** գործարքի կնքման ամսաթիվը DDMMYY տեսքով:

7) Դաշտ **:30V:** Վճարման ամսաթիվ
Չևաչափ 6!n

Այս օժանդակ դաշտում նշվում է արժեթղթի առքի կամ վաճառքի (կնքման ենթակա) **երկկողմանի** գործարքի **կատարման** ամսաթիվը DDMMYY տեսքով:

8) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
Չևաչափ 15d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա յուրաքանչյուր գործարքի առաջարկության ծավալը՝ արժեթղթի **անվանական արժեքը**: Այն գործարքի մասնակցի կողմից **կամ** ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոխանցման ենթակա արժեթղթի որոշակի ծավալն է՝ տասնորդական ստորակետից հետո **0** նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի տվյալ պարտատոմսի ձեռք բերման **քայլի** արժեքին:

9) Դաշտ **:37A:** Եկամտաբերություն
Չևաչափ 9d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա **գործարքի տոկոսադրույքը**, այն է գնվող (ստացվող) կամ վաճառվող (առաքվող) պետական արժեթղթի տարեկան եկամտաբերության պահանջվող տոկոսային արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **4** նիշի ճշտությամբ (0,0001):


10) Դաշտ **:72N:** Այլ նշումներ
Չևաչափ 150*80x

Այս օժանդակ դաշտի 150 տողերում, **երկկողմանի** հայտը ուղարկողի կողմից, կարող է գրանցվել, գործարքի կնքման հետ կապված, որևէ այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

ՀՏ 503 ՀՀ պետական արժեթղթի տեղաբաշխման աճուրդի հայտ

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկայի մասնակիցը Պահառուին՝ Կենտրոնական բանկին, պետական պարտատոմսի տեղաբաշխման աճուրդին մասնակցելու նպատակով:

Դիտարկվող հաղորդագրությունում նշվում են մասնակցի կողմից ներկայացվող սեփական կամ ներդրողների առաջարկությունները (առանձին հաղորդագրությունների միջոցով):



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	2
Պ	28	Հայտի համար	5n[/3n]	3
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	4
Բ կրկնվող պարբերություն ---->				
Պ	35A	Արժեթղթի ծավալ	3!a15d	5
Օ	37	Առաջարկվող գին	15d	6
Օ	37A	Եկամտաբերություն	9d	7
-----|				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- **:37A:** դաշտը պարտադիր պետք է գրանցվի արժեկտրոնային արժեթղթերի տեղաբաշխման աճուրդի հայտի լրացման ժամանակ և այն չի կարող ունենալ բացասական արժեք՝ 9d ≥ 0
- Հաղորդագրության մեջ առաջարկությունները պետք է դասակարգվեն ըստ եկամտաբերության աճման կարգի
- Ոչ մրցակցային առաջարկության առկայության դեպքում այն պետք է լրացվի մրցակցային առաջարկություններից հետո (վերջին պարբերությամբ): Ոչ մրցակցային առաջարկության ներկայացման դեպքում **:37:** և **:37A:** դաշտերը չեն լրացվում
- Կրկնվող Բ պարբերությունը մեկ հաղորդագրության մեջ կարող է հանդես գալ առավելագույնը 60 անգամ:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չևաչափ 16x
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
   Չևաչափ 16x
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է հայտի տեսակը՝
- **INV** – առաջարկություններ ներդրողների անունից
- **OWN** – սեփական առաջարկություններ

3) Դաշտ **:28:** Հայտի համար
   Չևաչափ 5n[/3n]
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է հայտի հերթական համարը և հաղորդագրության համարը տվյալ համարի հայտում (եթե հայտը բաղկացած է մի քանի հաղորդագրություններից):

4) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
   Չևաչափ [4!c1!e][2!c]10!c
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է ձեռք բերվող արժեթղթի պետական գրանցման համարը:

5) Դաշտ **:35A:** Արժեթղթի ծավալ
   Չևաչափ 3!a15d
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է առաջարկության տեսակը և դրան համապատասխան արժեթղթի ձեռք բերվող ծավալը (15d)՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ: Առաջին 3!a ենթադաշտում ենթակա է լրացման հետևյալ կոդերից մեկը՝
- **BCM** (Bid Competitive) – մրցակցային առաջարկություն
- **BNC** (Bid Noncompetitive) – ոչ մրցակցային առաջարկություն

6) Դաշտ **:37:** Առաջարկվող գին
   Չևաչափ 15d
   Այս օժանդակ դաշտում նշվում է (միայն GT տեսակի արժեթղթերի համար) :35A: դաշտում գրանցված ծավալի դիմաց վճարվող գումարը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:


7) Դաշտ **:37A:** Եկամտաբերություն
   Չևաչափ 9d

Այս օժանդակ դաշտում նշվում է :35A: դաշտում գրանցված արժեթղթի ծավալի դիմաց ակնկալվող եկամտաբերության տոկոսային արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ (0,0001):

ՀՏ 504 ՀՀ պետական արժեթղթի հետգնման գործարքի հայտ

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկայի Գործակալը (միջին և երկարաժամկետ պարտատոմսերի գծով) **կամ** Դիլերը (միայն կարճաժամկետ պարտատոմսերի գծով) Պահառուին՝ Կենտրոնական բանկին, ՀՀ պետական պարտատոմսի հետգնման գործարքի (առանց աճուրդի) սահմանված ընթացակարգին մասնակցելու նպատակով:

Դիտարկվող ֆորմատի շրջանակներում յուրաքանչյուր Գործակալ կամ Դիլեր կարող է ներկայացնել 2 հայտ, առանձին հաղորդագրությունների միջոցով, սեփական և համապատասխան Ներդրողների արժեթղթերը վերադարձնելու համար:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	2
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	3
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	4

Պ – պարտադիր գրանցման դաշտ

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հայտի տեսակը՝

- **INV** – առաջարկություն ներդրողների անունից
- **OWN** – սեփական առաջարկություն

Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հետգնվող արժեթղթի պետական գրանցման համարը:


Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հետգնման ենթակա արժեթղթի ներկայացվող ծավալի անվանական արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի տվյալ պարտատոմսի ձեռք բերման առաջարկության քայլի արժեքին:

ՀՏ 505 Ռեպո, միջօրյա ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի հայտ

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է ավտոմատացված համակարգի մասնակիցը ՀՀ կենտրոնական բանկին ռեպո կամ հակադարձ ռեպո գործարք կնքելու նպատակով:

Դիտարկվող ֆորմատի շրջանակներում գործարքի յուրաքանչյուր հայտը կարող է պարունակել մի քանի առաջարկություն, որոնք իրարից **պետք է տարանջատվեն** գործարքի տոկոսադրույքի տարբեր արժեքներով:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Օ	12B	Ածուրդի համար	16x	2
Պ	24B	Գործարքի նույնացուցիչ	4x	3
Օ	14	Հայտի առաջնահերթություն	2n	4
Բ կրկնվող պարբերություն ---->				
Պ	37C	Գումար	15d	5
Պ	38	Տոկոսադրույք	9d	6
-----|				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- Եթե հաղորդագրության **:24B:** = **INTD**, ապա **:12B:** դաշտը չի գրանցվում (բացակայում է), **:14:** = **0**, **:38:** = **0.0** և կրկնվող «Բ» պարբերության քանակը = 1
- Հաղորդագրության մեջ կրկնվող «Բ» պարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը 10 անգամ
- **:37C:** դաշտի արժեքը **չի** կարող լինել 0՝ 15d > 0
- **:38:** դաշտի արժեքը **չի** կարող լինել բացասական մեծություն՝ 9d ≥ 0:

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում, հայտը ուղարկողի կողմից, նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ **:12B:** Աճուրդի համար
Չևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում կարող է նշվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացվող ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների աճուրդի անցկացման հայտարարության բացառիկ համարը:

Դաշտ **:24B:** Գործարքի նույնացուցիչ
Չևաչափ 4x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է իրականացման ենթակա գործարքի նույնացուցիչը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության համար: Դիտարկվող դաշտում գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- **REP –** ռեպո գործարք
- **REV –** հակադարձ ռեպո գործարք
- **INTD –** միջօրյա ռեպո գործարք

Դաշտ **:14:** Հայտի առաջնահերթություն
Չևաչափ 2n

Այս օժանդակ դաշտում (անհրաժեշտության դեպքում) կարող է գրանցվել հայտի **կատարման առաջնահերթության** արժեքը՝ **0** → **99**, որը ընդհանուր է հայտում նեռարված բոլոր առաջարկությունների համար:

Եթե հայտին առաջնահերթություն չի տրվել, այսինքն առաքված հայտում բացակայում է :14: դաշտը, ապա համակարգի կողմից հայտին (այն ընդունելուց հետո) ավտոմատ կերպով տրվում է առաջնահերթության ամենացածր արժեքը՝ **99**, իսկ կատարման առաջնահերթության ամենաբարձր **0** արժեքը ավտոմատ կերպով տրվում է միայն միջօրյա ռեպո գործարքի հայտին:

Դաշտ **:37C:** Գումար
Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է համակարգի մասնակցի կողմից հայտում ներկայացված յուրաքանչյուր առաջարկության գումարը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ դրական թիվ:


Դաշտ **:38:** Տոկոսադրույք
Չևաչափ 9d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա **գործարքի տոկոսադրույքը**, այն է հայտը ուղարկողի կողմից ստացվող **կամ** փոխանցվող դրամական գումարի դիմաց համապատասխանաբար վճարման **կամ** ստացման ենթակա գործարքի տոկոսադրույքի արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **4** նիշի ճշտությամբ (0,0001):

ՀՏ 506 ՀՀ պետական արժեթղթի հետգնման աճուրդի հայտ

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկայի Գործակալը Պահառուին՝ Կենտրոնական բանկին, ՀՀ պետական պարտատոմսի հետգնման աճուրդի սահմանված ընթացակարգին մասնակցելու նպատակով:

Դիտարկվող ֆորմատի շրջանակներում յուրաքանչյուր Գործակալ կարող է ներկայացնել 2 հայտ, առանձին հաղորդագրությունների տեսքով, սեփական և համապատասխան Ներդրողների արժեթղթերը վերադարձնելու համար:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	2
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	3
Բ կրկնվող պարբերություն ---->				
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	4
Պ	37A	Եկամտաբերություն	9d	5
-----|				

Պ – պարտադիր գրանցման դաշտ

- **:35C:** դաշտի արժեքը պետք է լինի դրական ամբողջ թիվ
- **:37A:** դաշտի արժեքը չի կարող լինել բացասական թիվ՝ 9d ≥ 0
- Կրկնվող Բ պարբերությունը (հաղորդագրության մեջ) կարող է հանդես գալ առավելագույնը 20 անգամ:

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը, որտեղ առաջարկվում է ներառել.

- 1!→!5 նիշերում, հաղորդագրությունը ուղարկող բանկի գլխամասի հնգանիշ թվային կոդը՝ xyz**00**
- 6-րդ և 15-րդ նիշերում « / » (Slash) զատիչ նշանը
- 7!→!14 նիշերում, հաղորդագրության ուղարկման ամսաթվի ութանիշ թվային արժեքը՝ DDMMYYYY
- վերջին 16-րդ նիշում հաղորդագրության հերթական համարը ընթացիկ բանկային օրվա կտրվածքով (Բանկային օր = 8 ժամ տևողություն ունեցող աշխատանքային օր)

Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հայտի տեսակը՝

- **INV** – առաջարկություններ ներդրողների անունից
- **OWN** – սեփական առաջարկություններ

Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Չևաչափ [4!c1!e][2!c]10!c

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հետգնվող արժեթղթի պետական գրանցման համարը:

Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հետգնման ենթակա արժեթղթի անհրաժեշտ ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի տվյալ պարտատոմսի ձեռք բերման առաջարկության քայլի արժեքին:


Դաշտ **:37A:** Եկամտաբերություն
Չևաչափ 9d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **հետգնման գործարքի տոկոսադրույքը** (արժեթղթի տարեկան եկամտաբերության տոկոսային արժեքը)՝ տասնորդական ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ (0,0001):

ՀՏ 507 Երկկողմանի ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի հայտ

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է ավտոմատացված համակարգի մասնակիցը ՀՀ կենտրոնական բանկին երկկողմանի ռեպո կամ հակադարձ ռեպո գործարք կնքելու նպատակով:

Դիտարկվող ֆորմատի շրջանակներում գործարքի յուրաքանչյուր հայտը կարող է պարունակել **ընդամենը մեկ** առաջարկություն:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	24B	Գործարքի նույնացուցիչ	4x	2
Օ	14	Հայտի առաջնահերթություն	2n	3
Պ	31	Ամսաթիվ	6!n	4
Պ	30V	Վճարման ամսաթիվ	6!n	5
Պ	31A	Մարման ամսաթիվ	6!n	6
Պ	37C	Գումար	15d	7
Պ	38	Տոկոսադրույք	9d	8
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	9

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- «Ամսաթիվ» դաշտի արժեքը **չի** կարող լինել մեծ «Վճարման ամսաթիվ» դաշտի արժեքից՝ :31: ≤ :30V:
- «Վճարման ամսաթիվ» դաշտի արժեքը պետք է փոքր լինի «Մարման ամսաթիվ» դաշտի արժեքից՝ :30V: < :31A:
- :38: դաշտի արժեքը **չի** կարող լինել բացասական թիվ՝ 9d ≥ 0:

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում, հայտը ուղարկողի կողմից, նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ **:24B:** Գործարքի նույնացուցիչ
Ձևաչափ 4x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է իրականացման ենթակա գործարքի նույնացուցիչը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության համար: Դիտարկվող դաշտում գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- **REP –** ռեպո գործարք
- **REV –** հակադարձ ռեպո գործարք

Դաշտ **:14:** Հայտի առաջնահերթություն
Ձևաչափ 2n

Այս օժանդակ դաշտում (անհրաժեշտության դեպքում) կարող է գրանցվել հայտի **կատարման առաջնահերթության** արժեքը՝ **1 → 99**:

Եթե հայտին առաջնահերթություն չի տրվել, այսինքն առաքված հայտում բացակայում է :14: դաշտը, ապա համակարգի կողմից հայտին (այն ընդունելուց հետո) ավտոմատ կերպով տրվում է կատարման առաջնահերթության ամենացածր արժեքը՝ **99**:

Դաշտ **:31:** Ամսաթիվ
Ձևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **գործարքի կնքման** ամսաթիվը, որպես կանոն հայտի ընդունման օրը:

Դաշտ **:30V:** Վճարման ամսաթիվ
Ձևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **գործարքի կատարման** օրը:

Դաշտ **:31A:** Մարման ամսաթիվ
Ձևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կատարված **գործարքի մարման** ամսաթիվը:

Դաշտ **:37C:** Գումար
Ձևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է համակարգի մասնակցի կողմից հայտում ներկայացված առաջարկության գումարը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ դրական թիվ, 15d > 0:

Դաշտ **:38:** Տոկոսադրույք
Ձևաչափ 9d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքման ենթակա **գործարքի տոկոսադրույքը**, այն է հայտը ուղարկողի կողմից ստացվող **կամ** փոխանցվող դրամական գումարի դիմաց

համապատասխանաբար վճարման **կամ** ստացման ենթակա գործարքի տոկոսադրույքի արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **4** նիշի ճշտությամբ (0,0001):

Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
Ձևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտի 6 տողում, անհրաժեշտության դեպքում, կարող է նշվել հաղորդագրության նախաձեռնող կողմից ստացողին ուղղված տեղեկատվությունը:

ՀՏ 511 ՀՀ պետական արժեթղթի տեղաբաշխման աճուրդի հայտի պատասխան

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է Պահառուն՝ ՀՀ կենտրոնական բանկը, պետական արժեթղթի տեղաբաշխման աճուրդի մասնակցին:

Դիտարկվող հաղորդագրության մեջ ներկայացվում են աճուրդի արդյունքում (մասնակցի հայտում ներառված) բավարարված, մասնակիորեն բավարարված և չբավարարված առաջարկությունները: Ընդ որում, մասնակցի ներկայացրած «Սեփական» և «Ներդրողների» առաջարկությունների դիմաց տրամադրվում է 2 առանձին տեղեկանք:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգավիճակ	Դաշտի բնորոշիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	3
Պ	28	Հայտի պատասխանի հերթական համար	5n[/3n]	4
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	5
Բ կրկնվող պարբերություն ----≫				
Պ	35A	Արժեթղթի ծավալ	3!a15d	6
Պ	37	Առաջարկվող գին	15d	7
Օ	37A	Եկամտաբերություն	9d	8
-----| Գ պարբերություն				
Օ	35O	Բավարարված առաջարկությունների ծավալ	3!a15d	9
Օ	35R	Չբավարարված առաջարկությունների ծավալ	3!a15d	10
Օ	32B	Վճարված գումար	3!a15d	11

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- Հաղորդագրության մեջ առաջարկները պետք է դասակարգվեն ըստ եկամտաբերության աճման կարգի
- Գ պարբերության մեջ պարտադիր պետք է նշված լինի առնվազն մեկ դաշտ, ընդ որում, եթե գրանցվում է **:35O:** դաշտը, ապա **:32B:** դաշտը նույնպես ենթակա է լրացման, իսկ միայն **:35R:** դաշտը գրանցելու դեպքում **:32B:** դաշտը չի լրացվում
- Եթե հայտի պատասխանը տրվում է արժեկտրոնային պարտատոմսերի աճուրդի մասնակցության հայտի դիմաց, ապա **:37A:** դաշտը ենթակա է պարտադիր լրացման

- Հաղորդագրության մեջ Բ կրկնվող պարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը 60 անգամ:

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաղորդագրության՝ ՀՏ 503, գործառնության համարը (:20: դաշտի արժեքը), որի դիմաց տրամադրվում է դիտարկվող հայտի պատասխանը:

Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հայտի տեսակը՝

- **INV** – առաջարկություններ ներդրողների անունից
- **OWN** – սեփական առաջարկություններ

Դաշտ **:28:** Հայտի պատասխանի հերթական համար
Ձևաչափ 5n[/3n]

Այս **պարտադիր** դաշտի 5n ենթադաշտում նշվում է հայտի պատասխան տեղեկանքին տրված համարը և (ոչ պարտադիր գրանցման) [/3n] ենթադաշտում կարող է նշվել հաղորդագրության հերթական համարը տվյալ համարի տեղեկանքում (եթե հայտի պատասխանը բաղկացած է մի քանի հաղորդագրություններից):

Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ձեռք բերվող արժեթղթի պետական գրանցման համարը:

Դաշտ **:35A:** Արժեթղթի ծավալ
Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հայտում գրանցված առաջարկության բավարարված, մասնակի բավարարված կամ չբավարարված ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:

Դաշտի առաջին 3!a ենթադաշտում պարտադիր գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- **SCM** – բավարարված մրցակցային առաջարկություն
- **SCP** – մասնակիորեն բավարարված մրցակցային առաջարկություն

- **NCM** – չբավարարված մրցակցային առաջարկություն
- **SNC** – բավարարված ոչ մրցակցային առաջարկություն
- **SNP** – մասնակիորեն բավարարված ոչ մրցակցային առաջարկություն

Դաշտ **:37:** Առաջարկվող գին

Ձևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն գումարը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը աճուրդի մասնակիցը արդեն վճարել է :35A: դաշտում գրանցված (բավարարված կամ մասնակիորեն բավարարված) ծավալի դիմաց, այսինքն :35A: դաշտի արժեքի առաջին նիշը **S**-ին հավասար լինելու դեպքում:

Դաշտ **:37A:** Եկամտաբերություն

Ձևաչափ 9d

Այս օժանդակ դաշտում նշվում է պետական արժեկտրոնային պարտատոմսի տարեկան եկամտաբերության տոկոսային արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ (0,0001):

Դաշտ **:35O:** Բավարարված առաջարկությունների ծավալ

Ձևաչափ 3!a15d

Այս օժանդակ դաշտի 1-ին 3!a ենթադաշտում գրանցվում է արժույթի **AMD** նույնացուցիչը, իսկ 2-րդ 15d ենթադաշտում նշվում է արժեթղթերի բավարարված ընդհանուր ծավալի արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:

Դաշտ **:35R:** Չբավարարված առաջարկությունների ծավալ

Ձևաչափ 3!a15d

Այս օժանդակ դաշտի 1-ին 3!a ենթադաշտում գրանցվում է արժույթի **AMD** նույնացուցիչը, իսկ 2-րդ 15d ենթադաշտում նշվում է արժեթղթերի չբավարարված ընդհանուր ծավալի արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:

Դաշտ **:32B:** Գործարքի գումար

Ձևաչափ 3!a15d

Այս օժանդակ դաշտի 1-ին 3!a ենթադաշտում գրանցվում է արժույթի **AMD** նույնացուցիչը, իսկ 2-րդ 15d ենթադաշտում նշվում է արժեթղթերի բավարարված ընդհանուր ծավալի դիմաց վճարված գումարի արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:

ՀՏ 512 Ֆինանսական գործարքի կնքման հայտի պատասխան

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հետևյալ ֆինանսական գործարքների **կնքման** արդյունքների վերաբերյալ՝

- «Ռեպո **և** հակադարձ ռեպո գործարքների ավտոմատացված համակարգ»-ից ռեպո **կամ** հակադարձ ռեպո գործարքի **կնքման** մասնակցին ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ **505** կամ ՀՏ **507** հայտի
- «Պետական արժեթղթերի առք ու վաճառքի ավտոմատացված համակարգ»-ից գանձապետական պարտատոմսի առքի **կամ** վաճառքի գործարքի մասնակցին ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ **502** հայտի
- «Դրամական միջոցների ներգրավման ավտոմատացված համակարգ»-ից ավանդի բացման գործարքի մասնակցին ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ **208** հայտի:

Դիտարկվող հաղորդագրության մեջ ներկայացվում են նշված հայտերում առկա՝ աճուրդի միջոցով գործարքների կնքման փուլում, բավարարված, մասնակիորեն բավարարված և չբավարարված առաջարկությունները, ինչպես նաև երկկողմանի փոխգործակցության հիման վրա ձևավորված միակ առաջարկության բավարարման կամ մերժման պատասխանը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Օ	12B	Աճուրդի համար	16x	3
Պ	24B	Գործարքի նույնացուցիչ	4x	4
Ա1 կրկնվող ենթապարբերություն ---->				
Օ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	5
Պ	37C	Գումար	15d	6
Պ	38	Տոկոսադրույք	9d	7

Պ	23A	Գործարքի կնքման նույնացուցիչ	8x	8
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	9
-----┤				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ
գրանցման դաշտ

- Երկկողմանի գործարքի կնքման պատասխան հաղորդագրության մեջ օժանդակ **:12B:** դաշտը չի գրանցվում (բացակայում է)
- Հաղորդագրության մեջ «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ առավելագույնը **10** անգամ
- Գործարքի տարեկան տոկոսադրույքի հաստատագրված (fixed) արժեքով ածուրդի հայտի, ինչպես նաև երկկողմանի գործարքի կնքման հայտի, համար ձևավորված «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ
- **:35C:`** «Փոխանցվող արժեթղթի ծավալ», դաշտը ենթակա է պարտադիր լրացման, եթե **:24B: = BUY** կամ **SELL**
- «A1» ենթապարբերության մեկից ավել հանդես գալու (կրկնվելու) դեպքում **ածուրդի** հայտում ներկայացված բոլոր առաջարկությունների պատասխանները տրամադրվում են **:38:`** «Տոկոսադրույք», կրկնվող դաշտի արժեքների վերևից ներքև նվազման կարգով:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ ՀՏ 512 հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաղորդագրության տեսակի գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որը հիմք է հանդիսանում տվյալ ՀՏ 512 հաղորդագրության ձևավորման համար:

3) Դաշտ **:12B:** Ածուրդի համար
Չևաչափ 16x

Այս օժանդակ դաշտում կարող է նշվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից անցկացված ֆինանսական գործարքների կնքման համապատասխան ածուրդի հայտարարության բացառիկ համարը:

4) Դաշտ **:24B:** Գործարքի նույնացուցիչ
Չևաչափ 4x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է **կնքված** կամ մերժված **գործարքի տեսակը**, որտեղ գրանցվում է հետևյալ կոդերից մեկը՝

- **REP –** Ռեպո գործարք (Repo)
- **REV –** Հակադարձ ռեպո գործարք (Reverse Repo)
- **BUY** – Պետական պարտատոմսի առք
- **SELL** – Պետական պարտատոմսի վաճառք
- **DPA** – Դրամական միջոցների ներգրավում (Deposit Agreement)

5) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ

Չևաչափ 15d

Այս կրկնվող օժանդակ դաշտում նշվում է արժեթղթի առք ու վաճառքի **կնքված** յուրաքանչյուր գործարքի ամբողջությամբ **կամ** մասնակիորեն բավարարված ծավալը, ինչպես նաև ՀՏ 502 հայտում առկա **չ**բավարարված յուրաքանչյուր առաջարկության ծավալը՝ արժեթղթի **անվանական արժեքը**: Այն ներկայացվում է տասնորդական ստորակետից հետո **0** նիշի ճշտությամբ, որը պատիկ է տվյալ պարտատոմսի ձեռք բերման **քայլի** արժեքին:

6) Դաշտ **:37C:** Գումար

Չևաչափ 15d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է հայտում ներառված յուրաքանչյուր **կնքված** կամ մերժված գործարքի առաջարկված դրամական գումարի չափը՝ տասնորդական ստորակետից հետո **0** նիշի ճշտությամբ, ընդ որում արժեթղթի առք ու վաճառքի պարագայում (:24B:!=!BUY կամ SELL) ՀՏ 502 հայտում առկա յուրաքանչյուր **չ**բավարարված առաջարկության համար դիտարկվող :37C: դաշտում գրանցվում է **0** արժեք:

7) Դաշտ **:38:** Տոկոսադրույք

Չևաչափ 9d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է **կնքված** կամ մերժված յուրաքանչյուր **գործարքի տոկոսադրույքը**, այն է ստացվող կամ տրամադրվող դրամական գումարի դիմաց համապատասխանաբար վճարման կամ ստացման ենթակա տարեկան տոկոսադրույքի արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **4** նիշի ճշտությամբ (0,0001):

Անհրաժեշտ է նշել, որ արժեթղթի առք ու վաճառքի պարագայում դիտարկվող դաշտում գրանցվում է ՀՏ 502 հայտում ներառված գանձապետական պարտատոմսի տարեկան եկամտաբերության պահանջված յուրաքանչյուր առաջարկության տոկոսային արժեքը:

8) Դաշտ **:23A:** Գործարքի կնքման նույնացուցիչ

Չևաչափ 8x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր առաջարկության դիտարկման արդյունքի նույնացուցիչը, ըստ այդմ տվյալ դաշտում գրանցվում է միայն հետևյալ կոդերից մեկը՝

- **SAT** – բավարարված (Satisfied)
- **STP** – մասնակիորեն բավարարված (Satisfied Partly)
- **NST** – **չ**բավարարված (Not Satisfied)։

9) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ


Չևաչափ 16x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ֆինանսական գործարքի կնքման հայտի յուրաքանչյուր բավարարված (մասնակիորեն բավարարված) կամ **չ**բավարարված առաջարկությանը, համապատասխան ավտոմատացված համակարգի կողմից, տրված բացառիկ համարը:

ՀՏ 513 ՀՀ պետական արժեթղթի հետգնման աճուրդի հայտի պատասխան

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) առաքվում է ՀՀ կենտրոնական բանկի (Պահառուի) կողմից «Book-Entry» ավտոմատացված համակարգի միջոցով գանձապետական պարտատոմսի հետգնման գործարքների աճուրդի մասնակցին ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ **506** հայտին:

Դիտարկվող հաղորդագրության մեջ ներկայացվում են գործարքների կնքման հայտում ներառված աճուրդի արդյունքում բավարարված, մասնակիորեն բավարարված և չբավարարված առաջարկությունների պատասխանները:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	3
Ա1 կրկնվող ենթապարբերություն ---->				
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	4
Օ	37	Առաջարկվող գին	15d	5
Պ	37A	Եկամտաբերություն	9d	6
Պ	23A	Գործարքի կնքման նույնացուցիչ	8x	7
-----|				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ
գրանցման դաշտ

► Հաղորդագրության մեջ «Ա1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ ՀՏ 506 հայտի պատասխանի համար առավելագույնը **20** անգամ

- Արժեթղթի տարեկան եկամտաբերության հաստատագրված (fixed) տոկոսադրույքով աճուրդի հայտի համար ձևավորված «A1» կրկնվող ենթապարբերությունը կարող է հանդես գալ միայն մեկ անգամ
- Կրկնվող օժանդակ **:37:** դաշտը ենթակա է պարտադիր լրացման, եթե **:23A:=SAT** կամ **STP,** այլ պարագայում **:37:** դաշտը չի գրանցվում (բացակայում է)
- «A1» ենթապարբերության մեկից ավել հանդես գալու (կրկնվելու) դեպքում աճուրդի հայտում ներկայացված բոլոր առաջարկությունների պատասխանները տրամադրվում են **:37A:`** «Եկամտաբերություն», կրկնվող դաշտի արժեքների վերևից ներքև նվազման կարգով:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չևաչափ 16x

   Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ ՀՏ 513 հաղորդագրությանը հատկացված բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
   Չևաչափ 16x

   Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ՀՏ 506 հաղորդագրության գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որը հիմք է հանդիսանում տվյալ ՀՏ 513 հաղորդագրության ձևավորման համար:

3) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
   Չևաչափ [4!c1!e][2!c]10!c

   Այս **պարտադիր** դաշտում նշվում է, հետգնվող, գանձապետական պարտատոմսի **պետական գրանցման** (թողարկման) **համարը**:

4) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
   Չևաչափ 15d

   Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է **կնքված** յուրաքանչյուր գործարքի առաջարկության ամբողջությամբ **կամ** մասնակիորեն բավարարված ծավալը, ինչպես նաև **չկնքված** յուրաքանչյուր գործարքի **չբավարարված** ծավալը՝ արժեթղթի **անվանական արժեքը**: Այն ներկայացվում է տասնորդական ստորակետից հետո **0** նիշի ճշտությամբ, որը պատիկ է տվյալ պարտատոմսի ձեռք բերման **քայլի** արժեքին:

5) Դաշտ **:37:** Առաջարկվող գին
   Չևաչափ 15d

   Այս կրկնվող օժանդակ դաշտում նշվում է **կնքված** յուրաքանչյուր գործարքի առաջարկության ծավալի դիմաց վճարման ենթակա դրամական գումարի չափը՝ տասնորդական ստորակետից հետո **0** նիշի ճշտությամբ:

6) Դաշտ **:37A:** Եկամտաբերություն
   Չևաչափ 9d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է **կնքված** կամ մերժված յուրաքանչյուր **գործարքի** առաջարկության **տոկոսադրույքը**, այն է պետական արժեթղթի տարեկան եկամտաբերության պահանջված տոկոսային արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **4** նիշի ճշտությամբ (0,0001):

7) Դաշտ **:23A:** Գործարքի կնքման նույնացուցիչ
Չնաչափ 8x


Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է պետական արժեթղթի հետգնման գործարքների աճուրդին մասնակցած հայտի յուրաքանչյուր **առաջարկության** դիտարկման արդյունքի նույնացուցիչը: Տվյալ դաշտում գրանցվում է միայն հետևյալ կոդերից մեկը՝

- **SAT** – բավարարված (Satisfied)
- **STP** – մասնակիորեն բավարարված (Satisfied Partly)
- **NST** – չբավարարված (Not Satisfied):

ՀՏ 514 Ռեպո, հակադարձ ռեպո կամ միջօրյա ռեպո գործարքի կատարման արդյունքի պատասխան

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկը կնքված յուրաքանչյուր **ռեպո, հակադարձ ռեպո** կամ **միջօրյա ռեպո** գործարքի կատարման արդյունքի վերաբերյալ համակարգի մասնակցին ի պատասխան նրա կողմից ուղարկված ՀՏ 505 կամ ՀՏ 507 հայտի:

Դիտարկվող ֆորմատի շրջանակներում ներկայացվում է հայտի կնքված գործարքի (գործարքների), կատարման փուլում, ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարված յուրաքանչյուր առաջարկությունը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	24B	Գործառնության նույնացուցիչ	4x	2
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	3
Պ	37C	Գործարքի կատարման գումար	15d	4
Պ	38	Տոկոսադրույք	9d	5
Պ	31A	Մարման ամսաթիվ	6!n	6
Պ	23A	Գործարքի կատարման նույնացուցիչ	8x	7
Ա1 կրկնվող ենթապարբերություն ---->				
O	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	8
O	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	9
O	37C	Փոխանցվող արժեթղթի գին	15d	10
-----|				

Պ – պարտադիր, O – օժանդակ
գրանցման դաշտ

Դաշտերի նկարագրությունը

Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

Դաշտ **:24B:** Գործառնության նույնացուցիչ
Չևաչափ 4x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարված գործարքի տեսակը, որտեղ գրանցվում է հետևյալ նույնացուցիչներից որևէ մեկը՝

- **REP** – ռեպո գործարք
- **REV** – հակադարձ ռեպո գործարք
- **INTD** (Intraday) – միջօրյա ռեպո գործարք

Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարված գործարքի բացառիկ համարը (նույնացուցիչը), որը կնքման ժամանակ տրվել էր գործարքին՝ ՀՏ 512 հաղորդագրության :23: դաշտի արժեքը:

Դաշտ **:37C:** Գործարքի կատարման գումար
Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարված գործարքի դրամական գումարի չափը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը համակարգի մասնակիցը պետք է ստանա ՀՀ կենտրոնական բանկի կողմից կամ տրամադրի նրան որոշակի տոկոսադրույքով:

Դաշտ **:38:** Տոկոսադրույք
Չևաչափ 9d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործարքի տոկոսադրույքը, այն է ստացվող կամ տրամադրվող դրամական գումարի դիմաց համապատասխանաբար վճարման կամ ստացման ենթակա գործարքի տոկոսադրույքի արժեքը՝ տասնորդական ստորակետից հետո **4** նիշի ճշտությամբ (0,0001): Միջօրյա ռեպո գործարքի դեպքում դիտարկվող դաշտի արժեքը հավասար է **0**-ի:

Դաշտ **:31A:** Մարման ամսաթիվ
Չևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործարքի մարման ամսաթիվը:

Դաշտ **:23A:** Գործարքի կատարման նույնացուցիչ
Չևաչափ 8x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործարքի (ամբողջական կամ մասնակի) կատարման նույնացուցիչը, որտեղ գրանցվում է հետևյալ նույնացուցիչներից որևէ մեկը՝

- **EXC** – կատարված ամբողջությամբ
- **EPT** (Execute Partly) – կատարված մասնակիորեն

Ա1 կրկնվող ենթապարբերություն

Դիտարկվող կրկնվող ենթապարբերության 3 օժանդակ դաշտերը պարտադիր են լրացման միայն հակադարձ ռեպո գործարքի կատարման ժամանակ, երբ գործարքին կցվում են վաճառված համապատասխան պետական արժեթղթերը:

Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Այս օժանդակ դաշտում նշվում է հակադարձ ռեպո գործարքի շրջանակներում համակարգի մասնակցին, ՀՀ կենտրոնական բանկի կողմից, վաճառված (փոխանցվող) արժեթղթի պետական գրանցման համարը: Հաղորդագրություններում ոչ պարտադիր [4!c1!e] ենթադաշտը չի լրացվելու: Մինչև ISIN կոդավորման ստանդարտին անցնելը այն պետք է պարունակի 10 նիշ (10!c) և արժեթղթի գրանցման համարի մաս հանդիսացող [2!c] («AM») նախդիրը պարտադիր չի լինի: ISIN կոդավորման ստանդարտին անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի առնվազն 12 նիշ:

Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է հակադարձ ռեպո գործարքի շրջանակներում համակարգի մասնակցին փոխանցվող պետական արժեթղթի ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի տվյալ պարտատոմսի քայլի արժեքին:

Դաշտ **:37C:** Փոխանցվող արժեթղթի գին
Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է հակադարձ ռեպո գործարքի շրջանակներում համակարգի մասնակցին փոխանցվող, :35C: դաշտում գրանցված ծավալով, վաճառված պետական արժեթղթի ընթացիկ գինը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:

ՀՏ 515 Վերջնահաշվարկի կատարման հաղորդագրություն

Այս հաղորդագրությունը օգտագործվում է պետական պարտատոմսերի տեղաբաշխման, վերաբացման, ինչպես նաև հետգնման կամ փոխանակման աճուրդի արդյունքում գործարքների վերջնահաշվարկի իրականացման համար: Այն կարող է ուղարկվել պահառու բանկին՝ աճուրդի համակարգի օպերատորի կամ պարտատոմսերի թողարկողի կողմից: Արժեթղթերի փոխանակման հետ կապված արժեթուղթ թողարկողի կողմից ՀՏ 515 չի ուղարկվում:

ՀՏ 515 հաղորդագրությունը հանդիսանում է հիմք պահառու բանկի համար յուրաքանչյուր համապատասխան մասնակցի բավարարված գործարքների կատարման համար: Աճուրդի համակարգի օպերատորի կողմից յուրաքանչյուր աճուրդով ամեն մասնակցի համար առանձին-առանձին ուղարկվում է ՀՏ 515 հաղորդագրությունը: Ընդ որում, հաշվի առնելով մեկ մասնակցի բոլոր բավարարված առաջարկությունների քանակը (այդ թվում՝ բոլոր կրկնվող պարբերությունները, ենթապարբերությունները, գլխագրի տվյալները) ինչպես նաև ԿԲ համակարգերում ՀՏ 515 հաղորդագրության կիրառման համար ՀՏ-ում կրկնվող դաշտերի վերաբերյալ սահմանված պահանջը, ուղարկվող մեկ ՀՏ 515 հաղորդագրության առավելագույն մեծությունը պետք է լինի մինչև 20000 բայթ (որը չի կարող գերազանցել): Տվյալ ՀՏ 515 հաղորդագրությունը հիմք է հանդիսանում դրանում նշված արժեթղթերի առաքման և համապատասխան դրամական հաշվարկների իրականացման համար: Համակարգում սահմանված դեպքերում վերջնահաշվարկը կարող է իրականացվել միայն արժեթղթերի առաքման միջոցով:

Աճուրդի համակարգի օպերատորի կողմից յուրաքանչյուր աճուրդով մեկ մասնակցի համար ՀՏ 515 հաղորդագրություն(ներ) ուղարկելիս, վերջինս ապահովում է, որ.

ա/ մեկից ավել ուղարկվող ՀՏ 515 հաղորդագրությունների դեպքում, դրանց քանակը ավել չլինի 20-(քսան) հատից: Միաժամանակ,

բ/ ուղարկվող մեկ կամ մեկից ավել ՀՏ 515 հաղորդագրություններից յուրաքանչյուրում ընդգրկված գործարքների քանակը չպետք է գերազանցի 60-(վաթսունը):

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգավիճակ	**Դաշտի բնորոշիչ**	**Դաշտի անվանումը**	**Դաշտի ձևաչափ**	№
Պ	20	Գործառնության համար	16x	1
Օ	12B	Աճուրդի համար	16x[/3n/1n]	4
Պ	31	Գործարքի կնքման ամսաթիվ	6!n	5
Պ	30V	Գործարքի կատարման ամսաթիվ	6!n	6
«**Գ**» կրկնվող պարբերություն ----->				
Պ	24B	Գործարքի տեսակ	4x[/5x]	2
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	3

*O	83A	Արժեթուղթ առաքող	5!n [4*35x]	7
*O	87A	Արժեթուղթ ստացող	5!n [4*35x]	8
«**Ա**» կրկնվող պարբերություն ---->				
**O	83A	Արժեթուղթ առաքող (մասնակից)	5!n [4*35x]	9
**O	87A	Արժեթուղթ ստացող (մասնակից)	5!n [4*35x]	10
«**Բ**» կրկնվող ենթապարբերություն ---->				
Պ	24C	Սեփականության նույնացուցիչ	4x	11
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	12
O	35A	Ծավալի արժողություն	3!a15d	13
O	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	14
----ի«**Բ**» կրկնվող ենթապարբերություն				
----ի «**Ա**» կրկնվող պարբերություն				
----ի «**Գ**» կրկնվող պարբերություն				

Պ - պարտադիր, O - օժանդակ

* - ով նշված երկու օժանդակ դաշտերից մեկը և միայն մեկը պարտադիր պետք է առկա լինի
** - ով նշված երկու օժանդակ դաշտերից մեկը և միայն մեկը պարտադիր պետք է առկա լինի:

Միևնույն հաղորդագրության Գ կրկնվող պարբերությունների քանակը կարող է լինել երկուսը, եթե յուրաքանչյուր Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWT/AUC կամ SWT/RET արժեքը: Երկու Գ կրկնվող պարբերությունների լրացման դեպքում պետք է լրացված լինի 24B դաշտը, որը պարունակի SWT/AUC և SWT/RET արժեքներից յուրաքանչյուրը միայն մեկական անգամ: SWT/AUC և SWT/RET արժեքները պարունակող Գ կրկնվող պարբերությունների համախումբը հանդիսանում են միևնույն գործարքի բաղադրիչներ և կազմում են միմյանց զույգերը:

24B դաշտի այլ արժեքների դեպքում Գ կրկնվող պարբերությունների քանակը պետք է լինի մեկը:

Այն դեպքում, երբ միևնույն հաղորդագրության Գ կրկնվող պարբերություններից մեկում 24B դաշտը ընդունել է SWT/AUC, իսկ մյուսում 24B դաշտը ընդունել է SWT/RET արժեքը, ապա Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտում նշվում է աճուրդի ժամանակ կատարված զուտացման արդյունքում վճարվելիք զուտացված գումարը: Միևնույն հաղորդագրության մեջ վճարվելիք զուտացված գումարը լրացվում է կամ միայն SWT/AUC կոդը պարունակող Գ պարբերության մեջ կրկնվող 35A դաշտերում կամ միայն SWT/RET կոդը պարունակող Գ պարբերության մեջ կրկնվող 35A դաշտերում: Ընդ որում.

ա/ եթե վճարողը մասնակից բանկն է, ապա վճարվելիք զուտ գումարը նշվում է 24B դաշտում SWT/AUC- կոդը պարունակող Գ պարբերության մեջ գտնվող Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտում, իսկ SWT/RET - կոդը պարունակող Գ պարբերության մեջ Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտը չի լրացվում:

բ/ եթե վճարողը թողարկողն է, ապա վճարվելիք զուտ գումարը նշվում է 24B դաշտում SWT/RET - կոդը պարունակող Գ կրկնվող պարբերության մեջ գտնվող Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտում, իսկ SWT/AUC - կոդը պարունակող Գ պարբերության մեջ Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտը չի լրացվում:

ՀՏ515 հաղորդագրության և ՀՏ575 հաղորդագրության տվյալների միջև կատարվում է հետևյալ ստուգումը.

1/ ՀՏ515 հաղորդագրության մշակման համար երբ :24B: դաշտում նշված են AUC կամ RET կամ SWT հիմնական կոդերը, ապա պետք է ստացված լինի ՀՏ575 հաղորդագրությունը, որտեղ.

ա/ ՀՏ515 և ՀՏ575 հաղորդագրությունների :24B: դաշտերի տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ ձևով.

ա1/ եթե ՀՏ515-ի :24B:= AUC, ապա ՀՏ575-ում պետք է լինի :24B:= AUCS, կամ

ա2/ եթե ՀՏ515-ի :24B:= RET, ապա ՀՏ575-ում պետք է լինի :24B:= RETS, կամ

ա3/ եթե ՀՏ515-ի Գ պարբերություններում նշված է համապատասխանաբար :24B:=SWT/AUC և :24B:=SWT/RET կոդը, ապա ՀՏ575-ում պետք է Գ պարբերության մեջ նշված լինեն համապատասխանաբար :24B:= SWTS/AUC և :24B:= SWTS/RET կոդերը.

բ/ ՀՏ515 և ՀՏ575 հաղորդագրությունների 12B դաշտում պետք է նշված լինի միևնույն աճուրդի համարը.

գ/ ՀՏ515 և ՀՏ575 հաղորդագրությունների 35B դաշտում պետք է նշված լինի միևնույն արժեթղթի նույնացուցիչը, ըստ այն համապատասխան Գ պարբերությունների, որոնց :24B:= դաշտը համապատասխան են վերը սահմանված կանոնով.

դ/ ՀՏ515 և ՀՏ575 հաղորդագրությունների 35A դաշտերի տվյալները պետք է համապատասխանեն, որը ստուգվում է հետևյալ ձևով.

դ1/ Այն դեպքում, երբ ՀՏ515 հաղորդագրության Գ պարբերության մեջ 24B=AUC (կամ 24B=RET) կոդին, ապա :24B: դաշտի այդ կոդով Գ պարբերության մեջ համապատասխան

բանկի համար (ըստ 87A դաշտի) Ա պարբերության բոլոր 35A դաշտերում լրացված զուտացված միջոցների հանրագումարը պետք է հավասար լինի ՀՏ575 հաղորդագրության 24B=AUCS (կամ 24B=RETS) կոդը պարունակող Գ պարբերության մեջ համապատասխան բանկի համար (ըստ 87A դաշտի) Ա պարբերության 35A դաշտերում լրացված զուտ միջոցների հանրագումարին: Այս դեպքում, ՀՏ515 և ՀՏ575 հաղորդագրությունների այդ համեմատվող Ա պարբերությունների 87A դաշտերում պետք է լինի միևնույն կոդը:


դ2/ Այն դեպքում, երբ ՀՏ515 հաղորդագրության մեջ նշված են երկու Գ պարբերություններ, որոնցից մեկում 24B=SWT/AUC և 24B=SWT/RET, ապա միևնույն աճուրդի հետ կապված բոլոր հաղորդագրությունները ստանալու արդյունքում.

դ2.1/ երբ վճարողը հանդիսանում է մասնակիցը՝ ՀՏ515 հաղորդագրության Գ պարբերության մեջ, որտեղ 24B= SWT/AUC կոդին, ապա :24B: դաշտի այդ կոդով Գ պարբերության մեջ համապատասխան բանկի համար (ըստ 87A դաշտի) Ա պարբերության բոլոր 35A դաշտերում լրացված զուտացված միջոցների հանրագումարը պետք է հավասար լինի ՀՏ575 հաղորդագրության 24B=SWTS/AUC կոդը պարունակող Գ պարբերության մեջ համապատասխան բանկի համար (ըստ 87A դաշտի) Ա պարբերության 35A դաշտերում լրացված զուտ միջոցների հանրագումարին: Այս դեպքում, ՀՏ515 և ՀՏ575 հաղորդագրությունների այդ համեմատվող Ա պարբերությունների 87A դաշտերում պետք է լինի միևնույն կոդը,

դ2.2/ երբ վճարողը հանդիսանում է թողարկողը՝ ՀՏ515 հաղորդագրության Գ պարբերության մեջ, որտեղ 24B=SWT/RET կոդին, ապա 24B դաշտի այդ կոդով Գ պարբերության մեջ համապատասխան բանկի համար (ըստ 87A դաշտի) Ա պարբերության բոլոր 35A դաշտերում լրացված զուտացված միջոցների հանրագումարը պետք է հավասար լինի ՀՏ575 հաղորդագրության 24B=SWTS/RET կոդը պարունակող Գ պարբերության մեջ համապատասխան բանկի համար (ըստ 87A դաշտի) Ա պարբերության 35A դաշտերում լրացված զուտ միջոցների հանրագումարին: Այս դեպքում, ՀՏ515 և ՀՏ575 հաղորդագրությունների այդ համեմատվող Ա պարբերությունների 87A դաշտերում պետք է լինի միևնույն կոդը:

Ձևավորված և ուղարկվող սույն հաղորդագրության առավելագույն մեծությունը (լրացված բոլոր տվյալների ինչպես նաև՝ պարբերությունների, ենթապարբերությունների հետ միասին), այդ թվում՝ հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, չպետք է գերազանցի 20000 բայթը:

Հաղորդագրությունը ԿԲ ուղարկվում է նկար 1-ում պատկերված ճանապարհներով:



Նկար 1

Դաշտերի նկարագրությունը՝

1) **Դաշտ :20: Գործառնության համար**
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

1) **Դաշտ :12B: Ածուրդի համար**
Ձևաչափ 16x[/3n/1n]

Տվյալ օժանդակ դաշտի 16x մասում լրացվում է անցկացված աճուրդի բացառիկ նույնացուցիչը: Ընդ որում, :24B: դաշտում **AUC** կամ **RET** կամ **SWT** հիմնական կոդերի գրանցման դեպքում :12B: դաշտի առկայությունը պարտադիր է:

Լրացուցիչ [/3n/1n] ենթամասում լրացվող տվյալները բնութագրում են 16x մասում նշված աճուրդի հետ կապված միևնույն բանկի համար ուղարկվող հաղորդագրությունների քանակը, որտեղ /3n -ում նշվում է հաղորդագրության հերթական համարը, իսկ /1n -ում նշվում է՝ 0-զրո կոդը, եթե տվյալ հաղորդագրությունն ունի շարունակություն, կամ 1-մեկ կոդը, եթե տվյալ հաղորդագրությունը վերջինն է: Լրացուցիչ [/3n/1n] ենթամասը լրացվում է միայն 16x մասի լրացումից հետո: Այն դեպքում, երբ՝ մեկ հաղորդագրության առավելագույն մեծության համար սահմանված պահանջը (օրինակ՝ 20000 բայթը կամ

գործարքների քանակը) գերազանցելու հետևանքով ուղարկվում է միևնույն աճուրդի և միևնույն բանկի գործարքների հետ կապված երկրորդ (հաջորդ) հաղորդագրությունը, ապա լրացուցիչ [/3n/1n] ենթամասը պարտադիր լրացվում է: Ընդ որում, յուրաքանչյուր աճուրդով մեկ մասնակցի համար մեկից ավել ուղարկվող բոլոր ՀՏ 515 հաղորդագրությունները միասին են կազմում տվյալ աճուրդով այդ մասնակցի բավարարված գործարքները, և այդ բոլոր ՀՏ 515-ը պետք է ստացվեն միասին՝ նույն օրը, մինչև սահմանված ժամը:

2) **Դաշտ :31: Գործարքի կնքման ամսաթիվ**
Ձևաչափ 6!n

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է աճուրդի իրականացման արդյունքում գործարքների կնքման (աճուրդի անցկացման) ամսաթիվը հետևյալ տեսքով՝ DDMMYY:

3) **Դաշտ :30V: Գործարքի կատարման ամսաթիվ**
Ձևաչափ 6!n

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է կնքված գործարքների կատարման (վերջնահաշվարկի իրականացման) ամսաթիվը հետևյալ տեսքով՝ DDMMYY:

----> «**Գ**» կրկնվող պարբերություն

4) **Դաշտ :24B: Գործարքի տեսակ**
Ձևաչափ 4x[/5]

Տվյալ **պարտադիր** դաշտում ներկայացվում է աճուրդի տեղաբաշխման կամ հետգնման տարանջատման սկզբունքը:
24B: դաշտի ձևաչափի 4x մասում կարող են լրացվել նույնականացման հետևյալ հնարավոր Հիմնական արժեքները՝

- **AUC** (Auction) – աճուրդով արժեթղթի տեղաբաշխման վերջնահաշվարկ (DVP)
- **RET** (Retire) – աճուրդի միջոցով արժեթղթի հետգնման վերջնահաշվարկ (DVP)
- **ALD** – առանց աճուրդի արժեթղթի տեղաբաշխման վերջնահաշվարկի (DVP)
- **RTD** – առանց աճուրդի արժեթղթի հետգնման վերջնահաշվարկի (DVP)
- **ALC** – առանց աճուրդի արժեթղթի տեղաբաշխման վերջնահաշվարկի և առանց դրամական միջոցների փոխանցման
- **RTR** – առանց աճուրդի արժեթղթի հետգնման վերջնահաշվարկի և առանց դրամական միջոցների փոխանցման
- SWT- փոխանակման աճուրդի միջոցով տեղաբաշխման և հետգնման վերջնահաշվարկ (DVP):

24B: դաշտի ձևաչափի [5x] մասում՝ լրացվում են Հիմնական կոդի հետ փոխկապված լրացուցիչ կոդեր, որոնք նույնացնում են համապատասխան փոխկապված գործառույթը: Մասնավորապես.

Լրացուցիչ կոդեր կիրառվում են միայն SWT կոդի համար: Ընդ որում.

SWT- միջոցով տեղաբաշխման և հետգնման կոդի հետ միասին կարող են կիրառվել **AUC**-տեղաբաշխման աճուրդի տվյալներ և **RET** հետգնման աճուրդի տվյալներ կոդերը:

Եթե 24B: դաշտում նշվում է **SWT** արժեքը, ապա [5x] մասում պարտադիր պետք է լրացվի **AUC** կամ **RET** կոդը, որոնց միջև դրվում է մեկ թեք գիծ նշանը:

Եթե 24B: դաշտի 4x մասում նշվել է **SWT** արժեքը, ապա հաղորդագրության Գ պարբերություններն իրենց դաշտերով կրկնվելու և լրացվելու են երկու անգամ: Այն դեպքում, երբ նշվել է **SWT** արժեքը, ապա հաշվի առնելով այս Հիմնական կոդի հետ լրացվող երկրորդային կոդը և դրա միջոցով նույնականացվող գործառնության տեսակը՝ այդ Գ պարբերությունների դաշտերում պետք է լրացվեն երկրորդային կոդի գործառնության հետ փոխկապված վերջնահաշվարկի տվյալները:

Եթե 24B: դաշտի 4x մասում **SWT** արժեքից բացի սահմանված մյուս արժեքների լրացման դեպքում հաղորդագրության Գ պարբերությունը իր դաշտերով չի կարող կրկնվել և լրացվել մեկից ավելի անգամ:Միևնույն հաղորդագրության մեջ **SWT/AUC** և **SWT/RET** կոդերը միշտ պետք է հանդես գան միասին, և դրանք լրացվում են տարբեր կրկնվող Գ պարբերություններում, տարբեր :24B: դաշտերում:

Միևնույն ՀՏ515- հաղորդագրության մեջ եթե Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWT/AUC արժեքը, ապա այդ Գ պարբերության մեջ ընդգրկված բոլոր դաշտերում նշվում են փոխանակման աճուրդով արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված տվյալները: Եթե Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWT/RET արժեթքը, ապա այդ Գ պարբերության մեջ ընդգրկված բոլոր դաշտերում նշվում են փոխանակման աճուրդով արժեթղթերի հետգնման հետ կապված տվյալները: Ընդ որում, յուրաքանչյուր Գ պարբերության 35B դաշտի միջոցով նշվում է այն համապատասխան արժեթղթի ISIN կոդը, որին վերաբերում են այդ Գ պարբերության մեջ լրացված գործարքի տվյալները:

Այն դեպքում, եթե միևնույն փոխանակման աճուրդով տեղաբաշխվում է միայն մեկ տեսակի արժեթուղթ, և հետ է գնվում միայն մեկ տեսակի մեկ այլ արժեթուղթ, ապա յուրաքանչյուր արժեթղթի համար միևնույն ՀՏ515- հաղորդագրության մեջ լրացվում է համապատասխան Գ պարբերություն՝ վերջինիս հետ կապված գործարքների տվյալներով, ըստ 24B դաշտի SWT/AUC և SWT/RET կոդերի:

Ընդ որում.

ա/ :24B: դաշտում **AUC**, **RET** կոդերի կիրառման դեպքում՝

- :12B: և :23: դաշտերի առկայությունը պարտադիր է
- նախապես պետք է ուղարկված լինի ՀՏ 575 հաղորդագրություն՝ տեղաբաշխման կամ հետգնման աճուրդի ամփոփ տեղեկանք
- տեղաբաշխման կամ հետգնման աճուրդի նույնացուցիչը պետք է համընկնի նույնանուն աճուրդի ամփոփ տեղեկանքի նույնացուցչի հետ (ՀՏ 515-ի :12B: = ՀՏ 575-ի :12B:).

բ/ :24B: դաշտում **ALD**, **RTD** կոդերի կիրառման դեպքում՝

- :12B: դաշտը չպետք է լրացվի
- :23: դաշտի առկայությունը պարտադիր չէ
- գործարք կկատարվի DVP սկզբունքով «Book-Entry» և «Գործառնական օր» համակարգերի շրջանակներում.

գ/ :24B: դաշտում **ALC**, **RTR** կոդերի կիրառման դեպքում՝

- :12B: դաշտը չպետք է լրացվի
- :23: դաշտի առկայությունը պարտադիր չէ
- գործարք կկատարվի միայն «Book-Entry» համակարգում առանց դրամական միջոցների փոխանցման հնարավորության.

դ/ :24B: դաշտում SWT հիմնական կոդի կիրառման դեպքում՝

- հաղորդագրության համապատասխան կրկնվող մասերում :12B: և :23: դաշտերի առկայությունը պարտադիր է
- նախապես պետք է ուղարկված լինի ՀՏ 575 հաղորդագրությունը՝ փոխանակման աճուրդի ամփոփ տեղեկանքը
- փոխանակման աճուրդի նույնացուցիչը պետք է համընկնի նույնանուն աճուրդի ամփոփ տեղեկանքի նույնացուցչի հետ (ՀՏ 515-ի :12B: = ՀՏ 575-ի :12B:)
- գործարքը կկատարվի DVP սկզբունքով «Book-Entry» և «Գործառնական օր» համակարգերի շրջանակներում: Ընդ որում, «Book-Entry» համակարգում արժեթղթեր թողարկողի և ձեռք բերողի միջև արժեթղթերի փոխանցումը նույնպես պետք է կատարվի միաժամանակ:

ՀՏ515 Հաղորդագրության ուղարկման տեսակետից կիրառվում է հետևյալ տարանջատումը.

ա/ :24B: դաշտում **AUC**, **RET** կոդով հաղորդագրություն կարող է ուղարկել միայն տեղաբաշխման և հետգնման աճուրդի գործառույթը ապահովող օպերատորը:

ա1/ :24B: դաշտում SWT- հիմնական կոդով հաղորդագրություն կարող է ուղարկել միայն փոխանակման աճուրդի գործառույթը ապահովող օպերատորը:

բ/ :24B: դաշտում **ALC**, **ALD**, **RTD** կոդով հաղորդագրություն կարող է ուղարկել միայն պարտատոմսերի թողարկողը (օրինակ՝ ֆինանսների նախարարությունը 90000 նույնացուցչով):

գ/ :24B: դաշտում **RTR** կոդով հաղորդագրություն կարող է ուղարկել՝

- պարտատոմսերի թողարկողը
- տեղաբաշխման և հետգնման գործառույթը ապահովող օպերատորը
- «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ընկերությունը՝ 80100 նույնացուցչով:

5) **Դաշտ :35B: Արժեթղթի նույնացուցիչ**

Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը՝ ISIN կոդը: ISIN կոդավորման ստանդարտին վերջնականապես անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի 16 նիշ և մեկ բացատ՝ 1!e (White space):

6) **Դաշտ :83A: Արժեթուղթ առաքող**

Ձևաչափ 5!n

[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը հաղորդագրության մեջ պարտադիր լրացվում է, եթե. :24B: դաշտում նշվել է **AUC** կամ **ALC** կամ **ALD** կամ **SWT/AUC** արժեքներից մեկը (տեղաբաշխման գործընթաց): Այս դեպքում, հաղորդագրության այս :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է պարտատոմսերի թողարկողի նույնացուցիչը (օրինակ՝ **90000**):

Այս :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտի լրացման դեպքում՝ եթե :24B: դաշտում նշվել է **AUC** կամ **ALC** կամ **ALD** կամ **SWT/AUC** արժեքներից մեկը, ապա այդ կոդի հետ կապված «**Ա**» կրկնվող պարբերություններում պետք է առկա լինեն միայն :87A: (Արժեթուղթ ստացող՝ մասնակից) դաշտերը:

Հաղորդագրության մեջ կրկնվող միևնույն «Գ» մասում՝ սույն :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտը և յուրաքանչյուր մասնակցի կողմից կատարվելիք գործարքի համար «**Ա**» կրկնվող պարբերությունում նշված :87A: (Արժեթուղթ ստացող) դաշտը կազմում են գործարքի կատարման համար անհրաժեշտ արժեթուղթը Առաքող և այն Ստացող կողմերի վերաբերյալ տվյալների զույգը:

7) **Դաշտ :87A: Արժեթուղթ ստացող**

Ձևաչափ 5!n

[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը հաղորդագրության մեջ լրացվում է.

եթե :24B: դաշտում նշվել է **RET** կամ **RTR** կամ **RTD** կամ **SWT/RET** արժեքներից մեկը (հետգնման գործընթաց): Այս դեպքում հաղորդագրության այս :87A: (Արժեթուղթ ստացող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է պարտատոմսերի թողարկողի նույնացուցիչը:

Եթե :24B: դաշտում նշվել է **RET** կամ **RTR** կամ **RTD** կամ **SWT/RET** արժեքներից մեկը, ապա «**Ա**» կրկնվող պարբերություններում պետք է առկա լինեն միայն :83A: (Արժեթուղթ առաքող՝ մասնակից) դաշտերը:

Հաղորդագրության մեջ կրկնվող միևնույն «Գ» մասում՝ Սույն :87A: (Արժեթուղթ ստացող) դաշտը և յուրաքանչյուր մասնակցի կողմից կատարվելիք գործարքի համար «**Ա**» կրկնվող պարբերությունում նշված :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտը կազմում են գործարքի կատարման համար անհրաժեշտ արժեթուղթը Ստացող և այն Առաքող կողմերի վերաբերյալ տվյալների զույգը:

----> «**Ա**» կրկնվող պարբերություն

8) **Դաշտ :83A: Արժեթուղթ առաքող (մասնակից)**

Ձևաչափ 5!n

[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է՝ հաշվի առնելով համապատասխան կրկնվող «Գ» պարբերության :24B: դաշտի արժեքը: Այն դեպքում, երբ :24B: դաշտում նշվել է **RET** կամ **RTR** կամ **RTD** կամ **SWT/RET** արժեքներից մեկը (հետգնման վերջնահաշվարկ), ապա «**Ա**» կրկնվող պարբերության այս :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է այն մասնակցի նույնացուցիչը, որից հետ է գնվում արժեթուղթը: «**Ա**» Կրկնվող պարբերության այս :83A: դաշտը և հաղորդագրության մեջ առկա :87A: («**Ա**» կրկնվող պարբերությունից առաջ գտնվող) դաշտը կազմում է գործարքի կատարման համար անհրաժեշտ Ստացող – Առաքող կողմերի հետ կապված տվյալների զույգը:

9) **Դաշտ :87A: Արժեթուղթ ստացող (մասնակից)**

Ձևաչափ 5!n

[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է՝ հաշվի առնելով համապատասխան կրկնվող «Գ» պարբերության :24B: դաշտի արժեքը: Այն դեպքում, երբ :24B: դաշտում նշվել է **AUC** կամ **ALC** կամ **ALD** կամ **SWT/AUC** արժեքներից մեկը (տեղաբաշխման վերջնահաշվարկ), ապա «**Ա**» կրկնվող պարբերության այս :87A: (Արժեթուղթ ստացող մասնակցի) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է այն մասնակցի նույնացուցիչը, որը աճուրդի արդյունքում գնում է արժեթուղթը: «**Ա**» Կրկնվող պարբերության այս :87A: դաշտը և հաղորդագրության մեջ առկա :83A: («**Ա**» կրկնվող պարբերությունից առաջ գտնվող) դաշտը կազմում են գործարքի կատարման համար անհրաժեշտ Առաքող – Ստացող կողմերի հետ կապված տվյալների զույգը:

----> «**Բ**» կրկնվող ենթապարբերություն

«**Բ**» կրկնվող ենթապարբերությունը պետք է լրացվի ըստ կատարման առաջնահերթության, այսինքն՝ յուրաքանչյուր մասնակցի գործարքները կատարվելու են ըստ կրկնվող **Բ** ենթապարբերության լրացման հերթականության՝ FIFO սկզբունքով:
Միևնույն Հաղորդագրության կրկնվող «Գ» պարբերության :24B: դաշտերում SWT/AUC կոդը և մեկ այլ կրկնվող «Գ» պարբերության :24B: դաշտերում լրացված SWT/RET կոդը հետ կապված համապատասխան կրկնվող «Գ» պարբերությունների մեջ նշված գործարքները կազմում են միմյանց զույգը՝ փոխանակման աճուրդի միջոցով կնքված տեղաբաշխման (SWT/AUC) և հետգնման (SWT/RET) գործարքների համար: Փոխանակման աճուրդով կնքված միևնույն գործարքին փոխկապված տեղաբաշխման և հետգնման արժեթղթերի տվյալները հաղորդագրության համապատասխան կրկնվող պարբերություններում պետք է լրացվեն միևնույն առաջնահերթությամբ: Այդ գործարքների դիմաց վերջնահաշվարկը կատարվում է միաժամանակ, որի համար օպերատորը ապահովում է դրանց կատարման հետ կապված առաջնահերթության ճիշտ լրացումը: Այն դեպքում, երբ միևնույն բանկի կնքված գործարքների վերաբերյալ ուղարկվում է մեկից ավելի ՀՏ 515 հաղորդագրություն, ապա տվյալ փոխանակման աճուրդով կնքված միևնույն գործարքին փոխկապված տեղաբաշխման և հետգնման տվյալները պետք է լրացված լինեն միևնույն հաղորդագրության մեջ:

10) **Դաշտ :24C: Սեփականության նույնացուցիչ** (սեփական կամ ներդրող տարանջատում)

Ձևաչափ 4x

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է մասնակցի կողմից սեփական կամ ներդրողի համար կատարվող գործարքի տարանջատման նույնացուցիչը:
Հնարավոր արժեքներն են՝ **OWN** – սեփական կամ **INV** – ներդրող:

11) **Դաշտ :35C: Փոխանցվող արժեթղթի ծավալ**

Ձևաչափ 15d

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է մասնակցի կողմից կնքված յուրաքանչյուր գործարքի կատարման դիմաց փոխանցվող արժեթղթի ծավալը (մասնակցից՝ հետգնման դեպքում, ինչպես նաև մասնակցին՝ տեղաբաշխման կամ վերաբացման դեպքում): Ընդ

որում, իրականացվող գործարքի տեսակը և արժեթղթի նույնացուցիչը փոխկապված են և բնութագրվում են համապատասխան հերթականության «**Գ**» պարբերության դաշտերում նշված արժեքներով: Եթե.

ա/ :24B: դաշտում նշվում է **AUC** կամ **SWT/AUC** արժեքը, ապա այս :35**C**: դաշտում նշվում է աճուրդի կամ փոխանակման աճուրդի արդյունքում թողարկողի կողմից մասնակցին փոխանցվող (տեղաբաշխվող) արժեթղթի ծավալը:

բ/ :24B: դաշտում նշվում է **RET** կամ **SWT/RET** արժեքը, ապա այս :35**C**: դաշտում նշվում է հետ գնման աճուրդի կամ փոխանակման աճուրդի արդյունքում մասնակցի կողմից թողարկողին փոխանցվող արժեթղթի ծավալը:

12) **Դաշտ :35A: Ծավալի արժողություն**

Ձևաչափ 3!a15d

Տվյալ օժանդակ դաշտում լրացվում է մասնակցի կողմից յուրաքանչյուր գործարքի կատարման դիմաց վճարվելիք գումարը: Սույն դաշտի 3!a ենթադաշտում լրացվում է **AMD**, այն կարող է ունենալ այլ արժեք հետագայում՝ արտարժույթով վճարվող գումար լրացնելու պարագայում: Բոլոր ենթապարբերություններում :35**A**: դաշտում արժույթի կոդը պետք է լինի նույնը: Միաժամանակ.

Եթե :24B: դաշտում նշվում է AUC կամ RET կամ ALD կամ RTD արժեքը, ապա կրկնվող պարբերության :35A: դաշտերը պարտադիր լրացվում են: Այդ թվում՝ :35A: դաշտերի արժեքը պետք է մեծ լինի զրոյից:

Եթե :24B: դաշտում նշվում է ALC կամ RTR արժեքը, ապա կրկնվող պարբերության :35A: դաշտերը պարտադիր լրացվում են, և դրանց արժեքը նույնպես պետք է զրոյից մեծ լինի:

Ընդ որում՝

- Տեղաբաշխման կամ վերաբացման դեպքում՝

  ա/ եթե :24B: դաշտում նշված է **AUC** կամ **ALD**, ապա այս կրկնվող «**Բ**» ենթապարբերության :35**A**: դաշտում նշված դրամական միջոցների փոխանցումը կատարվում է մասնակցից դեպի թողարկողին՝ DVP սկզբունքով.

  բ/ եթե :24B: դաշտում նշված է **ALC**, ապա այս կրկնվող «**Բ**» ենթապարբերության :35**A**: դաշտով դրամական միջոցների փոխանցում չի կատարվում:

- Հետգնման դեպքում՝

  գ/ եթե :24B: դաշտում նշված է **RET** կամ **RTD**, ապա այս կրկնվող «**Բ**» ենթապարբերության :35**A**: դաշտում նշված դրամական միջոցների փոխանցումը կատարվում է թողարկողից դեպի մասնակցին՝ DVP սկզբունքով.

  դ/ եթե :24B: դաշտում նշված է **RTR**, ապա այս կրկնվող «**Բ**» ենթապարբերության :35**A**: դաշտով դրամական միջոցների փոխանցում չի կատարվում:

Արժեթղթի փոխանակման աճուրդի դեպքում. Եթե :24B: դաշտում նշվում է SWT հիմնական կոդը, ապա յուրաքանչյուր գործարքի հետ կապված կրկնվող պարբերության :35A: դաշտը պարտադիր լրացվում է ստորև նշված կանոնի համաձայն, որտեղ :35A: դաշտում լրացվում է զուտացված գումարը: Ընդ որում, միևնույն հաղորդագրության մեջ վճարվելիք յուրաքանչյուր զուտացված գումարը լրացվում է մեկ անգամ՝ կամ միայն :24B: դաշտում SWT/AUC կոդը պարունակող Գ պարբերության կրկնվող 35A դաշտերում, կամ միայն :24B:

դաշտում SWT/RET կոդը պարունակող Գ պարբերության կրկնվող 35A դաշտերում: Մասնավորապես.

ա1/ երբ կատարված զուտացման արդյունքում վճարող կողմը մասնակիցն է, ապա վճարվելիք զուտացված գումարը լրացվում է այն «Գ» պարբերության մեջ, որի :24B: դաշտում նշված է SWT/AUC արժեքը: Որի դեպքում.

ա1.1/ հաղորդագրության :24B:=SWT/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ համապատասխան «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտը պարտադիր լրացվում է, և նշվում է վճարվող զուտ գումարը, որը պետք է լինի զրոյից մեծ: Այն դեպքում, երբ զուտ գումարը հավասար է զրոյի, ապա տվյալ :35A: դաշտում չի լրացվում: Զուտ գումարը չի կարող լինել բացասական թիվ,

ա1.2/ միաժամանակ հաղորդագրության :24B:=SWT/RET արժեքով «Գ» պարբերության մեջ համապատասխան «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտերը արդեն չեն լրացվում, քանի որ գումարը արդեն լրացված է վերջինիս զույգ կազմող SWT/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ.

ա2/ երբ կատարված զուտացման արդյունքում վճարող կողմը թողարկողն է, ապա վճարվելիք զուտացված գումարը լրացվում է այն «Գ» պարբերության մեջ, որի :24B: դաշտում նշված է SWT/RET արժեքը: Որի դեպքում.

ա2.1/ հաղորդագրության :24B:=SWT/RET արժեքով «Գ» պարբերության մեջ գտնվող :35A: դաշտը պարտադիր լրացվում է ըստ ա1.1)-կետում նշված մոտեցման.

ա2.2/ միաժամանակ հաղորդագրության :24B:=SWT/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտերը արդեն չեն լրացվում, քանի որ գումարը արդեն լրացված է վերջինիս զույգ կազմող SWT/RET արժեքով «Գ» պարբերության մեջ:

13) **Դաշտ :23: Լրացուցիչ նույնացուցիչ**

Ձևաչափ 16x

Տվյալ օժանդակ դաշտում լրացվում է կնքված գործարքի բացառիկ նույնացուցիչը (կարող է օգտագործվել աճուրդի վերջնահաշվարկի արդյունքների մասին, որպես ածանցյալ տեղեկատվություն, շահագրգիռ կողմերին ուղարկելիս): Այն դեպքում, երբ Գ պարբերության մեջ :24B: դաշտում նշվում է **SWT/AUC** կամ **SWT/RET** արժեքը, ապա Բ-կրկնվող պարբերության այս **:23:** դաշտը պարտադիր պետք է լրացվի: Ընդ որում, յուրաքանչյուր **:23:** դաշտի արժեքը պետք է լինի բացառիկ, սակայն **SWT/AUC** –ին փոխկապված «Գ» կրկնվող պարբերության և **SWT/RET-** ին փոխկապված «Գ» կրկնվող պարբերության մեջ Բ- կրկնվող պարբերությունների միջոցով համապատասխան հերթականությամբ նշված միևնույն առաջարկին (կնքված մեկ գործարքին) վերաբերող լրացուցիչ նույնացուցիչը պետք է լինի նույնը, որը թույլ կտա ստուգել և գտնել միևնույն գործարքով տեղաբաշխվող և հետգնվող արժեթղթերի զույգը, ինչպես նաև փոխանցման ենթակա դրամական միջոցները:

----I «**Բ**» կրկնվող ենթապարբերություն
----I «**Ա**» կրկնվող պարբերություն
----I «**Գ**» կրկնվող պարբերություն

ՀՏ 516 Վերջնահաշվարկի կատարման անդորրագիր

Այս հաղորդագրությունը օգտագործվում է գործարքների (արժեթղթի առքի, վաճառքի, տեղաբաշխման, վերաբացման, ինչպես նաև հետգնման կամ փոխանակման աճուրդի) վերջնահաշվարկ իրականացնողի (ԿԲ) կողմից: Այն ուղարկվում է գործարքի կողմերին (առևտրային բանկերին, Կենտրոնական դեպոզիտարիային, Բորսային, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը) և հանդիսանում է գործարքների կատարման կամ մերժման անդորրագիր:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա-վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Ο	12B	Աճուրդի նույնացուցիչ	16x[/3n/1n]	5
«**Գ**» կրկնվող պարբերություն ----->				
Պ	24B	Գործարքի տեսակ	4x[/5x]	3
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	4
*Ο	83A	Արժեթուղթ առաքող	5!n [4*35x]	6
*Ο	87A	Արժեթուղթ ստացող	5!n [4*35x]	7
«**Ա**» կրկնվող պարբերություն ---->				
**Ο	83A	Արժեթուղթ առաքող (մասնակից)	5!n [4*35x]	8
**Ο	87A	Արժեթուղթ ստացող (մասնակից)	5!n [4*35x]	9
«**Բ**» կրկնվող ենթապարբերություն ---->				
Պ	24C	Սեփականության նույնացուցիչ	4x	10
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	11
Ο	35A	Ծավալի արժողություն	3!a15d	12
Ο	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	13

Պ	23A	Գործարքի կատարման նույնացուցիչ	8x	14
-----Ի «**Բ**» կրկնվող ենթապարբերություն -----Ի «**Ա**» կրկնվող պարբերություն				
----Ի «**Գ**» կրկնվող պարբերություն				

Պ - պարտադիր, Օ – օժանդակ

* - ով նշված երկու օժանդակ դաշտերից մեկը և միայն մեկը պարտադիր պետք է առկա լինի
** - ով նշված երկու օժանդակ դաշտերից մեկը և միայն մեկը պարտադիր պետք է առկա լինի:

Միևնույն հաղորդագրության Գ կրկնվող պարբերությունների քանակը կարող է լինել երկուսը, եթե յուրաքանչյուր Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWT/AUC կամ SWT/RET արժեքը: Երկու Գ կրկնվող պարբերությունների լրացման դեպքում պետք է լրացված լինի 24B դաշտը, որը պարունակի SWT/AUC և SWT/RET արժեքներից յուրաքանչյուրը միայն մեկական անգամ: SWT/AUC և SWT/RET արժեքները պարունակող Գ կրկնվող պարբերությունների համախումբը հանդիսանում են միևնույն գործարքի բաղադրիչներ և կազմում են միմյանց զույգերը:

24B դաշտի այլ արժեքների դեպքում Գ կրկնվող պարբերությունների քանակը պետք է լինի մեկը:


Այն դեպքում, երբ միևնույն հաղորդագրության Գ կրկնվող պարբերություններից մեկում 24B դաշտը ընդունել է SWT/AUC, իսկ մյուսում 24B դաշտը ընդունել է SWT/RET արժեքը, ապա Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտում նշվում է աճուրդի ժամանակ կատարված զուտացման արդյունքում վճարվելիք զուտացված գումարը: Միևնույն հաղորդագրության մեջ վճարվելիք զուտացված գումարը լրացվում է միայն SWT/AUC կոդը պարունակող Գ պարբերության մեջ կրկնվող 35A դաշտերում կամ միայն SWT/RET կոդը պարունակող Գ պարբերության մեջ կրկնվող 35A դաշտերում: Ընդ որում.

ա/ եթե վճարողը մասնակից բանկն է, ապա վճարվելիք զուտ գումարը նշվում է 24B դաշտում SWT/AUC- կոդը պարունակող Գ պարբերության մեջ գտնվող Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտում, իսկ SWT/RET - կոդը պարունակող Գ պարբերության մեջ Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտը չի լրացվում:

բ/ եթե վճարողը թողարկողն է, ապա վճարվելիք զուտ գումարը նշվում է 24B դաշտում SWT/RET - կոդը պարունակող Գ կրկնվող պարբերության մեջ գտնվող Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտում, իսկ SWT/AUC - կոդը պարունակող Գ պարբերության մեջ Բ կրկնվող ենթապարբերության 35A դաշտը չի լրացվում:

Ձևավորված և ուղարկվող սույն հաղորդագրության առավելագույն մեծությունը (լրացված բոլոր տվյալների, ինչպես նաև՝ պարբերությունների, ենթապարբերությունների հետ միասին), այդ թվում՝ հաշվի առնելով հաղորդագրության գլխագրի տվյալները, չպետք է գերազանցի 20000 բայթը:

Հաղորդագրությունը ԿԲ-ից ուղարկվում է նկար 1-ում պատկերված ճանապարհներով:



Նկար 1

Դաշտերի նկարագրությունը՝

1) Դաշտ :**20**: Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ :**21**: Գործառնության հղման համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ հաղորդագրության համար հիմք հանդիսացող հաղորդագրության :20: դաշտի արժեքը (ՀՏ 515–ով ստացվում է աճուրդի վերջնահաշվարկի հանձնարարականը կամ ՀՏ 515-ով ստացվում է փոխանակման աճուրդի վերջնահաշվարկի հանձնարարականը: Ընդ որում, ստացված ՀՏ 515-ի դիմաց՝ վերջնահաշվարկի կատարման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է տվյալ՝ ՀՏ 516 հաղորդագրության մեջ):

1) Դաշտ :**12B**: Աճուրդի նույնացուցիչ
Ձևաչափ 16x[/3n/1n]

Տվյալ օժանդակ դաշտի 16x մասում լրացվում է իրականացված տեղաբաշխման, վերաբացման հետգնման կամ փոխանակման աճուրդի բացառիկ նույնացուցիչը: Եթե տեղաբաշխումը կամ հետգնումը չեն իրականացվել աճուրդով (այսինքն՝ :24B: = **ALD** կամ **ALC** կամ **RTD** կամ **RTR** հիմնական կոդերին), ապա այս :12B: դաշտը կարող է չլրացվել:

Լրացուցիչ [/3n/1n] ենթամասում լրացվող տվյալները բնութագրում են 16x մասում նշված աճուրդի հետ կապված միևնույն բանկի համար ուղարկվող հաղորդագրությունների քանակը, որտեղ /3n -ում նշվում է հաղորդագրության հերթական համարը, իսկ /1n -ում նշվում է՝ 0-զրո կոդը, եթե տվյալ հաղորդագրությունը ունի շարունակություն, կամ 1-մեկ կոդը, եթե տվյալ հաղորդագրությունը վերջինն է: Լրացուցիչ [/3n/1n] ենթամասը լրացվում է միայն 16x մասի լրացումից հետո: Այն դեպքում, երբ մեկ հաղորդագրության առավելագույն մեծությունը (որը սահմանված է 20000 բայթ), գերազանցելու հետևանքով ուղարկվում է միևնույն աճուրդի և միևնույն բանկի գործարքների հետ կապված երկրորդ (հաջորդ) հաղորդագրությունը, ապա լրացուցիչ [/3n/1n] ենթամասը պարտադիր լրացվում է:

----> «**Գ**» կրկնվող պարբերություն

2) Դաշտ :**24B**: Գործարքի տեսակ
Ձևաչափ 4x[/5]

Տվյալ **պարտադիր** դաշտում ներկայացվում են արժեթղթի տեղաբաշխման, հետգնման կամ փոխանակման գործընթացների տարանջատման համար սահմանված արժեքները:
24B: դաշտի ձևաչափի 4x մասում կարող են լրացվել նույնականացման հետևյալ Հիմնական
հնարավոր արժեքները՝

- **AUC** (Auction) – աճուրդի միջոցով արժեթղթի տեղաբաշխման վերջնահաշվարկ (DVP)
- **RET** (Retire) – աճուրդի միջոցով արժեթղթի հետգնման վերջնահաշվարկ (DVP)
- **ALD** – առանց աճուրդի արժեթղթի տեղաբաշխման վերջնահաշվարկ (DVP)
- **RTD** – առանց աճուրդի արժեթղթի հետգնման վերջնահաշվարկ (DVP)
- **ALC** – առանց աճուրդի արժեթղթի տեղաբաշխման վերջնական առաքում
- **RTR** – առանց աճուրդի արժեթղթի հետգնման վերջնական բաշխում
- SWT- փոխանակման աճուրդի միջոցով տեղաբաշխման և հետ գնման վերջնահաշվարկ (DVP):

24B: դաշտի ձևաչափի [5x] մասում լրացվում են Հիմնական կոդի հետ փոխկապված լրացուցիչ կոդեր, որոնք նույնացնում են համապատասխան փոխկապված գործառույթը: Մասնավորապես.
Լրացուցիչ կոդեր կիրառվում են միայն SWT կոդի համար: Ընդ որում.
SWT- միջոցով տեղաբաշխման և հետգնման կոդի հետ միասին կարող են կիրառվել **AUC**-տեղաբաշխման աճուրդի տվյալներ և **RET** հետգնման աճուրդի տվյալներ կոդերը:

Եթե 24B: դաշտում նշվում է **SWT** հիմնական արժեքը, ապա [5x] մասում պարտադիր պետք է լրացվի **AUC** կամ **RET** կոդը, որոնց միջև դրվում է մեկ թեք գիծ նշանը:

Եթե 24B: դաշտի 4x մասում նշվել է **SWT** հիմնական արժեքը, ապա հաղորդագրության Գ պարբերությունը իր դաշտերով կրկնվելու և լրացվելու են երկու անգամ: Այն դեպքում, երբ նշվել է **SWT** արժեքը, ապա հաշվի առնելով այս Հիմնական կոդի հետ լրացվող երկրորդային կոդը և դրա միջոցով նույնականացվող գործառնության տեսակը, այդ Գ պարբերությունների դաշտերում պետք է լրացվեն երկրորդային կոդի գործառնության հետ փոխկապված վերջնահաշվարկի տվյալները:

Եթե 24B: դաշտի 4x մասում **SWT** հիմնական արժեքից բացի սահմանված մյուս արժեքների լրացման դեպքում հաղորդագրության Գ պարբերությունը իր դաշտերով չի կարող կրկնվել և լրացվել մեկից ավելի անգամ: Միևնույն հաղորդագրության մեջ **SWT/AUC** և **SWT/RET** կոդերը միշտ պետք է հանդես գան միասին, և դրանք լրացվում են տարբեր կրկնվող Գ պարբերություններում, տարբեր :24B: դաշտերում: Միևնույն հաղորդագրության մեջ, եթե Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWT/AUC արժեքը, ապա այդ Գ պարբերության մեջ ընդգրկված բոլոր դաշտերում նշվում են փոխանակման աճուրդով արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված տվյալները: Եթե Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWT/RET արժեքը, ապա այդ Գ պարբերության մեջ ընդգրկված բոլոր դաշտերում նշվում են փոխանակման աճուրդով արժեթղթերի հետգնման հետ կապված տվյալները: Ընդ որում, յուրաքանչյուր Գ պարբերության 35B դաշտի միջոցով նշվում է այն համապատասխան արժեթղթի ISIN կոդը որին վերաբերում են այդ Գ պարբերության մեջ լրացված գործարքի տվյալները:

Այն դեպքում, եթե միևնույն փոխանակման աճուրդով տեղաբաշխվում է միայն մեկ տեսակի արժեթուղթ, և հետ է գնվում միայն մեկ տեսակի մեկ այլ արժեթուղթ, ապա յուրաքանչյուր արժեթղթի համար միևնույն հաղորդագրության մեջ լրացվում է համապատասխան Գ պարբերություն՝ վերջինիս հետ կապված գործարքների տվյալներով, ըստ 24B դաշտի SWT/AUC և SWT/RET կոդերի:

3) Դաշտ :**35B**: Արժեթղթի նույնացուցիչ
Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը՝ ISIN կոդը: ISIN կոդավորման ստանդարտին վերջնականապես անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի 16 նիշ և մեկ բացատ՝ 1!e (White space):

4) Դաշտ :**83A**: Արժեթուղթ առաքող
Ձևաչափ 5!n
[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը պարտադիր լրացվում է հաղորդագրության մեջ, եթե :24B: դաշտում նշվել է **AUC** կամ **ALC** կամ **ALD** կամ **SWT/AUC** արժեքներից մեկը (տեղաբաշխման վերջնահաշվարկ): Այս դեպքում հաղորդագրության այս :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է թողարկողի նույնացուցիչը: Այն դեպքում, երբ :24B: դաշտում նշվել է **AUC** կամ **ALC** կամ **ALD** կամ **SWT/AUC** արժեքներից մեկը, ապա այս :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտի լրացման դեպքում «**Ա**» կրկնվող պարբերություններում պետք է լրացված լինեն միայն :87A: (արժեթուղթ ստացող՝

մասնակից) դաշտերի տվյալները, որոնք միասին կազմում են կատարված գործարքների հետ կապված Առաքող – Ստացող կողմերի վերաբերյալ տվյալների զույգերը:

5) Դաշտ :**87A**: Արժեթուղթ ստացող
Ձևաչափ 5!n
[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է հաղորդագրության մեջ, եթե :24B: դաշտում նշվել է **RET** կամ **RTD** կամ **RTR** կամ **SWT/RET** արժեքներից մեկը (հետգնման վերջնահաշվարկ): Այս դեպքում հաղորդագրության այս :87A: (Արժեթուղթ ստացող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է թողարկողի նույնացուցիչը: Այն դեպքում, երբ :24B: դաշտում նշվել է **RET** կամ **RTD** կամ **RTR** կամ **SWT/RET** արժեքներից մեկը, այս :87A: (Արժեթուղթ ստացող) դաշտի լրացման դեպքում «**Ա**» կրկնվող պարբերություններում պետք է լրացված լինեն միայն :83A: (արժեթուղթ առաքող՝ մասնակից) դաշտերի տվյալները, որոնք միասին կազմում են կատարված գործարքների հետ կապված Ստացող – Առաքող կողմերի վերաբերյալ տվյալների զույգերը:

-----> «**Ա**» կրկնվող պարբերություն

6) Դաշտ :**83A**: Արժեթուղթ առաքող (մասնակից)
Ձևաչափ 5!n
[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է, եթե :24B: դաշտում նշվել է **RET** կամ **RTD** կամ **RTR** կամ **SWT/RET** արժեքներից մեկը (հետգնման վերջնահաշվարկ): Կրկնվող պարբերության այս :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է այն մասնակցի նույնացուցիչը, որից հետ է գնվում արժեթուղթը:

7) Դաշտ :**87A**: Արժեթուղթ ստացող (մասնակից)
Ձևաչափ 5!n
[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է, եթե :24B: դաշտում նշվել է **AUC** կամ **ALC** կամ **ALD** կամ **SWT/AUC** արժեքներից մեկը (տեղաբաշխման վերջնահաշվարկ): Կրկնվող պարբերության այս :87A: (Արժեթուղթ ստացող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է այն մասնակցի նույնացուցիչը, որը աճուրդի արդյունքում գնում է արժեթուղթը:

-----> «**Բ**» կրկնվող ենթապարբերություն

Այն դեպքում, երբ միևնույն բանկի կատարված գործարքների վերաբերյալ ուղարկվում է մեկից ավելի ՀՏ 516 հաղորդագրություն, ապա տվյալ փոխանակման աճուրդով կնքված միևնույն գործարքին փոխկապված տեղաբաշխման և հետգնման տվյալները պետք է լրացված լինեն միևնույն հաղորդագրության մեջ:

8) Դաշտ :**24C**: Սեփականության նույնացուցիչ (սեփական/ներդրող տարանջատում)
Ձևաչափ 4x

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է մասնակցի կողմից անմիջապես իր կամ ներդրողի համար կատարվող գործարքի տարանջատման նույնացուցիչը:
Հնարավոր արժեքներն են՝ **OWN** – սեփական կամ **INV** – ներդրող:

9) Դաշտ :**35C**: Փոխանցվող արժեթղթի ծավալ

Ձևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է մասնակցի կողմից կնքված գործարքի դիմաց փոխանցվող արժեթղթի ծավալը (մասնակցից՝ հետգնման աճուրդի դեպքում և մասնակցին՝ տեղաբաշխման աճուրդի դեպքում): Ընդ որում, իրականացվող գործարքի տեսակը և արժեթղթի նույնացուցիչը փոխկապված են և բնութագրվում են համապատասխան հերթականության «**Գ**» պարբերության դաշտերում նշված արժեքներով: Եթե՝

ա/ :24B: դաշտում նշվում է **AUC** կամ **SWT/AUC** արժեքը, ապա այս :35**C**: դաշտում նշվում է աճուրդի կամ փոխանակման աճուրդի արդյունքում թողարկողի կողմից մասնակցին փոխանցվող (տեղաբաշխվող) արժեթղթի ծավալը.

բ/ :24B: դաշտում նշվում է **RET** կամ **SWT/RET** արժեքը, ապա այս :35**C**: դաշտում նշվում է հետգնման աճուրդի կամ փոխանակման աճուրդի արդյունքում մասնակցի կողմից թողարկողին փոխանցվող արժեթղթի ծավալը:

10) Դաշտ :**35A**: Ծավալի արժողություն

Ձևաչափ 3!a15d

Այս օժանդակ դաշտում նշվում է մասնակցի կողմից յուրաքանչյուր գործարքի կատարման համար վճարվելիք գումարը: Սույն դաշտի 3!a ենթադաշտում լրացվում է **AMD**, այն կարող է ունենալ այլ արժեք հետագայում՝ արտարժույթով վճարվող գումար լրացնելու դեպքում: Բոլոր ենթապարբերություններում :35A: դաշտում արժույթի կոդը պետք է լինի նույնը: Միևնույն ժամանակ.

Եթե :24B: դաշտում նշվում է AUC կամ RET կամ ALD կամ RTD արժեքը, ապա կրկնվող պարբերության :35A: դաշտերը պարտադիր լրացվում են: Այդ թվում՝ :35A: դաշտերի արժեքը պետք է մեծ լինի զրոյից:

Եթե :24B: դաշտում նշվում է ALC կամ RTR արժեքը, ապա կրկնվող պարբերության :35A: դաշտերը պարտադիր լրացվում են, և դրանց արժեքը նույնպես պետք է զրոյից մեծ լինի:

Ընդ որում.

ա/ Արժեթղթի տեղաբաշխման դեպքում, երբ :24B: դաշտում նշված է **AUC** կամ **ALD** արժեքը, ապա այս կրկնվող «**Բ**» ենթապարբերության :35**A**: դաշտում նշված վճարումը կատարվում է մասնակցի կողմից՝ թողարկողին,

բ/ իսկ հետգնման դեպքում, երբ :24B: դաշտում նշված է **RET** կամ **RTD** արժեքը, ապա այս կրկնվող «**Բ**» ենթապարբերության :35**A**: դաշտում նշված վճարումը կատարվում է թողարկողի կողմից՝ մասնակցին,

գ/ այն դեպքում, երբ :24B: = **ALC** կամ **RTR**, ապա դրամական միջոցների փոխանցում չի կատարվում:

Արժեթղթի փոխանակման աճուրդի դեպքում եթե :24B: դաշտում նշվում է **SWT** հիմնական կոդը, ապա յուրաքանչյուր գործարքի հետ կապված կրկնվող պարբերության :35A: դաշտը պարտադիր լրացվում է ստորև նշված կանոնի համաձայն, որտեղ :35A: դաշտում լրացվում է զուտացված գումարը: Ընդ որում, միևնույն հաղորդագրության մեջ վճարվելիք յուրաքանչյուր զուտացված գումարը լրացվում է մեկ անգամ՝ կամ միայն :24B: դաշտում SWT/AUC կոդը պարունակող Գ պարբերության կրկնվող 35A դաշտերում, կամ

միայն :24B: դաշտում SWT/RET կոդը պարունակող Գ պարբերության կրկնվող 35A դաշտերում: Մասնավորապես.

ա1/ երբ կատարված զուտացման արդյունքում վճարող կողմը մասնակիցն է, ապա վճարվելիք զուտացված գումարը լրացվում է այն «Գ» պարբերության մեջ, որի :24B: դաշտում նշված է **SWT/AUC** արժեքը: Որի դեպքում.

ա1.1/ հաղորդագրության :24B:=SWT/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ համապատասխան «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտը պարտադիր լրացվում է, և նշվում է վճարվող զուտ գումարը, որը պետք է լինի զրոյից մեծ: Այն դեպքում, երբ զուտ գումարը հավասար է զրոյի, ապա տվյալ :35A: դաշտը չի լրացվում: Զուտ գումարը չի կարող լինել բացասական թիվ.

ա1.2/ միաժամանակ հաղորդագրության :24B:=SWT/RET արժեքով «Գ» պարբերության մեջ համապատասխան «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտերը արդեն չեն լրացվում, քանի որ գումարը արդեն լրացված է վերջինիս զույգ կազմող SWT/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ.

ա2/ երբ կատարված զուտացման արդյունքում վճարող կողմը թողարկողն է, ապա վճարվելիք զուտացված գումարը լրացվում է այն «Գ» պարբերության մեջ, որի :24B: դաշտում նշված է SWT/RET արժեքը: Որի դեպքում.

ա2.1/ հաղորդագրության :24B:=SWT/RET արժեքով «Գ» պարբերության մեջ գտնվող :35A: դաշտը պարտադիր լրացվում է ըստ ա1.1)-կետում նշված մոտեցման.

ա2.2/ միաժամանակ հաղորդագրության :24B:=SWT/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտերը արդեն չեն լրացվում, քանի որ գումարը արդեն լրացված է վերջինիս զույգ կազմող SWT/RET արժեքով «Գ» պարբերության մեջ:

11) Դաշտ :**23**: Լրացուցիչ նույնացուցիչ (յուրաքանչյուր կնքված գործարքի չկրկնվող համարը)

Ձևաչափ 16x

Տվյալ օժանդակ դաշտում նշվում է գործարքի բացառիկ նույնացուցիչը, որը կարող է լրացվել ՀՏ 515 հաղորդագրության :23: դաշտից կամ տրվում է համակարգի կողմից: Այն դեպքում, եթե :24B: դաշտում նշվում է **SWT/AUC** կամ **SWT/RET** արժեքը, ապա այս **:23:** դաշտը պարտադիր պետք է լրացվի: Ընդ որում, պետք է նշվի ՀՏ 515 հաղորդագրության համապատասխան գործարքի հետ կապված :23: դաշտի արժեքը:

12) Դաշտ :**23A**: Գործարքի կատարման նույնացուցիչ

Ձևաչափ 8x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է կնքված գործարքի կատարման կարգավիճակը: Դաշտում գրանցվում է հետևյալ արժեքներից որևէ մեկը՝

EXEC – գործարքը կատարվել է

NEXM – գործարքը մերժվել է դրամական միջոցների անբավարարության պատճառով

NEXC – գործարքը մերժվել է արժեթղթի ծավալի անբավարարության պատճառով:


Այն դեպքում, երբ հաղորդագրության 24B: դաշտում նշվում է **SWT/AUC** կամ **SWT/RET** արժեքը, ապա Գ պարբերություններում նշվող միևնույն գործարքի հետ կապված Բ-ենթապարբերության համապատասխան դաշտում :23**A**: դաշտի արժեքը պետք է լինի նույնը:

------Ի «**Բ**» կրկնվող ենթապարբերություն
------Ի «**Ա**» կրկնվող պարբերություն
----Ի «**Գ**» կրկնվող պարբերություն:

ՀՏ 520 ՀՀ պետական արժեթղթի գնման հանձնարարական

Այս հաղորդագրության տեսակը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայում առք ու վաճառքի (ինչպես նաև, ռեպո կամ հակադարձ ռեպո) գործարքին մասնակցող պարտատոմսի Գնորդը (համակարգի մասնակիցը) Պահառուին՝ ՀՀ կենտրոնական բանկին: Այն հրահանգ է Պահառուին «Առաքում վճարման դիմաց»՝ DVP, սկզբունքով փոխանցել (վճարել) որոշակի գումար նշված գործարքի հանդիպակաց մասնակցին՝ պարտատոմս Վաճառողին, նրա կողմից համապատասխան ՀՀ պետական արժեթղթի առաքման դիմաց:

Պահառուի կողմից այս հաղորդագրության կատարումը իրականացվում է հանդիպակաց ՀՏ 521 հաղորդագրության ստացման դեպքում:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	2
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	3
Պ	83	Արժեթղթեր առաքող	13!n 4*35x	4
Պ	87	Արժեթղթեր ստացող	13!n 4*35x	5
Պ	32B	Արժույթի կոդ և գումար	3!a15d	6
Պ	50A	Վճարող	12!n[4n] 4*35x	7
Պ	59	Շահառու	12!n[4n] 4*35x	8
O	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	9

Պ – պարտադիր, O – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Չևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը: Կենտրոնական բանկ ուղարկվող հաղորդագրություններում ոչ պարտադիր [4!c1!e] ենթադաշտը չի լրացվելու: Մինչև ISIN կոդավորման ստանդարտին անցնելը այն պետք է պարունակի 10 նիշ (10!c) և արժեթղթի գրանցման համարի մաս հանդիսացող [2!c] («AM») նախդիրը պարտադիր չի լինի: ISIN կոդավորման ստանդարտին անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի առնվազն 12 նիշ:

3) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գնվող արժեթղթի ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի դիտարկվող պարտատոմսի քայլի արժեքին:

4) Դաշտ **:83:** Արժեթղթեր առաքող
Չևաչափ 13!n
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է՝ Ենթապահառուի կողմից վարվող, պարտատոմս Վաճառողի (համակարգի մասնակցի) ազատ կարգավիճակով դեպո հաշվի համարը:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերը լրացվում են **0**-ներով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի առաքումը տեղի է ունենում Վաճառողի ազատ՝ 4, կարգավիճակով սեփական՝ 2, տեսակի դեպո հաշվից:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերից առնվազն մեկը լրացվում է 0-ից տարբեր թվանշանով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի առաքումը տեղի է ունենում Վաճառողի ազատ՝ 4, կարգավիճակով ներդրողների՝ 3, տեսակի ամփոփ դեպո հաշվից:

5) Դաշտ **:87:** Արժեթղթեր ստացող
Չևաչափ 13!n
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է՝ Ենթապահառուի կողմից վարվող, պարտատոմսի Գնորդի (համակարգի մասնակցի) ազատ կարգավիճակով դեպո հաշվի համարը:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերը լրացվում են **0**-ներով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի հաշվեգրումը իրականացվում է Գնորդի ազատ՝ 4, կարգավիճակով սեփական՝ 2, տեսակի դեպո հաշվին:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերից առնվազն մեկը լրացվում է 0-ից տարբեր թվանշանով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի հաշվեգրումը իրականացվում է Գնորդի ազատ՝ 4, կարգավիճակով ներդրողների՝ 3, տեսակի ամփոփ դեպո հաշվին:

6) Դաշտ **:32B:** Արժույթի կոդ և գումար
Չևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում են արժեթղթի գնման դիմաց փոխանցվող արժույթի կոդը (ISO code) և գումարը՝ տասնորդական ստորակետից հետո **1** նիշի ճշտությամբ:

7) Դաշտ **:50A:** Վճարող
Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է պարտատոմսի Գնորդի դրամական հաշվի համարը: Նշվում են գումար փոխանցողի հաշվեհամարը և անունը (անվանումը):

Առաքում վճարման դիմաց՝ DVP, սկզբունքով վճարումը կատարվում է Կենտրոնական բանկում վարվող դրամական համապատասխան **հաշվից**, իսկ Վճարողի գրանցված հաշիվը կրում է զուտ տեղեկատվական բնույթ:

8) Դաշտ **:59:** Շահառու
Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է պարտատոմս Վաճառողի դրամական հաշվի համարը: Նշվում են գումար ստացողի հաշվեհամարը և անունը (անվանումը):

Եթե Շահառուի հաշվեհամարը հայտնի չէ (կամ հաշիվը բացակայում է), ապա հաշվեհամարի տողում նշվում են՝ Շահառուին սպասարկող բանկի գլխամասի կոդը, 6 հատ **0** և ստուգիչ նիշը: Այդ դեպքում, բացի անուն (անվանումից) լրացվում են նաև Շահառուի անձնագրի տվյալները կամ հարկային կոդը:

Առաքում վճարման դիմաց՝ DVP, սկզբունքով վճարումը կատարվում է Կենտրոնական բանկում վարվող դրամական համապատասխան **հաշվին**, իսկ Շահառուի գրանցված հաշիվը կրում է զուտ տեղեկատվական բնույթ:


9) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
Չևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում, անհրաժեշտության դեպքում, գրանցվում է հաղորդագրությունը ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվությունը: Մասնավորապես, կարող է նշվել այն փաստաթղթի՝ գործարքի կամ պայմանագրի, համարը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության (արժեթղթի գնման) համար:

ՀՏ 521 ՀՀ պետական արժեթղթի վաճառքի հանձնարարական

Այս հաղորդագրությունը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայում առք ու վաճառքի (ինչպես նաև, ռեպո կամ հակադարձ ռեպո) գործարքին մասնակցող պարտատոմս Վաճառողը (համակարգի մասնակիցը) Պահառուին՝ ՀՀ կենտրոնական բանկին: Այն հրահանգ է Պահառուին «Առաքում վճարման դիմաց»՝ DVP, սկզբունքով առաքել որոշակի պետական արժեթուղթ նշված գործարքի հանդիպակաց մասնակցին՝ պարտատոմսի Գնորդին, նրա կողմից համապատասխան գումարի փոխանցման (վճարման) դիմաց:

Պահառուի կողմից այս հաղորդագրության կատարումը իրականացվում է հանդիպակաց ՀՏ 520 հաղորդագրության ստացման դեպքում:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	2
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	3
Պ	83	Արժեթղթեր առաքող	13!n 4*35x	4
Պ	87	Արժեթղթեր ստացող	13!n 4*35x	5
Պ	32B	Արժույթի կոդ և գումար	3!a15d	6
Պ	50A	Վճարող	12!n[4n] 4*35x	7
Պ	59	Շահառու	12!n[4n] 4*35x	8
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	9

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Չևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը: Կենտրոնական բանկ ուղարկվող հաղորդագրություններում ոչ պարտադիր [4!c1!e] ենթադաշտը չի լրացվելու: Մինչև ISIN կոդավորման ստանդարտին անցնելը այն պետք է պարունակի 10 նիշ (10!c) և արժեթղթի գրանցման համարի մաս հանդիսացող [2!c] («AM») նախդիրը պարտադիր չի լինի: ISIN կոդավորման ստանդարտին անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի առնվազն 12 նիշ:

3) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է վաճառվող արժեթղթի ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի դիտարկվող պարտատոմսի քայլի արժեքին:

4) Դաշտ **:83:** Արժեթղթեր առաքող
Չևաչափ 13!n
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է՝ Ենթապահառուի կողմից վարվող, պարտատոմս Վաճառողի (համակարգի մասնակցի) ազատ կարգավիճակով դեպո հաշվի համարը:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերը լրացվում են **0**-ներով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի առաքումը տեղի է ունենում Վաճառողի ազատ՝ 4, կարգավիճակով սեփական՝ 2, տեսակի դեպո հաշվից:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերից առնվազն մեկը լրացվում է 0-ից տարբեր թվանշանով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի առաքումը տեղի է ունենում Վաճառողի ազատ՝ 4, կարգավիճակով ներդրողների՝ 3, տեսակի ամփոփ դեպո հաշվից:

5) Դաշտ **:87:** Արժեթղթեր ստացող
Չևաչափ 13!n
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է՝ Ենթապահառուի կողմից վարվող, պարտատոմսի Գնորդի (համակարգի մասնակցի) ազատ կարգավիճակով դեպո հաշվի համարը:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերը լրացվում են **0**-ներով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի հաշվեգրումը իրականացվում է Գնորդի ազատ՝ 4, կարգավիճակով սեփական՝ 2, տեսակի դեպո հաշվին:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերից առնվազն մեկը լրացվում է 0-ից տարբեր թվանշանով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի հաշվեգրումը իրականացվում է Գնորդի ազատ՝ 4, կարգավիճակով ներդրողների՝ 3, տեսակի ամփոփ դեպո հաշվին:

6) Դաշտ **:32B:** Արժույթի կոդ և գումար
Չևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում են արժեթղթի վաճառքի դիմաց ստացվող արժույթի կոդը (ISO code) և գումարը՝ տասնորդական ստորակետից հետո **1** նիշի ճշտությամբ:

7) Դաշտ **:50A:** Վճարող
Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է պարտատոմսի Գնորդի դրամական հաշվի համարը: Նշվում են գումար փոխանցողի հաշվեհամարը և անունը (անվանումը):

Առաքում վճարման դիմաց՝ DVP, սկզբունքով վճարումը կատարվում է Կենտրոնական բանկում վարվող դրամական համապատասխան **հաշվից**, իսկ Վճարողի գրանցված հաշիվը կրում է զուտ տեղեկատվական բնույթ:

8) Դաշտ **:59:** Շահառու
Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է պարտատոմս Վաճառողի դրամական հաշվի համարը: Նշվում են գումար ստացողի հաշվեհամարը և անունը (անվանումը):

Եթե Շահառուի հաշվեհամարը հայտնի չէ (կամ հաշիվը բացակայում է), ապա հաշվեհամարի տողում նշվում են՝ Շահառուին սպասարկող բանկի գլխամասի կոդը, 6 հատ **0** և ստուգիչ նիշը: Այդ դեպքում, բացի անուն (անվանումից) լրացվում են նաև Շահառուի անձնագրի տվյալները կամ հարկային կոդը:


Առաքում վճարման դիմաց՝ DVP, սկզբունքով վճարումը կատարվում է Կենտրոնական բանկում վարվող դրամական համապատասխան **հաշվին**, իսկ Շահառուի գրանցված հաշիվը կրում է զուտ տեղեկատվական բնույթ:

9) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
Չևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում, անհրաժեշտության դեպքում, գրանցվում է հաղորդագրությունը ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվությունը: Մասնավորապես, կարող է նշվել այն փաստաթղթի՝ գործարքի կամ պայմանագրի, համարը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության (արժեթղթի վաճառքի) համար:

ՀՏ 522 ՀՀ պետական արժեթղթի ազատ առաքման հանձնարարական

Այս հաղորդագրությունը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայում ազատ առաքման միակողմանի գործարքին մասնակցող արժեթղթեր Առաքողը (համակարգի մասնակիցը) պետական պարտատոմսերի Պահառուին՝ ՀՀ կենտրոնական բանկին: Այն հրահանգ է Պահառուին առանց «Առաքում վճարման դիմաց»՝ DVP, սկզբունքի փոխանցել որոշակի պետական պարտատոմս արժեթղթեր Ստացողին:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	2
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	3
Պ	83	Արժեթղթեր առաքող	13!n 4*35x	4
Պ	87	Արժեթղթեր ստացող	13!n 4*35x	5
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	6

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
   Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը: Կենտրոնական բանկ ուղարկվող հաղորդագրություններում ոչ պարտադիր [4!c1!e] ենթադաշտը չի լրացվելու: Մինչև ISIN կոդավորման ստանդարտին անցնելը այն պետք է պարունակի 10 նիշ (10!c) և արժեթղթի գրանցման համարի մաս հանդիսացող [2!c] («AM»)

նախդիրը պարտադիր չի լինի: ISIN կոդավորման ստանդարտին անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի առնվազն 12 նիշ:

3) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
   Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ազատ առաքվող արժեթղթի ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի դիտարկվող պարտատոմսի քայլի արժեքին:

4) Դաշտ **:83:** Արժեթղթեր առաքող
   Չևաչափ 13!n
   4*35x

Այս **պարտադիր** դաշտի 13!n ենթադաշտում ներկայացվում է՝ Ենթապահառուի (առևտրային բանկի) կողմից վարվող, արժեթղթեր Առաքողի (համակարգի մասնակցի) ազատ կարգավիճակով դեպո հաշվի համարը:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերը լրացվում են **0**-ներով, ապա Կենտրոնական բանկում պետական արժեթղթի փոխանցումը տեղի է ունենում անմիջապես Առաքողի ազատ՝ 4, կարգավիճակով սեփական՝ 2, տեսակի դեպո **հաշվից**:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերից առնվազն մեկը լրացվում է 0-ից տարբեր թվանշանով, ապա Կենտրոնական բանկում պետական արժեթղթի փոխանցումը տեղի է ունենում Առաքողի ազատ՝ 4, կարգավիճակով ներդրողների՝ 3, տեսակի ամփոփ դեպո **հաշվից**:

5) Դաշտ **:87:** Արժեթղթեր ստացող
   Չևաչափ 13!n
   4*35x

Այս **պարտադիր** դաշտի 13!n ենթադաշտում ներկայացվում է՝ Ենթապահառուի (առևտրային բանկի) կողմից վարվող, արժեթղթեր Ստացողի (համակարգի մասնակցի) ազատ կարգավիճակով դեպո հաշվի համարը:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերը լրացվում են **0**-ներով, ապա Կենտրոնական բանկում պետական արժեթղթի հաշվեգրումը իրականացվում է անմիջապես Ստացողի ազատ՝ 4, կարգավիճակով սեփական՝ 2, տեսակի դեպո **հաշվին**:


Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերից առնվազն մեկը լրացվում է 0-ից տարբեր թվանշանով, ապա Կենտրոնական բանկում պետական արժեթղթի հաշվեգրումը իրականացվում է Ստացողի ազատ՝ 4, կարգավիճակով ներդրողների՝ 3, տեսակի ամփոփ դեպո **հաշվին**:

6) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
   Չևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում, անհրաժեշտության դեպքում, գրանցվում է հաղորդագրությունը ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվությունը: Մասնավորապես, կարող է նշվել այն փաստաթղթի՝ գործարքի կամ պայմանագրի, համարը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության համար:

ՀՏ 523 ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների համար արժեթղթերի փոխանցման հանձնարարական

Այս հաղորդագրությունը օգտագործվում է Կենտրոնական բանկի հետ գործառնությունների կատարման համար պետական և կորպորատիվ արժեթղթերի փոխանցման ժամանակ: Այն ուղարկվում է Պահառուին՝ ՀՀ կենտրոնական բանկ կամ Կենտրոնական դեպոզիտարիա, գործարքի կողմ հանդիսացող պարտատոմսեր առաքող համակարգի մասնակցի կողմից (Առաքողից): Այն հրահանգ է Պահառուին միակողմանի (առանց «Առաքում վճարման դիմաց»՝ DVP, սկզբունքի) փոխանցել անհրաժեշտ արժեթղթեր Ստացողին:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	24B	Փոխանցման հիմք	4x	2
Բ կրնկնվող պարբերություն ----⩾				
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	3
O	35C	Փոխանցվող պետական արժեթղթի ծավալ	15d	4
O	35Q	Փոխանցվող կորպորատիվ արժեթղթի քանակ	15d	5
-----| Գ պարբերություն				
Պ	83A	Արժեթղթեր առաքող	5!n [4*35x]	6
Պ	87A	Արժեթղթեր ստացող	5!n [4*35x]	7
O	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	8

Պ – պարտադիր, O – օժանդակ

- Կրկնվող Բ պարբերության մեջ օժանդակ դաշտերից մեկը ենթակա է պարտադիր գրանցման, բայց միաժամանակ երկու օժանդակ դաշտ գրանցվել չի կարող
- **:35C:** դաշտի գրանցումը կրկնվող առաջին պարբերության մեջ ենթադրում է միայն **պետական** արժեթղթերի առկայությունը մնացած այլ պարբերություններում
- **:35Q:** դաշտի գրանցումը կրկնվող առաջին պարբերության մեջ ենթադրում է միայն **կորպորատիվ** արժեթղթերի առկայությունը մնացած այլ պարբերություններում
- Կրկնվող պարբերության օժանդակ դաշտում գրանցվող արժեքը չի կարող լինել բացասական կամ 0 թիվ՝ 15d > 0
- Կրկնվող Բ պարբերությունը մեկ հաղորդագրության մեջ կարող է հանդես գալ առավելագույնը **30** անգամ:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չևաչափ 16x

   Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:24B:** Փոխանցման հիմք
   Չևաչափ 4x

   Այս **պարտադիր** դաշտում նշվում է փոխանցման հիմք հանդիսացող գործարքների տեսակները հետևյալ լատինատառ կոդերով՝

- **REP** «Ռեպո զամբյուղի ավելացում» - այս կոդը օգտագործվում է այն դեպքում, երբ առաքման ենթակա են մասնակից բանկի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը:
  Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **ռեպո** գործարքների կատարման համար մասնակից բանկի կողմից ԿԲ արժեթղթեր փոխանցելու համար:

- **REV** «Հակադարձ ռեպո գործարքի կատարում» - այս կոդը օգտագործվում է այն դեպքում, երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ մասնակից բանկի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը:
  Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է հակադարձ ռեպո գործարքների կատարման ժամանակ **ԿԲ**-ի կողմից մասնակից բանկին արժեթղթեր փոխանցելու համար:

- **IST** «Հակադարձ ռեպո գործարքի համար ԿԲ-ի սեփական և տեղաբաշխման ենթակա արժեթղթերից որոշակի ծավալի առանձնացում» - այս կոդը օգտագործվում է՝
  ա – երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը

բ – երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **տեղաբաշխման ենթակա** հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը:

Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **հակադարձ ռեպո** գործարքների համար հատկացված արժեթղթերի՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվին փոխանցելու համար:

- **RST** «ԿԲ-ի սեփական և տեղաբաշխման ենթակա արժեթղթերի հետ փոխանցում (վերադարձ) Հակադարձ ռեպո դեպո հաշվից» - այս կոդը օգտագործվում է՝

  ա – երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը

  բ – երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **տեղաբաշխման ենթակա** հաշվի արժեթղթերը:

  Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **հակադարձ ռեպո** գործարքների մարման ժամանակ արժեթղթերի՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվին կամ ԿԲ-ի **տեղաբաշխման ենթակա** հաշվին հետ փոխանցելու համար:

- **RMT** «Ռեպո զամբյուղից արժեթղթերի հետ փոխանցում» - այս կոդը օգտագործվում է այն դեպքում, երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ մասնակից բանկի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը:

  Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **ռեպո** գործարքների մարման դեպքում ԿԲ-ի կողմից մասնակից բանկին արժեթղթերը հետ փոխանցելու (վերադարձնելու) համար:

- **VMT** «Հակադարձ ռեպո գործարքի մարում» - այս կոդը օգտագործվում է այն դեպքում, երբ առաքման ենթակա են մասնակից բանկի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը:

  Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **հակադարձ ռեպո** գործարքների մարման ժամանակ մասնակից բանկի կողմից **ԿԲ** արժեթղթեր հետ փոխանցելու համար:

- **RCL** «Ռեպո պայմանագրերի խզման հետ կապված Ռեպո զամբյուղից արժեթղթերի փոխանցում որպես ԿԲ սեփականություն» - այս կոդը օգտագործվում է՝

  ա – երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը

  բ – երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ ԿԲ-ի **տեղաբաշխման ենթակա** հաշվի արժեթղթերը:

Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **ռեպո** գործարքների չեղյալացման կամ խզման դեպքում:

- **VCL** «Հակադարձ ռեպո պայմանագրերի խզման հետ կապված փաստացի առաքված արժեթղթերի հետ փոխանցում մասնակցին» - այս կոդը օգտագործվում է այն դեպքում, երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ մասնակից բանկի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը:
  Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **հակադարձ ռեպո** գործարքների խզման դեպքում՝ մասնակցի **հակադարձ ռեպո** զամբյուղում առկա խզվող գործարքին կից արժեթղթերը մասնակից բանկին ետ փոխանցելու համար:

- **RVB** «Հակադարձ ռեպո զամբյուղից ավելցուկային արժեթղթերի հետ փոխանցում մասնակցին» - այս կոդը օգտագործվում է այն դեպքում, երբ առաքման ենթակա են ԿԲ-ի **ազատ** կարգավիճակով **հակադարձ ռեպո** դեպո հաշվի արժեթղթերը, իսկ հաշվեգրման՝ մասնակից բանկի **ազատ** կարգավիճակով **սեփական** տեսակի դեպո հաշվի արժեթղթերը:
  Այս կոդով հաղորդագրությունը օգտագործվում է **հակադարձ ռեպո** գործարքների մարումից հետո մասնակցի **հակադարձ ռեպո** զամբյուղում մնացած արժեթղթերը մասնակից բանկին փոխանցելու համար:

3) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
   Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը: Կենտրոնական բանկ ուղարկվող հաղորդագրություններում ոչ պարտադիր [4!c1!e] ենթադաշտը չի լրացվելու: Մինչև ISIN կոդավորման ստանդարտին անցնելը այն պետք է պարունակի 10 նիշ (10!c) և արժեթղթի գրանցման համարի մաս հանդիսացող [2!c] («AM») նախդիրը պարտադիր չի լինի: ISIN կոդավորման ստանդարտին անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի առնվազն 12 նիշ:

4) Դաշտ **:35C:** Փոխանցվող պետական արժեթղթի ծավալ
   Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է փոխանցվող պետական արժեթղթի ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի նշված պարտատոմսի քայլի արժեքին:

5) Դաշտ **:35Q:** Փոխանցվող կորպորատիվ արժեթղթի քանակ
   Ձևաչափ 15d

Այս օժանդակ դաշտում նշվում է փոխանցվող կորպորատիվ արժեթղթի քանակը:

6) Դաշտ **:83A:** Արժեթղթեր առաքող
   Ձևաչափ 5!n

[4*35x]

Այս **պարտադիր** դաշտում նշվում են արժեթղթեր առաքողի տվյալները՝

- պետական արթեղթղթերի դեպքում 35x նիշերը կարող են օգտագործվել Կենտրոնական **բանկում** վարվող հաշվեհամարի գրանցման համար
- կորպորատիվ արթեղթղթերի դեպքում 35x նիշերը կարող են օգտագործվել Կենտրոնական **դեպոզիտարիայում** վարվող հաշվեհամարի գրանցման համար:

7) Դաշտ **:87A:** Արժեթղթեր ստացող
Չնաչափ 5!n

[4*35x]

Այս **պարտադիր** դաշտում նշվում են արժեթղթեր Ստացողի տվյալները՝

- պետական արթեղթղթերի դեպքում 35x նիշերը կարող են օգտագործվել Կենտրոնական **բանկում** վարվող հաշվեհամարի գրանցման համար
- կորպորատիվ արթեղթղթերի դեպքում 35x նիշերը կարող են օգտագործվել Կենտրոնական **դեպոզիտարիայում** վարվող հաշվեհամարի գրանցման համար:


8) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
Չնաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում, անհրաժեշտության դեպքում, գրանցվում է հաղորդագրությունը ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվությունը: Մասնավորապես, կարող է նշվել այն փաստաթղթի՝ գործարքի կամ պայմանագրի, համարը, որը հիմք է հանդիսանում տվյալ հաղորդագրության (արժեթղթերի ազատ առաքման) համար:

ՀՏ 524 Ռեպո զամբյուղից արժեթղթերի դուրսբերման հանձնարարական

Այս հաղորդագրությունը օգտագործվում է ռեպո գործառնությունների համար, մասնավորապես ռեպո զամբյուղից պետական և կորպորատիվ արժեթղթերի դուրս բերման համար: Այն ուղարկվում է համակարգի մասնակցից Ռեպո համակարգին որպես հրահանգ, համապատասխան ռեպո զամբյուղից, դուրս բերել որոշակի արժեթղթերի անհրաժեշտ ծավալ:

Այս ֆորմատի շրջանակներում պետական և կորպորատիվ արժեթղթերի շարժը ներկայացվում է առանձին հաղորդագրությունների տեսքով, այսինքն մեկ հաղորդագրության մեջ միաժամանակ պետական և կորպորատիվ արժեթղթեր չեն նշվում:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	87A	Արժեթղթեր ստացող	5!n [4*35x]	2
Բ կրկնվող պարբերություն ---->				
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	3
Օ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	4
Օ	35Q	Փոխանցվող արժեթղթի քանակ	15d	5
-----|				

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- Կրկնվող Բ պարբերության մեջ օժանդակ դաշտերից մեկը ենթակա է պարտադիր գրանցման, բայց միաժամանակ երկու օժանդակ դաշտ գրանցվել չի կարող
- **:35C:** դաշտի գրանցումը կրկնվող առաջին պարբերության մեջ ենթադրում է միայն **պետական** արժեթղթերի առկայությունը մնացած այլ պարբերություններում
- **:35Q:** դաշտի գրանցումը կրկնվող առաջին պարբերության մեջ ենթադրում է միայն **կորպորատիվ** արժեթղթերի առկայությունը մնացած այլ պարբերություններում
- Օժանդակ դաշտում գրանցվող արժեքը չի կարող լինել բացասական կամ 0 թիվ՝ 15d > 0
- Կրկնվող Բ պարբերությունը մեկ հաղորդագրության մեջ կարող է հանդես գալ առավելագույնը 20 անգամ:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չևաչափ 16x
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:87A:** Արժեթղթեր ստացող
   Չևաչափ 5!n
   [4*35x]
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է պարտատոմսեր ստացողի (Համակարգի մասնակցի) տվյալները:


3) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
   Չևաչափ [4!c1!e][2!c]10!c
   Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը:

4) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
   Չևաչափ 15d
   Այս օժանդակ դաշտում նշվում է ազատ առաքվող **պետական** արժեթղթի ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի տվյալ պարտատոմսի ձեռք բերման քայլի արժեքին:

5) Դաշտ **:35Q:** Փոխանցվող արժեթղթի քանակ
   Չևաչափ 15d
   Այս օժանդակ դաշտում նշվում է ազատ առաքվող **կորպորատիվ** արժեթղթի քանակը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ:

ՀՏ 534 Ծանուցող հաղորդագրություն

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) ՀՀ կենտրոնական բանկը (պետական պարտատոմսերի Պահառուն) տրամադրում է ավտոմատացված համակարգի մասնակցին՝ ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկայի Գործակալին, Դիլերին **կամ** այդպիսին չհանդիսացող ՀՀ տարածքում գործող որևէ առևտրային բանկին, ի պատասխան ստացված յուրաքանչյուր ՀՏ 208, ՀՏ 307, ՀՏ 308, ՀՏ 309, ՀՏ 502, ՀՏ 503, ՀՏ 504, ՀՏ 505, ՀՏ 506 և ՀՏ 507 հաղորդագրության:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	11R	Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ	6!n/3!n	3
Օ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	4
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	5
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	6

Պ – պարտադիր, Օ – օժանդակ
գրանցման դաշտ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ ՀՏ 534 հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում (Կենտրոնական բանկի կողմից) նշվում է այն հաղորդագրության (հայտի) Գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որի դիմաց տրամադրվում է սույն հաղորդագրությունը:

3) Դաշտ **:11R:** Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ
   Ձևաչափ 6!n/3!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ստացված հայտի մուտքագրման ամսաթիվը՝ 6!n, և տեսակը (ՀՏ-ի կոդը)՝ 3!n, որի հիման վրա, Կենտրոնական բանկի կողմից, տրվում է սույն հաղորդագրությունը:

4) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
   Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Այս օժանդակ դաշտում, անհրաժեշտության դեպքում, նշվում է գնվող կամ վաճառվող, գանձապետական պարտատոմսի պետական գրանցման (թողարկման) համարը:

5) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հայտի ընդունման կամ չընդունման պատճառը ներկայացնող նույնացուցիչներից մեկը՝

- **NOFM** (No Format) – մերժված՝ հաղորդագրության կամ դաշտի ֆորմատի սխալ
- **NOPR** (No Parameter) – մերժված՝ իրականացվող գործարքի պարամետրի սխալ արժեք
- **NORG** (No Right) – մերժված՝ տվյալ հայտի ուղարկման իրավունքի բացակայություն
- **NOTM** (No Time) – մերժված՝ հայտի ստացման սահմանված ժամկետի խախտում
- **NODL** (No Double) – մերժված՝ կրկնակի ուղարկված նույն հայտ
- **NOIC** (No Initial Condition) – մերժված՝ աճուրդի նախնական պայմանի սխալ արժեք
- **RAWL** (Receive Acknowledgement Waited List) – հայտի նախնական ընդունում
- **NOAC** (No Auction) – մերժված՝ աճուրդի անցկացման պայմանի սխալ արժեք
- **NOMN** (No Money) – մերժված՝ դրամական միջոցների անբավարարություն
- **NOSC** (No Securities) – մերժված՝ արժեթղթերի անբավարար ծավալ
- **ACOK** (Auction OK) – աճուրդին **կամ** գործարքի կնքմանը թույլատրված
- **RECL** (Recall) – աճուրդի հայտի չեղյալացում
- **REMT** (Remit) – աճուրդի անցկացման տեղափոխում
- **REST** (Restart) – աճուրդի անցկացման վերսկսում
- **IBOK** (Input Book-Entry OK) – ավտոմատ կերպով կնքված գործարքի կատարմանը թույլատրված:

6) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
   Ձևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտի 6 տողերում, անհրաժեշտության դեպքում, կարող է նշվել հաղորդագրությունը ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվությունը:

Կենտրոնական բանկի (Պահառուի) կողմից ստացված հաղորդագրության չկատարման դեպքում դաշտի 1-ին տողում կարող է գրանցվել մերժման հիմք հանդիսացող ֆորմատի համապատասխան դաշտի համարը, մասնավորապես՝

► :23: = **NOFM** պարագայում.

- առկա սխալ դաշտի համարը կամ
- բացակա պարտադիր դաշտի համարը կամ
- սխալ ֆորմատ ունեցող դաշտի համարը

► :23: = **NOPR** պարագայում, սխալ արժեք ունեցող դաշտի համարը։

Համապատասխանաբար դաշտի 2-րդ տողում կարող է գրանցվել հաղորդագրության ֆորմատում կրկնվող որևէ պարբերության մեջ սխալի պատճառ հանդիսացող դաշտի դիրքի հաջորդական համարը: Հաշվարկը տարվում է մերժված հաղորդագրության տեսակի գլխագրից հետո առաջին տողից սկսած վերևից ներքև:

Իսկ մնացած 4 տողերում կարող է գրանցվել անհրաժեշտ տեքստային բացատրություն սխալի պատճառի վերաբերյալ:

ՀՏ 535 ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայի ծանուցման հաղորդագրություն

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկը՝ պետական պարտատոմսերի Պահառուն, ավտոմատացված համակարգի մասնակցին (ՀՀ տարածքում գործող որևէ առևտրային բանկին կամ ներդրումային կազմակերպությանը, Բորսայի, Կենտրոնական depozitarիայի) ի պատասխան նրա սկզբնական հաղորդագրության՝ արժեթղթերի երկրորդային շուկայում գործող **դեպո** հանձնարարականի: Բորսայի կողմից պետական պարտատոմսերով իրականացված աճուրդներով գործարքների հետ կապված կիրառման համար կատալոգով սահմանված հաղորդագրությունների ստացման դեպքում: Այն օգտագործվում է պետական պարտատոմսի հետ իրականացվող գործարքի կատարման կամ չկատարման մասին տեղեկացնելու համար:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	11R	Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ	6!n/3!n	3
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	4
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	5

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության հերթական բացառիկ համարը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար

Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաղորդագրության (դեպո հանձնարարականի) Գործառնության համարը՝ :20: դաշտի արժեքը, որի դիմաց ուղարկվում է սույն հաղորդագրությունը:

3) Դաշտ **:11R:** Սկզբնական հաղորդագրության ամսաթիվ և տեսակ

Չևաչափ 6!n/3!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ստացված (սկզբնական) դեպո հանձնարարականի մուտքագրման ամսաթիվը՝ 6!n, և տեսակը (ՀՏ-ի կոդը)՝ 3!n, որի հիման վրա, Պահառուի կողմից, տրվում է սույն հաղորդագրությունը:

4) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ

Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործարքի **չ**կատարման պատճառի կամ կատարման հաստատման կոդը:

Դիտարկվող դաշտում գրանցվում է հետևյալ նույնացուցիչներից մեկը՝

- **NOFM** (No Format) – մերժված, հաղորդագրության կամ դաշտի ֆորմատի սխալ
- **NORG** (No Right) – մերժված, տվյալ հաղորդագրության ուղարկման իրավունքի բացակայություն
- **NOVL** (No Value) – մերժված, հաղորդագրության դաշտի սխալ արժեք
- **NOSC** (No Securities) – մերժված, արժեթղթերի անբավարար ծավալ
- **NOMN** (No Money) – մերժված, դրամական միջոցների անբավարարություն
- **WAIT** – հանդիպակաց հաղորդագրության սպասում
- **NOCP** (No Couple) – մերժված, հանդիպակաց հաղորդագրության բացակայություն
- **UNDO** – գործարքի կատարման կասեցում
- **MSOK** (Message OK) – գործարքը կատարված է
- **NOLT** (No logical true)- մերժված, հաղորդագրության տրամաբանական սխալ (ըստ համակարգում կիրառման նպատակահարմարության)

5) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն

Չևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտի 6 տողերում, անհրաժեշտության դեպքում, կարող է նշվել հաղորդագրությունը ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվությունը:

Կենտրոնական բանկի (Պահառուի) կողմից ստացված հաղորդագրության չկատարման դեպքում դաշտի 1-ին տողում կարող է գրանցվել մերժման հիմք հանդիսացող ֆորմատի համապատասխան դաշտի համարը, մասնավորապես՝

► :23: = **NOFM** պարագայում.
  - առկա սխալ դաշտի համարը կամ
  - բացակա պարտադիր դաշտի համարը կամ
  - սխալ ֆորմատ ունեցող դաշտի համարը
► :23: = **NOVL** պարագայում, սխալ արժեք ունեցող դաշտի համարը:

Համապատասխանաբար դաշտի 2-րդ տողում կարող է գրանցվել հաղորդագրության ֆորմատում կրկնվող որևէ պարբերության մեջ սխալի պատճառ հանդիսացող դաշտի դիրքի


հաջորդական համարը: Հաշվարկը տարվում է մերժված հաղորդագրության տեսակի գլխագրից հետո սկսած առաջին տողից վերևից ներքև:

Իսկ մնացած 4 տողերում կարող է գրանցվել անհրաժեշտ տեքստային բացատրություն սխալի պատճառի վերաբերյալ:

ՀՏ 540 ՀՀ պետական արժեթղթի գրավադրման հանձնարարական

Այս հաղորդագրությունը ուղարկում է ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկայում գրավադրման գործարքին մասնակցող պարտատոմսի Գրավատուն (համակարգի մասնակիցը) Պահառուին՝ ՀՀ կենտրոնական բանկին: Այն հրահանգ է Պահառուին «Առաքում վճարման դիմաց»՝ DVP, սկզբունքով գրավադրել որոշակի պետական արժեթուղթ նշված գործարքի հանդիպակաց մասնակցի՝ պարտատոմսի Գրավառուի, օգտին նրա կողմից համապատասխան գումարի փոխանցման դիմաց:

Պահառուի կողմից այս հաղորդագրության կատարումն իրականացվում է հանդիպակաց ՀՏ 541 հաղորդագրության ստացման դեպքում:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	35B	Արժեթղթի նույնացուցիչ	[4!c1!e][2!c]10!c	2
Պ	35C	Փոխանցվող արժեթղթի ծավալ	15d	3
Պ	83	Արժեթղթեր առաքող	13!n 4*35x	4
Պ	88	Գրավառու	13!n 4*35x	5
Պ	32B	Արժույթի կոդ և գումար	3!a15d	6
Պ	50A	Վճարող	12!n[4n] 4*35x	7
Պ	59	Շահառու	12!n[4n] 4*35x	8
Օ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	9

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:35B:** Արժեթղթի նույնացուցիչ
Չևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը: Կենտրոնական բանկ ուղարկվող հաղորդագրություններում ոչ պարտադիր [4!c1!e] ենթադաշտը չի լրացվելու: Մինչև ISIN կոդավորման ստանդարտին անցնելը այն պետք է պարունակի 10 նիշ (10!c) և արժեթղթի գրանցման համարի մաս հանդիսացող [2!c] («AM») նախդիրը պարտադիր չի լինի: ISIN կոդավորման ստանդարտին անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի առնվազն 12 նիշ:

3) Դաշտ **:35C:** Փոխանցվող արժեթղթի ծավալ
Չևաչափ 15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գրավադրվող արժեթղթի ծավալը՝ տասնորդական ստորակետից հետո 0 նիշի ճշտությամբ, որը պետք է պատիկ լինի դիտարկվող պարտատոմսի քայլի արժեքին:

4) Դաշտ **:83:** Արժեթղթեր առաքող
Չևաչափ 13!n
4*35x

Այս **պարտադիր** դաշտի 13!n ենթադաշտում ներկայացվում է՝ Ենթապահառուի կողմից վարվող, պարտատոմսի Գրավա**տ**ուի (համակարգի մասնակցի) ազատ կարգավիճակով դեպո հաշվի համարը:

Եթե հաշվեհամարի 7 → 12 նիշերը լրացվում են **0**-ներով, ապա Կենտրոնական բանկում արժեթղթի գրավադրումը տեղի է ունենում Գրավա**տ**ուի ազատ՝ 4, կարգավիճակով սեփական՝ 2, տեսակի դեպո հաշվից:

Տվյալ **պարտադիր** դաշտի 16x մասում լրացվում է անցկացված աճուրդի հայտարարության բացառիկ նույնացուցիչը:

Լրացուցիչ [/3n/1n] ենթամասում լրացվող տվյալները բնութագրում են 16x մասում նշված աճուրդի հետ կապված ուղարկվող հաղորդագրությունների քանակը, որտեղ /3n -ում նշվում է հաղորդագրության հերթական համարը, իսկ /1n -ում նշվում է՝ 0-զրո կոդը, եթե տվյալ հաղորդագրությունն ունի շարունակություն, կամ 1-մեկ կոդը, եթե տվյալ հաղորդագրությունը վերջինն է: Լրացուցիչ [/3n/1n] ենթամասը լրացվում է միայն 16x մասի լրացումից հետո: Այն դեպքում, երբ՝ մեկ հաղորդագրության առավելագույն մեծության համար սահմանված պահանջը (օրինակ՝ 20000 բայթը կամ գործարքների քանակը) գերազանցելու հետևանքով ուղարկվում է միևնույն աճուրդով գործարքների հետ կապված երկրորդ (հաջորդ) հաղորդագրությունը, ապա լրացուցիչ [/3n/1n] ենթամասը պարտադիր լրացվում է: Ընդ որում, միևնույն աճուրդի համար մեկից ավել ՀՏ 575 հաղորդագրություններ ուղարկելու դեպքում, դրանք բոլորը միասին են կազմում այդ աճուրդի արդյունքների ամփոփ տվյալները, և այդ բոլոր ՀՏ 575 պետք է ստացվեն միասին՝ նույն օրը, մինչև սահմանված ժամը:

3) **Դաշտ :31: Գործարքի կնքման ամսաթիվ**

Ձևաչափ 6!n

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է աճուրդի իրականացման արդյունքում գործարքների կնքման (աճուրդի անցկացման) ամսաթիվը հետևյալ տեսքով՝ DDMMYY:

4) **Դաշտ :30V: Գործարքի կատարման ամսաթիվ**

Ձևաչափ 6!n

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է կնքված գործարքների կատարման (վերջնահաշվարկի իրականացման) ամսաթիվը հետևյալ տեսքով՝ DDMMYY:

----> «**Գ**» կրկնվող պարբերություն

5) **Դաշտ :24B: Գործարքի տեսակ**

Ձևաչափ 4x[/5x]

Տվյալ **պարտադիր** դաշտում ներկայացվում է աճուրդների՝ տեղաբաշխման կամ հետգնման կամ փոխանակման տարանջատումը:

24B: դաշտի ձևաչափի 4x մասում կարող են լրացվել նույնականացման հետևյալ Հիմնական կոդերը՝

- **AUCS** – տեղաբաշխման աճուրդի ամփոփ տեղեկանք,
- **RETS** – հետգնման աճուրդի ամփոփ տեղեկանք,
- SWTS- փոխանակման աճուրդի ամփոփ տեղեկանք:

24B: դաշտի ձևաչափի [5x] մասում լրացվում են Հիմնական կոդի հետ փոխկապված լրացուցիչ կոդեր, որոնք նույնացնում են համապատասխան փոխկապված գործառույթը: Մասնավորապես.

AUCS և **RETS** կոդերի համար լրացուցիչ կոդեր չեն սահմանվում:

SWTS- փոխանակման աճուրդի ամփոփ տեղեկանքը նույնացնող կոդի հետ միասին կարող են կիրառվել **AUC**- փոխանակման աճուրդով արժեթղթերի տեղաբաշխման տվյալների և **RET** փոխանակման աճուրդով արժեթղթերի հետգնման տվյալների մասին կոդերը:

Եթե 24B: դաշտում նշվում է **SWT**S արժեքը, ապա [5x] մասում պարտադիր պետք է լրացվի **AUC** կամ **RET** կոդը, որոնց միջև դրվում է մեկ թեք գիծ նշանը:

Եթե 24B: դաշտի 4x մասում նշվել է **SWT**S արժեքը, ապա հաղորդագրության Գ պարբերություններն իրենց դաշտերով կրկնվելու և լրացվելու են երկու անգամ: Այն դեպքում, երբ նշվել է **SWT**S արժեքը, ապա հաշվի առնելով այս Հիմնական կոդի հետ լրացվող երկրորդային կոդը և դրա միջոցով նույնականացվող գործառնության տեսակը, այդ Գ պարբերությունների դաշտերում պետք է լրացվեն երկրորդային կոդի հետ փոխկապված գործառնության տվյալները:

Միևնույն հաղորդագրության մեջ եթե կրկնվող Գ պարբերության :24B: դաշտում նշվել է **SWT**S**/AUC** կոդը, ապա պետք է առկա լինի մեկ այլ կրկնվող Գ պարբերություն, որտեղ :24B: դաշտում նշվի **SWT**S**/RET** կոդը:

Եթե 24B: դաշտի 4x մասում նշվել է **AUCS** և **RETS** արժեքներից մեկը, ապա հաղորդագրության Գ պարբերությունն իր դաշտերով չի կարող կրկնվել և լրացվել մեկից ավելի անգամ:

Միևնույն հաղորդագրության մեջ եթե Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWTS/AUC արժեքը, ապա այդ Գ պարբերության մեջ ընդգրկված բոլոր դաշտերում նշվում են փոխանակման աճուրդով արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված տվյալները: Եթե Գ կրկնվող պարբերության 24B դաշտը ընդունել է SWTS/RET արժեքը, ապա այդ Գ պարբերության մեջ ընդգրկված բոլոր դաշտերում նշվում են փոխանակման աճուրդով արժեթղթերի հետ գնման հետ կապված տվյալները: Ընդ որում, յուրաքանչյուր Գ պարբերության 35B դաշտի միջոցով նշվում է այն համապատասխան արժեթղթի ISIN կոդը, որին վերաբերում են այդ Գ պարբերության մեջ լրացված գործարքի տվյալները:

Այն դեպքում, երբ միևնույն փոխանակման աճուրդով տեղաբաշխվում է միայն մեկ տեսակի արժեթուղթ, և հետ է գնվում միայն մեկ տեսակի մեկ այլ արժեթուղթ, ապա յուրաքանչյուր արժեթղթի համար միևնույն ՀՏ575- հաղորդագրության մեջ լրացվում է համապատասխան Գ պարբերություն՝ վերջինիս հետ կապված գործարքների տվյալներով, ըստ 24B դաշտի SWTS/AUC և SWTS/RET կոդերի:

6) **Դաշտ :35B: Արժեթղթի նույնացուցիչ**

Ձևաչափ [4!c1!e][2!c]10!c

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է արժեթղթի պետական գրանցման համարը՝ ISIN կոդը: ISIN կոդավորման ստանդարտին վերջնականապես անցնելուց հետո դաշտը պետք է պարունակի 16 նիշ և մեկ բացատ՝ 1!e (White space):

7) **Դաշտ :12C: Աճուրդի արդյունքի պարամետրեր**

Ձևաչափ 6*3!a15d

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում են (հաշվի առնելով համապատասխան «Գ» պարբերության :24B: դաշտի արժեքը) տեղաբաշխման կամ հետգնման աճուրդի արդյունքում բավարարված արժեթղթի ընդհանուր ծավալը (անվանական արժեքը), վճարվող ընդհանուր գումարը, աճուրդի մրցութային կամ ոչ մրցութային լինելը, ինչպես նաև ձևավորված նվազագույն, միջին կշռված և առավելագույն տարեկան եկամտաբերությունները (%): Արժեքները լրացվում են առանձին տողերով, յուրաքանչյուրը՝ մինչև 15 նիշ երկարությամբ, որը ներառում է նաև տասնորդական կոտորակի ստորակետը: Յուրաքանչյուր տվյալի դիմաց (առանց բացատի) լրացվում է վերջինիս տարանջատման ցուցիչը 3!a՝:

VLM – արժեթղթի բավարարված ընդհանուր ծավալը դրամային արտահայտմամբ,
AMD – վճարման ենթակա ընդհանուր գումար՝ դրամային արտահայտմամբ,
ATP – ներկայացվում է աճուրդի հայտում ներառված գործարքների կնքման առաջարկությունների մրցակցային կամ ոչ մրցակցային տարանջատումը:
Հնարավոր արժեքներն են՝ **0** – ոչ մրցակցային, **1** – մրցակցային, **2** – խառը (ոչ մրցակցային և մրցակցային միասին),
MIN – գործարքների նվազագույն եկամտաբերությունը (տոկոսային արտահայտմամբ),
AVG – գործարքների միջին կշռված եկամտաբերությունը (տոկոսային արտահայտմամբ),
MAX – գործարքների առավելագույն եկամտաբերությունը (տոկոսային արտահայտմամբ):

Փոխանակման աճուրդի դեպքում այս դաշտի տվյալները լրացվում են ըստ համապատասխան Գ կրկնվող պարբերությունների տարանջատման, որտեղ սույն դաշտում նշվում են աճուրդի ընթացքում տեղաբաշխման և հետգնման հետ կապված տվյալները՝ առանց զուտացման:

8) **Դաշտ :83A: Արժեթուղթ առաքող**
Ձևաչափ 5!n
[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է հաղորդագրության մեջ՝ հաշվի առնելով համապատասխան «Գ» պարբերության :24B: դաշտի արժեքը, եթե.
ա/ :24B: դաշտում նշվել է **AUCS** (տեղաբաշխման աճուրդ): Այս դեպքում :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է թողարկողի նույնացուցիչը՝ օրինակ, **90000**:

Ընդ որում, եթե :24B: դաշտի արժեքն է **AUCS**, ապա «**Ա**» կրկնվող պարբերության մեջ պետք է առկա լինեն միայն :87A: (Արժեթուղթ ստացող՝ մասնակից) դաշտերը: Սույն :83A: (Արժեթուղթ առաքող) դաշտը և յուրաքանչյուր մասնակցի կողմից կատարվելիք գործարքի համար «**Ա**» կրկնվող պարբերության մեջ նշված :87A: դաշտը կազմում են գործարքի կատարման համար անհրաժեշտ Առաքող – Ստացող տվյալների զույգը:
բ/ :24B: դաշտում նշվել է **SWTS/AUC** կոդը, ապա այս :83A: դաշտի լրացման համար կիրառվում է միևնույն կանոնը, երբ :24B: դաշտում նշվեր **AUCS** կոդը:

9) **Դաշտ :87A: Արժեթուղթ ստացող**
Ձևաչափ 5!n
[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է հաղորդագրության մեջ՝ հաշվի առնելով համապատասխան «Գ» պարբերության :24B: դաշտի արժեքը, եթե.
ա/ :24B: դաշտում նշվել է **RETS** արժեքը (հետգնման աճուրդ): Այս դեպքում՝ :83A: (Արժեթուղթ ստացող) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է թողարկողի նույնացուցիչը:

Ընդ որում, եթե :24B: դաշտի արժեքն է **RETS**, ապա «**Ա**» կրկնվող պարբերություններում պետք է առկա լինեն միայն :83A: (Արժեթուղթ առաքող՝ մասնակից) դաշտերը: Սույն :83A: (Արժեթուղթ ստացող) դաշտը և յուրաքանչյուր մասնակցի համար «**Ա**» կրկնվող պարբերության մեջ նշված :83A: դաշտը կազմում են գործարքի կատարման համար անհրաժեշտ Ստացող – Առաքող տվյալների զույգը:

բ/ :24B: դաշտում նշվել է **SWTS/RET** կոդը, ապա այս :87A: դաշտի լրացման համար կիրառվում է միևնույն կանոնը, երբ :24B: դաշտում նշվեր **RETS** կոդը:

----> «**Ա**» կրկնվող պարբերություն

Յուրաքանչյուր մասնակցի գործարքի տվյալները լրացվում են առանձին՝ համապատասխան Ա պարբերության միջոցով:

10) **Դաշտ :83A: Արժեթուղթ առաքող (մասնակից)**

Ձևաչափ 5!n

[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է՝ հաշվի առնելով համապատասխան «Գ» պարբերության :24B: դաշտի արժեքը, եթե.

ա/ :24B: դաշտում նշվել է **RETS** արժեքը, ապա այս :83A: (Արժեթուղթ առաքող մասնակից) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է այն մասնակցի նույնացուցիչը, որից հետ է գնվում արժեթուղթը: «**Ա**» Կրկնվող պարբերության այս :83A: դաշտը և հաղորդագրության մեջ առկա :87A: («**Ա**» կրկնվող պարբերությունից առաջ գտնվող) դաշտը կազմում են գործարքի կատարման համար անհրաժեշտ Ստացող – Առաքող տվյալների զույգը:

բ/ :24B: դաշտում նշվել է **SWTS/RET** կոդը, ապա այս :83A: դաշտի լրացման համար կիրառվում է միևնույն կանոնը, երբ :24B: դաշտում նշվեր **RETS** կոդը:

11) **Դաշտ :87A: Արժեթուղթ ստացող (մասնակից)**

Ձևաչափ 5!n

[4*35x]

Տվյալ օժանդակ դաշտը լրացվում է՝ հաշվի առնելով համապատասխան «Գ» պարբերության :24B: դաշտի արժեքը, եթե.

ա/ :24B: դաշտում նշվում է **AUCS** արժեքը, ապա այս :83A: (Արժեթուղթ ստացող մասնակցի) դաշտի 5!n ենթադաշտում լրացվում է այն մասնակցի նույնացուցիչը, որը աճուրդի արդյունքում գնում է արժեթուղթը: «**Ա**» կրկնվող պարբերության այս :87A: դաշտը և հաղորդագրության մեջ առկա :83A: («**Ա**» կրկնվող պարբերությունից առաջ գտնվող) դաշտը կազմում են գործարքի կատարման համար անհրաժեշտ Առաքող – Ստացող տվյալների զույգը:

բ/ :24B: դաշտում նշվել է **SWTS/AUC** կոդը, ապա այս :87A: դաշտի լրացման համար կիրառվում է միևնույն կանոնը, երբ :24B: դաշտում նշվեր **AUCS** կոդը:

----> «**Բ**» կրկնվող ենթապարբերություն

Այն դեպքում, երբ միևնույն աճուրդի գործարքների տվյալների վերաբերյալ ուղարկվում է մեկից ավելի ՀՏ 575 հաղորդագրություն, ապա տվյալ փոխանակման աճուրդով կնքված միևնույն բանկի հետ կապված ընդհանուր գործարքներին փոխկապված տեղաբաշխման և հետգնման տվյալները պետք է լրացված լինեն միևնույն հաղորդագրության մեջ:

12) **Դաշտ :24C: Սեփականության նույնացուցիչ** (սեփական կամ ներդրողի տարանջատում)

Ձևաչափ 4x

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում է մասնակցի կողմից անմիջապես իր կամ ներդրողի համար կատարվող գործարքի տարանջատման նույնացուցիչը:
Հնարավոր արժեքներն են՝ **OWN** – սեփական կամ **INV** – ներդրող:

13) **Դաշտ :35C: Փոխանցվող արժեթղթի ծավալ**

Ձևաչափ 15d

Տվյալ **պարտադիր** դաշտում լրացվում են միևնույն մասնակցի կողմից կնքված գործարքների կատարման դիմաց փոխանցվող միևնույն արժեթղթով բոլոր գործարքների ծավալները միասին վերցրած և խմբավորված՝ ըստ սեփականության նույնացուցչի: Ընդ որում, իրականացվող գործարքի և արժեթղթի տեսակը փոխկապված է և բնութագրվում է համապատասխան հերթականության «**Գ**» պարբերության դաշտերում նշված արժեքներով: Եթե.

ա/ :24B: դաշտում նշվում է **AUCS** կամ **SWTS/AUC** արժեքը, ապա այս :35**C**: դաշտում նշվում է աճուրդի կամ փոխանակման աճուրդի արդյունքում թողարկողի կողմից մասնակցին փոխանցվող արժեթղթի ծավալը.

բ/ :24B: դաշտում նշվում է **RETS** կամ **SWTS/RET** արժեքը, ապա այս :35**C**: դաշտում նշվում է հետգնման աճուրդի կամ փոխանակման աճուրդի արդյունքում մասնակցի կողմից թողարկողին փոխանցվող արժեթղթի ծավալը:

14) **Դաշտ :35A: Ծավալի արժողություն**

Ձևաչափ 3!a15d

Տվյալ **օժանդակ** դաշտում լրացվում է համապատասխան մասնակցի կողմից կնքված գործարքների կատարման համար վճարվելիք ընդհանուր գումարը (այդ միևնույն մասնակցի բոլոր գործարքների հանրագումարը խմբավորված ըստ սեփականության նույնացուցիչ դաշտի): Առաջին 3!a ենթադաշտում լրացվում է **AMD**, այն կարող է ունենալ այլ արժեք հետագայում՝ արտարժույթով վճարվող գումար լրացնելու պարագայում:

Այն դեպքում, եթե :24B: դաշտում նշվում է AUCS կամ RETS արժեքը, ապա կրկնվող պարբերության :35A: դաշտերը պարտադիր լրացվում են: Բոլոր ենթապարբերություններում :35A: դաշտի արժույթի կոդը պետք է լինի նույնը: Այդ թվում՝ :35A: դաշտերի արժեքը պետք է լինի զրոյից մեծ: Ընդ որում.

ա/ երբ :24B: դաշտում նշվում է AUCS արժեքը, ապա այս :35A: դաշտում նշվում է տեղաբաշխման աճուրդի արդյունքում մասնակցի կողմից թողարկողին վճարվելիք ընդհանուր գումարը.

բ/ երբ :24B: դաշտում նշվում է RETS արժեքը, ապա այս :35A: դաշտում նշվում է հետգնման աճուրդի արդյունքում թողարկողի կողմից մասնակցին վճարվելիք ընդհանուր գումարը:

Այն դեպքում, եթե :24B: դաշտում նշվում է SWTS հիմնական կոդը, ապա կրկնվող պարբերության :35A: դաշտը պարտադիր լրացվում է ստորև նշված կանոնի համաձայն, որտեղ լրացվում է զուտացված գումարը: Ընդ որում, միևնույն հաղորդագրության մեջ վճարվելիք յուրաքանչյուր զուտացված գումարը լրացվում է մեկ անգամ՝ կամ միայն :24B: դաշտում SWTS/AUC կոդը պարունակող Գ պարբերության կրկնվող 35A դաշտերում, կամ միայն :24B: դաշտում SWTS/RET կոդը պարունակող Գ պարբերության կրկնվող 35A դաշտերում: Մասնավորապես.

ա1/ երբ փոխանակման աճուրդի ժամանակ կատարված զուտացման արդյունքում վճարող կողմը մասնակիցն է, ապա վճարվելիք զուտացված գումարը լրացվում է այն «Գ» պարբերության մեջ, որի :24B: դաշտում նշված է SWTS/AUC արժեքը: Որի դեպքում.

ա1.1/ հաղորդագրության :24B:=SWTS/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ համապատասխան «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտը պարտադիր լրացվում է, և նշվում է վճարվող զուտ գումարը, որը պետք է լինի զրոյից մեծ: Այն դեպքում, երբ զուտ գումարը հավասար է զրոյի, ապա տվյալ :35A: դաշտը չի լրացվում: Զուտ գումարը չի կարող լինել բացասական թիվ:

ա1.2/ միաժամանակ հաղորդագրության :24B:=SWTS/RET արժեքով «Գ» պարբերության մեջ համապատասխան «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտերն արդեն չեն լրացվում, քանի որ գումարը արդեն լրացված է վերջինիս զույգ կազմող SWTS/AUC արժեքով «Գ» պարբերության մեջ.

ա2/ երբ կատարված զուտացման արդյունքում վճարող կողմը թողարկողն է, ապա վճարվելիք զուտացված գումարը լրացվում է այն «Գ» պարբերության մեջ, որի :24B: դաշտում նշված է SWTS/RET արժեքը: Ընդ որում.

ա2.1/ հաղորդագրության :24B:=SWTS/RET արժեքով «Գ» պարբերության մեջ գտնվող :35A: դաշտը պարտադիր լրացվում է ըստ ա1.1)-կետում նշված մոտեցման:

ա2.2/ միաժամանակ հաղորդագրության :24B:=SWTS/AUC «Գ» պարբերության մեջ «Բ» ենթապարբերությունների :35A: դաշտերը արդեն չեն լրացվում, քանի որ գումարն արդեն լրացված է վերջինիս զույգ կազմող SWTS/RET արժեքով «Գ» պարբերության մեջ:

----I «**Բ**» կրկնվող ենթապարբերություն
----I «**Ա**» կրկնվող պարբերություն
----I «**Գ**» կրկնվող պարբերություն

5.5 Խառը հաղորդագրություններ

ՀՏ 900 Հաշվի դեբետագրման (միջոցների ելքագրման) մասին տեղեկացում

Սույն հաղորդագրությունը ձևավորվում և ուղարկվում է Կենտրոնական բանկի կողմից այն հաճախորդներին, որոնք ունեն հաշիվ ԿԲ-ում և հանդիսանում են Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգի մասնակից (այդ թվում՝ ՀՀ գանձապետարան): ՀՏ 900 հաղորդագրությունը օգտագործվում է հաշվետիրոջը տեղեկացում ուղարկելու համար, վերջինիս հաշվից միջոցների ելքագրման մասին: Նշված ելքագրումները արտացոլվում են նաև հետագայում տրամադրվող քաղվածքում: Տվյալ հաղորդագրությունը **օգտագործվում է նաև** էլեկտրոնային ստանդարտ փոխանցումների կատարման ժամանակ, երբ հաշվետիրոջ կողմից նախաձեռնվում է էլեկտրոնային վճարային հաղորդագրություն, որի ընդունման դեպքում տրվում է համապատասխան անդորրագիր (ընդունման մասին), իսկ ԿԲ-ում այն մշակվելուց և հաշվարկների իրականացումից հետո ուղարկողի հաշիվը ելքագրվում է և ստացված հաղորդագրությունը ուղարկվում է ստացողի բանկ /շահառու բանկ, շահառուին սպասարկող բանկ/:

ՀՏ 900 Հաշվի դեբետագրման/միջոցների ելքագրման/ մասին տեղեկացում հաղորդագրության նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար (փոխկապված ՀՏ-ում)	16x	2
Պ	25	Հաշվի բնութագրում	12!n[4n]	3
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	4
O	52E	Կարգադրություն ներկայացնող կազմակերպություն	12!n[4n] 4*35x	5
O	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	6
O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	7

Պ - պարտադիր, O – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը՝

1 - Դաշտ :20: Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս պարտադիր դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2 - Դաշտ :21: Գործառնության հղման համար

Չևաչափ 16x

Այս դաշտում ներկայացվում է փոխկապված հաղորդագրության մեջ նշված գործառնության համարը, որի հետ կապված տրվում է հղումը:

Լրացման համար կարող է օգտագործվի.

1. ԷՀԱ համակարգի հաղորդագրությունը, որը հիմք է հանդիսացել հաշվով գործառնության կատարման համար,
2. ՀՀ ԿԲ կողմից կատարված համապատասխան գործառնության ունիկալ համարը, որը հիմք է հանդիսացել հաշվից միջոցների դուրս գրման համար:

3 - Դաշտ :25: Հաշվի բնութագրում

Չևաչափ 12!n[4n]

Այս պարտադիր դաշտում նշվում է Հաճախորդի այն հաշիվը, որը **դեբետագրվել է**: Տեղեկացումը կարող է տրվել միայն այդ հաշվի վերաբերյալ հաշվի սեփականատիրոջը:

4 - Դաշտ :32A: Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար

Չևաչափ 6!n3!a15d

Այս պարտադիր դաշտում նշվում է հաշվով գործառնության կատարման ամսաթիվը, արժույթը և փաստացի փոխանցված գումարը: Ընդ որում, ամսաթվի համար նախատեսված 6!n - ենթադաշտը լրացվում է DDMMYY տեսքով, արժույթի կոդի համար նախատեսված 3!a - ենթադաշտում լրացվում է արժույթի կոդը ըստ ISO 4217 ստանդարտի, իսկ փաստացի փոխանցվող գումարը լրացվում է 15d - ենթադաշտում (տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ): Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ **AMD**-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է **0** թիվը:

5 - Դաշտ :52E: Կարգադրություն ներկայացնող կազմակերպություն

Չևաչափ 12!n[4n]

4*35x

Այս օժանդակ դաշտում նշվում է Ֆինանսական կազմակերպությունը՝ (Բանկ, Արքա, Բորսա և այլն), որից ստացված հանձնարարականի հիման վրա կատարվել է համապատասխան միջոցների ելքագրումը հաշվից, որի մասին ուղարկվում է տեղեկացումը:

Այս դաշտերը բնութագրում են հանձնարարականը ներկայացնող կարգադրող-կազմակերպությանը: Միաժամանակ լրացվում է կարգադրող-կազմակերպության բնութագրող տվյալները, որի հանձնարարականի կատարման հիման վրա ուղարկվում է հաղորդագրությունը՝ այդ վճարումը կատարման համար:

Այս դաշտը պարտադիր լրացվում է, երբ Ֆինանսական կազմակերպությունը, որի կարգադրության համաձայն կատարվել է **միջոցների ելքագրումը տարբերվում է այս հաղորդագրությունը (տեղեկացումը) ստացողից,** ըստ 25 դաշտում նշված հաշվի:

Եթե կարգադրող-կազմակերպությունը հանդիսանում է գործառնության կատարման համար հաղորդագրություն ուղարկող բանկը, ապա սույն դաշտը կբնութագրի այդ հաղորդագրությունը ուղարկողին:

Այս դաշտում լրացվում է «կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալները, դրանք են.

1	2
12!n[4n] - ենթադաշտում	Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվի համարը
4*35x - ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում է
I-ին տող	Կազմակերպության անվանումը
II-րդ - IV-րդ տողերում	Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը
	Հարկ վճարողի հաշվառման համարը
	Հասցեի վերաբերյալ տվյալները
	Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:

« Կարգադրություն ներկայացնող կազմակերպություն» վերաբերյալ լրացվող տվյալները չպետք է գերազանցեն նշված 4 տողը:

:72 և :07 դաշտերի լրացման սկզբունքները համընկնում են ՀՏ 910 հաղորդագրությունում նույն դաշտերի լրացման կանոնների հետ:

ՀՏ 910 Հաշվի կրեդիտագրման (միջոցների մուտքագրման) մասին տեղեկացում

Սույն հաղորդագրությունը ձևավորվում և ուղարկվում է Կենտրոնական բանկի կողմից այն հաճախորդներին, որոնք ունեն հաշիվ ԿԲ-ում և հանդիսանում են Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգի մասնակից (այդ թվում՝ ՀՀ գանձապետարան): ՀՏ 910 հաղորդագրությունը օգտագործվում է հաշվետիրոջը տեղեկացում ուղարկելու համար, վերջինիս հաշվին միջոցների մուտքագրման մասին: Նշված մուտքագրումները արտացոլվում են նաև հետագայում տրամադրվող քաղվածքում: Տվյալ հաղորդագրությունը չի օգտագործվում էլեկտրոնային ստանդարտ փոխանցումների կատարման ժամանակ, երբ նախաձեռնողի կողմից ուղարկված սկզբնական վճարային հաղորդագրությունը ԿԲ-ում մշակվելուց և համապատասխան հաշվարկների իրականացումից հետո ուղարկվում է ստացողի բանկ / շահառուին, շահառուի բանկին /:

ՀՏ 910 Հաշվի կրեդիտագրման /միջոցների մուտքագրման/ մասին տեղեկացում հաղորդագրության նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար (փոխկապված ՀՏ-ում)	16x	2
Պ	25	Հաշվի բնութագրում	12!n[4n]	3
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	4
O*	50a	Վճարող	E կամ Q	5
O*	52a	Կարգադրություն ներկայացնող կազմակերպություն/վճարողի բանկ	E կամ Q	6
O	56a	Միջնորդ բանկ	E կամ Q	7
O	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	8
O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	9

Պ - պարտադիր, O – օժանդակ

*!- **:50a:** կամ **:52a:** դաշտերից մեկը պարտադիր պետք է առկա լինի, բայց ոչ երկուսը միասին:

Դաշտերի նկարագրությունը՝

1 - Դաշտ :20: Գործառնության համար

Ձևաչափ 16x

Այս պարտադիր դաշտում նշվում է գործառնության համարը, որը հանդիսանում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող): Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2 - Դաշտ :21: Գործառնության հղման համար

Ձևաչափ 16x

Այս դաշտում ներկայացվում է փոխկապված հաղորդագրության մեջ նշված գործառնության համարը, որի հետ կապված տրվում է հղումը:

Լրացման համար կարող է օգտագործվի.

1. ԷՀԱ համակարգի հաղորդագրությունը, որը հիմք է հանդիսացել հաշվով գործառնության կատարման համար,
2. ՀՀ ԿԲ կողմից կատարված համապատասխան գործառնության ունիկալ համարը, որը հիմք է հանդիսացել հաշվից միջոցների մուտքագրման /կրեդիտագրման/ համար:

3 - Դաշտ :25: Հաշվի բնութագրում

Ձևաչափ 12!n[4n]

Այս պարտադիր դաշտում նշվում է Հաճախորդի այն հաշիվը, որը **կրեդիտագրվել է**: Տեղեկացումը կարող է տրվել միայն այդ հաշվի վերաբերյալ հաշվի սեփականատիրոջը:

4 - Դաշտ :32A: Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար

Ձևաչափ 6!n3!a15d

Այս պարտադիր դաշտում նշվում է հաշվով գործառնության կատարման ամսաթիվը, արժույթը և փաստացի փոխանցված գումարը: Ընդ որում, ամսաթվի համար նախատեսված 6!n - ենթադաշտը լրացվում է DDMMYY տեսքով, արժույթի կոդի համար նախատեսված 3!a - ենթադաշտում լրացվում է արժույթի կոդը ըստ ISO 4217 ստանդարտի, իսկ փաստացի փոխանցվող գումարը լրացվում է 15d - ենթադաշտում: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային՝ **AMD**-ով, վճարումների պարագայում տասնորդական ստորակետից հետո հարյուրերորդական (2-րդ) նիշում պարտադիր լրացվում է **0** թիվը:

5 - Դաշտ :50a: Վճարող

Ձևաչափ՝	տարբերակ	E	12!n[4n]
			4*35x
	կամ		
	տարբերակ	Q	[35x]
			4*35x

Այս դաշտը հանդիսանում է օժանդակ լրացման դաշտ, սակայն պետք է պարտադիր առկա լինի կամ միայն 50a դաշտը կամ միայն 52a դաշտը:

Այս դաշտերը բնութագրում են հանձնարարականը ներկայացնող «կարգադրող-հաճախորդին», ինչպես նաև կարող է նշվել բանկը, երբ սեփական վճարումների կատարման

ժամանակ ներկայացված կարգադրության մեջ հանդես է գալիս որպես «կարգադրող - հաճախորդ»: Միաժամանակ լրացվում է վճարողին/«կարգադրող-հաճախորդին» բնութագրող տվյալները, որի հանձնարարականի հիման վրա ուղարկվում է հաղորդագրությունը՝ այդ վճարումը կատարելու համար:

Եթե վճարողը/«կարգադրող-հաճախորդը» հանդիսանում է գործառնության կատարման համար հաղորդագրություն ուղարկող բանկը, ապա կարող է լրացվել 50a դաշտը:

Այս դաշտը կարող է լրացվել երկու եղանակով՝ E կամ Q տարբերակով: Ընդ որում՝ հաղորդագրության ձևավորման ընթացքում լրացվում է այս տարբերակներից միայն մեկը:

Այս դաշտի լրացման կանոնները հետևյալն են.

1. **:**50E**:** տարբերակով նշվում է վճարողի/կարգադրող-հաճախորդի հաշվեհամարը ՀՀ տարածքում գործող բանկում՝ 12!n[4n] սկզբունքով:
2. **:**50Q**:** տարբերակով կարող է նշվել վճարողի/կարգադրող-հաճախորդի հաշվեհամարը, այդ թվում համաձայն IBAN սկզբունքով՝ մինչև 35x նիշ: Օրինակ՝ SWIFT-ով ստացված հաղորդագրության համաձայն 25 դաշտում նշված հաշվին միջոցների մուտքագրման ժամանակ: Ընդ որում՝ հաշվեհամարի բնութագրման ժամանակ նշվում է սպասարկող բանկի BIC կոդը, որը լրացվում է 4*35x ենթադաշտի տողում:

50a դաշտի լրացումը ըստ տարբերակների				
	Սույն դաշտը 50E տարբերակով			Սույն դաշտը 50Q տարբերակով
1	2		3	4
12!n[4n] - ենթադաշտում	Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվի համարը		[35x] - ենթադաշտում	Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվի համարը
4*35x - ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում է			
I-ին տող	Անուն, ազգանուն (ֆիզիկական անձանց համար) կամ անվանումը (իրավաբանական անձանց համար)			Անուն, ազգանուն (ֆիզիկական անձանց համար) կամ անվանումը (իրավաբանական անձանց համար)
II - IV-րդ տողերում	Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը՝ ըստ առկայության			
	Հարկ վճարողի հաշվառման համարը կամ Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը)			BIC կոդ /արտասահմանյան կազմակերպության դեպքում/

	կամ Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը:		
	Անձնագրի տվյալներ կամ ID-քարտի համարը կամ անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները		
	Հասցեի վերաբերյալ տվյալներ		Հասցեի վերաբերյալ տվյալներ
	Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:		Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:

«Վճարողի» վերաբերյալ լրացվող տվյալները չպետք է գերազանցեն նշված 4 տողը:
Սույն դաշտի (4*35) տողերում տվյալների լրացումը կատարվում է սահմանված ցուցիչների կիրառմամբ: Եթե ՍՎԻՖԹ-ով ստացված հաղորդարգրության մեջ 50 դաշտի (4*35) տողերում տվյալների տարանջատում չի կատարվել, ապա 50Q դաշտի լրացումը կարող է կատարվել այլ չդասակարգված տվյալների համար սահմանված ցուցչի կիրառմամբ:

6 - Դաշտ :52a: Կարգադրություն ներկայացնող կազմակերպություն

Չնաչափ՝ տարբերակ E 12!n[4n]
4*35x
կամ
տարբերակ Q [35x]
4*35x

Այս դաշտը հանդիսանում է օժանդակ լրացման դաշտ, սակայն պետք է պարտադիր առկա լինի կամ միայն 50a դաշտը կամ միայն 52a դաշտը:
Այս դաշտը բնութագրում է ֆինանսական կազմակերպությանը՝ (Բանկ, Բորսա, Արքա և այլն), որից ստացված հանձնարարականի հիման վրա կատարվել է համապատասխան միջոցների մուտքագրումը հաշվին, որի մասին ուղարկվում է տեղեկացումը: Միաժամանակ լրացվում է կարգադրող- կազմակերպությանը բնութագրող տվյալները, որի հանձնարարականի կատարման հիման վրա ուղարկվում է հաղորդագրությունը՝ այդ վճարումը կատարման համար:
Այս դաշտը պարտադիր լրացվում է, երբ Ֆինանսական կազմակերպությունը, որի կարգադրության համաձայն կատարվել է միջոցների մուտքագրումը տարբերվում է այս հաղորդագրությունը (տեղեկացումը) ստացողից, ըստ 25 դաշտում նշված հաշվի:

Եթե կարգադրող-կազմակերպությունը հանդիսանում է գործառնության կատարման համար հաղորդագրություն ուղարկող բանկը, ապա սույն դաշտը կբնութագրի հաղորդագրություն ուղարկողին:

Այս դաշտը կարող է լրացվել երկու եղանակով՝ E կամ Q տարբերակով: Ընդ որում՝ հաղորդագրության ձևավորման ընթացքում լրացվում է այս տարբերակներից միայն մեկը:

Այս դաշտի լրացման կանոնները հետևյալն են.

1. 52E տարբերակով նշվում է կարգադրություն ներկայացնող կազմակերպության հաշվեհամարը (հանձնարարականը ՀՀ բանկի կողմից ներկայացվելու դեպքում) 12!n[4n] սկզբունքով:
2. 52Q տարբերակով կարող է նշվել Կարգադրություն ներկայացնող կազմակերպության հաշվեհամարը, այդ թվում համաձայն IBAN սկզբունքով՝ մինչև 35x նիշ: Օրինակ՝ SWIFT-ով ստացված հաղորդագրության համաձայն 25 դաշտում նշված հաշվին միջոցների մուտքագրման ժամանակ: Ընդ որում 52Q դաշտի հաշվեհամարի բնութագրման ժամանակ կարող է նշվել սպասարկող բանկի BIC կոդը, որը լրացվում է 4*35x ենթադաշտի տողում:

52a դաշտի լրացումը ըստ տարբերակների				
	Սույն դաշտը 52E տարբերակով			Սույն դաշտը 52Q տարբերակով
1	2		3	4
12!n[4n] - ենթադաշտում	Կարգադրությունը ներկայացնող՝ կազմակերպության բանկային հաշվի համարը		[35x] - ենթադաշտում	Կարգադրությունը ներկայացնող՝ կազմակերպության բանկային հաշվի համարը:
4*35x - ենթադաշտում	լրացվում է Կարգադրությունը ներկայացնող՝ կազմակերպությանը բնութագրող տվյալները			
I-ին տող	Կազմակերպության անվանումը			Կազմակերպության անվանումը
II - IV-րդ տողերում	Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը, ըստ առկայության			
	Հարկ վճարողի հաշվառման համարը			BIC կոդ /արտասահմանյան կազմակերպության դեպքում/
	Հասցեի վերաբերյալ տվյալներ			Հասցեի վերաբերյալ տվյալներ
	Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:			Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:

«Կարգադրություն ներկայացնող կազմակերպության» վերաբերյալ լրացվող տվյալները չպետք է գերազանցեն նշված 4 տողը:

Սույն դաշտի (4*35) տողերում տվյալների լրացումը կատարվում է սահմանված ցուցիչների կիրառմամբ: Եթե SWIFT-ով ստացված հաղորդարգրության մեջ 52 դաշտի (4*35) տողերում տվյալների տարանջատում չի կատարվել, ապա 52Q դաշտի լրացումը կարող է կատարվել այլ չդասակարգված տվյալների համար սահմանված ցուցչի կիրառմամբ:

7 - Դաշտ :56a: Միջնորդ կազմակերպություն

Չևաչափ՝ տարբերակ E 12!n[4n]
4*35x
կամ
տարբերակ Q [35x]
4*35x

Այս օժանդակ դաշտը բնութագրում է վճարող բանկից տարբերվող այն միջնորդ բանկին, որից ստացված միջոցները մուտքագրվել են :25: դաշտում նշված հաշվին: Նշվում է կարգադրություն ներկայացնող կազմակերպությունից տարբերվող կազմակերպությունը:
Այս դաշտը կարող է լրացվել երկու եղանակով՝ E կամ Q տարբերակով: Ընդ որում՝ հաղորդագրության ձևավորման ընթացքում լրացվում է այս տարբերակներից միայն մեկը:

1. 56E տարբերակով նշվում է միջնորդ կազմակերպության հաշվեհամարը (ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության դեպքում) 12!n[4n] սկզբունքով:
2. 56Q տարբերակով կարող է նշվել միջնորդ կազմակերպության հաշվեհամարը, այդ թվում համաձայն IBAN սկզբունքի՝ մինչև 35x նիշ (Օրինակ՝ SWIFT-ով հաղորդագրության ստացման ժամանակ): Ընդ որում՝ հաշվեհամարի բնութագրման ժամանակ նշվում է սպասարկող բանկի BIC կոդը, որը լրացվում է 4*35x ենթադաշտի տողում:

Այս դաշում լրացվում են հաղորդագրությունը ընդունող և շահառուին սպասարկող թղթակից բանկի (միջնորդ բանկ) տվյալները, դրանք են.

56a դաշտի լրացումը ըստ տարբերակների				
	Սույն դաշտը 56E տարբերակով			Սույն դաշտը 56Q տարբերակով
1	2		3	4
12!n[4n] - ենթադաշտում	Միջնորդ կազմակերպություն բանկային հաշվի համարը		[35x] – ենթադաշտում	Միջնորդ կազմակերպություն բանկային հաշվի համարը
4*35x - ենթադաշտում	լրացվում է միջնորդ կազմակերպությանը բնութագրող տվյալներ			
I-ին տող	Կազմակերպության անվանումը			Կազմակերպության անվանումը
II - IV-րդ տողերում	Կարող է լրացվել ստորև նշված տեղեկատվությունը, ըստ առկայության			

	Հարկ վճարողի հաշվառման համարը			BIC կոդ /արտասահմանյան կազմակերպության դեպքում/
	Հասցեի վերաբերյալ տվյալներ			Հասցեի վերաբերյալ տվյալներ
	Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:			Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:

Միջնորդ կազմակերպության վերաբերյալ լրացվող տվյալները չպետք է գերազանցեն նշված 4 տողը:

Սույն դաշտի (4*35) տողերում տվյալների լրացումը կատարվում է սահմանված ցուցիչների կիրառմամբ:

Եթե SWIFT-ով ստացված հաղորդարգրության մեջ 56 դաշտի (4*35) տողերում տվյալների տարանջատում չի կատարվել, ապա 56Q դաշտի լրացումը կարող է կատարվել այլ չդասակարգված տվյալների համար սահմանված ցուցչի կիրառմամբ:

8 - Դաշտ :72: Հաղորդագրությունը ուղարկողից ստացողին ուղղված տեղեկատվություն

Ձևաչափ 6*35x

Այս օժանդակ դաշտում նշվում է ուղարկողից դեպի ստացողին ուղղված՝ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն, որը կարող է լրացվել.

ա/ սահմանված կոդավորման սկզբունքով, և/կամ

բ/ ձեռքով նշված համապատասխան տեղեկատվություն, որը կարող է չունենալ որևէ կոդավորում:

Կոդավորման սկզբունքով լրացման ժամանակ այս դաշտը պետք է ունենա խիստ սահմանված կառուցվածք: Այն բնութագրվում է գումարի փոխանցման հետ կապված նպատակը և վերջինիս հետ կապված տեղեկատվությունը կոդերի կիրառմամբ: Դաշտում լրացվող տեղեկատվությունը, այդ թվում կոդերի հապավումները, պետք է նշվեն նորմավորված ձևով: Նախ՝ լրացվում է հիմնական կոդը, այնուհետև վերջինիս հետ կապված առաջին և/կամ երկրորդ լրացուցիչ մասերը: Ինչպես նաև, հիմնական և լրացուցիչ կոդերից հետո կարող է նշվել տվյալ գործառնության հետ կապված այլ տեղեկատվություն: Գործարքի կատարման ժամանակ գործառնական օր համակարգում ձևավորվող փաստաթղթի նպատակը դաշտում Ձեռքի միջոցով լրացված համապատասխան տեղեկատվություն, որը կարող է չունենալ որևէ կոդավորում, ավտոմատ կերպով ամբողջությամբ լրացվում է այս դաշտում, երբ ձևավորվում է համապատասխան հաղորդագրություն կատարված գործարքի մասին տեղեկացում ուղարկելու համար:

Կոդավորման սկզբունքի կիրառման համար կարող է լրացվել սույն Աղյուսակում նշված կոդերից մեկը, վերջինիս հետ կապված համապատասխան բնութագրիչներով:

Կիրառման համար սահմանված կոդերի անվանումը	Հիմնա-կան կոդը	Հիմնական կոդի առաջին լրացուցիչ մաս	Հիմնական կոդի երկրորդ	Տվյալ գործառնու թյան

				լրացուցիչ մաս	համար լրացվող այլ տեղեկատ-վություն
1	- Բյուջետային հաշիվներին ուղղված վճարումներ (տեղական և համայնքային)	**TUBG**			
2	- Բյուջետային հաշիվներից կատարվող վճարումներ (տեղական և համայնքային)	**BUDP**			
3	- Ոչ բանկ հաճախորդների վճարումները ուղղված իրեն սպասարկող բանկին կամ հաճախորդին (ներբանկային վճարում): Եթե վերջնական շահառուն և վճարողը սպասարկվում են նույն բանկում:	**CINB**			
4	- Միջբանկային վճարում, այդ թվում ոչ բանկ հաճախորդների միջբանկային վճարումները (որոնց դասակարգումը նշված չէ)	**BKBK**			
5	- Բորսայական հարթակներում գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումներ (ուղղված դեպի բորսային կամ վերջինս կողմից հետ փոխանցվող):	**BRSA**	**EXCHG** - արտարժույթի առք/ վաճառք		
			OVERN - օվերնայթ վարկի հարթակ		
			SECUR - արժեթուղթ		
6	- Կենտրոնական դեպոզիտարիայի միջոցով գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումներ (ուղղված դեպի բորսային կամ վերջինս կողմից հետ փոխանցվող):	**CSDT**	**TCRG** - ժամկետային վարկի հարթակ		
			CORST - կորպորատիվ արժեթուղթ		
7	- Դրամավարկային քաղաքականության գործիքակազմի իրականացման	**CBMP**	**AVAND** - ավանդ		
			REPO - ռեպո		

	հետ կապված փոխանցումներ (ուղղված դեպի ԿԲ-ին, կամ ԿԲ կողմից վերջինս ետ կապված փոխանցում):		**REVREP** - հակադարձ ռեպո		
			SWAP - սվոպ		
			FORW - ֆորվարդ		
			FUTUR - ֆյուչերս		
			LOAN - վարկ		
8	- «ԱրՔա» համակարգով կատարված գործառնությունների վերջնահաշվարկ, միջոցների սառեցում	**ARCA**	**SETLM** - վերջնահաշ-վարկ **FREEZ** - սառեցում		
8.1	- «ԱրՔա-Փեյ» համակարգով կատարված գործառնությունների վերջնահաշվարկ	**ARPAY**	**SETLM** - վերջնահաշ-վարկ		
8.2	- «USԱԿ» համակարգով կատարված գործառնությունների վերջնահաշվարկ	**STAK**	**SETLM** - վերջնահաշ-վարկ		
9	- Արտասահման փոխանցում, ստացում	**ASWIFT**	**SEND** - փոխանցում		Անդորրա-գրի նպատակը
			RECV - ստացում		դաշտի տվյալները
10	- Կանխիկ միջոցներով գործառնություններ	**CASH**	**COLIN** - ամրացում		Մուտքա-գրողի գլխամասի/ մասնաճյու ղի կոդը
			COLWD - ելքագրում		Ստացողի գլխամասի/ մասնաճյու ղի կոդը
			CHEQ - չեկի սպասարկում		Չեկի համարը

11	- Արժեթղթերի աճուրդների գումարներ, արժեթղթերի և արժեկտրոնների մարումներ	**SECUR**	**ISSHU** - թողարկում **SMAT** - մարում **COUP** - արժեկտրոն		
12	- Փոխարկման գործառնության հետ կապված տեղեկատվություն	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին	**CHANG** - կատարվել է փոխարկում		
13	- Այլ վճարումներ բանկի հաշվին կամ բանկի հաշվից , որը բնութագրված չէ	**OTHER**			Կարող է նշվել նպատակը դաշտում ձեռքով լրացվող տեղեկատվություն
	Հիմնական կոդերի հետ միասին անհրաժեշտության դեպքում կիրառվող երկրորդ լրացուցիչ կոդի անվանումը				
1)	- Գործարքի հետ կապված տուգանքի վճարումներ բանկի հաշվին կամ բանկի հաշվից	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին		**TUGQ** - տուգանք	
2)	- Գործարքի հետ կապված տոկոսների վճարումներ բանկի հաշվին կամ բանկի հաշվից	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին		**TOKS** - տոկոս	
3)	- Գործարքի կնքում	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին		**UPCONT** - գործարքի կնքում	
4)	- Գործարքի մարումներ	Կարող է կիրառվել մյուս		**EDCON** - գործարքի մարում	

		կոդերի հետ միասին			
5)	- Գումարի վերադարձ	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին		**BACK** - վերադարձ	
6)	- Գնման գործարք (ձեռք է բերվել)	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին		**BUY** - գնվել է	
7)	- Վաճառքի գործարք	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին		**SELL** - վաճառվել է	
8)	- Կատարված գործարքի հետ կապված այլ տեղեկատվություն, որը բնութագրված չէ	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին		**OTHER** - այլ	
	Հիմնական կոդերի հետ միասին Տվյալ գործառնության համար լրացվող այլ տեղեկատվություն, որը լրացվում է անհրաժեշտության դեպքում: Կարող են միաժամանակ լրացվել մի քանի տվյալներ:				
ա)	- Կնքված/մարված գործարքի (պայմանագրի) համարի հետ կապված տեղեկատվություն	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			**NUM** - Գործարքի (պայմանա-գրի) համարը
բ)	- Կատարված գործարքի ժամկետի հետ կապված այլ տեղեկատվություն	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			**DURT** - Գործարքի ժամկետայ-նությունը

գ)	- Կատարված վարկային գործառնության հետ կապված դասակարգման կոդը	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			Վարկի դասակարգման կոդը
դ)	- Կատարված գործարքի հետ կապված միջնորդավճարների գանձում/վճարում	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			**FEE** - միջնորդա-վճար
ե)	- Կատարված գործարքի հետ կապված արժույթի ԻՍՕ կոդը	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			արժույթի ISO կոդը
զ)	- Կատարված գործարքի հետ կապված արժույթի փոխարժեքը	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			արժույթի փոխարժե-քը
է)	- Կատարված գործարքի հետ կապված արժեթղթի ISIN կոդը	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			արժեթղթի ISIN կոդը
ը)	- Կատարված գործարքի հետ կապված ամսաթվի արտացոլում, եթե տարբերվում է տեղեկացման ուղարկման ամսաթվից	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			**DATE** - Ամսաթիվ (DDMMYYYY) սկզբունքով
թ)	- Կատարված գործարքի հետ կապված ճշգրտումներ	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			**DEF** - պակասորդ **IXS** - ավելցուկ **CNTF** - կեղծ դրամ

ժ)	- Հաղորդագրությունը ստացող կողմին անհրաժեշտ ենթահաշվի վերաբերյալ տեղեկատվություն	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			միջոցների **CA** - մուտքագրում կամ **DA** - ելքագրում նշված ենթահաշվին, ենթահաշվի անվանատերը
ի)	- Կատարված գործարքի հետ կապված այլ տեղեկատվություն, որը բնութագրված չէ	Կարող է կիրառվել մյուս կոդերի հետ միասին			**OTHER** - այլ Կարող է նշվել ձեռքով լրացված տեղեկատվություն

Նշված ցանկը, ըստ անհրաժեշտության կարող է ընդլայնվել, բանկերի հետ նախապես համաձայնեցված կոդերով:

Սույն դաշտում առանձին տողով լրացվում է նաև առանձին ենթահաշվի վերաբերյալ տեղեկատվություն: Եթե ստացողին ուղղված տեղեկատվության մեջ անհրաժեշտ է լրացուցիչ նշել տեղեկատվություն առանձին ենթահաշվի մակարդակով, որը պետք է փոխանցվի ստացող կողմին, ապա վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը (ենթահաշիվը, ենթահաշվի անվանատերը) առանձին տողով լրացվում է սույն դաշտում: Հաղորդագրության մեջ բոլոր դաշտերի տվյալների նկարագրության համար կիրառվող նշանակումները և «ցուցիչների» կիրառման սկզբունքները պետք է համապատասխանեն ՀՏ 108 հաղորդագրության նմանատիպ դաշտերի նկարագրության հետ:

9 - Դաշտ :07: Էլեկտրոնային ստորագրություն

Չևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս դաշտում լրացվում է էլեկտրոնային ստորագրությունը:

Սույն հաղորդագրության նկարագրության մեջ 5!n կոդ նշելով հասկացվում է Կենտրոնական բանկի կողմից բանկին/կազմակերպությանը տրամադրված հնգանիշ գրանցման կոդը:

Նշված հաղորդագրություններում կիրառվող բոլոր դաշտերի՝ 4*35x, տողերում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են ցուցիչներ ըստ սահմանված սկզբունքի: Ցուցչի և լրացվող

տվյալների միջև դրվում է մեկ զատիչ (/)։ Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ իրենց համապատասխան ցուցչի և զատչի կիրառմամբ չեն նշվում։

Հաղորդագրության դաշտերի նկարագրության համար կիրառվող նշանակումները և ցուցիչների կիրառման սկզբունքները ներկայացված են ՀՏ 108 հաղորդագրության նկարագրության մեջ։


Ցուցիչների կիրառման ժամանակ պետք է առաջնորդվել ՀՏ 108 հաղորդագրության նկարագրության մեջ նշված ցուցիչների և դրանց միջոցով տվյալների լրացման համար սահմանված կանոններով, Անձը հաստատող փաստաթղթի և մահվան վկայականի տվյալների լրացման հաջորդականության համար սահմանված կանոններով։

ՀՏ 920 Հարցումային հաղորդագրություն

Հաղորդագրության այս տեսակը ուղարկում է հաշվետեր Ֆինանսական կազմակերպությունը՝ վերջինիս հաշիվը սպասարկող բանկին:

Այն օգտագործվում է հաշիվը սպասարկող բանկին հարցում կատարելու համար որին ի պատասխան տրամադրվում (ուղարկվում) է ՀՏ 951 «Հաշվի վիճակ» հաղորդագրությունը, ինչպես նաև օգտագործվում է միջանկյալ հաշվետվությունների, քաղվածքների և այլ նմանատիպ փաստաթղթերի ձեռք բերման նպատակով:

Այս հաղորդագրությունը կարող է ուղարկվել ինչպես ԿԲ – գլխամաս, գլխամաս – մասնաճյուղ ուղղություններով, այնպես էլ հակառակը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	12	Հայցվող հաղորդագրություն	3!n	2
Պ	25	Հաշվի համար	12!n[4n]	3
Պ	31	Ամսաթիվ	6!n	4
Օ	31	Ամսաթիվ	6!n	5
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	6

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:12:** Հայցվող հաղորդագրություն

Չևաչափ 3!n

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է պահանջվող հաղորդագրության տեսակը՝ օրինակի համար **951** թվային արժեքը:

3) Դաշտ **:25:** Հաշվի համար

Չևաչափ 12!n[4n]

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաշվեհամարը, որի վերաբերյալ տրամադրվում է հարցումը:

4) Դաշտ **:31:** Ամսաթիվ

Չևաչափ 6!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ամսաթիվը, որի դրությամբ հարցվում է պահանջվող հաղորդագրության տեսակը:

Եթե լրացվում է միայն պարտադիր գրանցման ենթակա :31: դաշտը, ապա հաշվետվությունը տրվում է նշված ամսաթվի դրությամբ: Իսկ եթե լրացվում է նաև օժանդակ :31: դաշտը, ապա հաշվետվությունը տրվում է նշված ամսաթվերի միջակայքի ժամանակահատվածի համար, ներառյալ գրանցված ամսաթվերը:


5) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն

Չևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 920 հաղորդագրության գործածման օրինակ.

1998 թ. հոկտեմբերի 1-ին Հայագրոբանկը հարցում է ուղարկում Կենտրոնական բանկ այնտեղ վարվող իր թղթակցային՝ 103002101428, հաշվի վիճակի վերաբերյալ:




ՀՏ 920 հաղորդագրության տեսքը՝

Նկարագրություն	Ֆորմատ
Գլխագիր	{9201420010300142000110980075801109811502O
Գործառնության համար	:20:451695
Հայցվող հաղորդագրություն	:12:951
Հաշվի համար	:25:103002101428
Ամսաթիվ	:31:011098

Վերջաբան	}

ՀՏ 930 Սառեցման փոփոխության հանձնարարական

Հաղորդագրության այս տեսակը ուղարկում է համապատասխան համակարգի քլիրինգ և (կամ) պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունը դեպի ՀՀ կենտրոնական բանկ, այդ համակարգի հաշվարկային փուլի ընթացքում բանկային հաշվին, այդ թվում՝ թղթակցային, հաշվարկային կամ վճարային հաշվին, (այսուհետ՝ բանկային հաշվին), սառեցված դրամական միջոցների չափը ավելացնելու նպատակով:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	2
Ա1 կրկնվող ենթապարբերություն ----≫				
Պ	69B	Սառեցման հանձնարարություն	12!n[4n]3!a15d	3
-----┤				
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	4

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- Հաղորդագրության մեծության առավելագույն թույլատրելի չափը չպետք է գերազանցի 20000 բայթը
- Բոլոր կրկնվող ենթապարբերությունների **:69B:** դաշտում պարտադիր պետք է լրացվի նույն արժույթի (3!a) կոդը
- **:23:** դաշտում լրացվող կոդի արժեքի ճշտությունը ՀՀ կենտրոնական բանկում չի ստուգվում: Հաղորդագրությունը ուղարկող կողմը պետք է ապահովի :23: դաշտում կիրառման համար սահմանված կոդերի ճշգրիտ լրացումը:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ՀՏ 930 հաղորդագրության գործառույթի կոդը որը կիրառվելու է համապատասխան համակարգի համար: «Մասնավորապես.

ա/ «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի» համար լրացվում է.

«**ARCA[/FRZADD]**» (Freezing Add) → վերջնահաշվարկի ապահովման համար սառեցված գումարի չափի (Limit-ի) ավելացում կոդը:

բ/ «ԱրՔա Փեյ» համակարգի համար լրացվում է.

- **ARPAY[/FRZADD]** (Freezing Add) → «ԱրՔա Փեյ» համակարգով գործարքների վերջնահաշվարկի ապահովման համար սառեցված գումարի չափի (Limit-ի) ավելացում կոդը:

Հաղորդագրության «:23: Լրացուցիչ նույնացուցիչ» դաշտում կիրառման համար սահմանված կոդերից բացի այլ կոդ չի կարող լրացվել:

3) Դաշտ **:69B:** Սառեցման հանձնարարություն
Չևաչափ 12!n[4n]3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է՝


- 12n[4n] ենթադաշտում համակարգի մասնակցի այն բանկային հաշիվը, որի վրա պետք է սառեցվեն նշված դրամական միջոցները
- 3!a ենթադաշտում այն արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է գործարքը
- 15d ենթադաշտում այն **հավելյալ** գումարը (տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ), որի չափով պետք է ավելանան նշված մասնակցի համապատասխան բանկային հաշվի վրա սառեցված դրամական միջոցները:

4) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Չևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 931 Սառեցման հաստատում

Հաղորդագրության այս տեսակը ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկը համապատասխան համակարգի համար քլիրինգ և (կամ) պրոցեսինգ իրականացնող կազմակերպությանը, համապատասխան ֆինանսական կազմակերպության բանկային հաշվին, այդ թվում՝ թղթակցային, հաշվարկային կամ վճարային հաշվին (այսուհետ՝ բանկային հաշվին)՝ դրամական միջոցների սառեցման չափի վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	3
Ա1 կրկնվող ենթապարբերություն ----≫				
Պ	69C	Սառեցման նույնացուցիչ	1a12!n[4n]3!a15d	4
-----┤				
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	5

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- Հաղորդագրության մեծության առավելագույն թույլատրելի չափը չպետք է գերազանցի 20000 բայթը
- Բոլոր կրկնվող ենթապարբերությունների **:69C:** դաշտում պարտադիր պետք է լրացվի նույն արժույթի (3!a) կոդը:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ստացված հանձնարարականի (ՀՏ 231-ի կամ ՀՏ 930-ի) **:20:** դաշտի արժեքը, որի դիմաց տրվում է սույն տեղեկացման հաղորդագրությունը:

3) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ստացված հանձնարարականի (ՀՏ 231-ի կամ ՀՏ 930-ի) **:23:** դաշտի արժեքը՝ այն գործառույթի կոդը, որի դիմաց տրվում է սույն տեղեկացման հաղորդագրությունը, ըստ համապատասխան համակարգի: Մասնավորապես.

ա/ «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի համար լրացվում է հետևյալ կոդերի համախմբությունից որևէ մեկը՝

- **ARCA[/STL&FRZ]**
- **ARCA[/FRZ]**
- **ARCA[/FRZADD]**

բ/ «ՍՄԱԿ» դրամական փոխանցումների Հայաստանյան միասնական համակարգի համար լրացվում է «**STAK**» կոդը:

գ/ «ԱրՔա Փեյ» համակարգի համար լրացվում է հետևյալ կոդերից որևէ մեկը՝

- **ARPAY[/STL&FRZ]** (Settlement and Freezing) → «ԱրՔա Փեյ» համակարգով գործարքների վերջնահաշվարկ և հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (Limit-ի) սառեցում,
- **ARPAY[/FRZ]** → «ԱրՔա Փեյ» համակարգով գործարքների կատարման հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (Limit-ի) սառեցում:»
- **ARPAY[/FRZADD]** (Freezing Add) → «ԱրՔա Փեյ» համակարգով գործարքների վերջնահաշվարկի ապահովման համար սառեցված գումարի չափի (Limit-ի) ավելացում կոդը:»

4) Դաշտ **:69C:** Սառեցման նույնացուցիչ
Չևաչափ 1a12!n[4n]3!a15d

Այս **պարտադիր** դաշտի ձևաչափում յուրաքանչյուր համապատասխան ենթադաշտում նշվում է՝

- 1a ենթադաշտում **Y** կամ **N** կոդը՝

Կոդ	Կոդի բովանդակությունը
N	Չկատարված՝ հաշվում բավականաչափ միջոց չկա կամ միջոցները բացակայում են
Y	Կատարված՝ գումարը սառեցված է

- 12!n[4n] ենթադաշտում այն մասնակցի համապատասխան բանկային հաշվի համարը, որի վրա սառեցված են կամ սառեցված չեն անհրաժեշտ դրամական միջոցները
- 3!a ենթադաշտում այն արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվում է գործարքը
- 15d ենթադաշտում տվյալ պահի դրությամբ՝ նշված համապատասխան համակարգով վերջնահաշվարկի իրականացման նպատակով, սառեցված դրամական միջոցների գումարը (տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ)։ Գումարը կարող է ընդունել նաև 0 արժեք։ Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը։ Ընդ որում, դրամային՝ AMD-ով, գործառնության դեպում տասնորդական ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում պարտադիր լրացվում է 0 թիվը։ «Ընդ որում.

  ա/ եթե սույն ՀՏ 931 հաղորդագրությունը ուղարկվում է ի պատասխան ՀՏ 231-ի, ապա ՀՏ 931 հաղորդագրության մեջ յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ այս :69C: դաշտում լրացվում է :23: դաշտում նշված համապատասխան համակարգում հաշվարկային փուլի ընթացքում գործառնություններ կատարելու նպատակով տվյալ մասնակցի համար փաստացի սառեցված դրամական միջոցների ընդհանուր գումարը։

  բ/ եթե սույն ՀՏ 931 հաղորդագրությունը ուղարկվում է ի պատասխան ՀՏ 930-ի, ապա ՀՏ 931 հաղորդագրության մեջ համապատասխան մասնակցի վերաբերյալ այս :69C: դաշտում լրացվում է այն փաստացի սառեցված դրամական միջոցների գումարը, որի չափով ավելացում է :23: դաշտում նշված համապատասխան համակարգում հաշվարկային փուլի ընթացքում գործառնություններ կատարելու նպատակով տվյալ մասնակցի համար՝ մինչ այդ, փաստացի սառեցված դրամական միջոցների ընդհանուր գումարը։

  I. Այն դեպքում երբ ՀՏ 931 հաղորդագրությունը ուղարկվում է ի պատասխան ՀՏ 231-ի, ապա ՀՏ 931 հաղորդագրության մեջ միաժամանակ լրացվում են.

  ա/ ՀՏ 231-հաղորդագրության մեջ սառեցումների դաշտում նշված մասնակիցների համար նոր դրամական միջոցների սառեցման արդյունքները,

  բ/ ՀՏ 231-հաղորդագրության մեջ :69D: և :69E: դաշտերում լրացված մասնակիցների (դրանք միասին վերցրած) ինչպես նաև ՀՏ 231-հաղորդագրության :69B: դաշտերում նշված մասնակիցների համեմատման արդյունքում այն մասնակիցների համար սառեցված միջոցների վերաբերյալ տվյալները, որոնք նշված են :69D: կամ :69E: դաշտերում, սակայն բացակայում են :69B: դաշտում (առկայության դեպքում)։ Միջոցների սառեցման համար կիրառվող կանոնները սահմանված են ՀՏ 231-հաղորդագրության նկարագրության մեջ։

5) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
   Ձևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը։

ՀՏ 932 Տեղեկացում սառեցման վերաբերյալ

Հաղորդագրության այս տեսակը ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկը ֆինանսական կազմակերպությանը վերջինիս բանկային հաշվին, այդ թվում՝ թղթակցային, հաշվարկային կամ վճարային հաշվին (այսուհետ՝ բանկային հաշվին), դրամական միջոցների սառեցման չափի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	23	Լրացուցիչ նույնացուցիչ	16x	3
Պ	13	Ամսաթվի և ժամի ցուցիչ	10!n	4
Պ	25	Հաշվի համար	12!n[4n]	5
Պ	32B	Արժույթի կոդ և գումար	3!a15d	6
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	7

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ստացված հանձնարարականի (ՀՏ 231-ի կամ ՀՏ 930-ի) համարը՝ **:20:** դաշտի արժեքը, որի դիմաց տրամադրվում է սույն տեղեկացման հաղորդագրությունը:

3) Դաշտ **:23:** Լրացուցիչ նույնացուցիչ
Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ստացված հանձնարարականի (ՀՏ 231-ի կամ ՀՏ 930-ի) **:23:** դաշտի արժեքը՝ այն գործառույթի կոդը, որի դիմաց տրվում է սույն տեղեկացման հաղորդագրությունը, ըստ համապատասխան համակարգի: Մասնավորապես.

ա/ ««ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի համար լրացվում է հետևյալ կոդերի համախմբությունից որևէ մեկը՝

- **ARCA[/STL&FRZ]**
- **ARCA[/FRZ]**
- **ARCA[/FRZADD]**

բ/ «ՍՏԱԿ» դրամական փոխանցումների Հայաստանյան միասնական համակարգի համար լրացվում է «**STAK**» կոդը:

գ/ «Արքա Փեյ» համակարգի համար լրացվում է հետևյալ կոդերից որևէ մեկը՝

- **ARPAY[/STL&FRZ]** (Settlement and Freezing) → «Արքա Փեյ» համակարգով գործարքների վերջնահաշվարկ և հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (Limit-ի) սառեցում,
- **ARPAY[/FRZ]** → «Արքա Փեյ» համակարգով գործարքների կատարման հաջորդ փուլի համար վերջնահաշվարկի գումարի (Limit-ի) սառեցում:»
- **ARPAY[/FRZADD]** (Freezing Add) → «Արքա Փեյ» համակարգով գործարքների վերջնահաշվարկի ապահովման համար սառեցված գումարի չափի (Limit-ի) ավելացում կոդը:

4) Դաշտ **:13:** Ամսաթվի և ժամի ցուցիչ
Ձևաչափ 10!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն ամսաթիվը (DDMMYY տեսքով) և ժամը (HHMM տեսքով), որի դրությամբ տրամադրվում է սույն տեղեկատվությունը:

5) Դաշտ **:25:** Հաշվի համար
Ձևաչափ 12!n[4n]

Այս **պարտադիր** դաշտում նշվում է մասնակցի այն բանկային հաշվեհամարը, որի վերաբերյալ տրամադրվում է տեղեկատվությունը:

6) Դաշտ **:32B:** Արժույթի կոդ և գումար
Ձևաչափ 3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է տվյալ պահի դրությամբ նշված համապատասխան համակարգով վերջնահաշվարկի իրականացման նպատակով սառեցված դրամական միջոցների գումարի չափը և արժույթը, որտեղ՝

- 3!a → արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի) որով կատարվել է սառեցումը
- 15d → սառեցված գումարը (տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ), այն կարող է հավասար լինել նաև **0**-ի: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով գումար և վերջինիս արժույթի կոդ: Ընդ որում, դրամային (**AMD**-ով) գործառնության դեպում տասնորդական ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր լրացվում է **0** թիվը: Ընդ որում.

ա/ եթե սույն ՀՏ 932 հաղորդագրությունը ուղարկվում է ի պատասխան ՀՏ231-ի, ապա ՀՏ 932 հաղորդագրության մեջ յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ այս :32B: դաշտում լրացվում է :23: դաշտում նշված համապատասխան համակարգում՝ հաշվարկային փուլի ընթացքում գործառնություններ կատարելու նպատակով տվյալ մասնակցի համար փաստացի սառեցված դրամական միջոցների ընդհանուր գումարը:

բ/ եթե սույն ՀՏ 932 հաղորդագրությունը ուղարկվում է ի պատասխան ՀՏ930-ի, ապա ՀՏ 932 հաղորդագրության մեջ համապատասխան մասնակցի վերաբերյալ այս :32B: դաշտում լրացվում է այն փաստացի սառեցված դրամական միջոցների գումարը, որի չափով ավելացում է :23: դաշտում նշված համապատասխան համակարգում՝ հաշվարկային փուլի ընթացքում գործառնություններ կատարելու նպատակով տվյալ մասնակցի համար՝ մինչ այդ, փաստացի սառեցված դրամական միջոցների ընդհանուր գումարը:

I. Այն դեպքում երբ ՀՏ 932 հաղորդագրությունը ուղարկվում է ի պատասխան ՀՏ 231-ի, ապա ՀՏ 932 հաղորդագրության մեջ միաժամանակ լրացվում են.

ա/ ՀՏ 231-հաղորդագրության մեջ սառեցումների դաշտում նշված մասնակիցների համար նոր դրամական միջոցների սառեցման արդյունքները:

բ/ ՀՏ 231-հաղորդագրության մեջ :69D: և :69E: դաշտերում լրացված մասնակիցների (դրանք միասին վերցրած) ինչպես նաև ՀՏ 231-հաղորդագրության :69B: դաշտերում նշված մասնակիցների համեմատման արդյունքում այն մասնակիցների համար սառեցված միջոցների վերաբերյալ տվյալները, որոնք նշված են :69D: կամ :69E: դաշտերում, սակայն բացակայում են :69B: դաշտում (առկայության դեպքում): Միջոցների սառեցման համար կիրառվող կանոնները սահմանված են ՀՏ 231-հաղորդագրության նկարագրության մեջ:

Յուրաքանչյուր մասնակցին ուղարկվում է միայն վերջինիս վերաբերյալ տվյալները:


7) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Ձևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 950 Քաղվածք հաշվից

Այս հաղորդագրության տեսակը (ՀՏ-ն) ուղարկում է դրամական հաշիվ սպասարկող բանկը հաշվետիրոջը: Օգտագործվում է հաշվով կատարվող գործառնությունների արդյունքում բոլոր փոփոխությունների մասին մանրամասն տեղեկատվություն փոխանցելու համար, անկախ նրանից, թե գործառնությունների կատարման հանձնարարությունը ինչ ճանապարհով է ստացվել՝ ԷՀԱ համակարգով, քլիրինգով, թղթային, թե այլ ճանապարհով:

Այս հաղորդագրությունը կարող է առաքվել հետևյալ երկու ուղղություններով:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության համար	16x	1
Պ	25	Հաշվի համար	12!n[4n]	2
Պ	28	Հաշվետվության համար կամ հերթական համար	5n[/3n]	3
Պ	60a	Դրամական սկզբնական մնացորդ	F կամ M	4
Ա1 կրկնվող ենթապարբերություն ----≫				
O	61	Հաշվետվության տող	6!n1a15d4!a16x[/34x]	5
-----┤				
Պ	62a	Դրամական վերջնական մնացորդ	F կամ M	6
O	64	Դրամական վերջնական հասանելի մնացորդ	6!n3!a15d	7
O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	8

Պ – պարտադիր, O – օժանդակ

- Հաղորդագրության առավելագույն թույլատրելի չափսը չպետք է գերազանցի 20000 բայթը
- **:60a:**, **:62a:**, **:64:** դաշտերի ամսաթվերը և արժույթները միշտ պետք է համընկնեն
- Հաղորդագրության մեջ **:61:** դաշտերը պետք է դասավորվեն ըստ գումարների աճման կարգի՝ սկզբում դեբետային գրանցումներ հետո կրեդիտային:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Չևաչափ 16x
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:25:** Հաշվի համար
   Չևաչափ 12!n[4n]
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաշվեհամարը, որից տրամադրվում է քաղվածքը:

3) Դաշտ **:28:** Հաշվետվության համար կամ հերթական համար
   Չևաչափ 5n[/3n]
   Այս **պարտադիր** դաշտում նշվում է քաղվածքի հերթական համարը՝ 5n, և հերթական հաղորդագրության համարը՝ 3n, այդ քաղվածքում:
   Եթե քաղվածքը բաղկացած է մեկ հաղորդագրությունից, ապա դաշտում նշվում է միայն քաղվածքի համարը, օրինակ՝ :28:**125**: Եթե քաղվածքը բաղկացած է մեկից ավել հաղորդագրություններից, ապա համարակալվում է նաև յուրաքանչյուր հաղորդագրությունը տվյալ քաղվածքի մեջ՝ :28:**125/1** կամ :28:**125/2** և այլն:

4) Դաշտ **:60a:** Դրամական սկզբնական մնացորդ
   Չևաչափ՝ տարբերակ **F** 1!a6!n3!a15d
   տարբերակ **M** 1!a6!n3!a15d
   Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է դրամական հաշվի մնացորդը՝ հաշվի հետ գործառնություն կատարելու սկզբնական պահի դրությամբ:
   Եթե քաղվածքը բաղկացած է մի քանի հաղորդագրություններից, ապա դրանցից առաջինում :60a: դաշտը հանդես է գալիս F հայտանիշով, այսինքն որպես **:60F:** դաշտ, իսկ մնացածներում M հայտանիշով, այսինքն որպես **:60M:** դաշտ: Ընդ որում, յուրաքանչյուր հաղորդագրության մեջ :60a: դաշտում կրկնվում են նախորդ քաղվածքի կամ նույն քաղվածքի նախորդ հաղորդագրության :62a: դաշտում նշված տվյալները:
   Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն, Գլուխ 3.

5) Դաշտ **:61:** Հաշվետվության տող
   Չևաչափ 6!n1a15d4!a16x[/34x]
   Այս օժանդակ դաշտում ներկայացվում են յուրաքանչյուր գործարքի մանրամասները: Նշված դաշտը մեկ հաղորդագրության մեջ կարող է հանդես գալ առավելագույնը 60 անգամ:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն, Գլուխ 3.

6) Դաշտ **:62a:** Դրամական վերջնական մնացորդ
Չնաչափ՝ տարբերակ **F** 1!a6!n3!a15d
տարբերակ **M** 1!a6!n3!a15d

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է բոլոր գործառնությունների արդյունքում ստացված դրամական հաշվի մնացորդը:

Եթե քաղվածքը բաղկացած է մի քանի հաղորդագրություններից, ապա բոլոր հաղորդագրություններում, բացի վերջինից, :62a: դաշտը հանդես է գալիս M հայտանիշով, այսինքն որպես **:62M:** դաշտ և ներկայացնում է տվյալ հաղորդագրության տեսակի գործառնությունների արդյունքում ստացված դրամական հաշվի մնացորդը: Դիտարկվող քաղվածքի վերջին հաղորդագրության մեջ :62a: դաշտը հանդես է գալիս F հայտանիշով, այսինքն որպես **:62F:** դաշտ և ներկայացնում է դրամական հաշվի վերջնական մնացորդը:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն, Գլուխ 3.

7) Դաշտ **:64:** Դրամական վերջնական հասանելի մնացորդ
Չնաչափ 6!n3!a15d

Այս օժանդակ դաշտում ներկայացվում է հաճախորդին հասանելի գումարը, որը ենթակա է գրանցման, եթե հաշվի անվանական մնացորդը չի համապատասխանում փաստացի (հասանելի) մնացորդին, օրինակ, երբ հաշիվն ունի չնվազող մնացորդ կամ հաշվին օվերդրաֆտ է տրամադրված:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն, Գլուխ 3.

8) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Չնաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 950 հաղորդագրության կազման գործածվող օրինակ.

1998թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ կենտրոնական բանկը Ագրոբանկին է տրամադրում քաղվածք վերջինիս թղթակցային հաշվից: Քաղվածքը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

- Թղթակցային հաշվի համարը՝ 103002101428
- Հաշվետվության համարը՝ 5
- Սկզբնական մնացորդ՝ 54!555!000 դրամ (կրեդիտային)
- Չնվազող մնացորդ՝ 1!000!000 դրամ

Գործառնությունների նկարագրություն՝

1. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Դեբետ: 455!000 դրամ
Գործառնության տեսակը՝ փոխանցում
Վճարային գործարքի հղման համարը՝ 45632

2. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Դեբետ: 550!000 դրամ

Գործառնության տեսակը՝ փոխանցում
Վճարային գործարքի հղման համարը՝ 45633

3. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Դեբետ: 5՝000 դրամ
Գործառնության տեսակը՝ փոխանցում
Վճարային գործարքի հղման համարը՝ 45634

4. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Դեբետ: 55՝000 դրամ
Գործառնության տեսակը՝ փոխանցում
Վճարային գործարքի հղման համարը՝ 45635


5. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Կրեդիտ: 50՝000 դրամ
Գործառնության տեսակը՝ փոխանցում
Վճարային գործարքի հղման համարը՝ 58642

6. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Կրեդիտ: 1՝510՝000 դրամ
Գործառնության տեսակը՝ փոխանցում
Վճարային գործարքի հղման համարը՝ 25642

7. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Կրեդիտ: 151՝000 դրամ
Գործառնության տեսակը՝ բյուջեից փոխանցում
Վճարային գործարքի հղման համարը՝ 28442

8. Գործարքի ամսաթիվը՝ 051098 Կրեդիտ: 15՝100 դրամ
Գործառնության տեսակը՝ քլիրինգով ստացված գումար
Վճարային գործարքի հղման համարը՝ 28962

Վերջնական մնացորդ՝ 55՝216՝000 դրամ
Վերջնական հասանելի մնացորդ՝ 54՝216՝000 դրամ



Հաղորդագրությունը կունենա հետևյալ տեսքը՝

Նկարագրություն	Ֆորմատ
Վերնագիր	{9501030014200103000510980075805109817302O
Գործառնության համար	:20:451695
Հաշվի համար	:25:103002101428
Հաշվետվության համար / հերթական համար	:28:5
Սկզբնական մնացորդ	:60F:C051098AMD54555000,00
Հաշվետվության տող	:61:051098D455000,00STRF45632


	:61:051098D550000,00STRF45633
	:61:051098D5000,00STRF45634
	:61:051098D55000,00STRF45635
	:61:051098C50000,00STRF58642
	:61:051098C1510000,00STRF25642
	:61:051098C151000,00SBDG28442
	:61:051098C15100,00NCLI28962
Վերջնական մնացորդ	:62F:C051098AMD55216000,00
Վերջնական հասանելի մնացորդ	:64:051098AMD54216000,00
Վերջաբան	}

ՀՏ 951 Հաշվի վիճակ

Հաղորդագրության այս տեսակը ուղարկում է դրամական հաշիվ սպասարկող բանկը հաշվետիրոջը: Օգտագործվում է հաշվի մասին ինֆորմացիայի փոխանցման համար՝ արտացոլելով դրամական հաշվի վիճակը հարցման պահի դրությամբ:

«Հաշվի վիճակ» հաղորդագրությունը տրվում է միայն ի պատասխան ՀՏ 920՝ Հարցումային հաղորդագրության, կամ բանկերի միջև կնքված երկկողմանի պայմանագրի համաձայն:

Այս հաղորդագրությունը կարող է ուղարկվել ինչպես ԿԲ → գլխամաս, այնպես էլ գլխամաս → մասնաճյուղ ուղղություններով:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
Օ	21	Գործառնության հղման համար	16x	2
Պ	13	Ամսաթվի և ժամի ցուցիչ	10!n	3
Պ	25	Հաշվի համար	12!n[4n]	4
Պ	62M	Դրամական միջանկյալ մնացորդ	1a6!n3!a15d	5
Օ	64	Դրամական վերջնական հասանելի մնացորդ	6!n3!a15d	6
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	7

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
   Ձևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության համարը: Անհրաժեշտ է ապահովել դաշտի արժեքի բացառիկությունը:

2) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Չնաչափ 16x

Այս օժանդակ դաշտում ներկայացվում է գործառնության հետ կապված հղումը: Եթե նշված հաղորդագրությունը տրվում է ՀՏ 920 հաղորդագրության դիմաց, ապա այստեղ գրանցվում է ՀՏ 920-ի «Գործառնության համար»՝ :20:, դաշտի արժեքը:

3) Դաշտ **:13:** Ամսաթվի և ժամի ցուցիչ
Չնաչափ 10!n

Այս **պարտադիր** դաշտում նշվում է ամսաթիվը և ժամը, որի դրությամբ տրամադրվում է հաշվի վիճակը:

4) Դաշտ **:25:** Հաշվի համար
Չնաչափ 12!n[4n]

Այս **պարտադիր** դաշտում նշվում է այն հաշվեհամարը, որի վերաբերյալ տրամադրվում է հաղորդագրությունը:

5) Դաշտ **:62M:** Դրամական միջանկյալ մնացորդ
Չնաչափ 1a6!n3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է բոլոր գործառնությունների արդյունքում ստացված դրամական հաշվի մնացորդը: Դաշտի բնորոշիչում գրանցվում է **M** նույնացուցիչը, քանի որ այստեղ ներկայացվում է միջանկյալ (ոչ վերջնական) տեղեկություն հաշվի մասին:

6) Դաշտ **:64:** Դրամական վերջնական հասանելի մնացորդ
Չնաչափ 6!n3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաճախորդի համար հասանելի գումարը: Դիտարկվող դաշտի տվյալները կարող են տարբերվել :62M: դաշտում գրանցված արժեքներից, օրինակ այն դեպքում, երբ հաշվին օվերդրաֆտ է տրամադրված կամ հաշիվը ունի չնվազող մնացորդ և այլն:


7) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Չնաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 951 հաղորդագրության գործածման օրինակ.

Ի պատասխան 1998թ. հոկտեմբերի 6-ին Հայագրոբանկից ստացած ՀՏ 920 «Հարցումային հաղորդագրության»՝ Հղման համար 56482, Կենտրոնական բանկը տրամադրում է նրան ՀՏ 951 «Հաշվի վիճակ» հաղորդագրությունը Կենտրոնական բանկում

վարվող 103002101428 թղթակցային հաշվի վերաբերյալ, որտեղ նշում է հաշվի մնացորդը՝ 455՝000 դրամ նույն օրվա ժամը 13:30 դրությամբ:



ՀՏ 920 հաղորդագրության տեսքը՝

Նկարագրություն	Ֆորմատ
Գլխագիր	{9201420010300142000610980013806109813002O
Գործառնության համար	:20:56482
Հայցվող հաղորդագրություն	:12:951
Հաշվի համար	:25:103002101428
Ամսաթիվ	:31:061098
Վերջաբան	}

ՀՏ 951 հաղորդագրության տեսքը՝

Նկարագրություն	Ֆորմատ
Գլխագիր	{9511030014200103000610980075806109813295O
Գործառնության համար	:20:451695
Հղում	:21:56482
Ամսաթվի և ժամի ցուցիչ	:13:0610981330
Հաշվի համար	:25:103002101428
Վերջնական մնացորդ	:62M:C061098AMD455000,00
Վերջաբան	}


ՀՏ 952 Գործառնության մերժման մասին

Այս հաղորդագրության տեսակը կարող է ուղարկել ԷՀԱ համակարգի մեկ մասնակիցը մյուսին: Հաղորդագրությունը կիրառվում է այն դեպքերում, երբ

ա/ 1-ին, 2-րդ խմբի վճարային հաղորդագրութան, ինչպես նաև ռեեստրի մեջ նշված վճարումը (նաև վերջնահաշվարկը) անհնար է իրականացնել, ինչպես դրամական միջոցների, այնպես էլ հաղորդագրության մշակման համար սահմանված այլ անհրաժեշտ պայմանների չեն պահպանվել: Մերժման մասին հաղորդագրությունը կիրառվում է, երբ (ստացող կողմում) վճարման գործարքի վերաբերյալ ընդունված հանձնարարականի հետ կապված վերջնահաշվարկը (մասնակիցների հաշիվների Դեբետագումը-Կրեդիտագրումը) էլեկտրոնային վճարումների համակարգում Կենտրոնական բանկի կողմից դեռ չի կատարվել:

բ/ ստացված ընդհանուր՝ (n-րդ) խմբին, կամ խառը՝ (9-րդ) խմբին պատկանող ոչ վճարային հաղորդագրությունների (օրինակ՝ ՀՏ920) մշակման համար սահմանված համապատասխան պայմանները չեն ապահովվել:

ՀՏ 952 հաղորդագրության առաքման տարբերակները նշված են հետևյալ գծապատկերում՝



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	
Պ	20	Գործառնության համար	16x	1
O	12	Մերժվող հաղորդագրության տեսակ	3!n	2
Պ	21	Գործառնության հղման համար	16x	3
O	21A	Մերժված հաղորդագրության բացառիկ համար	16!n	4
Պ	72	Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	5

O	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	6

Պ – պարտադիր, O – օժանդակ

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար
Չևաչափ 16x
Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

2) Դաշտ **:12:** Մերժվող հաղորդագրության տեսակ
Չևաչափ 3!n
Այս օժանդակ դաշտում նշվում է մերժված հաղորդագրության տեսակը:

3) Դաշտ **:21:** Գործառնության հղման համար
Չևաչափ 16x
Այս **պարտադիր** դաշտում նշվում է մերժված հաղորդագրության :20: դաշտում լրացված գործառնության համարը:

4) Դաշտ **:21A:** Մերժված հաղորդագրության բացառիկ համար
Չևաչափ 16!n
Այս օժանդակ դաշտում նշվում է մերժված հաղորդագրության բացառիկ (չկրկնվող) համարը:

5) Դաշտ **:72:** Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն
Չևաչափ 6*35x
Այս **պարտադիր** դաշտում նշվում է մերժման պատճառի հետևյալ կոդերից մեկը և այդ կոդի բացատրության բովանդակությունը: Սույն դաշտում լրացվող կոդերի ամբողջական ցանկը բերված է նաև կատալոգի 2-րդ գլխում՝ Հաղորդագրություններում կիրառման համար սահմանված կոդերը բաժնում:

Սույն Աղյուսակում նշված կոդերը կիրառման մեջ են դրավում Կենտրոնական բանկի «Գործառնական օր» համակարգում շահագործման մեջ ներդնելու օրվանից:

Կոդ	Կոդի բովանդակությունը	Կիրառվում է ՀՏ952-ի միջոցով
//01//	Բանկային հաշիվը բացակայում է	այո
//02//	Հաշիվը փակված է	այո
//03//	Հաշվում բավարար /հասանելի/ միջոց չկա	այո
//04//	Հաշիվը արգելափակված է Դեբետի կամ Կրեդիտի կատարման համար կամ էլ երկուսը միասին կատարելու համար	այո

//05//	Նշված արժույթի կոդը չի համապատասխանում դեբետագրվող հաշվի արժույթին	այո
//12 //	Սխալ բացառիկ համարում Error in the unique number of received message (ընթացիկ բանկային օրվա կտրվածքով հաղորդագրության :20: դաշտում գրանցված բացառիկ համարը կրկնվում է)	այո
//16//	Վճարման ենթակա ամբողջ գումարը չի համապատասխանում կրկնվող պարբերություններում նշված վճարվող գումարների հանրագումարին (մասնավորապես՝ ՀՏ132, իսկ ՀՏ969, ՀՏ972, ՀՏ973-ը կից ՀՏ202-ի համար):	այո
//17//	Նշված արժույթի կոդը չի համապատասխանում կրեդիտագրվող հաշվի արժույթին (այն վերաբերում է նաև կրկնվող ենթապարբերությունների վճարումներին)	այո
//18//	Դեբետագրվող և կրեդիտագրվող հաշիվների դաշտերում նշված է միևնույն բանկային հաշիվը, սակայն (որպես բացառություն) ՀՏ 231-ի համար դիտարկվող սահմանափակումը չի գործում	այո
//19//	ՀՏ-ում գրանցված վճարման ենթակա գումարի մանրադրամը նշված է սխալ ճշտությամբ, մասնավորապես հայկական դրամի լումաները նշված են ոչ տասնորդական ճշգրտությամբ՝ 0,10	այո
//30//	Հաղորդագրության գլխագրում Ուղարկողի անհայտ նույնականացման կոդի առկայություն	այո
//31//	Հաղորդագրության ուղարկողը/**առաքողը** RTGS-ի միջոցով վճարման իրականացման համար իրավասություն չունի:	այո
//32//	**Վճարողի** բանկային հաշիվը չի համապատասխանում ստացված հաղորդագրության գլխագրում նշված ուղարկողի **/առաքողի** նույնականացման կոդին	այո
//33//	Ստացված հաղորդագրության գլխագրում նշված ստացողի/հասցեատիրոջ անհայտ նույնականացման կոդ	այո
//34//	**Շահառուի** բանկային հաշիվը չի համապատասխանում ստացված հաղորդագրության գլխագրում նշված	այո

	ստացողի/**հասցեատիրոջ** նույնականացման կոդին	
//35//	Հաղորդագրության **ստացողի** համար RTGS-ի միջոցով իրականացվող վճարման համար իրավասություն չունի	այո
//36//	Լրացուցիչ նույնացուցչի անհայտ արժեք, մասնավորապես ՀՏ 231-ի **:23:** դաշտում առկա է լրացման համար /չսահմանված կոդ/ չկանոնակարգված նույնացուցիչ	այո
//37//	Վճարման գումարը չի կարող լինել փոքր կամ հավասար 0-ի	այո
//38//	Ջուտացված դիրքերի Դեբետների ընդհանուր գումարը հավասար չէ Կրեդիտների ընդհանուր գումարին (կիրառվում է ՀՏ 231-ի դեպքում)	այո
//39//	**Վճարողի** բանկային հաշվի ստուգիչ նիշի սխալ	այո
//40//	**Շահառուի** բանկային հաշվի ստուգիչ նիշի սխալ	այո
//42//	Դեբետի կատարման համար սառեցված գումարը անբավարար է	այո
//43//	Ստացված վճարման հանձնարարականի ռեեստրը բացակայում է (ՀՏ202-ին կից ՀՏ969, ՀՏ972, ՀՏ973-ռեեստրների համար)	այո
//44//	Ստացված ռեեստրի վճարման հանձնարարականը բացակայում է (ՀՏ969, ՀՏ972, ՀՏ973-ռեեստրներին կից ուղարկվող ՀՏ202-ի համար)	այո
//46//	**Դեպք 1)** ՀՏ 132 վճարային հաղորդագրության մեջ նշված վճարման ենթակա ամբողջ գումարի արժույթի կոդը **չի համապատասխանում** կրկնվող դաշտերում առկա յուրաքանչյուր վճարման գումարի արժույթի կոդին **Դեպք 2)** ՀՏ 202 վճարային հաղորդագրության և նրան կցված ռեեստրի (ՀՏ 969, ՀՏ 972 կամ ՀՏ 973) կրկնվող **պարտադիր** դաշտերում **նշված չէ նույն արժույթի** կոդը **Դեպք 3)** ՀՏ 231-ի կրկնվող դաշտերում առկա են տարբեր արժույթների կոդեր, այսինքն **ներկայացված չէ** մեկ տեսակի (ընդհանուր) արժույթի կոդ	այո

//47//	Վճարային հաղորդագրության մեջ նշված վճարման կատարման ամսաթիվը չի կարող լինել ավելին քան բանկի ընթացիկ գործառնական օրվա ամսաթիվը: Սույն պահանջը/ստուգումը/ (որպես բացառություն) չի կիրառվում ՀՏ 125ի պարագայում և այս դեպքում այն չի մերժվում:	այո
//51//	Համակարգի մասնակցի քլիրինգային հաշվարկային հաշիվը բացակայում է, փակ է, այդ հաշվով գործարք չի կարող կատարվել	այո
//52//	Սառեցման ենթակա գումարի արժույթի կոդը չի համապատասխանում **սառեցվող** հաշվի արժույթին (կիրառվում է ՀՏ 231-ի և ՀՏ 930-ի համար)	այո
//08//	Security error Պաշտպանության սխալ	այո
//10//	An unknown message type Անհայտ հաղորդագրության տեսակ	այո
//11//	Error in header of received message Սխալ ստացված հաղորդագրության գլխագրում	այո
//13//	Other (previously not described) error in received message Այլ սխալ՝ ստացված հաղորդագրության մեջ, որը նկարագրված չէ	այո
//14//	Error of message format Սխալ հաղորդագրության ֆորմատում	այո
//15//	Registered in the stop list Գրանցված է կասեցման ցանկում	այո
//21//	Կապի խափանում/ հաղորդագրության առաքման ձախողում	այո
//22//	Electronic signing failure Էլեկտրոնային ստորագրությունը սխալ է/ աղավաղված է	այո
//S08//	Տեքստը կամ ստորագրությունը աղավաղվել է՝ ստորագրելուց հետո	այո
//S11//	Ձեր կատալոգում բացակայում է տեքստը ստորագրող բաժանորդը	այո
//S13//	Տեքստը և ստորագրությունը չեն համապատասխանում միմյանց	այո
//S15//	Բաժանորդի բանալին փակված է	այո

Նշված կոդերը պարտադիր լրացվում են դաշտի առաջին տոսում: Իսկ եթե սահմանված կոդից բացի պահանջվում է լրացուցիչ պարզաբանում, ապա այն պետք է լրացվի կոդին հաջորդող տողից: Ընդ որում.


Սահմանված Կոդը լրացվում է անմիջապես դաշտի «72» բնորոշչի «:» նշանից հետո և առաջին տողի միակ տեղեկատվությունն է: Եթե այդ կոդերը չեն կիրառվում, ապա դաշտի 6*35x ենթամասը լրացվում է ազատ ֆորմատով՝ նշավ տողերի քանակի և երկարության սահմաններում:

6) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Չնաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 952 հաղորդագրության գործածման օրինակ.

2008թ. հոկտեմբերի 7-ին Հայխնայբանկից ստացվում է հանձնարարական՝ գործառնության համար 56482, վճարել իր թղթակցային 103002101600 հաշվից 15՛555՛000 դրամ Արդշինբանկի թղթակցային 103002101212 հաշվին: Վճարողի թղթակցային հաշվի դիտարկման արդյունքում պարզվում է, որ նշված հաշվին բավականաչափ միջոցներ չկան, այդ իսկ պատճառով կազմվում է ՀՏ 952 «Վճարման մերժում» հաղորդագրությունը:



ՀՏ **100** հաղորդագրության տեսքը՝

Նկարագրություն	Ֆորմատ
Գլխագիր	**{1001600010300160000710080045807100811502O**
Գործառնության համար	**:20:56482**
Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	**:32:071008AMD15555000,00**
Վճարող	**:50A:103002101600** **Հայխնայբանկ**
Ստացող	**:59:103002101212** **Արդշինբանկ**

Վճարման նպատակ	**:70A:06.10.08-ին ձեռք բերված պարտատոմսերի դիմաց**
Վերջաբան	**}**

ՀՏ **952** հաղորդագրության տեսքը՝

Նկարագրություն	**Ֆորմատ**
Գլխագիր	**{952103001600010300071008004590710081151 20**
Գործառնության համար	**:20:451695**
Հղում	**:21:56482**
Հաղորդագրության ստացողին ուղղված տեղեկատվություն	**:72://03//**
Վերջաբան	**}**


ՀՏ 969 Միջբանկային վճարումների ռեեստր

Սույն ռեեստրը (հաղորդագրության տեսակը) նախատեսված է մի քանի վճարումների մանրամասները մեկ հաղորդագրության շրջանակներում լրացնելու և ստացող (շահառուին սպասարկող) կողմին փոխանցելու համար: Ռեեստրում, յուրաքանչյուր վճարման հետ կապված տվյալները լրացվում են համապատասխան կրկնվող ենթապարբերության դաշտերում: Ֆինանսական կազմակերպությունը ռեեստրը ուղարկում է շահառուին սպասարկող կողմին անմիջապես, առանց հաշվարկային բանկին այն ուղարկելու:

Միայն այս հաղորդագրության ուղարկումը չի ապահովում վճարող և ստացող կողմերի միջև դրամական միջոցների փաստացի փոխանցումը: ՀՏ 969 ռեեստրը պարտադիր կիրառվում է միջբանկային վճարումների ՀՏ 202 հաղորդագրության հետ միասին, որի միջոցով կատարվում է դրամական միջոցների փոխանցումը՝ ռեեստրը ուղարկող և ստացող կողմերի միջև: Այդ նպատակով, միևնույն ռեեստրի կրկնվող :32A: դաշտերում նշված գումարների (միևնույն արժույթով) հանրագումարը լրացվում է վերջինիս հետ փոխկապված ՀՏ 202 հաղորդագրության մեջ, ապահովելով այդ գումարի փոխանցումը: ՀՏ 202 հաղորդագրությունը ուղարկվում է վերջինիս համար սահմանված կանոններով (տես՝ նկարագրությունը): Սույն ռեեստրը ապահովում է դրամական միջոցների՝ դրամով կամ սահմանված արտարժույթով փոխանցման հնարավորությունը:
ՀՏ 969 Միջբանկային վճարումների ռեեստրը կիրառվում է դեպի ֆինանսական կազմակերպությանը ուղղված դրամական փոխանցումներ կատարելու նպատակով, և չպետք է կիրառվի դեպի ՀՀ գանձապետարան (բյուջե) փոխանցումների իրականացման ժամանակ: Անմիջապես ֆինանսական կազմակերպությանը փոխանցված ռեեստրը պարունակում է մանրամասն տեղեկատվություն վերջինիս հետ փոխկապված ՀՏ 202 հաղորդագրության մեջ նշված ընդհանուր գումարի բաշխման վերաբերյալ, ըստ (ռեեստրում) նշված հաշիվների: ՀՏ 969 Միջբանկային վճարումների ռեեստրի միջոցով իրականացվում են ՀՀ դրամով կամ սահմանված արտարժույթով փոխանցումներ:

Ֆինանսական կազմակերպությունը պետք է ապահովի սույն ռեեստրի մշակումը և կիրառումը:

Միջբանկային վճարումների ՀՏ 969 ռեեստրը չի կիրառվում Կենտրոնական բանկին ուղղված վճարումներ կատարելու համար: Սույն ռեեստրի մի շարք դաշտերի ձևավորումը համանման է ՀՏ 100 հաղորդագրության դաշտերի լրացմանը:



Հաղորդագրության ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Գործառնության (ռեեստրի) համար	16x	1
Ա1 կրկնվող ենթապարբերություն ---->				
Պ	20	Գործառնության (հանձնարարականի) համար	16x	2
Օ	30V	Վճարման ամսաթիվ	6!n	3
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	4
Պ	50A	Վճարող	12!n[4n] 4*35x	5
Օ	51	Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ	10!n	6
Պ	59	Շահառու	12!n[4n] 4*35x	7
Պ	70A	Վճարման նպատակ	4*35x	8
-----|				
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	9

Պ – պարտադիր, Օ – օժանդակ

- Հաղորդագրության առավելագույն թույլատրելի չափսը չպետք է գերազանցի 20000 բայթը
- Ռեեստրում առկա բոլոր կրկնվող **:32A:** դաշտերում պետք է լրացվի արժույթի **նույն** կոդը (3!a), ինչպես նաև այն պետք է համապատասխանի ՀՏ 202 հաղորդագրության մեջ հանձնարարականի համանուն **:32A:** դաշտում ներկայացված արժույթի կոդին
- **:32A:** դաշտում լրացված որևէ արժույթի կոդին (3!a) պետք է համապատասխանեն **:50A:** և **:59:** դաշտերում ներկայացված բանկային հաշիվների արժույթները
- Ռեեստրում կրկնվող **:32A:** դաշտերում նշված վճարվող գումարների հանրագումարը պետք է հավասար լինի ՀՏ 202 հաղորդագրության մեջ **:32A:** դաշտում նշված վճարման ենթակա ընդհանուր գումարի արժեքին:

Դաշտերի նկարագրությունը

1) Դաշտ **:20:** Գործառնության համար (ռեեստր)
   Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում (Ա պարբերության մեջ) նշվում է Ֆինանսական կազմակերպության կողմից ձևավորվող տվյալ հաղորդագրության՝ ռեեստրի, բացառիկ (չկրկնվող) համարը: Այն պարտադիր լրացվում է ռեեստրին կից ուղարկվող համապատասխան ՀՏ 202 հաղորդագրության **:21:** դաշտում:

Դաշտ **:20:** Գործառնության համար (հանձնարարական)
Չևաչափ 16x

Այս **պարտադիր** դաշտում կրկնվող Ա1 ենթապարբերության մեջ, **:20:** դաշտը լրացվում է հաճախորդի ստույգ հանձնարարականի կատարման հետ կապված գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը:

3) Դաշտ **:30V:** Վճարման ամսաթիվ
   Չևաչափ 6!n

Այս օժանդակ դաշտում լրացվում է հանձնարարականով նշված վճարման օրը DDMMYY տեսքով:

4) Դաշտ **:32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար
   Չևաչափ 6!n3!a15d

Այս **պարտադիր** դաշտում նշվում է՝

- 6!n ենթադաշտում → ՀՏ 202 հանձնարարականի ներկայացման ամսաթիվը (DDMMYY տեսքով), որը չի կարող լինել ավելի մեծ քան ընթացիկ բանկային օրվա ամսաթիվը
- 3!n ենթադաշտում → արժույթի կոդը (ըստ ISO 4217 ստանդարտի), որով կատարվելու է վճարումը
- 15d ենթադաշտում → **:59:** դաշտում ներկայացված շահառուին փոխանցվող գումարը, տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ընդ որում, դրամային (**AMD**-ով) վճարումների դեպքում տասնորդական ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր լրացվում է **0** թիվը:

5) Դաշտ **:50A:** Վճարող
Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է փոխանցման աղբյուրը: Նշվում է վճարողի հաշվեհամարը բանկում՝ 12!n[4n], և անունը (անվանումը), անհրաժեշտության դեպքում, վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված այլ տվյալներ, նաև հասցեն (requisites)՝ 4*35x:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն՝ Գլուխ 3.

6) Դաշտ **:51:** Վճարողի հանրային ծառայությունների համարանիշ
Չևաչափ 10!n

Այս օժանդակ դաշտում նշվում է ֆիզիկական անձի սոցիալական ապահովության (քարտի) համարը:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն՝ Գլուխ 3.

7) Դաշտ **:59:** Շահառու
Չևաչափ 12!n[4n]
4*35x

Այս **պարտադիր** դաշտում ներկայացվում է վճարման հասցեատերը: Նշվում են շահառուի հաշվեհամարը՝ 12!n[4n], և անունը (անվանումը), անհրաժեշտության դեպքում վերջինիս նույնականացման համար իրավական ակտերով սահմանված այլ տվյալներ, նաև հասցեն ՝ 4*35x:

Մանրամասները տես Դաշտերի նկարագրություն՝ Գլուխ 3.

8) Դաշտ **:70A:** Վճարման նպատակ
Չևաչափ 4*35x

Այս **պարտադիր** դաշտում նշվում է գումարի փոխանցման նպատակը:

9) Դաշտ **:07:** Էլեկտրոնային ստորագրություն
Չևաչափ 110!x

«Արաքս-ԿԲ» տեղեկատվության պաշտպանության համակարգի կիրառման դեպքում այս օժանդակ դաշտում նշվում է էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՏ 972 Բյուջետային վճարումների ռեեստր

Սույն ռեեստրը (հաղորդագրության տեսակը) նախատեսված է մի քանի վճարումների մանրամասները մեկ հաղորդագրության շրջանակներում լրացնելու և ստացող (շահառուին սպասարկող) կողմին փոխանցելու համար: Ռեեստրում, յուրաքանչյուր վճարման հետ կապված տվյալները լրացվում են համապատասխան կրկնվող ենթապարբերության դաշտերում: Ֆինանսական կազմակերպությունը ռեեստրը ուղարկում է շահառուին սպասարկող կողմին անմիջապես, առանց հաշվարկային բանկին այն ուղարկելու

Միայն այս հաղորդագրության ուղարկումը չի ապահովում վճարող և ստացող կողմերի միջև դրամական միջոցների փաստացի փոխանցումը: ՀՏ 972 ռեեստրը պարտադիր կիրառվում է միջբանկային վճարումների ՀՏ 202 հաղորդագրության հետ միասին, որի միջոցով կատարվում է դրամական միջոցների փոխանցումը՝ ռեեստրը ուղարկող և ստացող կողմերի միջև: Այդ նպատակով, միևնույն ռեեստրի կրկնվող :32A: դաշտերում նշված գումարների (միևնույն արժույթով) հանրագումարը լրացվում է վերջինիս հետ փոխկապված ՀՏ 202 հաղորդագրության մեջ, ապահովելով այդ գումարի փոխանցումը: ՀՏ 202 հաղորդագրությունը ուղարկվում է վերջինիս համար սահմանված կանոններով (տես՝ նկարագրությունը): Սույն ռեեստրը ապահովում է դրամական միջոցների՝ դրամով կամ սահմանված արտարժույթով փոխանցման հնարավորությունը:

ՀՏ 972 Բյուջետային վճարումների ռեեստրը չի կիրառվում միջբանկային փոխանցումներ իրականացնելու նպատակով, և նախատեսված է միայն դեպի Կենտրոնական գանձապետարան փոխանցումներ կատարելու ժամանակ: Անմիջապես Կենտրոնական գանձապետարան փոխանցված ռեեստրը պարունակում է մանրամասն տեղեկատվություն վերջինիս հետ փոխկապված ՀՏ 202 հաղորդագրության մեջ նշված ընդհանուր գումարի բաշխման վերաբերյալ, ըստ (ռեեստրում) նշված հաշիվների: ՀՏ 972 Բյուջետային վճարումների ռեեստրի միջոցով իրականացվում են միայն ՀՀ դրամով փոխանցումներ:

Ֆինանսական կազմակերպությունը պետք է ապահովի սույն ռեեստորների մշակումը և կիրառումը:

ՀՏ 973 Միջբանկային վճարումների ռեեստր

Սույն ռեեստրը (հաղորդագրության տեսակը) նախատեսված է մի քանի վճարումների մանրամասները մեկ հաղորդագրության շրջանակներում լրացնելու և ստացող (շահառուին սպասարկող) կողմին փոխանցելու համար: Ռեեստրում, յուրաքանչյուր վճարման հետ կապված տվյալները լրացվում են համապատասխան կրկնվող ենթապարբերության դաշտերում: Ֆինանսական կազմակերպությունը ռեեստրը ուղարկում է շահառուին սպասարկող կողմին անմիջապես, առանց հաշվարկային բանկին այն ուղարկելու

Միայն այս հաղորդագրության ուղարկումը չի ապահովում վճարող և ստացող կողմերի միջև դրամական միջոցների փաստացի փոխանցումը: ՀՏ 973 ռեեստրը պարտադիր կիրառվում է միջբանկային վճարումների ՀՏ 202 հաղորդագրության հետ միասին, որի միջոցով կատարվում է դրամական միջոցների փոխանցումը՝ ռեեստրը ուղարկող և ստացող կողմերի միջև: Այդ նպատակով, միևնույն ռեեստրի կրկնվող :32A: դաշտերում նշված գումարների (միևնույն արժույթով) հանրագումարը լրացվում է վերջինիս հետ փոխկապված ՀՏ 202 հաղորդագրության մեջ, ապահովելով այդ գումարի փոխանցումը: ՀՏ 202 հաղորդագրությունը ուղարկվում է վերջինիս համար սահմանված կանոններով (տես՝ նկարագրությունը):

ՀՏ 973 Միջբանկային վճարումների ռեեստրը կիրառվում է դեպի ֆինանսական կազմակերպությանը ուղղված դրամական փոխանցումներ կատարելու նպատակով, և չպետք է կիրառվի դեպի ՀՀ Կենտրոնական գանձապետարան (բյուջե) դրամական փոխանցումների իրականացման ժամանակ: Անմիջապես ֆինանսական կազմակերպությանը փոխանցված ռեեստրը պարունակում է մանրամասն տեղեկատվություն վերջինիս հետ փոխկապված ՀՏ 202 հաղորդագրության մեջ նշված ընդհանուր գումարի բաշխման վերաբերյալ, ըստ (ռեեստրում) նշված հաշիվների: ՀՏ 973 Միջբանկային վճարումների ռեեստրի միջոցով իրականացվում են ՀՀ դրամով կամ սահմանված արտարժույթով փոխանցումներ:

Ֆինանսական կազմակերպությունը պետք է ապահովի սույն ՀՏ 973 ռեեստորների մշակումը և կիրառումը:

Միջբանկային վճարումների ՀՏ 973 ռեեստրը կարող է ուղարկվել նաև Կենտրոնական բանկին (որպես շահառու): Կենտրոնական բանկը ՀՏ 973 ռեեստրի ուղարկումը և ստացումը կիրականացնի, երբ Կենտրոնական բանկի նոր «գործառնական օր» համակարգում ապահովվի դրանց կիրառումը: Այդ մասին մասնակիցներին կուղարկվի լրացուցիչ տեղեկացում:

ՀՏ 972 և ՀՏ 973 հաղորդագրությունների ֆորմատի նկարագրությունը

Դաշտի կարգա վիճակ	Դաշտի բնորո-շիչ	Դաշտի անվանում	Դաշտի ձևաչափ	№
Ա պարբերություն				
Պ	20	Ռեեստրի գործառնության համարը (ռեեստրի ձևավորման համար)	16x	1
Ա1 կրկնվող ենթապարբերություն ----->				
Պ	20	Գործառնության հղման համարը փոխկապված հաճախորդի հանձնարարականին	16x	2
Պ	23E	Հանձնարարականի կոդ	4!c[/30x]	3

Պ	30A	Կարգադրող-հաճախորդի հանձնարարականի կատարման ամսաթիվ, ժամ և րոպե	6!n4!n	4
Պ	32A	Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար	6!n3!a15d	5
Օ	33B	Արտարժույթ, հանձնարարականի գումար	3!a15d	6
Օ	36	Արտարժույթի փոխարժեք	12d	7
Պ	23P	Վճարողի նույնացուցիչ	6x	8
Պ	50a	Վճարող	E կամ F	9
Օ	52E	Կարգադրող-հաճախորդին սպասարկող կազմակերպություն	12!n[4n] 4*35x	10
Պ	23Q	Շահառուի նույնացուցիչ	6x	11
Պ	*59a	Շահառու-հաճախորդ	E կամ F	12
Օ	57E	Շահառու-հաճախորդին սպասարկող կազմակերպություն	12!n[4n] 4*35x	13
Պ	70A	Վճարման նպատակ	4*35x	14
Օ	72B	Հաղորդագրություն ստացողին ուղղված տեղեկատվություն	6*35x	15
Օ	23S	Հիմնական պարտապանի նույնացուցիչ	6x	16
Օ	72A	Հիմնական պարտապան (պարտավորություն ունեցող անձ)	6*35x	17
Օ	77B	Հաշվետվողականության կոդ	3*35x	18
-----┤				
Օ	07	Էլեկտրոնային ստորագրություն	110!x	19

Պ - պարտադիր, Օ - օժանդակ

*-:59a: դաշտի F տարբերակը կիրառվում է միայն ՀՏ 973-միջբանկային վճարումներ ռեեստրի համար:

- ՀՏ 972, ՀՏ 973 հաղորդագրության առավելագույն մեծությունը (առկա ենթապարբերությունների հետ միասին) չպետք է գերազանցի 20’000 բայթը
- :36: դաշտը պարտադիր լրացվում է եթե :33B: դաշտի արժույթը տարբերվում է 32A: դաշտի արժույթից:
- Ռեեստրում առկա բոլոր կրկնվող **:**32A**:** դաշտերում պետք է լրացվի արժույթի **նույն** (3!a) կոդը:
- Ռեեստրի :32A: դաշտերի արժույթը պետք է համապատասխանի այդ ռեեստրին կից ուղարկվող ՀՏ 202 հաղորդագրության :32A: դաշտում նշված արժույթի կոդին: Սույն պայմանի ստուգումը ապահովում է վճարողի և շահառուի բանկը:

- Ռեեստրի :32A: դաշտերում նշված գումարների հանրագումարը պետք է հավասար լինի այդ ռեեստրին կից ուղարկվող ՀՏ 202 հաղորդագրության :32A: դաշտում նշված գումարին: Սույն պայմանի ստուգումը ապահովում է վճարողի և շահառուի բանկը:
- **:**32A**:** դաշտում լրացված արժույթի կոդին (3!a) պետք է համապատասխանեն **:**50a**:** և **:**59a**:** դաշտերում նշված բանկային հաշիվների արժույթները
- Բոլոր կրկնվող **:**59a**:** դաշտերում պետք է նշված լինի շահառու-հաճախորդին սպասարկող նույն ֆինանսական կազմակերպությունը
- Ռեեստրը ստացող բանկը, պետք է համապատասխանի այդ ռեեստրին կից ուղարկվող ՀՏ 202 հաղորդագրության **:**59**:** դաշտում նշված շահառու ֆինանսական կազմակերպության տվյալներին
- ՀՏ 972 և ՀՏ 973 Հաղորդագրությունների մեջ կրկնվող դաշտերի լրացման համար նկարագրված սկզբունքները նույնատիպ են ՀՏ 108 հաղորդագրության նկարագրության հետ:

Դաշտերի նկարագրությունը

1) **Դաշտ :20:** Գործառնության համարը (ռեեստրի ձևավորման համար)

   Չնաչափ 16x

   Այս **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության (ռեեստրի) ձևավորման հետ կապված բացառիկ (չկրկնվող) համարը: Այս տվյալը լրացվում է ռեեստրին կից ուղարկվող վճարային ՀՏ202 հաղորդագրության :21: դաշտում

2) **Դաշտ :20:** Գործառնության հղման համարը փոխկապված հաճախորդի հանձնարարականին

   Չնաչափ 16x

   Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է ռեեստրով կատարվող վճարումներում ընդգրկված, համապատասխան **հաճախորդի** հանձնարարականի կատարման հետ կապված գործառնության բացառիկ (չկրկնվող) համարը:

3) **Դաշտ :23E:** Հանձնարարականի կոդ

   Չնաչափ 4!c[/30x]

   Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է հաղորդագրության միջոցով փոխանցվող գումարի վճարման տեսակի կոդը, որը բնութագրում է թե ինչպիսի հանձնարարական է կատարվում: Սույն :23E: դաշտը բաղկացած է հանձնարարականի հիմնական կոդից՝ 4!c, և լրացուցիչ ստուգման երկրորդ կոդից՝ [/30x]: Համապատասխան տեսակի վճարումը իրականացնելու համար պետք է (խստորեն) կիրառվի վերջինիս համար սահմանված հիմնական կոդի արժեքը (չի կարող օգտագործվել՝ վճարումների համար

սահմանված այլ կոդ), օրինակ՝ դեպի բյուջե վճարում կատարելու պարագայում 4!c ենթադաշտում լրացվում է միայն TUBG կոդը և ըստ այդմ այլ կոդի արժեք չի կարող լրացվել:

Հանձնարարականի կոդի 4!c ենթադաշտում լրացվում է սույն Աղյուսակում նշված կոդերից մեկը: Իսկ, անհրաժեշտության դեպքում, ոչ պարտադիր ենթադաշտում ([/30x]) կարող է գրանցվել նաև հիմնական կոդի հետ կապված ստուգման երկրորդ (լրացուցիչ տեղեկատվության) կոդը:

Աղյուսակ 1

1.	ԷՀԱ համակարգում կիրառման համար սահմանված հանձնարարականի հիմնական կոդեր	Լրացուցիչ ստուգման երկրորդ կոդ
TUBG	Բյուջետային հաշիվներին ուղղված վճարումներ (տեղական և համայնքային)	
BUDP	Բյուջետային հաշիվներից կատարվող վճարումներ (տեղական և համայնքային)	
BKBK	Միջբանկային վճարում, այդ թվում ոչ բանկ հաճախորդների միջբանկային վճարումները (որոնց դասակարգումը նշված չէ)	
CINB	Ոչ բանկ հաճախորդների վճարումները ուղղված իրենց սպասարկող բանկին կամ շահառու հաճախորդին (ներբանկային վճարում), եթե վերջնական շահառուն և վճարողը սպասարկվում են նույն բանկում	
BRSA	Բորսայական հարթակներում գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումներ (ուղղված դեպի բորսա կամ նրանից ետ փոխանցվող): Կիրառվում է երկրորդ կոդի հետ միասին	EXCHG, OVERN, STOCK, CORT
CSDT	Կենտրոնական դեպոզիտարիայում գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցում (ուղղված դեպի դեպոզիտարիա կամ նրանից ետ փոխանցվող): Կիրառվում է երկրորդ կոդի հետ միասին	TCRG, CORST, CORT
INBU	Ներբյուջետային վճարումներ	

Ստորև նշված երկրորդային կոդերի ցանկը կարող է ընդլայնվել

2.	Ստուգման լրացվող երկրորդ կոդերը (որպես լրացուցիչ պայման) կարող են կիրառվել միայն համապատասխան հիմնական կոդերի հետ միասին (ըստ Աղյուսակ 1-ի)
CORT	Իրականացված առևտրի արդյունքում հաշվարկների (վերջնահաշվարկի) ապահովման նպատակով վճարում, կապված՝

	արտարժույթի առք ու վաճառքի, արժեթղթերով և այլ գործարքների հետ
EXCHG	Արտարժույթով առք ու վաճառքի գործառնության հետ կապված
OVERN	Օվերնայթ վարկերի գործառնության հետ կապված
STOCK	Պետական պարտատոմսերով գործառնության հետ կապված
TCRG	Ժամկետային վարկային գործառնության հետ կապված
CORST	Կորպորատիվ արժեթղթերով գործառնության հետ կապված

Ռեեստրի միջոցով SWIFT-ի հետ կապված հաղորդագրությունների փոխանցում չի իրականացվում:

4) **Դաշտ :30A:** Կարգադրող-հաճախորդի հանձնարարականի կատարման ամսաթիվ, ժամ և րոպե

Չնաչափ 6!n4!n

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է

Կարգադրող-հաճախորդին սպասարկող բանկի կամ լիցենզավորված ֆինանսական կազմակերպության կողմից հանձնարարականի կատարման ամսաթիվը, ժամը և րոպեն: Սույն կատարման ամսաթիվը բանկի կողմից հանձնարարականի ուղարկման ամսաթիվը չէ, այն բնութագրում է, երբ են հաճախորդից կանխիկ միջոցները ընդունվել կամ երբ են վճարողի հաշվից անկանխիկ միջոցները ելքագրվել:

Ամսաթվի համար նախատեսված 6!n ենթադաշտը լրացվում է DDMMYY տեսքով, իսկ ժամը և րոպեն լրացվում են 4!n ենթադաշտում HHMM տեսքով:

Եթե վճարումը կատարվել է կանխիկ միջոցներով, ապա հանձնարարականի ընդունման պահից այն համարվում է սպասարկող բանկի կամ լիցենզավորված ֆինանսական կազմակերպության կողմից ակցեպտավորված և կատարված, ուստի լրացվում են վերջինիս վերաբերյալ տվյալները:

Եթե վճարումը պետք է կատարվի անկանխիկ՝ Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվից, ապա այս դաշտում պահանջվում է լրացնել կարգադրող-հաճախորդի հանձնարարականի ակցեպտավորման արդյունքում կատարման ամսաթվի և ժամի վերաբերյալ այն տվյալները, երբ վճարողի հաշվից միջոցները ելքագրվել են (դարձել են անհասանելի):

Հաճախորդի հաշվի միջոցների ելքագրման ամսաթիվը կարող է տարբերվել հաղորդագրության ուղարկման ամսաթվից:

5) **Դաշտ :32A:** Ամսաթիվ, արժույթի կոդ և գումար

Չնաչափ 6!n3!a15d

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է վճարողի բանկի կողմից հանձնարարականի կատարման նպատակով միջբանկային փոխանցման ամսաթիվը

(շահառու-հաճախորդին սպասարկող բանկին (թղթակից բանկ) միջոցների փաստացի փոխանցման հետ կապված հաղորդագրության կատարման ամսաթիվ), արժույթը և փաստացի փոխանցվող գումարը: Ընդ որում, ամսաթվի համար նախատեսված 6!n ենթադաշտը լրացվում է հետևյալ տեսքով DDMMYY, արժույթի կոդի համար նախատեսված 3!a ենթադաշտում լրացվում է արժույթի կոդը ըստ ISO 4217 ստանդարտի, իսկ փաստացի փոխանցվող գումարը լրացվում է 15d ենթադաշտում:

Նշված 6!n ենթադաշտում պարտադիր պետք է լրացվի միայն ընթացիկ բանկային օրվա ամսաթիվը, այսինքն ապագա ամսաթվով վճարումը չի կարող կատարվել:

Նշված 15d ենթադաշտում գումարը լրացվում է տասնորդական ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Այս դաշտում կարող է նշվել ՀՀ դրամով, կամ արտարժույթով փոխանցվող գումարը և վերջինիս արժույթի կոդը: Ըստ այդմ, հայկական դրամով՝ AMD-ով, փոխանցման ենթակա գումարի պարագայում ստորակետից հետո 2-րդ (հարյուրերորդական) նիշում, պարտադիր կարգով, լրացվում է 0 թվային արժեքը:

Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգում սույն դաշտում նշված ամսաթվի մշակման պահանջի հետ կապված այն պետք է լինի հաղորդագրության ուղարկման նույն օրը սակայն, եթե այդ հաղորդագրությունը կենտրոնական բանկը ստանում է համակարգում սահմանված ժամից հետո, ապա այն մշակվում է հաջորդ գործառնական օրում:

Միևնույն ռեեստրում ընդգրկված բոլոր վճարումների համար սույն :32A: դաշտում պարտադիր լրացվում է նույն արժույթի կոդը:

6) **Դաշտ :33B:** Արտարժույթ, հանձնարարականի գումար

Չնաչափ 3!a15d

Այս կրկնվող օժանդակ դաշտում նշվում է կարգադրող-հաճախորդի հանձնարարականով նշված գումարը և արժույթը: Այդ դաշտի համար սահմանված տվյալների լրացումը կրում է միայն տեղեկատվական բնույթ և չպետք է փոփոխվի հաղորդագրության մշակման ամբողջ ընթացքում:

Այս դաշտը (:33B:) լրացվում է, եթե հաճախորդի հանձնարարականով նշված գումարը և արժույթի կոդը տարբերվում են միջբանկային փոխանցման նպատակով ձևավորված հաղորդագրության մեջ :32A: դաշտում լրացված արժույթի կոդից և (կամ) գումարից: Ինչպես նաև լրացվում է , երբ հաճախորդի հանձնարարականով նշված գումարից կատարվել է նաև սահմանված սակագնի գանձում:

Այն դեպքում, երբ :33B: դաշտում լրացված արժույթի կոդը տարբերվում է :32A: դաշտում լրացված արժույթի կոդից, ապա :36: դաշտը ենթակա է պարտադիր լրացման:

7) **Դաշտ :36:** Արտարժույթի փոխարժեք

Չնաչափ 12d

Այս կրկնվող օժանդակ դաշտում նշվում է այն փոխարժեքը, որով հաղորդագրությունը ուղարկողի կողմից հաճախորդի հանձնարարականով նշված արժույթով գումարը (որը նշված է :33B: դաշտում) փոխարկվել է :32A: դաշտում նշված

արժույթով գումարին: Այս (**:36:**) դաշտը լրացվում է միայն **:33B:** դաշտի լրացման դեպքում, որի արժույթը տարբերվում է **:32A:** դաշտի արժույթից:

8) **Դաշտ :23P:** Վճարողի նույնացուցիչ

Չևաչափ 6x

Այս կրկնվող **պարտադիր՝ :23P:** (P ⇨ Peculiarity), դաշտում նշվում է վճարողի (կարգադրություն ներկայացնողի) նույնացուցիչը, որը փոխկապված է **:50a:** դաշտում լրացվող տվյալների հետ:

Այս դաշտում նշվում է հետևյալ կոդերից մեկը .

- Ֆիզիկական անձ հանդիսացող վճարող՝ **NP** – Natural Person
- Իրավաբանական անձ (այդ թվում ՀՀ իրավական ակտերի համաձայն գրանցված (հաշվառված) հարկ վճարող անհատ ձեռնարկատեր կամ գերատեսչություն) հանդիսացող վճարող՝ **LP** – Legal Person:

9) **Դաշտ :50a:** Վճարող

Չևաչափ՝ Տարբերակ E 12!n[4n]
4*35x

կամ

Տարբերակ F [12!n[4n]]
5!n
4*35x

Այս կրկնվող **պարտադիր** դաշտում նշվում է հանձնարարականը ներկայացնող կարգադրող- հաճախորդը, մասնավորապես լրացվում է վճարողին «կարգադրող-հաճախորդին» բնութագրող տվյալները, որի հանձնարարականի հիման վրա ուղարկվում է հաղորդագրությունը՝ ներկայացված վճարումը կատարելու համար: Եթե Վճարողը՝ «կարգադրող-հաճախորդը», հանդիսանում է հաղորդագրություն ուղարկող բանկը, ապա սույն դաշտը կբնութագրի հաղորդագրություն ուղարկող բանկին:

Անհրաժեշտ է նշել, որ դիտարկվող դաշտը կարող է լրացվել միայն E կամ F տարբերակով:

Եթե կարգադրող-հաճախորդից վճարումը ընդունվել է լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության կողմից, ապա :50a: դաշտի հետ միաժամանակ պարտադիր պետք է լրացվի նաև :52E: դաշտը, որտեղ նշվում են վերջինս բնութագրման համար պահանջվող տվյալները:

Սույն դաշտի 4*35x տողերում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են ցուցիչներ ըստ սահմանված սկզբունքի: Ցուցչի և լրացվող տվյալների միջև դրվում է մեկ զատիչ(սլեշ) նշան (/): Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ իրենց համապատասխան ցուցչի և զատչի կիրառմամբ չեն նշվում: Տվյալ դաշտի լրացման ժամանակ պարտադիր հաշվի է առնվում **:23P:** դաշտում նշված արժեքը: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդի համար լրացվում է ստորև բերված Աղյուսակի 2-րդ սյունակը, իսկ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի դեպքում՝ Աղյուսակի 3-րդ սյունակը

9.1 - Դաշտ **:50E:** Կարգադրող-հաճախորդ (բանկ)

Չնաչափ 12!n[4n]
4*35x

Այս տարբերակը լրացվում է այն դեպքում, երբ բանկը, որը ուղարկում է հաղորդագրությունը.

- ինքն է հանդիսանում «կարգադրող-հաճախորդը», իր սեփական վճարումների կատարման համար
- երբ այդ բանկին ներկայացվում է կարգադրող-հաճախորդի հանձնարարականը վճարում կատարելու համար և հանձնարարական ներկայացնող հաճախորդը ունի բանկային հաշիվ անմիջապես տվյալ բանկում: Այսինքն վճարումը կատարում է իր բանկային հաշվից:

Այս դաշտի 12!n[4n] ենթադաշտում նշվում է վճարումը նախաձեռնողի հաշիվը: Այնուհետև 4*35x ենթադաշտում լրացվում են «Կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալները, (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն, վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ), ըստ ստորև բերված Աղյուսակի և հաջորդականության.

Աղյուսակ՝ «կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալներ		
Երբ հաճախորդը վճարում է իր բանկային հաշվից		
	Ֆիզիկական անձի դեպքում	Իրավաբանական անձի դեպքում (այդ թվում բանկի գլխամաս կամ մասնաճյուղ)
1	2	3
12!n[4n] ենթադաշտում	Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվի համարը	
4*35x ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում են	
I-ին տող	Անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)	Իրավաբանական անձի անվանումը
II-ից → IV-րդ տողերում	Կարող է լրացվել նաև ստորև նշված տեղեկատվությունը, ըստ առկայության	
	Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը) կամ Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում՝ ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը:	Հարկ վճարողի հաշվառման համարը

	Եթե վճարում կատարողը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կամ այլ կարգավիճակ ունեցող անձ (օրինակ՝ փախստական), ապա նշված համարը կարող է չլրացվել:	
	Անձնագրի տվյալներ կամ ID քարտի համարը կամ անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները	
	Հասցեի վերաբերյալ տվյալներ	
		Որպես լիազորված ղեկավար անձի տվյալներ (բացառությամբ բանկի համար) անուն, ազգանուն, (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)
	Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:	

Այս տարբերակը լրացվում է այն դեպքում, երբ բանկը, որը ուղարկում է հաղորդագրությունը.

- ինքն է հանդիսանում «կարգադրող-հաճախորդը», իր սեփական վճարումների կատարման համար
- երբ այդ բանկին ներկայացվում է կարգադրող-հաճախորդի հանձնարարականը վճարում կատարելու համար և հանձնարարական ներկայացնող հաճախորդը ունի բանկային հաշիվ անմիջապես տվյալ բանկում: Այսինքն վճարումը կատարում է իր բանկային հաշվից:

Այս դաշտի 12!n[4n] ենթադաշտում նշվում է վճարումը նախաձեռնողի հաշիվը: Այնուհետև 4*35x ենթադաշտում լրացվում են «Կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալները, (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն, վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ), ըստ ստորև բերված Աղյուսակի և հաջորդականության.

Աղյուսակ՝ «կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալներ		
Երբ հաճախորդը վճարում է իր բանկային հաշվից		
	Ֆիզիկական անձի դեպքում	Իրավաբանական անձի դեպքում (այդ թվում բանկի գլխամաս կամ մասնաճյուղ)
1	2	3
12!n[4n] ենթադաշտում	Կարգադրող-հաճախորդի բանկային հաշվի համարը	

<table>
<tr><td>4*35x
ենթադաշտում</td><td colspan="2">Վճարման տեսակից կախված լրացվում են</td></tr>
<tr><td>I-ին տող</td><td>Անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td><td>Իրավաբանական անձի անվանումը</td></tr>
<tr><td rowspan="6">II-ից → IV-րդ տողերում</td><td colspan="2">Կարող է լրացվել նաև ստորև նշված տեղեկատվությունը, ըստ առկայության</td></tr>
<tr><td>Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը)
կամ
Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում՝ ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը:
Եթե վճարում կատարողը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կամ այլ կարգավիճակ ունեցող անձ (օրինակ՝ փախստական), ապա նշված համարը կարող է չլրացվել:</td><td rowspan="2">Հարկ վճարողի հաշվառման համարը</td></tr>
<tr><td>Անձնագրի տվյալներ
կամ
ID քարտի համարը
կամ
անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները</td></tr>
<tr><td colspan="2">Հասցեի վերաբերյալ տվյալներ</td></tr>
<tr><td></td><td>Որպես լիազորված ղեկավար անձի տվյալներ (բացառությամբ բանկի համար) անուն, ազգանուն, (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td></tr>
<tr><td colspan="2">Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:</td></tr>
</table>

8.2 - Դաշտ **:50F:** Կարգադրող-հաճախորդի կանխիկ վճարում (առանց հաշվի)

Չևաչափ [12!n[4n]]
5!n
4*35x

Այս տարբերակը լրացվում է այն դեպքում, երբ «կարգադրող-հաճախորդը» հաշվեհամար չունի և վճարումը կատարվում է կանխիկ միջոցներով (առանց վերջինիս հաշվի կիրառման): Տվյալ դեպքում հաշվեհամար ենթադաշտում լրացվում է բանկի միջանկյալ (տարանցիկ) հաշիվը՝ [12!n[4n]], ինչպես նաև կարգադրող-հաճախորդի հանձնարարականի հետ կապված հաղորդագրությունը ուղարկող ֆինանսական կազմակերպության գլխամասի կամ մասնաճյուղի կոդը (5!n), որը տրամադրված է Կենտրոնական բանկի կողմից:

Ընդ որում, պետք է առկա լինի Կենտրոնական բանկի կողմից այդպիսի հնգանիշ կոդով գրանցված ֆինանսական կազմակերպության գլխամաս(մասնաճյուղ):

4*35x ենթադաշտում լրացվում են «կարգադրող-հաճախորդի» հետ կապված (այդ թվում՝ իրավական ակտերի համաձայն) վերջինիս նույնականացման համար անհրաժեշտ տվյալները, ըստ ստորև բերված Աղյուսակի:

«կարգադրող-հաճախորդի» հետ կապված տվյալներ		
Երբ հաճախորդը վճարում է կանխիկ (առանց բանկային հաշվի)		
	Ֆիզիկական անձի դեպքում	Իրավաբանական անձի դեպքում
1	2	3
[12!n[4n]] ենթադաշտում	Սպասարկող բանկի միջանկյալ հաշվի համարը	
5!n ենթադաշտում	ՀՏ 108 հաղորդագրությունը ուղարկող ֆինանսական կազմակերպության (ԿԲ-ի կողմից տրամադրված) հնգանիշ կոդը	
4*35x ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում են	
I-ին տող	Կարգադրող-հաճախորդի անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)	Իրավաբանական անձի անվանումը

<table>
<tr><td rowspan="4">II-ից → IV-րդ տողերում</td><td>Հանրային ծառայության համարանիշը (Սոցիալական քարտի համարը)
կամ
Հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) չունենալու դեպքում՝ ՀԾՀ չունենալու մասին տրված տեղեկանքի համարը:
Եթե վճարում կատարողը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կամ այլ կարգավիճակ ունեցող անձ (օրինակ՝ փախստական), ապա նշված համարը կարող է չլրացվել:</td><td>Հարկ վճարողի հաշվառման համարը</td></tr>
<tr><td>Անձնագրի տվյալներ
կամ
ID քարտի համարը
կամ
անձնագիրը փոխարինող փաստաթղթի տվյալները</td></tr>
<tr><td colspan="2">Հասցեի վերաբերյալ տվյալներ</td></tr>
<tr><td></td><td>Որպես լիազորված ղեկավար անձի տվյալներ (բացառությամբ բանկի համար) անուն, ազգանուն (հայրանուն՝ անձնագրում առկայության դեպքում)</td></tr>
<tr><td colspan="2">Այլ տվյալներ ըստ անհրաժեշտության:</td></tr>
</table>

Լրացվող նշված տվյալները չպետք է գերազանցեն հատկացված 4 տողը:

10) **Դաշտ :52E:** Կարգադրող-հաճախորդին սպասարկող կազմակերպություն

Ձևաչափ 12!n[4n]
4*35x

Այս կրկնվող օժանդակ դաշտը պարտադիր լրացվում է, երբ անմիջականորեն կարգադրող-հաճախորդի կողմից հանձնարարականը ներկայացվում է լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության գլխամասին կամ նրա կառուցվածքային ստորաբաժանմանը: Եթե կարգադրությունը ներկայացվել է տերմինալի միջոցով կարող է նշվել գլխամասային ստորաբաժանման տվյալները:

Այս դաշտը պարտադիր լրացվում է, երբ անմիջականորեն կարգադրող-հաճախորդից հանձնարարականը ընդունող կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումը տարբերվում է հաղորդագրությունը ուղարկողից, որը նշվում է **:50a:** դաշտում:

Որպես բնութագրիչներ այս դաշում լրացվում են լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման (գլխամասի/մասնաճյուղի) տվյալները, դրանք են.

	Լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպություն (այդ թվում մասնաճյուղ), երբ վճարումը կատարվում է իրեն սպասարկող բանկում բացված բանկային հաշվով
1	2
12!n[4n] ենթադաշտում	Կազմակերպության բանկային հաշվի համարը
4*35x ենթադաշտում	Վճարման տեսակից կախված լրացվում է
I-ին տող	Հաճախորդին սպասարկող կազմակերպության գլխամասի/մասնաճյուղի անվանումը (որտեղ կատարվել է կարգադրության ընդունում)
II-ից → IV-րդ տողերում	Կարող է ըստ անհրաժեշտության լրացվել այլ տեղեկատվություն՝ առկայության դեպքում:

Լրացվող նշված տվյալները չպետք է գերազանցեն հատկացված 4 տողը:

Սույն դաշտի 4*35x ենթադաշտում տվյալների լրացման ժամանակ կիրառվում են «Ցուցիչներ» ըստ սահմանված սկզբունքի: «Ցուցչի» և լրացվող տվյալների միջև դրվում է մեկ զատիչ նշան (/): Միևնույն տողում երկու տարբեր տվյալներ իրենց համապատասխան ցուցչի և զատչի կիրառմամբ չեն նշվում:

:52E**:** դաշտը լրացվում է, երբ հանձնարարականը անմիջապես հաճախորդից ընդունող կողմը հանդիսանում է լիցենզավորված ոչ բանկ ֆինանսական կազմակերպություն, որտեղ վճարումը կատարվում է իր բանկային հաշվից: Միաժամանակ, :52E: դաշտը լրացվում է, երբ կարգադրող-հաճախորդին սպասարկող ֆինանսական կազմակերպությունը չի հանդիսանում վճարային համակարգի մասնակից:

11) **Դաշտ :23Q:** Շահառուի նույնացուցիչ

Չևաչափ 6x

